

ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՈՒՄ

ԳԻՐՔ 3

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2016

ՀՏԴ 1/14:2-9
ԳՄԴ 87,2+ 86.2/3
Կ-294

Կարապետյան Գուրգեն

Կ-294 Աշխարհաճանաչում: գիրք 3
Եր.: հեղինակային հրատարակություն, 2016,
304 էջ

խմբագիր՝
սրբագրիչ՝
նկարների հեղինակ՝
համակարգչային
ձևավորումը՝

Ջուլետա Կարակաշյան
Ջուլիետա Բադայան
Աշոտ Բադայան

Գոհար Մ. Մարտիրոսյանի,
Գոհար Պ. Մարտիրոսյան

ՀՏԴ 1/14:2-9
ԳՄԴ 87,2+ 86.2/3

ISBN 978-9939-0-1751-8

© Կարապետյան Գ., 2015

Գիրք 3

ՀԱՎԱՏ ԵՎ ԿՐՈՆ



ՆԱԽԱԲԱՆ

«Աշխարհաճանաչում» աշխատության առաջին և երկրորդ հատորներում ներկայացրեցինք տիեզերական գործող օրենքները և դրա ազդեցության տակ երկրագնդի և նրա անբաժանելի մասը հանդիսացող տարածքների, էթնիկական խմբերի ազդեցությունն ու զարգացումը: Տեսանք, որ ողջ մարդկության և առանձին էթնոսների ձևավորման ու զարգացման վրա մեծ ազդեցություն են ունենում պատմական զարգացումները և այդ զարգացումների պատճառով տվյալ էթնոսի հոգեկերտվածքի ձևավորումը, որով պայմանավորված է տվյալ էթնոսի աշխարհաճանաչումը:

Պատմական զարգացումների ընթացքում էթնոսը՝ ազգը կամ ժողովուրդը ձևավորում է իր ապրելակերպն ու աշխարհաճանաչումը, սակայն պատահում են դեպքեր, երբ էթնոսը կամավոր կամ բռնությամբ ընդունում է իրեն օտար, այլ ինֆորմացիոն դաշտերում, և ոչ իրեն հետ կապված պատմական դեպքերի զարգացումների պատճառով ձևավորված աշխարհաճանաչում, որը կարող է ազդել կամ կտրուկ փոխել էթնոսի աշխարհաճանաչումը, և նույնիսկ պատճառ դառնալ տվյալ էթնոսի վերացմանը:

Այժմյան հասարակական գիտությունները անտեղի նվազեցնում են գաղափարախոսության դերը, առաջնայինը համարելով տվյալ էթնոսի և նրա ձևավորած պետության կյանքում տնտեսական վիճակը և ունեցած տնտեսական ներուժը:

Եթե նայենք համաշխարհային պատմությանը, պարզ կարելի է տեսնել, որ ցանկացած պետական միավոր կարճ ժամանակաշրջանում ունեցել է մեծ հաջողություններ և ամրապնդվել ու իր խոսքն է ասել համաշխարհին քաղա-

քակրթության ու քաղաքական զարգացումներում, եթե ստեղծել է այդ ժամանակաշրջանին համապատասխան գաղափարախոսություն: Դրան հակառակ՝ էթնոսը կամ պետությունը, երբ նրա որդեգրած գաղափարախոսությունը հնացել է, կամ բնակչությունը այլևս չի հավատացել այդ գաղափարախոսությանը, պետությունը արագ սկսել է քայքայվել ու վերանալ: Դրա օրինակները կարելի է տեսնել ինչպես պատմության ողջ ընթացքում, այնպես էլ պատմական զարգացումների վերջին շրջանում:

Խորհրդային Միությունը իր գոյության վերջին պահին անգամ շարունակում էր մնալ տնտեսապես զարգացած երկրներից մեկը, իսկ ռազմական հզորության տեսակետից չկար նրան գերազանցող որևէ երկիր:

Այժմյան ուսումնասիրողները ԽՍՀՄ-ի քայքայվելը փորձում են բացատրել օտար ուժերի դավադրության, կամ տնտեսական գործոններով: Տեղին չէ հակառակ փաստեր բերելու, միայն կարելի է ասել, որ ոչ մի հզոր քամի չի կարող տապալել ծառը, եթե այն արդեն ծերացած և հիվանդ չէ: Տնտեսական հզորության մասին կարելի է դատել այն փաստից, որ ԽՍՀՄ-ի քանդվելը թույլ տվեց Արևմտյան քաղակրթության սկսվելիք տնտեսական, իսկ այժմ նաև համընդանուր քաղաքական ճգնաժամը հեռացնել ևս երեք տասնամյակով:

Խորհրդային Միությունն էլ սկսեց թուլանալ, քայքայվել ու քանդվել, երբ ոչ միայն բնակչությունը, այլև պետական պաշտոնյաներն ու ղեկավարները սկսեցին չհավատալ այն գաղափարախոսությանը, որի հիմքի վրա ձևավորվել էր այդ պետությունը: Այդ պարագայում պետությունը ամենահզոր տնտեսությունն ու ամենահզոր բանակն էլ եթե ունենա, միևնույն է դատապարտված է ոչնչացման:

Ձևավորված գաղափարախոսություններից որպես ամենակայունն ու ժողովրդի վրա ամենամեծ ազդեցություն ունեցողը եղել ու մնում է կրոնը: Դժվար է պատկերացնել, որ հին Եգիպտական կրոնը, իհարկե, փոփոխություններով իր գոյությունը պահպանել է ավելի քան 3,5 հազար տարի:

Դա է պատճառը, որ այս հատորը նվիրվում է կրոններին, նրանց ծագմանը, զարգացմանը և տարածմանը:

Գրքում մենք առանձնացրել ենք հավատը կրոնից և հավատին տվել ենք այլ, ավելի խոր իմաստ, գաղափար ու բնութագրում: Մեզ հայտնի բոլոր կրոններում այս երկու հասկացողությունները նույնացվում են, կամ ներկայացվում ամբողջության առանձին մասեր:

Մենք հավատ ասելով նկատի ունենք այն գիտելիքների ամբողջությունը, որը մարդկությունը ստացել է իր ձևավորման սկզբնական շրջանում և համակարգելով դրանք՝ դարձրել է ինչպես իր աշխարհաճանաչողության հիմքը, այնպես էլ օգտագործել է հասարակական հարաբերությունները ձևավորելու համար: Կարևոր հարց է, թե ինչպես է մարդը ստացել իր սկզբնական գիտելիքները: Եվ այդ խնդիրը նույնպես քննվում է գրքում:

Պատմական զարգացումները բնակչության մեծ խմբերի տեղաշարժները բերեցին նրան, որ տարբեր ինֆորմացիոն դաշտերի, պատմական զարգացումների ազդեցության տակ ձևավորվեցին տարբեր կրոններ: Ձևավորված կրոնները բաժանվում են խմբերի՝ ըստ ձևավորման նպատակների և պատմական զարգացումների վրա ունեցած ազդեցության:

Կրոնների միջև առաջացած տարբերությունների հետևանքով առանձին էթնիկական խմբերի միջև հասարակական, սոցիալական հակասությունները սկսեցին ստանալ նաև կրոնական երանգ:

Հազարամյակներ են շարունակվել ու շարունակվում են կրոնի, կրոնական չնչին տարբերությունների պատճառով ծագած բախումները, որի ժամանակ զոհվում են միլիոնավոր մարդիկ: Պատմության ողջ ընթացքում մեծագույն հանցագործությունները կատարվել են Աստծո անունից և հանուն այդ Աստծո բերած գաղափարի:

Համաշխարհային կրոնների ձևավորման հետ մեկտեղ այդ հակասությունները ընդունեցին տարածաշրջանային բնույթ: Սպանությունները կրոնի քողի տակ դարձան համատարած և երկարատև:

Մարդիկ կարծում են, որ վերջին հարյուրամյակը մեծ առաջընթացք է բերել մարդկությանը քաղաքակրթական մակարդակով: Իրականում, տարին տարու վրա վիճակը դառնում է ավելի վատ: Խաչակրաց պատերազմների ժամանակները որոշակի ուժերի դրդմամբ և ուղղորդմամբ նորից վերադառնում են: Չնայած հիմա շատ է խոսվում քրիստոնեության և մուսուլմանության միջև գոյություն ունեցող հակասությունների ու հակամարտության մասին, բայց իրականում այդ հակասությունները չունեն որևէ կրոնական բնույթ և ավելի խորն են:

Գրքում ավելի մանրամասն ուսումնասիրված են մովսեսական և քրիստոնեական կրոնները, որովհետև այս երկու կրոնները և դրանք կրող էթնոսները մեծ ազդեցություն են ունեցել և ունեն հայության պատմական զարգացումների և այժմյան համաշխարհային իրավիճակի վրա: Նաև մեծ տեղ է տրված քրիստոնեության տարածմանը Հայաստանում և քրիստոնեության ազդեցությանը հայության այժմյան տեսակի կայացման վրա:

Գլուխ I

ՀԱՎԱՏԻ ԵՎ ԿՐՈՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հավատը ազգի դիմագիծն է՝ հոգին, սակայն պատմական զարգացումները կարող են բերել նրան, որ օտար հողում, օտար միջավայրում ձևավորված կրոնը թափանցելով փոխում է ազգի աշխարհաճանաչումը:

Եթե ազգը այդ դեպքում նույնիսկ պահպանվի, կախված ազգի գենային հնությունից և անադարտության աստիճանից, միևնույն է, ազգի հոգեկերտվածքի փոփոխումը անխուսափելի է:

Հավատում եմ, քանի որ անհերթեթ է:

Եթե Աստված գոյություն չունենար, ապա նրան անհրաժեշտ կլիներ ստեղծել:

Վոլֆեր

Գոյություն չի կարող ունենալ ազգ՝ առանց կրոնի:

Արիստոտել

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄԸ

Անհատ մարդու և մարդկային առանձին խմբերի աշխարհաճանաչման ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել և ունեն գիտությունների ուսումնասիրումը, փորձի միջոցով ինֆորմացիայի ստացումը, ինչպես նաև տրամաբանական վերլուծման ընդունակությունը, բայց նաև մեծ է ենթագիտակցության նշանակությունը, երբ մարդը ամբողջական ինֆորմացիան ստանում է առանց փորձերի կամ օրենքների ուսումնասիրման ու վերլուծության:

Պատմության մեջ հայտնի են բազմաթիվ մարդիկ, ովքեր հզոր, հիմնարար հայտնագործություններ են կատարել հենց ենթագիտակցության միջոցով: Հովհաննես Դավթյանի երկրորդ կինը՝ Էմման, պատմում էր, որ Հովհաննես Դավթյանը «Հիմնարար դաշտի տեսության» վերջնական մոդելն ու բանաձևը ստացել է երազում, երբ ամիսներ շարունակ ընթերցում էր Նարեկացուն և փորձում էր պարզել, թե ի՞նչ է կատարվել իր առաջին կնոջ հետ՝ նրա մահից հետո: Հետո միայն վերջնական բանաձևը ստանալուց հետո, Հովհաննես Դավթյանը կարողացավ ամբողջությամբ մշակել «Հիմնարար դաշտի տեսությունը»:

Նույն իրավիճակն է նաև Մենդելեևի պարագայում, որն ըստ ավանդության, պարբերականության աղյուսակը տեսել է երազում, կամ Տեսլան, որը, լինելով այդքան նորագույն հայտնագործությունների հեղինակ, չի արել ոչ մի անցումային գծագիր և իր հայտնագործությունները, ըստ իր պնդման, վերջնական տարբերակով ստացել է տիեզերքից:

Համաշխարհային պատմության մեջ, ամենամեծ չլուծված խնդիրը մնում է այն, թե մարդկությունն ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով է ստացել իր նախասկզբնական գիտելիք-

ները, որոնք այժմ էլ զարմացնում են իրենց ամբողջականությամբ և խորությամբ:

Օրինակ, Աֆրիկայում բնակվող դագոններ կոչվող ցեղը պնդում է, որ իրենք վաղուց գիտեին, որ Սիրիոյ աստղը ոչ թե մեկ աստղ է, այլ կրկնակի աստղերի խումբ, որի շուրջը պտտվում են մոլորակներ: Աստղագիտությունը դա ապացուցեց միայն 20-րդ դարի II կեսին:

Խնդրի լուծումը բարդանում է նրանով, որ մեզ հայտնի բոլոր հին հայտնի քաղաքակրթությունները՝ ինչպես Միջագետքի շումերական, եգիպտական, չինական, մայաների քաղաքակրթությունները, փաստորեն չունեն իրենց ձևավորման սկզբնական փուլերը և հանդես են եկել միանգամից ձևավորված՝ մոտավորապես միաժամանակ՝ Ք.ա. III հազարամյակի սկզբներին:

Այժմ գիտության մեջ միակ տրամաբանական տեսությունը, որը փորձում է բացատրել այս քաղաքակրթությունների ձևավորումը, կապված է արտաքին ազդեցության հետ՝ Ռերիխ, Բլավատսկայա, Սիտչին, Բորեն և այլն: Այս տեսությունը բաժանվում է 2 ուղղության:

Առաջին խումբը, որը հիմնականում ձևավորվել է 19 դարի վերջերին ու 20 դարի սկզբներին, այսպես կոչված Ատլանտիդայի տեսության կողմնակիցներն են:

Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ եղել է զարգացած քաղաքակրթություն, հանձին Ատլանտիդայի: Ատլանտիդայի բնակիչներն իրենց ապրելակերպով, զարգացման մակարդակով անցել են թույլատրելիության սահմանը, որի համար էլ բնությունը ոչնչացրել է նրանց, իսկ Ատլանտիդայից փրկված անհատները դարձել են այդ հնագույն քաղաքակրթությունների հիմնադիրները:

Երկրորդ տեսությունը պնդում է, որ հին քաղաքակրթությունները նաև մարդու ծագումը կապված են այլմոլորակա-

յինների հետ, որոնք ինչ-ինչ նպատակներով ստեղծել և կրթել են մարդկանց, իսկ հետո հեռացել՝ թողնելով մարդկանց իրենց կամքին: Այս 2 տեսությունները հաճախ որոշակի տեսակետներով նաև միացվում են իրար:

Նշենք, որ Պլատոնի նկարագրած Ատլանտիդան, իր մեջ չի պարունակում որևէ լուրջ փաստարկ բարձր, մեզ անհասկանալի քաղաքակրթության գոյության մասին և ամենայն հավանականությամբ, Պլատոնի նկարագրած Ատլանտիդան Հունաստանի հարավում՝ Կրետե կղզում և հարակից կղզիներում ձևավորված Միկենյան մշակույթին է վերաբերվում, որն իր ժամանակաշրջանի համար ուներ բարձր զարգացում, սակայն, նրանում չկար որևէ արտասովոր բան և չի կարող այդ մշակույթը համարվել հնագույն քաղաքակրթությունների հիմքը: Դրսից բերված տեսության կողմնակիցների համար կարևոր կռվան է հանդիսանում այն, որ մեզ հայտնի հնագույն բոլոր քաղաքակրթություններում կա առասպելական, գերագույն էակի պաշտամունք, որը եղել է հիմնադիրն ու ուսուցիչը այդ քաղաքակրթությունների:

Բաբելոնյան արձանագրություններում, որոնց հիմքը հանդիսացել է շումերական արձանագրությունները, պատմվում է «Մարդ-ձկան»՝ Օհաննի մասին (Նկ. 1): Նշվում է, որ նա առավոտյան դուրս էր գալիս ջրից՝ ծածկված ձկան թեփուկներով, վերևում ուներ ձկան գլխի նման գլուխ, բայց ներքևում մարդու դեմք, իսկ ձկան պոչի փոխարեն՝ մարդկային 2 ոտքեր: Ըստ նշված աղբյուրի՝ այս Օհանն է եղել մարդկանց առաջին ուսուցիչը՝ սովորեցրել է գրել սեպագրերով, կառուցել տներ ու ջրանցքներ, հաշվել, զբաղվել գյուղատնտեսությամբ, և ամեն գիշեր վերադարձել է նորից իր բնօրրան հանդիսացող ջուրը: Ձկան կերպարը՝ որպես գիտությունների գլխավոր աղբյուր, պահպանվել է նաև բազմաթիվ այլ հնագույն քաղաքակրթություններում:



Նկ. 1. Ձուկ-մարդը ըստ շումերների

Ձկան հետ, նույնիսկ ավելի արտահայտված, հին քաղաքակրթություններում կա հրեշի կերպարը: Եթե միջին դարերում, Եվրոպայում հրեշը նույնացվել է բնության քառսային, ավերող ուժերի հետ և դարձել եվրոպական հեքիաթների ու առասպելների ամենաշատ հանդիպող գործող չար կերպարներից մեկը, ապա արևելքում՝ Չինաստան, Ճապոնիա, Պոլոնեզիա (Նկ. 2), ինչպես նաև, նախակոլումբոսյան Ամերիկայում հրեշը շարունակում է մնալ, որպես քաղաքակրթությունների հիմնադիր, պետությունների և իշխող տոհմերի պահապան:

Եվրոպայում, մեծ է քրիստոնեության ազդեցությանը, բայց լավ ուսումնասիրելիս կարելի է նույնպես տեսնել նույն դրական տեսակետը հրեշների մասին, ինչ կա մեր նշված արևելյան երկրներում: Օրինակ, սլավոնական Վելեսը, որը եղել է պետականության, սլավոնական քաղաքակրթության հիմնադիրն ու պահապանը, նույնպես պատկերվել է հրեշի տեսքով կամ օձի հետ միասին:

Աստվածաշնչում օձի կերպարը նորից արձագանքն է մեր նշած հրեշի, որը, Ադամին ու Եվային գայթակղելով, ճաշակել է տալիս Բարու և Չարի ծառի պտղից և փաստորեն դառնում բանական մարդու ձևավորողը:

Մեզ համար կարևոր է նաև, որ հին հայկական առասպելներում նույնպես պահպանվել է հրեշի՝ որպես կյանքի զարգացման աղբյուր լինելու տեսությունը:



Նկ. 2. Վահագն



Նկ. 3. Սրբազան հրեշ
ըստ մայաների

Քչերը գիտեն, որ հայկական Վահագնի վիշապաքաղ մականունը ոչ միայն կապված է վիշապների սպանելու հասկացության հետ, այլ նաև վիշապաքաղը հին հայերի պատկերացմամբ, հատուկ հրեշի տեսակ է, որն ուներ խոյի կամ այծի գլուխ և օձի մարմին (Նկ. 4):

Ինչպես ծուկը անմիջապես կապվում է ջրի հետ, այնպես էլ հրեշը մշտապես կապվում է կրակի՝ հուր էության հետ: Պատահական չէ, որ մեր Վահագնի ծնունդը նկարագրված է որպես համաշխարհային տիեզերական կրակի բռնկում և

Վահագնը (Նկ. 3) մշտապես համարվել է հրածին: Ալեքսանդր Վարպետյանը կարևորում էր հուր-ջուր կապը մեր առասպելներում և նշում, որ Սասնա Ծռեր էպոսի հերոսները, լինելով հրածին, եղել են նաև ջրածին էություններ: Հրեշի էության հասկանալու համար պետք է նշել, որ ինչպես օտար աղբյուրներում, այնպես էլ հատկապես, հին հայերի մոտ, գոյություն ունեւ հրեշի հակառակ էություն, որը փորձում է խանգարել հրեշին՝ իրականացնելու իր արարչական գործունեությունը:




Նկ. 4. Վիշապաքաղ

Սլավոնների և հյուսիսային գերմանացիների մոտ գոյություն ունի մի առասպելական կերպար, հանձինս Վիհի, որի մասին հիասքանչ պատմվածք է գրել Գոգոլը: Գերմանացիների մոտ Վիհը հետագայում դարձավ անդրշիրիմյան աշխարհի տիրակալը, որը ի սկզբանե գիտեր այն ամենը ինչ եղել էր աշխարհում, կա և պետք է լինի: Սա է պատճառը, որ ինչպես նաև ներկայացված է պատմվածքում, Վիհի (Նկ. 5) աչքերը փակ են և նա չի տեսնում շրջապատը, սակայն միայն նա է, որ կարող է տեսնել կախարդական շրջանից ներս և գտնել շրջանի ներսում թաքնված արեղային:

Հայկական առասպելներում և հեքիաթներում, որպես ջրի, կյանքի առաջընթացը խոչընդոտող էություն, հանդես

Է գալիս վիշապը, որի դեմ ստիպված է լինում պայքար մղել երիտասարդ հերոսը: Շատ կարևոր է, թե ինչպես է ներկայացվում վիշապի աշխարհը, որտեղ իջնում է իր սիրած աղջկան փրկելու մեր նշած հերոսը: Այդ աշխարհում փաստորեն գոյություն չունի կայուն ժամանակ և տարածք, որովհետև հերոսն ինքը շարժվելով չի կարողանում տեղափոխվել, նաև չկա ցերեկ, կամ գիշեր: Հերոսին տրված սնունդը նույնպես նյութական չէ և բարի ուժերը զգուշացնում են, որ սննդից օգտվելու դեպքում, նա այլևս չի կարողանա վերադառնալ լույս աշխարհի:



Նկ. 5. Վիհ-ի պատկերը ըստ հյուսիսային գերմանացիների

Սլավոնական և գերմանական առասպելների Վիհ, հայերենում՝ վիշապ բառերի արմատը հենց հայերեն վիհ բառն է, որը նշանակում է անդունդ, երկրորդ վանկը շապ՝ շապիկ

արմատն է, որը ցույց է տալիս, որ մեր նշված անդունդն ունի սահմաններ և գոնե ինչ-որ ժամանակ, ունեցել է տիեզերական գոյացություն:

«Հայոց պատմության ուրվագծերի» և հատորում, խոսելով, թե ինչպես էին պատկերացնում հայերը տիեզերքի՝ աշխարհի արարումը, նշեցինք, որ գոյություն ունեցող բոլոր փաստերը ապացուցում են, որ մեր նախնիների պատկերացմամբ աշխարհի նյութական արարումից առաջ այն ամենն, ինչ պետք է ձևավորվեր, խտացված էր ինքն իր մեջ և դեռևս չկար ժամանակի, տարածության, նյութի և իդեայի բաժանում իրարից: Տիեզերական այս փուլը ստացել է Վիհ կամ Վիշապ անունը:

Հաջորդ փուլը, որին մեր նախնիները կոչել են հրեշ, այժմյան հասկացողությամբ, մեծ պայթյունն էր, երբ սկսում են ձևավորվել ժամանակը, տարածությանը, նյութը և իդեան: Մենք այնտեղ նշել էնք, որ հրեշ բառն էլ նշանակում է հրե ճանապարհ, որովհետև ինչպես հայերենում, այնպես էլ հնդեվրոպական և անգամ ոչ հնդեվրոպական լեզուներում էշ, իշ, եշ նշանակում է ճանապարհ բացող, առաջնորդող: Եվ այս արմատից են ծագում իշխան, Իշտար, Եշուա կամ Քրիշնիա, Քրիստոս հասկացողությունները:

Հայերի պատկերացմամբ, հրեշի փուլից հետո ձևավորվում է մի անցումային փուլ, որին հույները կոչել են Քաոս, իսկ հայերի մոտ այդ երևույթը ստացել է Ծովինար անվանումը (Նկ. 6): Հայկական ժայռապատկերներում բազմաթիվ են այն պահի պատկերումը, երբ նախասկզբնական քաոսից սկսում է ձևավորվել Ծովինարը, որի մարմնի վերին մասն ունի կնոջ տեսք, իսկ գոտկատեղից ներքև պատկերվում է ձկան կամ օձի տեսքով:

Ծովինարը տիեզերական ջրից՝ մեկ լիքը, մեկ կիսաբուռ խմելով ձևավորում է կանոնավոր տիեզերքը՝ Սուրբ, տիեզե-

րական սարը՝ Սանասարին և քայքայվող ոչ կանոնավորված տիեզերքը՝ հանձին Բաղդասարի, որը բառացի նշանակում է բաղդատված, կիսատ սար:



Նկ. 6. Ծովինարի ժայռապատկերը

Բաղդասարը անհրաժեշտ երևույթ է, որովհետև ամբողջացնում, լրացնում է ձևավորված, կայուն տիեզերքը՝ Սանասարին: Շատ հարցերում նա աջակցում է իր եղբայր Սանասարին, չնայած ունի ներքին հակասություն և պայքար Սանասարի հետ և որպես քառսային տիեզերք՝ բնական է, որ չէր կարող ունենալ իրենից հետո սերունդ:

Սանասարն իր 3 որդիներով խորհրդանշում է տիեզերքի զարգացման մյուս փուլը, որում Վերգոն հանդես է գալիս որպես տիեզերքի նյութական մաս, Ձենով Օհանը՝ որպես տիեզերական ինֆորմացիա՝ զգացումային դաշտ, իսկ Միերը ներկայացնում է տիեզերական կրակը, տիեզերքի միտքը:

Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ վերևում նշված ձուկ-ջուր և հրեշ-կրակ հասկացողությունները կապված են Հայկական լեռնաշխարհի բնիկների հետ և խորհրդանշում են աշխարհի փուլային արարումը և նրա էվոլյուցիոն ընդհանուր զարգացումը:

Այժմ հնագույն համարվող քաղաքակրթությունները ձևավորվել են առանց զարգացման նախնական փուլերի և կան բոլոր հիմքերը պնդելու, որ կա ավելի հինը, նախնականը և նշված քաղաքակրթությունները բերվել են դրսից: Այժմ, ինչպես հայ, այնպես էլ բազմաթիվ օտար ուսումնասիրողներ, օրինակ ամերիկացի Կ. Կունը, Բ. Մոշեզոնը, Ա.Վասիլևը, Գ. Սմիտը, Մ. Խուտտենկմանը և այլն իրենց ուսումնասիրություններում հանգել են այն եզրակացության, որ ոչ միայն բանական մարդը ձևավորվել ու իր առաջին գիտելիքները ստացել է Հայկական լեռնաշխարհում, այլև հնագույն քաղաքակրթությունները հիմնվել են Հայկական լեռնաշխարհից դուրս եկած արմենոիդ տիպի մարդկային խմբերը, նաև հետագայում էլ ղեկավարվել են նույն մարդաբանական տիպին պատկանող ներկայացուցիչների կողմից:

Չնայած, ուսումնասիրությունները մեզ բերում են Հայկական լեռնաշխարհ, սակայն նորից մեր առաջ քաշած հարցը՝ թե ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով է մարդկությունը ստացել իր սկզբնական գիտելիքները Հայկական լեռնաշխարհում, մնում է չլուծված:

Հայկական լեռնաշխարհում կատարված նորագույն հայտնագործությունները բացահայտում են, որ հնագույն քաղաքակրթության արմատները պետք է փնտրել ավելի հնագույն պատմական ժամանակաշրջաններում: Եթե մի քանի տասնամյակ առաջ Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունը համարվում էր Արատտա պետու-

թյունը, որը հայտնի էր շումերներին Բ.ա. III հազարամյակից, ուրեմն իր ձևավորման ու զարգացման սկզբնական փուլը պետք է սկսեր ամենաուժը Բ.ա. IV հազարամյակից, ապա Պորտասարի հնավայրը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհում Արատտաից շատ ավելի վաղ է քաղաքակրթությունը բարձր զարգացման հասել: Եթե հաշվի առնենք, որ Բ.ա. XII հազարամյակին ավարտվեց սառցակալման շրջանը, իսկ դրանից առաջ Հայկական լեռնաշխարհը մի քանի տասնյակ հազարամյակ կտրված էր Կովկասյան, Տավրոսի լեռնաշղթաներով, Միջերկրական ու Սև ծովերով, կարող ենք վստահորեն պնդել, որ Հայկական լեռնաշխարհում մարդու ձևավորումը, որն արդեն ընդունում են բազմաթիվ հայ և օտարազգի ուսումնասիրողներ, ունեցել է փուլեր, որոնք մեզ համար բավականին դժվար ընկալելի են:

Կենդանիների մոտ խիստ զարգացած է ենթագիտակցությունը և կապը բնության ու շրջապատի հետ: Ցանկացած կենդանի ժամեր, նույնիսկ օրեր առաջ զգում է մոտեցող վտանգը և հեռանում վտանգավոր տարածքից:

Մեր կարծիքով բանական մարդու ձևավորման սկզբնական փուլում, դեռևս մարդը ամբողջությամբ չէր կտրված բնությունից և ինֆորմացիա ստանալու գլխավոր միջոցը ոչ միայն փորձի կուտակումն էր, այլև ենթագիտակցության միջոցով անմիջապես ստացված ինֆորմացիան՝ ինֆորմացիոն դաշտերից:

Այս պայմաններում, երբ բանական մարդու մոտ զարգանում է վերացական մտածելակերպը, բայց նաև դեռևս չէր կտրվել բնության և մեր նշած ինֆորմացիոն դաշտերի հետ կապը, մարդիկ կամ էլ գոնե մարդկանց մի մասը կարողանում էին ստանալ և կուտակել այնպիսի ինֆորմացիա, որոնց մեզ հասած նշույլներն անգամ թվում են անհավանական ու անբացատրելի:

Մեր կարծիքով, բոլոր հնագույն ազգերի մոտ ձուկ-մարդու՝ Օհաննի կամ հրեշի պաշտամունքը կապվում է այդ սկզբնական ստացված գիտելիքների հետ, որը առաջին քրմերը կուտակեցին մարդու ձևավորման սկզբնական փուլում:

Քրիստոնեությունը իր աշխարհընկալումով, իր ընդունած խորհրդանիշներով շատ հեռու է հին հավատից, բայց նույնիսկ քրիստոնեությունը վերցրել է հին հավատին վերաբերվող մի շարք խորհրդանիշեր: Քրիստոնական բարձրաստիճան հոգևորականների գլխանոցի վերին մասը խորհրդանշում է մեր քննարկած ձուկը (Նկ. 8), իսկ գավազանի վերնամասը զարդարող օձերը՝ հրեշը (Նկ. 7):



Նկ. 7. Եպիսկոպոսյան գավազանը զարդարող օձեր

Ձուկ Օհաննը հենց մեր էպոսի Ձենով Օհանն է, որը ողջ էպոսում հանդես է գալիս որպես ինֆորմացիոն դաշտ: Օրինակ, երբ Դավիթը հայտնվում է փոսում, Օհանն անմիջապես իմանում է դրա մասին և նրան ֆիզիկական, անմիջական օգնություն ցույց տալու փոխարեն, պարզապես ձայն է տալիս նրան և դա բավական էր, որ Դավիթը ջարդեր 40 ջրաղացի քարերը և դուրս գար փոսից:

Հայության համար շատ կարևոր է նաև Ձենով Օհանի կնոջ՝ Սառայի կերպարի գոյությունը: Մշտապես Սառան հակադրվում է իր ամուսնուն և հաճախ հասնում իր նպատակին՝ ստիպելով Ձենով Օհանին կատարելու սխալ քայլեր: Մեր նշված դրվագում էլ, երբ քնից արթնացած Ձենով Օհանը հայտնում է, որ Դավիթը գտնվում է նեղության մեջ, Սառան հակաճառում է նրան ասելով, որ Օհանն իր համար քնում է, իսկ ուրիշի վրա հիմար երազներ է տեսնում: Ձենով Օհանը, ինչպես և այլ դրվագներում, հայտարարում է, որ Սառան օտար է և իր սիրտը չի ցավում Դավթի համար: Մեր առանձնացված հատվածում խոսվում է, որ էպոսը ստեղծող հայությունը իր ենթագիտակցությամբ զգացել է, որ հայկական ինֆորմացիոն դաշտը շեղվել է իր ճիշտ ուղուց և որոշակիորեն կրում է օտար ինֆորմացիոն դաշտի՝ ՍԱՌԱՅԻ ազդեցությունը:

Աստվածաշնչում Հովհաննեսի Ավետարանում հունարեն բնօրինակում նշվում է. «Ի սկզբանե եղել է Լոգոսը, որը Աստծո հետ էր և Աստված էր»: Լոգոսը փիլիսոփայական հասկացողություն է և նշանակում է համաշխարհային միտք: Ռուսերենում Լոգոսը թարգմանվել է բառ տերմինով և բացատրվում է, որ Աստված տիեզերքն արարել է բառի կամ սրբազան խոսքի միջոցով:

Հայ թարգմանիչները, հավանաբար ունենալով նախաքրիստոնյա հայ մտածողների աշխարհարարման մասին տեղեկություններ, նույն հատվածը թարգմանել են. «Ի սկզբանե բանն է եղել...»: Բան բառը, որի հոմանիշը չկա որևէ այլ լեզվում, հայերենում նշանակում է ոչ միայն նյութ, այլև՝ գործունեություն, ժամանակ և այն ամենն ինչ կարելի է տեղադրել այդ բառի մեջ:

Այսինքն, ըստ հայերի պատկերացման, տիեզերքի վերջնական արարումից հետո, պահպանվել է վիշապի էություն-

նը, որում ժամանակը, տարածությունը, նյութը և ինֆորմացիան գտնվում են միասնական վիճակում:

Հավանաբար առաջին քրմերը գտնում էին, որ անաղարտ, ամբողջական ինֆորմացիան իրենք ստանում են մեր նշված տիեզերական կենտրոն համարվող ԲԱՆԻՑ, որը ի սկզբանե է և հանդես է գալիս որպես տիեզերական ԱՐԱՐԻՉԻ անբաժան մաս:



Նկ. 8. Չուկ-մարդ և բարձրաստիճան հոգևորական

Հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրումը բերել է նաև մեկ այլ ընդհանրության: Գտնվել են մեծ քանակի քրմերի և արքաների գանգեր, որոնք ենթարկվել են արհեստական դեֆորմացիայի և խիստ փոփոխության են ենթարկվել: Այդպիսի գանգեր են հայտնաբերվել ինչպես եգիպտական փարավոնների, այնպես էլ չինական առաջին արքաների և մայաների մոտ, որոնք բոլորն էլ պատկանում են արմենոիդ մարդաբանական տիպին: (Նկ. 9)

Գիտության մեջ տարածվեց մի կարծիք, որ այլ մոլորակից եկած ուսուցիչները հավանաբար ունեցել են այդպիսի

գանգեր, և տեղի վերնախավը նրանց գնալուց հետո ցանկացել է իրենց նույնացնել իրենց պատկերացմամբ, հեռացած աստվածների հետ՝ համարելով, որ իրենք աստծո որդիներ են:

Բժշկական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գանգի այդպիսի փոփոխությունը բավականին ծանր հետևանքներ կարող է ունենալ մարդու վրա, և եթե այդպիսի գանգ ունեցողը մինչև անգամ նորմալ հասունանա, ապա միևնույն է, այդպիսի գանգ ունեցողները ունեցել են հոգեբանական մեծ շեղումներ:

Իրականում էլ, չնայած մեր նշված զարգացումները տեղի են ունեցել վաղ անցյալում, Ք.ա. I հազարամյակի սկզբներից, փաստորեն այդ պրակտիկան այլևս չի գործել, բայց հնագույն աղբյուրներից կարելի է գտնել բազմաթիվ փաստեր, որ հին քրմերը աչքի չէին ընկնում բնավորության զսպվածությամբ և հաճախ հրահրել են ընդհարումներ տվյալ պետության ներսում իրենց բռնկվող բնավորության պատճառով:



Նկ. 9. Գտնված դեֆորմացված գանգ

Շերոդոտը, մասնավորապես խոսելով Ապոլոնի գուշակների մասին, նշում է, որ նրանք սկզբնական շրջանում իրական գուշակություններ էին անում, նաև գրել են գուշակությունների գրքեր, որոնք հետագայում էլ ունեին մեծ նշանակություն, բայց այդ շնորհի նրանք կորցրեցին: Իր ժամանակ գուշակություններ անելիս քրմերը ստիպված էին լինում օգտվել տարբեր խթանիչներից և մեծ մասամբ կեղծ գուշակություններ էին անում:

Նոգեբանները գտնում են, որ գանգի դեֆորմացումը նշած բացասական հետևանքների հետ մեկտեղ տալիս է մարդուն մի առավելություն. գանգի վերնամասը, որին հայերը կոչում են հոգետուն, հոգետուփ, դեֆորմացիայի հետևանքով չի փակվում կամ փակվում է շատ ուշ, որի շնորհիվ, մարդը կարող է ձեռք բերել տելեպատիայի ընդունակություն:

Այս գիտնականները չեն ուսումնասիրել մարդու և ինֆորմացիոն դաշտի հետ կապը, սակայն, եթե հաշվի առնենք, որ տելեպատիան անմիջապես կապված է մեկ այլ անհատի կամ տարածաշրջանի ինֆորմացիոն դաշտի հետ, կարող ենք վստահորեն պնդել, որ մեր նշված եղանակով քրմերը փորձում էին վերականգնել իրենց կապն ինֆորմացիոն դաշտերի հետ, որը սկսել էր թուլանալ բնությունից կտրվելուն զուգահեռ:

Կարևոր է, որ սկզբնական շրջանում սրբավայրեր գոյություն չեն ունեցել և ծիսակարգերն իրականացվել են բնության գրկում: Գալիայի դրավիտները կամ Սիբիրի շամանները, որոնք բոլորն էլ աչքի են ընկել շատ բարձր ընդունակություններով որպես գուշակներ, բժիշկներ մինչև վերջ էլ չեն ունեցել բնությունից կտրված շինություններ, այլ իրականացրել են իրենց գործունեությունը բնության մեջ՝ հատուկ նշված տարածքներում, որտեղ հավանաբար կենտ-

րոնացված են այդ տարածաշրջանի ինֆորմացիոն դաշտերը: Այն փաստը, որ պատմական նորագույն շրջաններում նույնպես կարելի է բացահայտ տեսնել ինֆորմացիոն դաշտերից եկած ինֆորմացիայի ազդեցությունը և բնության բացահայտ միջամտությունը՝ մարդկանց գործունեության վրա, ցույց է տալիս, որ մարդն իր սկզբնական, հիմնական գիտելիքները ստացել է երկրագնդի բացարձակ դաշտ հանդիսացող՝ Հայկական լեռնաշխարհում:

Շեռագայում քաղաքակրթության տարածման հետ, այդ գիտելիքները տարածվել են աշխարհի բոլոր անկյուններում՝ տեղում ենթարկվելով փոփոխության տեղի դաշտերի ազդեցության հետևանքով:

ՀԱՎԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՎԵԼԸ

Մեր նշած սկզբնական գիտելիքները ժամանակի ընթացքում դառնում են այն գլխավոր չափանիշները, որոնցով քրմությունը կառավարում էր իրեն ենթակա էթնոսը: Բնական է, որ բնակչության լայն զանգվածները չէին կարող ամբողջ խորությամբ գիտակցել տրված սկզբնական գիտելիքները, նաև չունեին դրա կարիքը:

Քրմությունը գտնում էր նաև, որ չպատրաստված մարդը ստանալով նշված գիտելիքները կարող է վնասել իրեն և իր շրջապատին, որի հետևանքով առաջանում են գաղտնի, հասարակության լայն շրջաններին անհայտ գիտելիքներ: Շատ հետո քրմերը գիտելիքները բաժանեցին էզոթերիկ (ներքին) և էկզոթերիկ (արտաքին, դուրս) գիտելիքների: Էկզոթերիկ գիտելիքները ոչ միայն այն գիտելիքներն են, որոնք մարդկանց լայն խմբերի կողմից ուսումնասիրվելով կարող են օգնել մարդկանց ապրելու, այլև՝ այնպիսի գիտե-

լիքներ, որոնք ոչ միայն չեն պարունակում ամբողջական ճշմարտությունը, այլև կարող են բացարձակ սխալ լինել:

Քրմությունը գտնում էր, որ այդպիսի գիտելիքները օգնում են բնակչությանը ճիշտ կարգավորելու հասարակական հարաբերությունները: Բնակչության լայն խավերին չկար անհրաժեշտություն բացատրելու տիեզերքի ձևավորման փուլերը կամ եղանակների փոփոխման պատճառները: Բավական էր, որ պարզ սիմվոլների միջոցով հողագործն իմանար, թե ե՞րբ է պետք սկսել հողի մշակումը կամ ծմեռվա համար պաշար կուտակելը:

Նույն սկզբունքով էլ, բնակչությունը չգիտեր ակտիվ ինֆորմացիոն դաշտերի սրբազան օրերի մասին, թե որտեղ են նրանք գտնվում, երբ են այդ դաշտերը գտնվում ավելի ակտիվ վիճակում: Քրմությունը ստեղծված առասպելների և տոմարի միջոցով կարգավորում էր այդ խնդիրները: Կեղծ, սակայն, բնակչությանը խիստ անհրաժեշտ ինֆորմացիայի մասին է խոսում Խորհրդային պատմաբան Արսենևը իր ուսումնասիրությունների ժամանակ:

Խորհրդային մարդաբանները Հասարակածային Աֆրիկայում, հանդիպում են մի այսպիսի երևույթի. ցեղի տղամարդիկ կանանց և երեխաներին սովորեցնում էին, որ առանց տղամարդկանց ուղեկցության, եթե որևէ մեկը մտնի անտառ, չար ուժերն անմիջապես կոչնչացնեն նրանց: Հետագայում, երբ պատանիները հասակ էին առնում և տեղափոխվում «տղամարդկանց տուն», նրանց բացատրում էին, որ անտառում չկան որևէ չար ուժեր և ամեն մի ձայն ունի բնական պատճառներ և անհրաժեշտ է պարզապես լավ ուսումնասիրել բնությունը:

Մեր նշած նախնական գիտելիքների հիման վրա քրմությունը ձևավորում էր այն գլխավոր օրենքներն ու օրինաչա-

փոփոխությունները, որոնցով կարգավորվում էին հասարակական հարաբերությունները:

Ինչպես բնության մեջ ցանկացած համակարգ, այնպես էլ հասարակությունը բաժանվում էր 3 շերտերի՝ աշխատողների, զինվորների և քրմության: Եթե քրմությունը զբաղված էր պետության կառավարման գործերով, իսկ աշխատավոր դասը ստեղծում էր նյութական բարիքներ ողջ հասարակության համար, ապա զինվորականությունը պաշտպանում էր գոյություն ունեցող հասարակությունը և հարաբերությունների կայունությունը:

Այսպիսի կառավարման մոդելը հենվում էր գիտելիքների որոշակի քանակի վրա և այդ գիտելիքների հիմնական կրողները քրմերն էին: Քրմերն էին հետևում և ուսումնասիրում կատարվող հիմնական զարգացումներին բնության մեջ և հասարակական հարաբերություններում: Այսպիսի համակարգը ավելի ճիշտ կլինի կոչել ոչ թե կրոնապետություն /թեոկրատիա/ այլ հավատամքային պետություն: Ձեռք բերված գիտելիքները և դրանք քրմերի կողմից կարգավորելն ու հասարակությանը փոխանցելը մի կողմից պահպանում էր հասարակության կայունությունն ու ներդաշնակ զարգացումը, դրա հետ մեկտեղ մեծ հնարավորություններ էր ստեղծում անհատին ինքնուրույն գործելու և իր անձնական տեսակետը ձևավորելու:

Սա էր պատճառը, որ Հայկական լեռնաշխարհում, ինչպես նաև, նրանից դուրս ձևավորված քաղաքակրթությունների սկզբնական փուլում չկար մեծ բաժանում առանձին դասերի միջև և հարաբերությունների հիմքում դրված էր ոչ թե աշխատանքի բաժանումը, կամ ունեցած բարիքների քանակը, այլ արյունակցական կապերը:

Հետաքրքիր է, որ Սիբիրի շամանների մոտ մինչև 19-րդ դարի վերջերը կար այն տեսակետը, որ շամանությունը ոչ

թե ժառանգական է կամ ձեռք է բերվում ուսուցման միջոցով, այլ անդրաշխարհային ուժերը՝ հոգիները, իրենք են ընտրում իրենց համար միջնորդ շամանին, և որ շամանությունը որոշ չափով պատիժ է և ընտրվածի կողմից հոգիներին դիմադրելը կարող է դառնալ նրա համար ծանր հիվանդությունների, անգամ մահվան պատճառ:

Հետագայում, երբ Հայկական լեռնաշխարհից դուրս սկսվեցին ձևավորվել նոր տիպի հարաբերություններ, քրոնությունը դարձավ ապրուստի միջոց, ընտրյալների մասնագիտություն և ժառանգական:

ԿՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՎԵԼԸ

Հավատը, անկախ նրանից, իր պնդումները անելիս հենվում էր էզոթերիկ թե էկզոթերիկ գիտությունների վրա, մինևույն է այն երևույթներն ու հարաբերությունները, բացատրում էր միայն բնական օրենքներով, բնական երևույթների վրա հենվելով: Հայաստանից հեռացող խմբերի կտրվելը նախահայրենիքից, նոր բնական պայմանները և այլ գործոններ հիմնարար փոխեցին նրանց ապրելակերպը: Այս փոփոխությունները պատճառ են դառնում, որ փոխվեր նաև աշխարհաճանաչումը:

Հայկական լեռնաշխարհում ձևավորվեց համընդհանուր հավատը ստացած առաջնային գիտելիքների շնորհիվ, որը հետո կրեց որոշակի փոփոխություններ այլ վայրերում, կապված տեղական առանձնահատկություններից, բայց դրանով հանդերձ նրանք ունեին ընդհանուր հիմք: Ժամանակի ընթացքում ձևավորվում են կրոններ, որոնք պարտադիր չէ, որ ունենան մեր նշված հավատի հիմնական սկզբունքները:

Հավատի պարագայում եզրակացություններն ու ենթադրությունները բացառապես հենվում էին բնական օրենքների և կուռ տրամաբանության վրա: Սա է հիմնական պատճառը, որ հաճախ հին կրոնները որոնք ավելի մոտ էին հավատին, կոչում են նաև բնապաշտական՝ ցանկանալով դրա մեջ դնել այլ իմաստ:

Այս պարագայում կարող ենք իրարից տարբերել հրաշք և գերբնական հասկացողությունները: Հրաշք հասկացողությունը գալիս է ընդհանուր հավատից: Բառը կազմված է հուր և ասք արմատներից: Ասք արմատի Աս-ը նշանակում է բարձրագույն երևույթ, և բառը կնշանակի երևույթ, որի ակունքը հուրն է, այսինքն մեր նշած ինֆորմացիոն դաշտը:

Այլ է գերբնական հասկացողության պարագայում: Այն նշանակում է, որ կարող են լինել երևույթներ, որոնք բարձր են բնության երևույթներից և բնական օրենքներից, որը հակասում է հավատի հիմնական սկզբունքներին:

Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում ձևավորվում են հասարակական նոր հարաբերություններ: Առաջնային են դառնում ոչ թե արյունակցական կապերը, այլ հասարակության մեջ ունեցած դիրքը: Առաջանում են առաջին դասակարգային պետությունները:

Դեմ գնալով հասարակական, բնական զարգացման տրամաբանությանը՝ Ք.ա 2-րդ հազարամյակի սկզբներից Հայաստանից դուրս եկած զինված ջոկատները մտան նշված տարածքներ՝ նպատակ ունենալով վերականգնել հին հասարակական հարաբերությունները:

Հնարավոր չէ կանգնեցնել հասարակական զարգացումները: Հեռացած զինվորների մի մասը նոր վայրերում դարձան տեղական պետությունների իշխող վերնախավի ներկայացուցիչներ, իսկ հայրենիք վերադարձածները իրենց հետ բերեցին դրսում ձեռք բերած, Հայաստանին մինչ այդ

օտար հասարակական հարաբերություններ: Այս պարագայում քրմությունը փակ դաս դառնալով կտրվեց բնակչությունից, իսկ հետո պաշտպանելով իրենց ու վերնախավի շահերը հավատից ձևավորվեցին կրոններ:

Այս տեսակետից կրոնը պայմանական կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Կրոններ, որոնք անմիջապես ձևավորվել են Հայկական լեռնաշխարհից դուրս գալուց հետո և կրում են Հայկական լեռնաշխարհում ձևավորված հավատի ազդեցությունը:
2. Կրոններ, որոնք նպատակ ունեն միավորելու տարբեր, իրարից անկախ էթնիկական խմբերին:
3. Դասակարգային կրոններ: Եվրոպական մի շարք ուսումնասիրողներ և հատկապես խորհրդային պատմաբանները գտնում էին, որ կրոնը ձևավորվել է միայն դասակարգերի առաջացման և դրա հետևանքով պետականության ձևավորման հետ միասին: Իրականում այսպիսի կրոնները կազմում են ընդհանուր կրոնների երրորդ խումբը, որոնք նպատակ ունեն ճնշված դասակարգերին պահել իշխող դասակարգի ենթակայության տակ:
4. Համաշխարհային կրոններ, որոնք, ձևավորվելով առանձին ժողովրդի կամ մարդկային մի խմբի միջավայրում, հետագայում ձեռք են բերել համաշխարհային տարածում և համաշխարհային նշանակություն:

Նշված կրոնների բաժանումը ոչ միայն պայմանական է, այլև միևնույն կրոնը կարող է պատկանել մեր նշած երկու տարբեր բաժանումներին՝ կախված նրանից, թե կրոնի ձևավորողները իրենց առջև ինչ կոնկրետ խնդիր են դրել, կամ ինչպիսի հասարակական միջավայրում է ձևավորվել այդ քննարկվող կրոնը:

ՀԱՎԱՏԻ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԿՐՈՆՆԵՐ

Հավատի փոփոխման կարևոր փուլ էր Հայկական լեռնաշխարհից բնակչության դուրս գալու ժամանակաշրջանը և նրանց հաստատվելը այլ տարածքներում, որոնց նախկին բնակիչները ունեին իրենց աշխարհաճանաչումը և իրենց հատուկ ներքին հարաբերությունները, որոնք կարող են չհամապատասխանել վերաբնակիչների հավատի և հասարակական հարաբերությունների սկզբունքներից մեկին կամ մի քանիսին:

Հայկական լեռնաշխարհից դուրս եկող մարդաբանական խմբերը, հեռանալով նոր տարածքներ, հիմնականում կապված նոր բնակլիմայական պայմաններից, տեղի բնիկների հետ ձևավորվող հարաբերություններից, նաև նոր վայրի ինֆորմացիոն դաշտի աղդեցություններից ժամանակի ընթացքում ձևավորում են ընդհանուր հավատի հիման վրա կրոններ:

Դեռևս 19-րդ դարի եվրոպացին ուսումնասիրողները գտան, որ Եգիպտական, Միջագետքյան և Սահարայի քաղաքակրթությունները ունեն մեծ ընդհանրություններ և որ, այդ քաղաքակրթությունների վրա մեծ, հիմնարար ազդեցություն է թողել միանման մարդաբանական մի տիպ, որի այժմյան կրողը հայի տեսակն է:

Այս պատճառով էլ կովկասյան ռասսայի /եվրոպական/ այդ տիպը ստացավ արմենոիդ անվանումը: Պարզվեց, որ արմենոիդ մարդաբանական տիպը Աֆրիկա է հասել երկու ճանապահով. մեկը Եվրոպայով՝ անցնելով Զիբրալթարի նեղուցը, իսկ մյուսը՝ Միջագետքով և Ասորիքով:


Այս ձևավորված քաղաքակրթություններին հատուկ էին միևնույն թաղման ծիսակարգը, երբ մահացածներին տալիս էին սաղմի ձև: Տղամարդկանց թաղում էին աջ ուսի վրա

թեքված՝ աջ շրջապտույտ, իսկ կանանց հակառակը՝ ձախ շրջապտույտով:

Հետագայում, երբ ձևավորվեց եգիպտական ազգային կրոնը, մահացածներին թաղում էին մեջքի վրա պառկած /եգիպտական դասական թաղում/, կար մահացած հորը դիմելու հատուկ ծիսական կարգ. զոհաբերության ժամանակ, որդին դիմում էր մահացած հորը՝ ասելով, որ նա շուտ գա իր ձախ ուսի վրա պառկած վիճակից, պառկի աջ ուսի վրա և ընդունի իր զոհաբերությունը: Որովհետև եգիպտացիների մոտ շարունակվել էր պահպանվել աջ պտույտը՝ որպես ճիշտ ոգեղեն պտույտ, իսկ ձախը խորհրդանշում էր իզականը, նյութականը՝ նրա ոչ ճիշտ լինելը: Սրա ապացույցը նաև այն է, որ եգիպտացիների մոտ եղել է անցումային փուլ:

Երբ Եգիպտոսում սկսեցին բնակվել այլ էթնոսին պատկանող մարդիկ, հաստատվեց թաղման նոր կարգ, ըստ որի աջ պտույտով թաղում էին բնիկ եգիպտացիներին՝ անկախ նրանց սեռից, իսկ օտարազգիներին թաղում էին միայն ձախ պտույտով:

Նույնը կարելի է տեսնել նաև Եգիպտոսից հեռու գտնվող Տիբեթում (Նկ. 10): Մեզ համար այս երկու երկրները կարևորվում են նրանով, որ իրենց քարացածության շնորհիվ պահպանել են հին հավատի բազմաթիվ խորհրդանիշներ և գաղափարներ: Հատկապես հետաքրքիր են նշված կենդանիների խորհրդանիշները, տարբեր տեսակի խաչերի և թվերի պաշտամունքը (Նկ. 11):



Նկ. 10 Տիբեթական խորհրդանիշ քառաթև ու եռաթև խաչեր

Հին հավատի ընդհանրության հիմքերի վրա ձևավորված կրոնների հետաքրքիր օրինակ են Եգիպտոսում և Տիբեթում ձևավորված հնագույն կրոնները: Երկու կրոններում էլ կան «Մեռյալների գիրքը»՝ հիմների ժողովածուները, որոնք պետք է օգնեին մահացածներին մահից հետո դուրս գալու ծննդյան և մահվան շրջապատույտից և միանալու տիեզերական ոգուն:

Այս գրքերի ուսումնասիրողները եկել են այն համոզման, որ այս ժողովածուները, ունենալով հիմնական գաղափարական ընդհանրություններ, ունեն նաև որոշակի տարբերություններ, նաև լրացնում են մեկը մյուսին, որի համար էլ եզրակացրել են, որ ոչ թե կատարվել է փոխառություն մեկը մյուսից, այլ երկուսն էլ օգտվել են մեկ այլ, երրորդ ժողովածուից, որը եղել է նախասկզբնականը:

Երկու ժողովածուներում էլ ունեն միասնական պատկերացումներ, ընդհանուր թվերի սրբություն, հավատ տարբեր քարերի, մետաղների, մոգական հատկությունների վերաբերյալ: Նման են նաև մահվան հիմնական արարողությունները և պատկերացումները, թե ինչ է կատարվելու մարդու հետ նրա մահից հետո:



Նկ.11. Եգիպտական կրոնական խորհրդանիշներ

Հին եգիպտացիները իրենց կրոնական բոլոր գրականությունը գրել են փոխաբերական իմաստով, որը ինչպես տեսանք վերևում, հատուկ էր հին հայկական հավատքին: Հասարակ ժողովրդին քարոզում էին, որ մարդը մահից հետո ընկնում է մեկ այլ տարածք, որը նույնպես բացարձակ նյութական է: Այն միայն երկրային կյանքից տարբերվում էր նրանով, որ այնտեղ կարիք չկա ամբողջ օրը քրտնաջան աշխատելու ու տառապել և մարդը միայն պետք է հաճույքներ ստանա՝ ապրելով այդ հավերժության մեջ:

Դրան հակառակ, շատ բարդ էգոթերիկ կառուցվածք ուներ պատկերացումը ընտրյալների համար: Եգիպտական քրմերը գտնում էին, որ ինչպես տիեզերքը, այնպես էլ մարդը բազմաշերտ է: Նրանք նշում էին, որ մարդը կազմված է նյութական մարմնից՝ Սախ, զգացումային մարմնից՝ Կա և մտավոր էներգետիկ դաշտից՝ Բա: Սրանք իրենց հերթին բաժանվում են իրենց ենթամասերի:

Քանի որ «Մեռյալների գիրքը» ներկայացնում է մահից հետո կատարվելիքը, ուշադրություն չի դարձվում ֆիզիկական մարմնին, սակայն, հենվելով հայկական հին հավատի վրա, կարող ենք պնդել, որ եգիպտացիները նույնպես ֆիզիկական մարմինը բաժանում էին երեք մասի: Գոտկա-

տեղից ներքև համարվում էր բացարձակ նյութականը՝ անասնականը, գոտկատեղից մինչև պարանոցը պատկանում էր մարդու զգացմունքները կրող տարածքին, իսկ գլուխը համարվում էր մարդու մտքի՝ ինֆորմացիոն դաշտի կրողը:

Նույն սկզբունքով զգացումային դաշտ համարվող Կան, որը այժմյան հասկացողությամբ ավելի մոտ է մենթալ մարմնին հասկացողությանը, իր հերթին բաժանվում է երեք էք-երի. սրտի էք-ը պատասխան էր տալիս մարդու զգացմունքներին, երկրորդ էք-ը կրում էր այն, ինչ փոխանցվել էր մարդուն իր նախնիներից, որը այժմյան հասկացողությամբ կարող ենք կոչել կարմա, և երրորդ էք-ը գլխի էք-ն էր կամ գլխի հոգին, որը մարդու ինքնագիտակցումն էր:

Մարդու միտքը՝ Բան, նույնպես ուներ իր բաժանումը և համարվում էր կյանքի էներգիան: Եթե նրա ամենացածր շերտը պատասխան էր տալիս պարզագույն խնդիրների լուծման համար, ապա բարձրագույն շերտը համարվում էր աստվածային կյանքի էներգիան, որը կոչվում էր Ախ:

Իր հերթին Ախ-ը՝ բաժանվում էր երեք մասերի. առաջինը անհատ մարդու գիտակցությունն էր, երկրորդը կարելի է կոչել կոլեկտիվ գիտակցություն, իսկ երրորդ բարձրագույն Ախ-ը համարվում էր, որ տարածված է ողջ տիեզերքում, գտնվում էր ցանկացած շնչավոր կամ անշունչ մարմնի մեջ և որ մարդը տիեզերական Ախ-ի մասնիկն էր, որը մեռնելուց հետո, երբ անցնում էր բոլոր փորձություններով և դուրս է գալիս ծննդյան ու մահվան շրջապտույտից, միանում է տիեզերական Ախ-ին:

Եթե հասարակ ժողովրդին քարոզում էին, որ մահից հետո փորձություններին չդիմացող մարդկանց էությունը ոչնչացվում է սարսափելի հրեշի կողմից, ապա էզոթերիկ

բացատրությամբ մարդը ստիպված վերածնվում է նոր մարդկային մարմնում:

Գրքում նշվում է, որ ինչպես տիեզերական գիտակցությանը, այնպես էլ շրջապտույտից դուրս եկած մարդու գիտակցությունը բնակչություն է հաստատում արևի վրա: Մեզ թվում է, որ եգիպտացիները բավականին լավ գիտեին տիեզերքի կառուցվածքը և, որ մեր արևը ընդամենը միլիարդավոր աստղերից մեկն է, որի համար էլ ամենայն հավանականությամբ նրանք նկատի ունեին ոչ թե մեր արևը, այլ տիեզերական կենտրոն հանդիսացող ինֆորմացիոն դաշտը՝ տիեզերական Արևը, որը կարգավորում է ամբողջ տիեզերքի էվոլյուցիան:

Հայաստանից դուրս եկած ցեղերի մի կարևոր ուղղություն էր նաև Արևելքը՝ դեպի Իրանական սարահարթ, Միջին Ասիա և Հնդկաստան: Եթե Իրանում, Հնդկաստանում բացահայտ երևում են հայկական հավատի հետքերը, ապա Միջին Ասիայում դրանք բավականի դժվար է գտնել: Արաբների, հետո թուրքերի մուտքը Միջին Ասիա պատճառ դարձան, որ այս տարածքում հաստատվեց իսլամը, որը հին հայկական հավատքի հետ ուներ շատ փոքր, չզգացվող կապ:

Չնայած սրան, Ղազախստանում, Թուրքմենիայում պահպանվել են բազմաթիվ ժայռապատկերներ, որոնք իրենց կրող գաղափարներով մոտ են հայկական ժայռապատկերներին և ցույց են տալիս նրանց կապը հայկական հավատի հետ:

Արիական ցեղերը Միջին Ասիայում ունեցել են որոշակի ներքին ընդվզումներ, որի հետևանքով, բաժանվել են իրարից: Մի խումբը, շարժվելով հյուսիս, հիմք է դրել սլավոններին, իսկ մյուս խումբը հասել է մինչև Հնդկաստան ու Չինաստան:

Ծագումով ռուս հայագետ Սոբոլը գտնում է, որ սլավոնների նախահայրենիքը եղել է Հայաստանի Բարձր Հայքի շրջանը, որտեղից նրանք վերահաստատվել են իրենց նոր հայրենիքում: Հետաքրքիր է, որ բիլինաների հերոս՝ Վոլգան, պատերազմ է մղել Հնդկաստանի դեմ, որը հենց անմիջական արձագանքն է Միջին Ասիայում տեղի ունեցած ներքին բախումներին:

Հայ ուսումնասիրողների մոտ շատ լավ ուսումնասիրված է Սվետոզորի կապը Հայկական լեռնաշխարհի հետ և առավել ևս, նորագույն ուսումնասիրությունները հաստատում են, որ արևելյան սլավոնները քրիստոնեություն ընդունելուց հետո էլ շարունակում էին ընդունել իրենց կապը Հայկական լեռնաշխարհի և հայության հետ: Հին սլավոնական լեզվի կապը սանսկրիտի հետ, աստվածների և առասպելական կերպարների անունների նմանությունը բացահայտ ցույց են տալիս նաև այս 2 մեծ էթնոսների հնագույն կապը:

Մյուս կողմից կարելի է բացահայտ կապ գտնել Արևելյան Սլավոնների և Եգիպտոսից մեզ հասած հավատքների միջև: Որքան մեզ հայտնի է Ռուսաստանում բազմաթիվ ուսումնասիրողներ փորձում են գտնել իրենց արմատները, սակայն հիմնականում գիտական լուրջ հիմքեր փնտրելու փոխարեն ստեղծում են գիտության հետ կապ չունեցող տեսություններ հնագույն Ռուսաստանի կամ հյուսիսային քաղաքակրթության մասին, որոնց անմիջական ժառանգներն են իրենք:

Մեր անմիջական նպատակը չէ ուսումնասիրել ռուսների արմատները և նրանց զարգացման փուլերը, բայց կցանկանայինք մի քանի կարևորագույն նշումներ անել, որը ցույց է տալիս առաջին հերթին նրանց հնությունը և

երկրորդ նրանց անմիջական կապը հին հայկական հավատի հետ:

Դրա համար մեծ նշանակություն ունի ռուսական բիլինաներում Սվետագորի կերպարը: Մշտապես նշվում է նրա անմիջական կապը Սրբազան Արարատ երկրի հետ: Դրան հակառակ հերոսը միշտ նշում է, որ ինքը գտնվում է լեռներում և տրված չէ իրեն շրջել ռուսական հողի վրայով: Կա մի ամբողջական պատում, թե ինչպես է Սվետագորը գնում փրկելու Տրոյայի տիրուհուն և թե ինչպես է Տրոյայի տիրուհին գալիս Արարատ:

Այս նկարագրված դեպքերը խոսում են այն մասին, որ Ք.Ա 1200-ական թվականներին նախասլավոնները դեռևս գտնվում էին Հայաստանում և ակտիվորեն մասնակցել են ինչպես Տրոյայի պաշտպանությանը, այնպես էլ դեպի Հունաստան դորիական ցեղերի արշավանքներին: Հունաստանում բնակվող աքարացիները Ք.ա. 1710 թ. դավադրաբար գրավեցին ու ավերեցին Տրոյան: Արիական ցեղերը դրա վրեժը առնելու համար մտան Հունաստան և հիմեցին իրենց իշխանությունները, որոնցից հատակապես պատմության մեջ մեծ հետք թողեց Սպարտան, որը տիպիկ արիական ռազմականացված պետություն էր, և նրա նախատիպը հայկական Միտանին էր:

Ժողովրդական հեքիաթներն ու ավանդազրույցները ամենամեծ հետքն են կրում տվյալ ժողովրդի հին հավատի, բարոյական սկզբունքների մասին: Բացառություն չեն նաև ռուսական հեքիաթները, չնայած, դրանք ենթարկվել են քրիստոնեության շատ մեծ ազդեցությանը: Ճիշտ կլիներ, որ ռուս ուսումնասիրողները մանրամասն ուսումնասիրեին իրենց հեքիաթների հերոսներին և բացահայտեին այն գանձերը, որ կան ցանկացած ժողովրդի հեքիաթներում:

Այդ ուսումնասիրությունները խիստ ծավալուն են և դուրս մեր հիմնական նյութից, բայց կա անհրաժեշտություն քննելու արևելյան սլավոնների հեքիաթներում ամենաշատը հանդիպող երկու կերպարների: Դրանցից առաջինը Կոշեյ Բեսմերտնին է, իսկ երկրորդը՝ Բաբա Յագան: Այս երկու կերպարները նոր գրված հեքիաթներում համարվում են չար և հաճախ թվում է թե դաշնակիցներ են և միասին են գործում դրական հերոսների դեմ:

Առաջին հերթին հետաքրքիր են նրանց անունները, որոնց բացատրությունը մենք այդպես էլ չգտանք ռուս ազգագետների ու լեզվաբանների մոտ: Անհմաստ, նույնիսկ ազգային արժանապատվությանը վիրավորող է այժմ գործող մոտեցումը, երբ շատ բառեր, փորձ են արվում ռուս ուսումնասիրողների կողմից բացել թուրքերեն կամ թաթարերեն լեզուներով: Այսպես է նաև Կոշեյ անվան հետ: Այժմ մեծ տարածում ունի այն տեսակետը, որ այս բառը ունի թաթարական ծագում և նշանակում է ստրուկ:

Հեքիաթի տրամաբանությունն արդեն հակառակն է պնդում: Առաջին անգամ Կոշեյ բառը ռուս գրականության մեջ օգտագործվել է, մեր կարծիքով, «Ասք Իգորի գնդի մասին» աշխատությունում: Այդպես է պեչենենգ առաջնորդի մականունը, որը գերում է Իգորին: Այստեղ գերված ստրուկը Իգորն է, և Կոշեյ հեղինակը պետք է կոչեր Իգորին, այլ ոչ պեչենենգների առաջնորդին, ըստ տրամաբանության: Ուրեմն սխալ է այդ ենթադրությունը:

Իրականում հավանաբար Կոշեյ բառը չի ծագել արևելասլավոնական ոչ մի բառից, այլ հակառակը Կոշեյի անունից, որը դեռ պետք է ռուսները վերծանեն, ծագել է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ դրամապանակ /կաշիլյոկ/, հնձել /կասիտ/ և ոսկոր /կոստ/: Ինչն է իրար կապում այս երեք բառերը: Առաջին՝ Կոշեյ Բեսմերտնին ներկայացվում

է որպէս շատ նիհար, անգամ միայն կենդանի կմախք, որը համապատասխանում է ոսկոր բառին:

Երկրորդ հերթին նա ներկայացվում է որպէս շատ ժլատ, որը նստած է իր հսկայական կարողության՝ ոսկու, թանկարժեք քարերի վրա, որը համապատասխանում է արկղին, թանկարժեք իրերի պահոցին, դրամարկղին կամ դրամապանակին: Երրորդը նրա հնձել բառն է որպէս կտրող, ավերող և ոչնչացնող:

Հավանաբար ինչ որ կորած կապ կա ռուսերեն ծամկոսա բառի հետ, որը խորհրդանշում է հեքիաթի գլխավոր հերոսուհուն՝ նրա երկար մազերը: Կոշեյը փախցնում ու իր մոտ է թաքցնում գեղեցկության, սերնդի շարունակման, ծաղկունքը ապահովող գեղեցկուհուն, որի գլխավոր խորհրդանիշը նրա խիտ, երկար ծամերն էին:

Դրանից հետո մենք կարող ենք վստահորեն ասել, որ Կոշեյ Բեսմերտնին կյանքի արարման, բնության հակառակ ուժն է, որը ցանկանում է ամեն ինչ կուտակել իր մեջ, ոչնչացնել ինչը չի կարող ընդգրկել իր ներսում: Այս տեսակտից նա շատ է նման մեր վերևում քննարկված Վիհ-ին, որը ներկայացնում էր տիեզերքի նախասկզբնական փուլը: Նույնիսկ երկու կերպարներ նման են իրար արտաքինից: Երկուսն էլ ունեն մեծ կոպեր և միայն իրենց ծառաներն են, որ կարող են բարձրացնել նրանց կոպերը որպէսզի նրանք կարողանա տեսնել իրենց շրջապատը:

Այլ է Բաբա Յագայի պարագայում: Նրա անունը կարելի է միայն բացել հին հավատի միջոցով: Մենք տեսանք, որ եգիպտական հին հավատում մարդու, նաև տիեզերքի էներգետիկ, ինֆորմացիոն դաշտը ընդհանրական իմաստով կոչվում էր Բա, արմատի կրկնակի արտահայտումը ցույց է տալիս նրա բարձրագույն աստիճանը, այսինքն

ռուսների մոտ այդքան տարածված բաբա բառը իրականում ունի դրական, մեծ ոգեղենության արտահայտում: Յագա բառ ագա արմատը ցույց է տալիս կերպարի անմիջական կապը կրակի հետ, 'Յ' տառը հնագույն հավատքում ներկայացնում էր որպես նյութականություն, երկրային էությունների բացահայտումը, որի համար էլ հայոց այբուբենում պատկերվում է որպես նյութը, ուժը արտահայտող ցուլի գլուխ՝ կոտոշներ:

Բաբա Յագան դա նյութական աշխարհի, կրակի բացահայտ ոգին է, որով նա դառնում է մի կողմից երկրի պահապանը, մյուս կողմից՝ կապը այլ աշխարհների հետ, որը նույնպես շատ լավ երևում է հեքիաթներում:

Առաջին հերթին նշվում է, որ հերոսի մի ոտքը ոսկրից կամ փայտից է և խորը մխրճված է հողի մեջ, որից շատ լավ երևում է նրա կապը երկրի հետ: Բոլոր հեքիաթներում, չնայած Բաբա Յագան քմահաճ է ինչպիսին բնությունը, բայց ի վերջո նա է, որ ցույց է տալիս թե ինչպես հերոսը գտնի Կոշեյ Բեսմերտնուն և ազատի զարթոնք, ծնունդ, կյանք խորհրդանշող հերոսուհուն:

Շատ փոխաբերական, բայց նաև համակարգված են հանդիպման տեսարանները հերոսի և Բաբա Յագայի հետ: Առաջինը Բաբա Յագան ապրում է հավի ոտքեր ունեցող տան մեջ, որով այդ տունը անմիջապես կապվում է կյանքի սկիզբ, վերածնունդ խորհրդանշող հեքիաթային հավքի հետ: Հայկական հեքիաթներում նույնպես գլխավոր հերոսը վիշապի երկիր հասնելու համար հաճախ օգտվում է հրաշք հավքի օգնությունից:

Կարևոր է նաև հերոսի դիմելը խրճիթին, երբ բոլոր տարբերակներում նա պահանջում է, որ խրճիթը դեմքով շուռ գա դեպի իրեն, իսկ հետևով անտառին: Խրճիթը

ներկայացվում է որպես այն դուռը, որտեղից հերոսը կարող է անցնել այլ աշխարհներ, այս դեպքում վտանգներով լի անտառ, որտեղ գտնվում է իր սիրելին:

Շատ կարևոր է նաև, որ Բաբա Յագան հերոսին մտցնում է վառարանի մեջ: Ըստ հին հավատի ոչ ոք չի կարող անցնել այլ, ոչ երկրային տարածքներ, եթե չի մաքրվել երկրային բացասական հատկություններից և երկրային մեղքերից: Այս նաև ցույց է տալիս Բաբա Յագայի կապը կրակի հետ:

Այժմ էլ Արևմտյան Սիբիրում կան մարդիկ, որոնց ժողովուրդը կոչում է Բաբա Յագայի երեխաներ: Այդ մարդիկ երեխա ժամանակ անցել են մի շատ հետաքրքիր կրոնական արարողություն:

Այդ տարածքներում կա սովորություն հիվանդ, թույլ երեխաներին փաթաթել նոր բացված խմորի մեջ և դնել ռուսական վառարանի մեջ, որում իհարկե կրակ չկա, բայց ունի բավականին բարձր ջերմություն: Երբ խմորը սկսում է չորանալ, երեխային հանում են վառարանից. գտնելով, որ նրա հիվանդությունները բուժվել են, սա ցույց է տալիս, որ ռուսների մոտ երկար ժամանակ պահպանվել է տիեզերական պահապան ոգու գոյությունը հանձինս Բաբա Յագայի: Կարևոր է նաև, որ ռուսների մոտ կա նաև հավատ Ոսկե Բաբայի մասին, որը կարող է կատարել մարդու ցանկացած երազանքը, հատկապես եթե դրանք ունեն նյութական տեսք:

Այս բոլորը որոշակի ընդհանրություններ ունի հայկական հին հավատում գոյություն ունեցող Ոսկեմազ, Ոսկեհատ Անահիտի հետ, որը նույնպես հանդիսանում է երկիր մոլորակի բերրության, ծննդի, նյութականության հովանավորող դիցուհին:

Կոշեյ Բեսմերտնու և Բաբա Յագայի կերպարները հնագույն շրջանում ունեցել են նաև այլ մեկնաբանություն:

Նրանք խորհրդանշում են տիեզերական մշտական իրար հակառակ գործող ուժերը: Տիեզերքի արարումից անմիջապես հետո ըստ բնական օրենքների առաջանում են իրար հակառակ գործող երկու ուժեր: Առաջինը պահպանման և էվոլյուցիայի ասպիտակ ուժն է, որը ներկայացնում է Բաբա Յազան:

Դրան հակառակ գործում է հին վիճակը վերականգնել ցանկացող ուժը: Երկրորդ ուժը ներկայացնում է Կոշեյ Բեսմերտնին, որի համար էլ ըստ ներկայացված կերպարների նա բավականին ընդհանրություններ ունի վերևում նկարագրված Վիհ էության հետ, որը մեր նշված հավատի նույնացվում է Վիշապ էության հետ և ներկայացնում է աշխարհը մինչև մեծ պայթյունը:

Ցանկացողը կարող է գտնել բազմաթիվ ընդհանրություններ աշխարհի տարբեր վայրերում ձևավորված հնագույն կրոններում:

Այդ բոլորը փորձել են բացատրել կամ պատահական զուգահեռությամբ կամ, որ դրանք փոխառության արդյունք են: Իրականում այդ կրոնները գոնե ձևավորման առաջին փուլում գտնվել են հավատի անմիջական գաղափարական ազդեցության տակ և հավատից վերցրել են բազմաթիվ հիմնական գաղափարներ և խորհրդանիշեր՝ հաճախ փոխելով կամ աղավաղելով դրանք ըստ նոր պայմանների:

ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐ

Կրոնների երկրորդ խումբը ազգային կրոններն են: Դրանց նպատակը կոնկրետ էթնոսի՝ ժողովրդի կամ ազգի միավորման խնդիրն է, որի համար էլ այսպիսի կրոններում բավականին թույլ է արտահայտված կապը հին հավատի հետ, նաև թույլ է ներկայացվում աշխարհի արարման տեսությունը:

Մոտավորապես Հին Թագավորության շրջանում ձևավորվեց եգիպտական կրոնը, որը իր ունեցած էզոթերիկ գիտությունների հսկայական ծավալի շնորհիվ իր գոյությունը պահպանեց մի քանի հազարամյակ, նաև դարձավ գլխավոր աղբյուրը, որից օգտվեցին արևմտյան, հատկապես հունական մտածողները: Նոր կրոնական փոփոխություններ տեղի ունեցան Նոր Թագավորության շրջանում, որը սկսվում է հիքսոսների արշավանքներով:

Վերևում, մենք քննարկեցինք այլ սկզբունքով ձևավորված կրոններ, սակայն, դա չի նշանակում, որ խորհրդային պատմագրության տեսակետը բացարձակ սխալ է: Մարդկության զարգացման գոնե վերջին 3000 տարին անցել է հիմնականում սոցիալական ուղղվածությամբ, երբ հասա-

րակության ներսում աստիճանաբար առաջին պլան են մղվում սոցիալական խնդիրները, որի հիման վրա էլ դասակարգերի միջև հարաբերությունները, ինչպես նաև նրանց պայքարը:

Ռուսական այժմյան քաղաքագիտության կարևորագույն ներկայացուցիչ Ֆետիսովն իր աշխատություններում առաջ է քաշել մի բավականին սրամիտ տեսություն, որը պայմանականորեն կարելի է կոչել «Եգիպտական քրմերի համաշխարհային դավադրություն»: Ըստ այդ տեսության, եգիպտական քրմերը, Ք.ա. XIII դարում մշակել են եգիպտոսին հակառակորդ խեթական պետությանը թուլացնելու մի ծրագիր: Ըստ Ֆետիսովի, քրմերը մի բավականին մեծ խումբ ստրուկների տվել են լուրջ կրթություն և քրմերի գլխավորությամբ որպես ռազմագերիների փոխանցել խեթերին:

Կարճ ժամանակահատվածում այս ստրուկները կարողացել են իրենց ազդեցությունը տարածել խեթական ստրկատերերի, իսկ հետո՝ ընդհանրապես պետության ղեկավար վերնախավի վրա: Նրա տեսության համաձայն, այս ուղարկված քրմերը ժառանգաբար մշտապես կառավարում են աշխարհը և այս ստրուկներից էլ ձևավորվել են մովսեսականները, որոնք կազմում են համաշխարհային գաղտնի կառավարության, այսինքն՝ եգիպտական քրմերի քաղաքական, տնտեսական հենարանը:

Այս սկզբունքով է բացատրվում նաև Խազարական պետության ստեղծումը: Ռուս և արևմտյան պատմաբանները խազարների ծագումը համարում են թուրքական: Այս ժողովուրդը չի թողել ոչ գրականություն, ոչ քաղաքներ, ոչ նյութական մշակույթային արժեքներ: Միակ գրավոր փաստաթուղթը, որ հասել է մեզ խազար կազանի նամակն է որտեղ կազանը իրենց ծագեցնում է Հաբեթի թոռ Թորգո-

մից՝ այսինքն խազարներին համարում է ծագած հայերից, որը նորից զուրկ է պատմական հիմքից:

Խազար անունը իրականում ծագում է հայերեն հազար բառից: Հայ առաջնորդների գլխավորությամբ Հյուսիսային Կովկասի բնակիչները և այնտեղ նոր թափանցած անհայտ ծագման պոլովցիները հիմնել էին ռազմականացված տարածքներ, որտեղ բնակվում էին միավորված հազարական զինվորների խմբերով:

Այսպիսի բնակավայրերից էր Սարգսեյին, որը գտնվում էր այժմյան Ռոստով քաղաքից ոչ հեռու: Անունը ցույց է տալիս նրա կապը հայերի հետ: Այս ռազմական ջոկատները ունեին տարբեր ազգային ծագում: Այս տարբեր ծագման բնակչությունը մի քանի մովսեսականների կողմից կրոնափոխ եղավ ու դարձավ մովսեսականների աշքանազ ճյուղը:

Նորից այս դարավոր, շարունակվող դավադրությամբ է փորձում բացատրել Եվրոպայում իրականացված կրոնական պատերազմները ու արյունահեղ բուրժուական հեղափոխությունները, որոնցից հիմնականում օգտվեցին մովսեսական ծագման վաշխառուները: Նրանց մի մասն էլ հարստության միջոցով կարողացան ազնվականի տիտղոսներ գնեց և դառնալով Նոր Ազնվականություն՝ զավթեցին իշխանությունը:

Այս տեսությունը հնարավորություն է տալիս որոշակի պարզություն մտցնել հատկապես Եվրոպայի նոր պատմության բավականին չլուծված հարցերում, սակայն, այս տեսությունը չի պարունակում պատմության և հասարակության զարգացման օրենքների տրամաբանությունը և դուրս է գալիս, որ ընդհանրապես պատմությունն ու հասարակության զարգացումը տեղի է ունենում պատահականությունների հետևանքով և կարող է կտրուկ փոփոխվել անհատի կամ մարդկանց մի խմբի ցանկությամբ: Սա

հակասում է հասարակության՝ որպես կայուն զարգացման համակարգի տեսությանը:

Իրականում մարդկության այժմյան ընդհանուր վիճակը պայմանավորված է հասարակության զարգացման օրինաչափություններով: Մարդկության ձևավորման սկզբնական փուլը կապված էր մարդկանց արյունակցական էթնիկական խմբերի հարաբերությունների հետ, որի հիմքում էլ դրված էր երրորդության գաղափարը:

Բնակչության հիմնական մասը մտնում էր նյութական բարիքներ ստեղծող դասի մեջ և ինքն էլ հիմնական սպառողն էր ստեղծված բարիքների: Երկիրը ղեկավարում էին տիեզերական դաշտից ստացած ինֆորմացիայով առաջնորդվող քրմերը:

Այս երկու դասին միավորում էր զինվորականությունը , որը պաշտպանում էր տվյալ հասարակությանը՝ արտաքին վտանգներից: Բնակչությունից բերքի տեսքով հավաքվող հարկերը կուտակվում էին տաճարներում հասարակության ընդհանուր կարիքները բավարարելու համար:

Մարդկության զարգացման որոշակի փուլում խախտվեց այս գործող համակարգը: Դա հատկապես լավ է երևում Հին Հունաստանում: Աթենք քաղաք-պետությունում իշխանությունը պատկանում էր Դորիական ազնվականությանը, որոնք Ք.ա. XII դարում գրավել էին Հունաստանը: Տեղի աքարական բնակչությունը, չնայած բացարձակ անձնական ազատություն ուներ, սակայն չէր մասնակցում պետության կառավարմանը: Արհեստների և հատկապես, միջազգային առևտրի զարգացումը բերեց նրան, որ աքարացիներից կազմված դեմոսի ներսում առաջացան հարուստներ և չքավորներ:

Վերնախավը կազմող արիստոկրատիան փորձեց գրավոր օրենքների միջոցով, կարգավորել դեմոսի ներքին հա-

րաբերությունները, սակայն, այդ բոլորը հանգեցրեց նրան, որ Աթենքում իշխանության գլուխ սկզբում եկան անհատ բռնակալները (տիրանիա), իսկ հետո իշխանությունը զավթեցին դեմոսի ներսում հարստություն կուտակած, ձևավորված վերնախավը: Ամբողջությամբ փոխվեց վերևում մեր նշված մոդելը:

Հասարակության վերնախավը դարձավ նյութական բարիքներ ստեղծող, հարստություն կուտակած աշխատավոր դասը, իսկ մեր նշած զինվորականությունը սկսեց պաշտպանել ոչ թե ընդհանուր հասարակության շահերը, այլ իրեն վճարող վերնախավի իշխանությունը:

Այսպիսի համակարգում մեր նշած պայմանական քրմությունը այժմյան մտավորականությունը, դառնում է հասարակության ամենաստորին դասը և ստիպված է լինում կամ ոչնչանալ, ինչպես օրինակ Սոկրատը, կամ էլ ծառայել իշխողների շահերին:

Մեր նշած զարգացումներն ունեին համընդհանուր ուղղվածություն և եթե անգամ, պահպանվում էր նախկինում գոյություն ունեցող կրոնը, ապա միևնույն է, այն ենթարկվում էր գաղափարական հիմնարար փոփոխությունների և ձեռք բերում դասակարգային բնույթ: Օրինակ, հունական կրոնում Ջևսը ներկայացվում է արդեն ոչ թե Սուրբ Երրորդության մաս, այլ դառնում է աստվածների արքա և միայնակ է կառավարում Օլիմպոսի աստվածներին:

Այս երևույթը կարելի է տեսնել նաև Կիևյան Ռուսիայում: Արևելալավոնական քաղաքակրթության և բնակչության պահպան աստված է համարվում Վելեսը, սակայն միասնական պետության ստեղծման հետ միասին առաջին պլան և ղեկավարող աստված է դառնում Պերունը, որը բերվել էր իշխող նորմանների կողմից և մինչև վերջ էլ ամբողջությամբ չամրապնդվեց սլավոնների միջավայրում:

Դասակարգային կրոնների ձևավորման վերջին քայլը կատարվում է այն ժամանակ, երբ իշխող թագավորական տոհմը կամ իշխանություն վերցրած կայսրը հռչակվում է կենդանի աստված և անգամ արգելք է դրվում հասարակ մահկանացուններին անձնական շփում ունենալ նրա հետ: Այս երևույթը կարելի է տեսնել ինչպես արևելյան երկրներում՝ Ճապոնիա, Չինաստան, այնպես էլ՝ Եգիպտոսում, Հելլենիստական պետություններում և այլուր:

ԿՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հնդկաստանը այն յուրահատուկ տարածքն է, որտեղ կարելի է հերթականությամբ ուսումնասիրել ինչպես Հայկական լեռնաշխարհից դուրս եկած և տեղական պայմաններին հարմարեցված հավատը, այնպես էլ հետագայում ձևավորված կրոնի տեսակները: Հայկական լեռնաշխարհից Հնդկաստան թափանցելուց հետո նորաբնակների համար շատ կարևոր էր նախնական գիտելիքների պահպանումը:

Բնակչության շրջանում ամրապնդվեց այն միտքը, որ դրա համար անհրաժեշտ է հատուկ դասի՝ գուրուի, ուսուցչի պարտադիր գոյությունը, որը պարտավոր էր առաց որևէ փոփոխության աշակերտին փոխանցել իր ստացած գիտելիքները: Ուսուցիչը հետագայում բազմաթիվ ուսմունքների համաձայն ավելի մեծ նշանակություն էր ստանում քան հարազատ ծնողը:

Դրա շնորհիվ Հնդկաստանում ձևավորված կրոնները և փիլիսոփայական ուղղությունները հիմնականում առաց մեծ փոփոխությունների հասան մեր օրերը:

Հնդկաստանում մինչև արիների մուտքը, բնակեցված էին նեգրոիդ ռասային պատկանող դրավիտներով, որոնք


չնայած ստեղծել էին բավականին բարձր, առևտրի վրա հենված քաղաք-պետություններ, սակայն մինչև արիների Հնդկաստան մուտքը այդ Խառապյան կոչվող մշակույթը ոչնչացել էր կամ գտնվում էր վերջնական ոչնչացման փուլում, և բնակչությունը գտնվում էր հիմնականում շատ ցածր մշակույթային, տնտեսական մակարդակում:

Այս պայմաններում վերաբնակիչները պետք է հիմնարար փոփոխություններ մտցնեին իրենց հավատի հիմնական սկզբունքներում: Դա առաջին հերթին վերաբերվում էր հասարակության բաժանմանը, ըստ Սուրբ Երրորդության սկզբունքի: Գոյություն ունեցող աշխատավորներ, զինվորներ և քրմեր դասերին ավելանում է չորրորդ՝ անձեռնմխելիների դասը, որի մեջ մտնում էին Հնդկաստանի նախկին բնակիչները:

Խորհրդային պատմագրությունը ներկայացնում էր այս դասին որպես իրավագուրկ, հասարակությունից մերժված և արհամարհված մարդկանց խումբ, որը չունի որևէ իրական հիմք:

Չորրորդ դասի մեջ կարող էին մտնել ինչպես հողագործներ, այնպես էլ արհեստավորներ և անգամ հարուստ առևտրականներ: Պարզապես այս դասը, չէր մտնում արիների ձևավորված հավատամքային համակարգի մեջ, որի համար քրմերը խորհուրդ չէին տալիս արիներին շփվել իրենց խորթ բարքերով ապրող տեղացիների հետ:

Ձևավորված տնտեսական և հասարակական հարաբերությունները, նաև այն փաստը, որը Հնդկաստանի բնակչության մեծամասնությունը շարունակում էր մնալ դրավիտները, հին հավատը սկսվեց ենթարկվել որոշակի, սկզբունքային փոփոխությունների: Դրանով սկսվեց կրոնների ձևավորումը:



1. Հավատից ձևավորված կրոններ

Առաջին փուլը, ինչպես նշեցինք վերևում, հավատի վրա ձևավորված կրոններն են: Հնդկաստանում այդպիսի կրոնը վեդայականությունն է:

Վեդայականությունը մի կողմից իր գլխավոր սկզբունքները ձևավորել է հին հայկական հավատի հիմքերի վրա, սակայն մյուս կողմից էլ իր մեջ ընդգրկել է նախասկզբնական ինֆորմացիայի հետ կապ չունեցող նոր սկզբունքներ: Այս տեսակետից վեդայականությունը չի կարելի համարել մեր նշած հավատի օրինակ, այլ գրված կրոնական գրքերը՝ վեդաներն ունեն որակական նոր հատկանիշներ, որոնք հատուկ էին կրոնին:

Վերևում մենք նշեցինք, որ արիական արշավանքների հետևանքով, ձևավորվեց եռաստիճան հասարակական հարաբերությունները, իսկ տեղի բնակչությունը դուրս մնաց ձևավորված արիական համակարգից, ստեղծելով՝ անձեռնմխելիների դաս:

Տեղում զինվորականների դասը, որը պետք է պաշտպաներ հասարկության շահերը, աստիճանաբար դառնում է տարածքների կառավարիչներ և կուտակում մեծ հարստություն:

Չնայած դրան, ամբողջ իշխանությունը շարունակվում էր մնալ քրմության ձեռքին: Տնտեսության զարգացումը, միջազգային առևտուրը բարձրացնում էր զինվորականության ռաջաների հեղինակությունը և նրանք ցանկանում էին մասնակցել երկրի կառավարմանը: Նրանց պաշտպանում էին աշխատողների դասը, որոնք նույնպես դժգոհ էին քրմերի կառավարումից, որովհետև քրմերը դառնալով փակ կաստա, կտրվում էին ժողովրդից:

Պետք է հաշվի առնել, որ Հնդկաստանում նաև մեծ ազդեցություն ունեին տեղի դրավիտները, որոնցից ձևավորվել էր անձեռնմխելիների կաստան:

Այս պայմաններում վեդայականությունը, որի նպատակն էր տիեզերական օրինաչափություններով կարգավորել անհատ-հասարակություն, անհատ-բնություն հարաբերությունները, չէր պատասխանում նոր ստեղծված իրավիճակից ծագած խնդիրներին:

Քրմությունը լավ էր հասկանում, որ անհրաժեշտ է նոր պայմաններին համապատասխան ձևափոխել նաև հավատը, որով էլ ձևավորվեց իրականում կրոն:

Կրոնի հիմքը կազմում է աստվածներին նվիրված հիմները, պատմությունը, թե ինչպես են արիացիները գրավել Հնդկաստանը: Այս գրվածքներում միախառնված են իրականն ու առասպելականը: Ձևավորվեցին այս շրջանում Հնդկական էպոսները:

Հին հավատի քրմերը իրենց արարողությունները, ինչպես ընդունված էր նախահայրենիքում, իրականացնում էին բնության գրկում, իսկ բնակչության լայն զանգվածները սկզբում անմիջական մասնակցություն չունեին այդ բոլորին:

Որպեսզի ժողովրդին շահագրգռեն, նաև մեծացնեն իրենց ազդեցությունը նրանց վրա, /չնայած շարունակվում են կրոնական արարողությունները կատարել բնության

գրկում/, բայց սկսում են նաև բնակչությանը մասնակից դարձնել դրանց:

Տանը արարողությունները կատարում էր նահապետական ընտանիքի հայրը: Առաջին պլան է մղվում զոհաբերությունների կատարումը, որոնք հիմնականում անարյուն էին: Աստվածներին մատուցվում էր հացահատիկ, կաթ և հատկապես հատուկ պատրաստված խմիչք՝ սոմա, որն իր հերթին նաև սրբացվում էր՝ համարվելով աստված:

Շատ բարդ է ուսումնասիրել վեդաներից մեզ հասած աստվածների կազմը, որովհետև հաճախ խախտվում է հին հավատի գլխավոր սկզբունքները: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ վեդաներում ներկայացված են 33 աստվածներ, որը համապատասխանում է երկրային և երկնային սուրբ երրորդությունների միավորմանը:

Իսկ որոշ ուսումնասիրողներ ընդհանուր աստվածների քանակը հաշվում են 3399, որը նորից համապատասխանում է հին հավատի 3 և 9 թվերի սրբությանը որպես սուրբ երրորդության և երկրային իննակնու հասկացողություն:

Գերագույն աստվածություններն են դառնում Ինդրան, որի անունը շատերը կապում են Հնդկաստանի անվան հետ, բայց դրան հակառակ ընթերցումը համապատասխանում է նաև Հայկ-Խալդի Արդին սրբավայրի անվանը: Ինդրայի ուղեկիցն է Մարութա կոչվող քամին, որը նորից համապատասխանում է Հայկական լեռնաշխարհում սրբացած Մարութա լեռանը:

Երկրորդ գերագույն աստվածը Վառունան է, որի անվան վառ արմատը նորից ցույց է տալիս նրա կապը հայերեն և հին հնդեվրոպական լեզուների հետ:

Երրորդ գերագույն աստվածությունը կոչվում էր Դյաուսի, որն ուսումնասիրողները կապում են հնդեվրոպական Պադեր (հայր) բառի հետ:

Արևին խորհրդանշում էին երեք աստվածություններ: Առաջինը Սուրյան, որը ներկայացնում էր ֆիզիկական արևը, երկրորդը Սավիտարը, որը համարվում էր կյանքի վերակենդանացնողը, կյանքի պահապանը և երրորդը Պուշան էր, որը այրող, ոչնչացնող էությունն էր: Այս բաժանումը նորից ունի իր արմատները արիական հավատում և իր զուգահեռը Վանի հայկական կրոնում:

Վեդայականության մեջ պահպանվել էր նաև մեր Միերին համապատասխան Միտրան, որը համարվում է մարդկության պահապանը և կապող օղակ է մարդկանց և աստվածների միջև: Պահպանվել էր նաև երկվորյակ եղբայրների, ինչպես մեր պարագայում Սանասարի և Բաղդասարի երևույթը, հանձինս Աղվինի զույգերի:

Անծայրաժիր տարածության աստվածություն էր համարվում Ադիտին: Խիստ կարևորվում էր կրակի սրբազան լինելը և համարվում էր, որ ոչ մի զոհաբերություն չի կարող հասնել աստվածներին, եթե չի մաքրվում կրակով:

Մեծ նշանակություն ունեւ նախնիների պաշտամունքը և ինչպես նշեցինք տան հայրը զոհաբերություն էր կատարում, ինչպես իր անմիջական նախնիներին, այլ նաև նրանց, որոնք ըստ աղոթքի մահացել և մնացել էին իրենց սրբազան նախահայրենիքում:

Քրմերը ծիսակատարություններն իրականացնում էին սանսկրիտ լեզվով, որը բնակչության լայն զանգվածների համար արդեն դարձել էր անհասկանալի:

Աքեմենյան Պարսկաստանից քաղաքականապես և կրոնով առանձնանալը նույնիսկ հակադրվելը հիմնարար փոխվում է չար և բարի ուժերի ներկայացումը: Եթե հին հավատքում բարձրագույն ուժերը կոչվում էին Աշուրներ, իսկ նրանց հակառակորդը՝ դևերն էին, ապա այժմ աշուրները դառնում են մարդկության թշնամիները, իսկ դևերը կամ

դեաները վեր են ածվում մարդկության պաշտպանող, աշուրների դեմ կռվող ուժերի:

Դասակարգային պայքարը շարունակվում էր սրվել և քրմությունը փորձում էր այս պայմաններում էլ պահպանել իր իշխանությունը, որի համար որպես գենք ավելի հիմնարար է դարձնում բնակչության բաժանումը կաստաների:

2. Ազգային կրոններ

Վեդայականությունը չէր բավարարում բնակչության լայն զանգվածների պահանջմունքը, որովհետև արարողությունները կատարվում էին ժողովրդին անհասկանալի լեզվով և ինչպես նշում է ժամանակակիցը բրահմաները փնթփնթում են ինչ-որ բառեր և ամբողջ օրը խժռում զոհաբերության համար բերված բարիքները:

Երկրորդ հերթին, ձևավորված կրոնը շատ բարդ էր և խճճված, որի համար էլ միայն հատուկ կրթություն ստացած մարդիկ էին, որ կարող էին խորանալ ու հասկանալ կրոնի էությունը: Երրորդ հերթին նաև վեդայականությունը հասարակությանը ըստ հավատի բաժանել էր երեք դասերի, իսկ նախկին Հնդկաստանի բանակիչները՝ դրավիդները դուրս էին մնացել հասարակական բաժանումից և կյանքից:

Ք.ա. 6-5-րդ դարերում բնակչության տարբեր շերտերը պահանջում էին իրականացնել արմատական փոփոխություններ: Բնական է, որ փոփոխությունների ծրագիր մի կողմից պետք է ներկայացնեին քրմերը, որոնք ցանկանում էին պահպանել իրենց իշխանությունը, իսկ մյուս կողմից զինվորականությունը, որը դառնալով տարածքների կառավարիչ իշխաններ և ստանալով իշխանություն ու հարստություն՝ փորձում էին քրմության ձեռքից վերցնել երկրի

կառավարումը, կամ ավելի մեծ մասնակցություն ունենալ կառավարմանը:

Այս էր պատճառը, որ նշված շրջանում Հնդկաստանում ձևավորվեցին իրենց կառուցվածքով, գաղափարախոսությամբ և իրենց առջև դրված խնդիրներով մի շարք կրոններ:



3. Զատիզմ

Զինվորական դասը միատարր չէր: Չնայած ողջ զինվորականությունը դժգոհ էր ստեղծված իրավիճակից, բայց կախված նրանց հասարակության մեջ ունեցած դիրքից և ունեցած ազդեցությունից նրանք ունեին տարբեր ձգտումներ և պատկերացումներ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ:

Դրանցից էր Զատիզմը, որի հիմնադիրը զինվորականության ներկայացուցիչ էր: Զատիզմը ոչ միայն դեմ էր վեդայական կրոնի սկզբունքներին այլև, ըստ առաջ քաշած գաղափարների, ստեղծված լինելով միջին զինվորական-

ների շրջանում, մերժում էր նաև հասարակության մեջ դասային բաժանումը:

Այս կրոնը չէր ընդունում վեղայականության կողմից բնակչության կաստաների բաժանումը և գտնում էր, որ մեզ շրջապատող նյութական աշխարհը չարիք է, և մենք պետք է այս կյանքում պայքարենք նրանից ազատվելու՝ ոչ նյութական փուլին անցնելու համար, և գտնում էին, որ մարդը մեծ մեղք է կատարում, եթե սպանում, անգամ վնասում է որևէ կենդանու:

Այս գաղափարի պատճառով կրոնի ներկայացուցիչները հատուկ շոր են կապում իրենց բերանին, իսկ ջուրը խմում էին քամիչի միջոցով, որպեսզի հանկարծակի չվնասեն որևէ միջատի:

Ջառիզմի որոշ ներկայացուցիչներ, չընդունելով նյութական աշխարհն ու նյութական բարիքները, հասել էին այնտեղ, որ մերժում էին անգամ, անկախ եղանակից որևէ տեսակի հագուստ կրելը:

Այս կրոնը, հիմնականում հաղթահարելով ծայրահեղ դրսևորումները, տարածում գտավ ցածր և միջին շերտերի շրջանում: Որոշ քանակությամբ ջառիզմի ներկայացուցիչներ հիմա էլ կան Հնդկաստանում:



4. Հինդուիզմ

Քրմությունն ինքն էլ էր փորձում բարեփոխումներ կատարել, որի արդյունքում ձևավորվեց Հինդուիզմը: Քրմությունն այս կրոնը փորձում էր դարձնել այն ուժը, որը պետք է միավորեր ողջ Հնդկաստանի բնակչությանը: Սրան հասնելու համար փորձ է արվում ստեղծել ավելի դեմոկրատական, բնակչության լայն զանգվածներին հասկանալի գաղափարներ: Դրա համար մեծ տարածում է սկսում հինդուիստական տաճարների կառուցումը բուդդիստական տաճարների օրինակով:

Պարզեցվում են կրոնական արարողությունները, որոնք սկսում են կատարվել ժողովրդին հասկանալի լեզվով: Առաջին անգամ, ավելի վաղ, քան Առաջավոր Ասիայում, ձևավորվում է երկրային աստծո՝ փրկչի գաղափարը:

Այդպիսի փրկիչ է ներկայացվում Քրիշնիան, որը համարվում էր Վիշնու աստծու երկրային մարմնացումը, որը ծնվել էր մահկանացու կնոջից, ապրել էր մարդկանց հետ, ենթարկվել հալածանքների, սովորեցրել ընտրյալներին և ֆիզիկապես մահանալուց հետո դառնում է մարդկության պահապանը:

Ինչպես Կրիշնիան, որպես աստվածություն շատ փոքր տեղ ուներ վեդայականության մեջ, իսկ այժմ դառնում էր գլխավոր գործող անձ, այնպես էլ Ռաման, որը վեդաներում արիացիների առաջնորդն էր և բնական է, մահկանացու, այժմ աստվածացվում է և նույնպես դառնում պայքարող գերագույն ուժ մարդկությանը վնասել ցանկացող երևույթների դեմ:

Կարևոր նշանակություն է ստանում ուսուցիչ գուրուի գաղափարը, և հայտարարվում է, որ միայն գուրուի միջոցով է, որ աշակերտը կարող է տիրապետել ոչ միայն կրոնին, այլև կյանքը կարգավորող ցանկացած երևույթների, ներքին կապերին ու կառուցվածքին: Քրմությունը, առաջին հերթին սկսվում է դիտվել որպես ուսուցիչ:

Չնայած այս կրոնի ձևավորմանը, այն չկարողացավ լուծել իր առջև դրված խնդիրը և միավորել Հնդկաստանի բնակչությանը: Չնայած Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է հինդուիզմը, սակայն, որպես կուռ, միասնական կրոն հինդուիզմն փաստորեն այդպես էլ չձևավորվեց:

Առանձին էթնիկական խմբեր սկսեցին առաջին պլան մղել, կամ Շիվային, կամ Ինդրային ու Վիշնուին: Գործը հասավ այնտեղ, որ հինդուների մի խոշոր մաս որպես իր գլխավոր աստված հռչակեց Շիվայի Կալի կոչվող կնոջը, որը խորհրդանշում էր մահը: Այս կրոնական ուղղությունը տարբեր ձևերով ընդունում է մարդկանց զոհաբերման արարողությունը:

Նույնիսկ առանձին կաստաները սկսեցին որպես իրենց գլխավոր աստված ճանաչել այս կամ այս աստծուն, որը հովանավորում է այդ կաստային:

Հավանաբար միակ ընդհանրությունը, որ միավորում է հինդուներին Գանգես գետի սրբացումն է: Նրանք գտնում

են, որ Գանգեսի ջրերը կարող են մաքրել մարդու ցանկացած մեղք և մեծ երանելիություն է համարվում մահանալ Գանգես գետի ափին:

Հինդուիզմը նույնպես մեծ տեղ էր տալիս ասկետիզմին, որը ծնեց մի շարք ասկետիստական դպրոցներ, որոնցից հատկապես մեզ ավելի ծանոթ է յոգայի դպրոցը, որի նպատակն է օգնել մարդուն առողջացնելու իրեն ֆիզիկապես ու հոգեպես: Հինդուիզմն ընդունում է վերածննդի գաղափարը և հասարակության բաժանումը կաստաների:

Դեռևս միջնադարում մի քանի անգամ փորձ արվեց բարեփոխել հինդուիզմը և միավորել բնակչությանը, սակայն էթնիկական և կաստայական տարբերությունը այնքան խորն է, որ այդպես էլ չձևավորվեց հնդիկ ժողովուրդը:



5. Սիկիս

Հինդուիզմը ինչպես և ջատիզմը չկարողացան կատարել իրենց վրա դրած խնդիրը և գոնե մասնակիորեն հիմք դնել ազգային միավորի ձևավորմանը Հնդկաստանում: Մոտ երեք միլիոն ջատիստներ տարածված են ողջ Հնդկաստանում, և կրոնից բացի նրանց ոչինչ չի միավորում, որի համար էլ նրանք ապրում են իրարից ընդհանրապես առանձնացված:

Հինդուիստները չնայած կազմում են Հնդկաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը և հաշվում են ավելի քան յոթ հարյուր միլիոն, սակայն նորից նրանց մեջ չկա որևիցե ընդհանրություն, և հինդուս ժողովուրդը իրականում առասպել է:

Միակ կրոնը, որը ստեղծման պահից իր առջև խնդիր էր դրել կոնկրետ տարածաշրջանում միավորել բնակչությանը որպես ընդհանրական ազգային միավոր, սինկիս կրոնն էր:

Այս կրոնը ձևավորվեց 15-րդ դարում և իր առջև հիմնական նպատակ էր դրել Հնդկաստան թափանցած իսլամի դեմ պայքարը, որը ցանկանում էր ոչնչացնել բոլոր տեսակի անհատականությունները և բնակչությանը ձուլել ոչ թե ազգային, այլ կրոնական գաղափարախոսության հիման վրա:

Կրոնի հիմնադիրը Նանակն էր, որը շրջել էր տարբեր երկրներում, նաև եղել էր մուսուլմանության կենտրոն Մեքքայում, որտեղ էլ ընդունած տեսակետի համաձայն նա ձևավորում է այս կրոնի հիմնական սկզբունքները:

Կրոնի հիմնական աստծու գաղափարը տրվում է մի ավանդազրույցում, ըստ որի Նանակը Մեքքայում պառկած հանգստանում էր՝ ոտքերով դեպի մուսուլմանների համար սրբազան Կուբը: Այս տեսնելով մի մուսուլման գայրացած պահանջում է նրան ճիշտ պառկել և չանարգել աստծուն՝ ոտքերն ուղղելով դեպի աստծուն խորհրդանշող Կուբը:

Նանակը հանգիստ հարցնում է նրան, իսկ կարող է այդ մարդը ցույց տալ կամ նշել մի ուղղություն կամ մի իր, որում չկա աստված: Սա գլխավոր սկզբունքն է, ըստ որի աստված գտնվում է ամեն տեղ և ամեն նյութականության մեջ:

Սիկիս բառացի նշանակում է աշակերտ, որովհետև կրոնի կարևորագույն հիմքը ուսուցիչ-գուրոյի գաղափարն է, որի ուսուցումը սրբազան է և ենթակա չէ վերլուծության:

Հիմնադիր Նանակի հետ կրոնը ունի տասը գուրուներ, որոնց գործունեության շրջանում ամբողջությամբ ձևավորվել է կրոնը, գրվում է սուրբ գիրքը, հաստատվում են սրբավայրերը և կրոնական հիմնական կենտրոն՝ Ամրիտ քաղաքը, որտեղ գտնվում է գլխավոր Ոսկե տաճարը: Տաճարի անունը ծագում է նրանից, որ տաճարն իրականում ամբողջությամբ ծածկված է հավատացյալների զոհաբերված ոսկուց: Այժմ էլ սինկիսերը ղեկավարվում են իրենց ուսուցիչ՝ գուրունների կողմից:

Այս կրոնի ներկայացուցիչները հիմնականում ապրում են Հնդկաստանի՝ իրենց հայրենիք համարվող Փենջաբ նահանգում, նաև տարածված են Հնդկաստանում և երկրից դուրս: Ամենամեծ գաղութը, մոտ չորս հարյուր հազար, գտնվում է Մեծ Բրիտանիայում:

Սինկիսերի կրոնական գիրքը կոչվում է Ադի Գրանտխ, որը բառացի նշանակում է նախասկզբնական գիրք: Կոչվում է նաև Գուրու Գրանտխ, Գուրու Սախիբ և Գրանտխ Սախիբ: Գրքի հիմքը կազմում են մոտ վեց հազար ոտանավորներն ու հիմները, որոնք կատարվում են երգելու միջոցով:

Սինկիս կրոնը ամբողջությամբ հեռացել է հինդուիզմից և չնայած որոշ մարդիկ փորձում են այս կրոնում գտնել ինչ-որ սինթեզ հինդուիզմի և իսլամի միջև, սակայն այդ բոլորը կեղծ և անհիմն են:

Սիկիսերը գտնում են, որ աստված միասնական է և ամենազոր: Ըստ նրանց՝ աստված սեր է և ամեն ինչ գալիս է նրանից՝ աստծուց: Աստված չի պատկանում և չի սահմանափակվում որևէ ազգով կամ երկրով: Աստված թափանցում է ամենուր և ոչ ոք չգիտե աստծո անունը, բացի իրենից: Աստված է արարել աշխարհը և բացի նրանից ոչ ոք չգիտե արարման նպատակը:

Աստված անճանաչելի է, սակայն հանդես է գալիս երկու վիճակում. առաջինը՝ որպես Նարգուն, որ նշանակում է բացարձակ, որից հանգում է, որ աստված իր մեջ է ընդգրկում այն ամենը, ինչ կա, և երկրորդ վիճակը՝ Սարգուն, երբ աստված գտնվում է ցանկացած անհատի ներաշխարհում:

Մինչև արարման պահը աստված գոյություն ուներ ինքն իր համար որպես բացարձակություն: Նա, հայտնելով իր անունը, արարեց աշխարհը, որով արտահայտեց ինքն իրեն: Մինչև արարումը գոյություն չունեի ոչ միայն նյութական աշխարհը, այլև խոսքը, բարին ու չարը, արականն ու իգականը: Ամեն ինչ արարվեց աստծո կողմից իր անունը արտահայտելով ու իրեն ճանաչելով: Աշխարհի արարումով աստված ինքը լուծվել է բնության մեջ՝ տարածվելով բոլոր ուղղություններով և գոյություն ունի ամեն ինչի մեջ, չնայած որ պահպանում է իր անհատականությունն ու ամբողջությունը:

Ըստ Սիկլետրի աստված չունի ծնունդ և չի վերածնվելու որևէ նյութական կամ աննյութական ձևով:

Նա ամեն տեղ գոյություն ունի որպես սեր, գթասրտություն, գեղեցկություն, ճշմարտություն, բարոյականություն: Նա աշխարհին տալիս է կենսաբանական էներգիա, սակայն աստված անհասանելի է և աննկարագրելի:

Չնայած դրան աստծու հետ կարելի է շփվել աղոթքների միջոցով, միայն մեղիտացիայի վիճակում: Անիմաստ է համարվում աղոթել, խնդրանքով դիմել այլ աստվածների, դևերի, չարքերի:

Գտնում են, որ մարդը արդեն գոյություն ունի մինչև իր ծնունդը: Մարդու էությունը ձևավորվում է որպես անհատականություն՝ կապված իր ձևավորված սերմից և իր ժողովրդից: Չնայած դրան ընդունվում է նաև անհատի կամքի ազատությունը, որի համար էլ ամեն մարդ պատաս-

խանատու է իր գործունեության համար: Ամեն մի անհատ իր գիտակցության և ինքնաճանաչման միջոցով սկսում է ընկալել իրեն որպես բացարձակ անհատականություն նաև ամողջականության մաս:

Սիկխերը չեն ընդունում դժոխքի և դրախտի գոյությունը, մեղքի հասկացողությունը, որից էլ ելնելով անընդունելի է մեղքերի թողությունը, պաս պահելը, դեմ են ասկետիզմին և խիստ համաշխարհային կրոններով ձևակերպվող առաքինությունը:

Այս բոլորը, ըստ նրանց, հնարել են առանձին մարդիկ, որպեսզի կարողանան լայն զանգվածների վրա ազդեցություն գործեն և ենթարկեցնեն իրենց:

Նրանք գտնում են, որ անկախ մարդու երկրային գործունեությունից մարդը մահից հետո լուծվում է բնության մեջ և միանում աստծուն՝ չկորցնելով իր անհատականությունը: Նրանք նաև ընդունում էին մարդու վերածննդի գաղափարը:

Սիկխերը ընդունում են կարման, բայց ընդունում են նաև, որ կարելի է խուսափել վատ կարմայից գուրուի ուղղորդած ճիշտ ապրելու միջոցով:

Սիկխերի կրոնի հիման վրա ձևավորվել է այդ ազգի հոգեբանությունը և նրանց վերաբերմունքը իրար, օտարի նկատմամբ, նրանք իրենց հավատակիցներին առաջին հերթին համարում են իրենց մերձավոր բարեկամը և բոլորի բարեկեցությունը համարվում է ամեն մեկի կարևորագույն խնդիրը: Այս պատճառով չքավորությունը, աղքատությունը համարվում է անգամ մեղք, որի դեմ պետք է պայքարի ամեն մի սիկխը:

Անկախ կրոնական կամ ազգային պատկանելիությունից բոլոր մարդիկ համարվում են եղբայրներ, որոնց բոլորին ստեղծել և պաշտպանում է միակ աստվածը: Ամենաթանկ

բանը համարվում է անհատի և իրենց շրջապատի ազդեցությունը: Նրանք շատ բարձր գնահատելով իրենց ազատությունը նաև գտնում են, որ ամեն ոք պետք է հարգի ուրիշի ազատությունը և ոչ մի բան չի կարելի ստիպել, որ որևէ մեկը կատարի:

Նույնիսկ բարի գործի կատարումը ստիպելու միջոցով համարվում է մեղք: Կարևոր խնդիր է համարվում, որ ամեն ոք իր ներսում գտնի աստճո գերագույն շնորհի հանդիսացող սերն ու հավատը:

Չարը, ազահությունը, ատելությունը, չկամությունը համարվում են անբնական, աստվածային օրենքից խախտված և այդ բացասական գծերի կրողները առաջին հերթին հենց իրենք են տուժվում դրանից, որովհետև հակասության մեջ են մտնում բնության հետ, որում չկան այդպիսի երևույթներ: Սիկիսերը գտնում են, որ ամեն գործ, նույնիսկ ամենաաննշանները պետք է կատարել սիրով, եթե ոչ՝ այդ գործն ու գործի արդյունքը ձախողված է:

Որպես օրենք բոլոր կրոնները ձևավորել և զարգացրել են տղամարդիկ, որի հետևանքով կրոններում խիստ նվաստացվել է կանանց դերը: Բազմաթիվ կրոններում կանայք համարվել են տղամարդկանց անհաջող փորձ կամ նույնիսկ չար ուժերի կողմից ստեղծված: Միայն այն, որ հինդուս տղամարդու աղոթքում, աստծուն ուղղված երախտիքում, տղամարդը շնորհակալություն է հայտնում, որ իրեն աստված այս կյանքում չի ստեղծել անասուն կամ կին, արդեն խոսվում է կնոջ արհամարհված վիճակի մասին:

Այս վերաբերմունքը հատկապես սարսափելի դրսևորումներ ուներ մինչև վերջերս Հնդկաստանում: Երբ մահացած տղամարդու կինը կամավոր չէր գնում կենդանի հրկիզման իր մահացած ամուսնու հետ, ամբողջությամբ մերժվում և արհամարհվում էր հասարակության կողմից:

Այլ է խնդիրը սիկիսերի մոտ, նրանք ոչ միայն ճանաչում, այլև աստվածային կամքի դրսևորում են համարում կանաց իրավունքների պահպանումը: Դեռևս կրոնի ձևավորման շրջանում գուրունների կողքին մենք տեսնում ենք իրենց հարազատ կանանց, որոնք հանդես են գալիս ինչպես գուրունների գաղափարախոսության պաշտպաններ, այնպես էլ կարևորագույն խորհրդականներ:

Կանայք սիկիսերի համայնքներում մշտապես համարվել են օջախի հիմնական պահպանները, իրենց ամուսինների գաղափարական ընկերուհիները և գլխավոր ոգևորողները: Պատահական չէ, որ նրանց մեջ պահպանվել է ավանադագրույց, թե ինչպես պետք է կինը մարտի դաշտ ուղեկցի իր ամուսնուն: Նա հրաժեշտ տալիս ասում է, որ ամուսինը չանհանգստանա ընտանիքի և երեխաների համար, իսկ մահանալու դեպքում էլ ինքը միևնույն է կարող է այլ ամուսին էլ գտնել:

Ինչպես պատմության ընթացքում, երբ սիկիսերը կռվում են արաբների, աֆղանների և հինդուսների դեմ իրենց ազատության ու անկախության համար, այնպես էլ նորագույն շրջանում բազմաթիվ սիկիս կանայք 1970-ական թթ.-ին կանգնցին իրենց ամուսինների կողքին՝ պայքարելու Հնդկաստանի դեմ՝ իրենց անկախությունը վերականգնելու համար: Այժմ էլ կանայք ինչպես բուն Փենջաբում, այնպես էլ սփյուռքում մեծ նշանակություն ունեն տնտեսության, գիտության, մշակույթի ոլորտներում:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՐՈՆ



6. Բրահմայականություն

Նշեցինք, որ բավականին սրված էր նաև առանձին դասակարգերի միջև լարվածությունը, որի համար էլ քրմությունը փորձեց ձևավորել այնպիսի կրոն, որը հիմնավորեր իր արտոնյալ վիճակը, ցույց տար բրահմաների՝ քրմության կարգավիճակի աստվածային հիմքը: Այս կրոնը դրա համար էլ ստացավ բրահմայականություն անունը: Այս կրոնի հիմքը կազմում է Մանուի օրենքը, որում դրվում է չորս կաստաների բաժանման սկզբունքը, նշվում է, որ կաստաները ստեղծվել են տիեզերական գլխավոր աստծո՝ Բրահմայի մարմնի տարբեր մասերից:

Շուրթերից ստեղծվել են քուրմ բրահմաները, որի համար էլ միայն նրանք իրավունք ունեն խոսել աստծո անունից և ղեկավարել մնացած բոլոր դասերին: Նշվում էր, որ նրանց գործը սովորել և աստծուն ծառայելն է, որի

համար էլ քրմերը իրենց կյանքի ընթացքում անցնում էին մի քանի փուլեր:

Առաջինը ուսուցման փուլն էր, երկրորդը, երբ բրահման ամուսնանում և ընտանիք է կազմում, երրորդը՝ նրա դասավադման և կրոնական ծառայությունների կատարման փուլն էր և վերջում բրահման հրաժարվում է ամեն ինչից և դառնում մենակյաց ճգնավոր:

Կշատրին՝ զինվորականությունը ստեղծվել էր Բրահմայի ձեռքերից, որի համար էլ նա պետք է պաշտպաներ երկիրը, սովորեր բրահմայի մոտ և հարգեր բրահմաններին: Նա նույնպես համարվում էր կառավարող, արտոնյալ դաս:

Բրահմայի ազդրերից ու ոտքերից ստեղծվել էին արիական ծագում ունեցող աշխատավորները, որոնց պարտականությունն էր ստեղծել բարիքներ, սովորել և հարգել բրահմաններին:

Նախկին անձեռնմխելիների դասը, ըստ Մանուի օրենքի ստեղծվել էր Բրահմայի տրորած ցեխից, որի համար էլ նրանց թույլ չէր տրվում սովորել բրահմանների մոտ և նրանց միակ գործը մյուս երեք դասերին ծառայելն էր:

Բրահմայականությունը նույնպես ընդունում էր վերածննդի գաղափարը և գտնում էր, որ մարդը վերածննդի շնորհիվ կարող է դառնալ այլ կաստայի ներկայացուցիչ, բայց ավելի կարևոր էր, որ մարդը կատարելագործվելով հասցնի նրան, որ դուրս գա ծննդի ու մահվան շրջապտույտից և միանա տիեզերական արարիչ Բրահմային:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆ



7. Բուդդիզմ

Բուդդիզմը ձևավորված առաջին կրոնն էր, որը ստեղծվելով մեկ երկրում մի դասակարգի ներկայացուցչի կողմից, դուրս եկավ այդ երկրի սահմաններից և դարձավ համաշխարհային կրոն:

Այս կրոնը նույնպես ձևավորվել է զինվորական դասի ներկայացուցչի կողմից: Ըստ ավանդության հիմնադիրը եղել է Սադդիսարտիան, որը եղել է իշխանի որդի և լայն զանգվածներին իր տոհմի անունով ավելի ծանոթ է որպես Գաուտամա:

Ըստ ավանդության նրա հայրը աշխատել է հեռու պահել իր որդուն ցանկացած դժվարություններից, տգեղությունից, դժբախտություններից, սակայն նա դուրս է գալիս պալատից և այնտեղ շփվում է իրական կյանքի հետ:

Նա հանդիպում է չորս դժբախտությունների, այսինքն՝ տեսնում է հիվանդություն, ծերություն, աղքատություն և մահ: Դրանից հետո նա սկսում է փնտրել կյանքի իմաստը, որից հետո, ըստ ավանդության, պայծառանում է, այսինքն՝ դառնում է Բուդդա: Նա սկսում է քարոզել, որ սխալ են երկու ծայրահեղությունն էլ.

1. Հաճույքների և կրքերի ուղին հակառակ է հոգուն, տանում է ոչնչացման և անշնորհակալ ուղի է:
2. Կամավոր տառապանքի ուղին մռայլ է, նորից տանում է ոչնչացման և նորից անշնորհակալ է:

Նա հավաքում է աշակերտների, որոնք ինչպես և ինքը, իր գաղափարները 40 տարի քարոզում են ողջ Հնդկաստանում:

Ըստ ավանդության՝ Բուդդան մահանում է խոր ծերության մեջ: Այս հնագույն ավանդույթը իր մեջ չի պարունակում որևէ առասպելական գծեր և ամենայն հավանականությամբ հենված է իրական փաստարկների վրա:

Հետագայում նրա անվան հետ սկսեցին կապվել բազմաթիվ առասպելական ավանդություններ, որոնք նպատակ ունեին սրբացնել այս պատմական կերպարի անձը, նույնիսկ հայտարարվեց, որ մահից հետո Բուդդան դարձել է գերագույն աստված, այն դեպքում, որ ինքը՝

Բուդդան, չնայած բացահայտ չէր մերժում աստվածների գոյությունը, սակայն էական նշանակություն չէր տալիս այդ խնդրին:

Բուդդայի գաղափարախոսության համաձայն գոյություն ունեն ճշմարտության 4 տեսություններ: Դրանք են.

1. տառապանքի տեսությունը,
2. տառապանքի պատճառների տեսությունը,
3. տառապանքի դադարեցման տեսությունը,
4. Տառապանքի դադարեցման ուղղու տեսությունը:

Այժմյան հասկացողությամբ սա նշանակում է հասկանալ, թե ինչ է տառապանքը, ուսումնասիրել դրա առաջացման պատճառները, զգալ անհրաժեշտությունը վերացնելու համար այդ տառապանքը և գտնել տառապանքի վերացման ուղին:

Բուդդան մեծ նշանակություն էր տալիս տառապանքի նշանակությանը, որովհետև գտնում էր, որ մեր ամբողջ կյանքը կազմված է տառապանքների շարանից:

Նրա տեսության համաձայն տառապանք է ծնունդը, հիվանդությունները, սիրելիից բաժանվելը, մահը, որի համար էլ անհրաժեշտ է կարողանալ սահմանափակել ցանկությունները, հրաժարվել կյանքից կաշկանդված լինելուց, նույնիսկ հրաժարվել գոյատևելուց և գտնել հոգու ներդաշնակություն և հանգստություն:

Նա գտնում էր, որ կա դրան հասնելու մի ճանապարհ, որը կազմված է 8 շերտերից: Այդ 8 շերտերն անցնելուց հետո մարդը դառնում է արիսատ, այսինքն՝ սրբազան և միանում է նիրվանային, այսինքն՝ հասնում կատարյալ վիճակի: Այդ ճանապարհի աստիճաններն են.

1. ճիշտ հավատ,
2. ճիշտ վստահություն,
3. ճիշտ խոսք,
4. ճիշտ գործ,
5. ճիշտ ապրելակերպ,
6. ճիշտ ձգտումներ,
7. ճիշտ մտքեր,
8. ճիշտ արարում:

Հետաքրքիր է, որ Բուդդան առանձնացնում էր իրարից ճիշտ գործը և ճիշտ արարումը: Հավանաբար երկրորդում դնելով աստվածային, ավելի բարձր իմաստ համարելով այն վերից թելադրված ինչ-որ գործողություն:

Բուդդան գտնում էր, որ մարդիկ մշտապես գտնվում են վերածննդի մեջ՝ սանսարա: Մարդը կապված իր ապրելակերպից կարող է ոչ միայն ապրել աստիճանական, մտավոր և հոգևոր վերելք, այլև իր ոչ ճիշտ գործերի հետևանքով

կարող է նոր կյանքում անկում ապրել, անգամ ոչ միայն որպես կենդանի, այլև բույսի, նույնիսկ ոչ օրգանական նյութի տեսքով:

Բուդդայականությունը գտնում է, որ Բուդդան ինքը անցել է սանսարայի բոլոր աստիճաններով, որից հետո ոչ միայն միացել է նիրվանային, այլև դարձել է տիեզերական բացարձակ աստված: Ըստ այդ տեսության Բուդդան առաջինն էր, որ հասավ նիրվանային:

Կրոնում չկա ընդհանուր տեսակետ նիրվանային հասնելու ժամանակի մասին: Հավատացյալների որոշ մասը գտնում է, որ միայն մահից հետո է, որ մարդը կարող է հասնել այդ երանությանը: Բայց կա նաև կարծիք, որ կատարյալ պահվածքի դեպքում հնարավոր է պայծառացման պահին մոտենալ ու միանալ նիրվանային կենդանության ժամանակ:

Բուդդիզմը գտնում է, որ ոչ միայն մարդիկ, այլև աստվածները չեն կարող օգնել մարդուն անցնելու իր վերջին փուլը: Ավելին, ընդունվում է, որ աստվածները նույնպես անցնում են սանսարայով և չեն կարող խուսափել ընդունված տիեզերական ընդհանուր կանոնից:

Հավանաբար բուդդիզմը աշխարհում միակ կրոնն է, որ վերածննդի շրջապտույտի պարագայում մարդուն ավելի բարձր է դասում, քան աստվածներին: Նրանք գտնում են, որ նիրվանային կարելի է հասնել միայն մարդ լինելուց հետո, որից պարզ զգացվում է, որ աստվածները նույնպես վերջին փուլում պետք է ընդունեն մարդկային կերպարանք, հետո նոր միայն միանան նիրվանային:

ԷԶՈՌԹԵՐԻԿԱՆ ԵՎ ԷԿԶՈՌԹԵՐԻԿԱՆ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մենք նշեցինք, որ նախասկզբնական գիտելիքների հիման վրա ձևավորված հավատն ուներ բավականին բարդ լուծվող հիմնախնդիրներ, որի համար էլ քրմերը ձեռք բերված գիտելիքները բաժանում էին էզոթերիկ գիտելիքների, որոնք իրենց մեջ պարունակում էին հիմնարար տեղեկություններ աշխարհի արարման, կառուցվածքի, էվոլյուցիայի հիմնական սկզբունքների, մարդ-բնություն հարաբերությունների մասին:

Այս գիտելիքները չունեին առաջնային նշանակություն բնակչության լայն զանգվածների համար: Նաև չկար հիմնական հնարավորություն այդ բոլորը փոխանցել ժողովրդին: Գիտությունների մյուս խումբը էկզոթերիկ գիտելիքներն էին, որոնց իմացությունն օգնում էր անհատին և ողջ հասարակությանը կազմակերպելու իր առօրյա գործունեությունը:

Էկզոթերիկ գիտելիքները կարող էին լինել բացարձակ ճշմարտություններ և համապատասխանել էզոթերիկ գիտությունների հիմնական սկզբունքներին, միաժամանակ կարող էին նաև էզոթերիկ երևույթները ներկայացվել առասպելների կամ փոխաբերությունների միջոցով:

Էզոթերիկայի երրորդ խումբը կեղծ գիտելիքներն էին, որոնք նպատակ ունեին զսպել մարդու մեջ բացասական գծերը և դարձնել նրան ավելի հասարակական էակ: Անտիկ շրջանում, երբ ձևավորվում էին կրոնները, հատկապես, դասակարգային կրոնները, իշխող դաս դարձած քրմությունը ստացած գիտելիքները սկսում է օգտագործել որպես զենք՝ հասարակ ժողովրդի դեմ:

Այս տեսակետից կարելի է վստահորեն պնդել, որ թաք-նագիտությունը՝ էզոթերիկան, դառնում է հակաժողովրդա-կան գլխավոր գործիքներից մեկը:

Եգիպտոսի, Բաբելոնի քրմերը ընդհանրապես, բոլոր գիտությունները՝ երկրաչափություն, աստղագիտություն, մա-թեմատիկա հռչակում են էզոթերիկ գիտություններ և ար-գելում նրանց տարածումը լայն զանգվածների շրջանում:

Էվկլիդեսը, Պյութագորասը, Սոկրատը սովորելով այդ գիտելիքները քրմերի մոտ երդում էին տվել ստացված գիտելիքները փոխանցել միայն բանավոր՝ ընտրյալներին:

Ժամանակի ընթացքում առաջացան, ինչպես Հին Հունաստանում, այնպես էլ այլ երկրներում, մարդիկ որոնք չէին երդվել և սկսում են իրենց ստացած գիտելիքները փոխանցել հասարակությանը և հատկապես, գրագետ վերնախավին:

Սա է պատճառը, որ Հունաստանում, Հնդկաստանում, Միջին Ասիայում, ինչպես կտեսնենք նաև Հայաստանում, կազմվում են էզոթերիկ բովանդակությամբ գրքեր, որոնց որոշակի քանակություն հասել է մեզ:

Էզոթերիկ գիտելիքների փոխանցման մի ձև էլ դառնում են առասպելները, իսկ հետագայում նաև, առակները, որոնք առաջին հայացքից կարող են թվալ շատ պարզ, իսկ ավելի խոր ուսումնասիրումը բացահայտ ցույց է տալիս նրանց կապը էզոթերիկ գիտությունների հետ:

Սա է պատճառը, որ իրարից բավականին հեռու և տարբեր ժամանակներում ձևավորված կրոնների գլխավոր գործող էությունները նման են իրար՝ իրենց գործունեությամբ, նույն օրը ծնվելով և իրենց ձևավորած շրջապատով: Ինչպես Օսիրիսը, Քրիշնիան, Միիրը այնպես էլ Քրիստոսը ծնվել են դեկտեմբերի 25-ին: Սա ունի աստղագիտական

նշանակություն: Դեկտեմբերի 25-ից սկսվում է կրճատվել գիշերը և երկարել ցերեկը:

Նրանք ունեն 12 աշակերտներ, որն այժմ հիմնականում կապվում է տարվա 12 ամիսների և օրվա 12 ցերեկային և 12 գիշերային ժամերի հետ, սակայն, թաքնագիտական իմաստը շատ ավելի խորն է: 12 թիվը հին թաքնագիտական իմաստով 3 անգամ 4-ի բազմապատիկն է, որը երկրաչափական պատկերով համապատասխանում է շրջանին և խորհրդանշում է մշտապես կրկնվող համակարգը, ինչպիսիք են՝ իրար հաջորդող օրերը, տարիները կամ կայուն, մշտական գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները:

Նոր կրոն ձևավորողները գտնում էին, որ կրոնի իրական կամ առասպելական հիմնադիրներն ունենալով 12 աշակերտներ նրանց հետ իրենք դառնում են 13-երորդը, այսինքն դուրս են գտնվում նախկին գործող շրջանից և շրջանը վերափոխում են պարույրի, այսինքն մարդկությանը բարձրացնում էին որակական նոր աստիճանի:

Ըստ էզոթերիկ գիտության այս անհատները՝ հավատացյալների կարծիքով էությունները, եկել են, որ մարդկությանը փրկեն կամ նվազագույնը բարելավեն նրանց վիճակը արմատապես:

Նույնը կարելի է տեսնել նաև քրիստոնեական ավանդույթներում, երբ խոսք է գնում քրիստոնեության տարածման մասին: Հայաստանում քրիստոնեություն տարածելու ավանդույթում նշվում է, որ Գրիգորը 12 տարի մնում է Խոր Վիրապի մութ բանտում և այնտեղից դուրս է գալիս 13-րդ երրորդ տարին:

Այս թիվը չի կարող լինել պատմական իրողություն այն պատճառով, որ առաջին հերթին նշված դեպքերի համեմատումը առաջացնում է բացահայտ հակասություններ,

իսկ մյուս կողմից էլ, պարզապես հնարավոր չէ 12 տարի մնալ մահվան համար ստեղծված բանտում:

Դրան հակառակ էզոթերիկայի տեսանկյունից ամեն ինչ շատ պարզ է: Ըստ հայ եկեղեցու տեսակետի Հայաստանը մինչ Գրիգորի դուրս գալը բանտից գտնվում էր որոշակի վիճակում/12տարի/ և նրա դուրս գալով՝ մտավ նոր,այլ վիճակ/13տարի/:

Մեր նշած ընդհանրություններից է նաև այն, որ բոլոր նշված աստվածները համապատասխանում են մարդկության բարոյապես անկման շրջանին, և բոլորն էլ ենթարկվում են ծանր փորձությունների, հետապնդման, բայց ի վերջո դառնում են մարդկության փրկիչ:

Յավոք սրտի, մեզ հիմնականում չեն հասել արևելյան ժողովուրդների, Գալիայում բնակվող կելտերի, գերմանական և սլավոնական ժողովուրդների առասպելները, որոնք բարբարոսաբար ոչնչացվել են հիմնականում քրիստոնյաների կողմից:

Մ. Խորենացին խոսելով պարսկան առասպելների մասին գրում է. «Ինչ կարիք ունես այս սուտ առասպելների» և համեմատում է հունական առասպելների հետ, որոնք ըստ Մ.Խորենացու պերճ ու ողորկ, պատճառաբանված առասպելներ են:

Այս տեսակետը քրիստոնեական եկեղեցու տեսակետն է արտահայտում և ոչ թե իրականությունը: Այս տեսակետը պատճառ դարձավ հազարավոր ժողովուրդների բազմադարյան մշակույթի ոչնչացմանը:

Միայն Հունական անտիկ շրջանի առասպելներն են, որ բավականին աղավաղված, բայց համենայնդեպս, հասել են մեզ, որովհետև առաջին քրիստոնեություն տարածողները եղել են հիմնականում հույներն ու մովսեսականները, որոնք գոնե բանավոր ունեին իրար հետ փոխհամա-

ձայնություն և թշնամաբար էին տրամադրված մյուս ազգերի ստեղծած ազգային արժեքների հանդեպ:

Հույները մյուս ազգերին արհամարհանքով կոչում էին բարբարոսներ և Արիստոտելը բացահայտ գրում էր, որ բարբարոսների լավագույն վիճակը հույների մոտ ստրուկ լինելն է, իսկ մոլեսեսականները իրենց համարելով Յահվահի ընտրյալ ժողովուրդ, մյուս ազգերին ու ժողովուրդներին ընդհանրապես մարդ չէին համարում:

Գրիգորի քարտուղար Ջենոբե Գլակը բառացի մեջ է բերում Գրիգորի խոսքերը, որով Գրիգորը պատվիրում էր Հայաստանում ոչնչացնել այն ամենը ինչ ազգային է: Նույնիսկ նրանք ոչնչացրեցին քրիստոնյա նախկին պատմիչների գործերը, որոնք վերաբերում էին հայոց պատմության:

Նույն գրքում պատմվում է, որ քրմերի կենդանի մնացած ավագ որդիներին որպես ստրուկ քշում են քարի հանքերը, իսկ 5 տարեկանից փոքրերին ստիպողաբար մտցնում են քրիստոնեական դպրոցներ, մինչև որ, հեղինակի խոսքերով ասված. «նրանք մոռանում էին իրենց ընտանիքը, հավատն ու ազգությունը»:

Դրա համար էլ անտիկ շրջանի թաքնագիտական գաղափարները հիմնականում մենք կարող ենք ուսումնասիրել հունական առասպելներում: Որոշ նմուշներ կարելի է գտնել նաև մեզ հասած պատմական գործերում, երբ պատմիչը ստիպված թաքնագրել է իր մտքերը՝ վախենալով իշխանությունների կամ եկեղեցու վրեժխնդրությունից: Այս գործերը որքան էլ տարօրինակ է, այժմ էլ ճիշտ չեն ներկայացվում լայն հասարակությանը:

Մեր ասածը հիմնավորելու համար, բերենք մեկական օրինակ հին հունական առասպելներից և պատմական դրվագներից: Դիտավորյալ երկու քննարկվող օրինակներն

էլ ընտրել ենք այնպիսիները, որոնք հայտնի են լայն հասարկությանը:

Դպրոցական դասագրքերից բոլորին հայտնի է «Գորոյան հանգույցի» պատմությունը: Մեզ ներկայացվում է, որ բազմաթիվ մարդիկ անհաջող փորձ են արել՝ քանդել Գորոյան հանգույցը, որն ըստ գուշակության բերելու էր հանգույցը քանդողին իշխանություն՝ ողջ Ասիայի վրա, և որ նա պետք է միավորեր Եվրոպան և Ասիան:

Ըստ ներկայացվող այժմյան տարբերակի՝ միակ ճիշտ, սրամիտ լուծումը գտել է Ալեքսանդր Մակեդոնացին, որը պարզապես սրով կտրում է հանգույցը:

Իրականում, նրա կենսագիրները շեշտում են, որ Ալեքսանդր Մակեդոնացին նույնպես չկարողացավ քանդել Գորոյան հանգույցը և տեսնելով, որ բազմաթիվ մարդիկ տեսան իրեն և իր անհաջողությունից պարզապես զայրացած ոչնչացրեց Գորոյան հանգույցը:

Կնշանակի պատմիչներն ընդունում են, որ խնդիրը չի լուծվել: Գորոյան հանգույց կտրելով, բռնի խնդիրը ոչնչացնելով, հավանական է Մակեդոնացին կատարեց մինչև այժմ կատարված ամենամեծ հանցագործությունը՝ թույլ չտալով, որ իրենից հետ ուրիշները լուծեն այդ խնդիրը՝ միավորել Եվրոպան ավելի մեծ իմաստով մարդկային ռեալիստական մտածելակերպը Ասիայի՝ ավելի հոգևոր մասի հետ:

Այժմ էլ այդ խնդիրը մնում է չլուծված, և Եվրոպա-Ասիա հակասությունը համամարդկային ամենամեծ չլուծված խնդիրն է:

Նորից շատ-շատերին հայտնի է Էդիպ արքայի առասպելը: Այնտեղ պատմվում է, որ երիտասարդ Էդիպը գալիս է Յուբոս, որտեղ առաջացել էր մեծ խնդիր. սֆինքսը փակել էր քաղաք տանող ճանապարհը և բոլոր անցորդներին ստիպում էր, որ լուծեն իր առաջարկած հանելուկը:

Ըստ պայմանի, ով չկարողանար լուծել՝ սպանվում էր, իսկ լուծողը պետք է դառնար աշխարհում ծնված և ապրած ամենաերջանիկ մարդը:

Սֆինքսը Էդիպին հարցնում է, թե ո՞ր կենդանին է, որ առավոտյան քայլում է չորս ոտքով, կեսօրին՝ երկու, երեկոյան՝ երեք: Էդիպն անմիջապես պատասխանում է, որ դա մարդն է և նրա անցած կյանքի ճանապարհը:

Առասպելում նշվում է, որ սֆինքսը ոչինչ չի պատասխանում, այլ անձայն հեռանում է: Էդիպը վերադառնում է քաղաք՝ որպես քաղաքի փրկիչ և որովհետև քաղաքի նախկին արքան անհայտ հանցագործի ձեռքով սպանվել էր, Էդիպին ընտրում են քաղաքի թագավոր:

Էդիպն ամուսնանում է այրիացած թագուհու հետ, ունենում՝ երկու տղա և մեկ աղջիկ: Թվում է, սֆինքսի դրած պայմանը կատարվել էր և Էդիպը դարձել էր աշխարհում ամենաերջանիկ մարդը, նամանավանդ, որ մեր առաջին գրքում նշել էինք՝ Բալկանյան թերակղզում ինֆորմացիոն դաշտի ազդեցության տակ, հույների համար անմահությունը և երջանկությունը կարելի էր գտնել միայն ընտանիքի ներսում:

Սակայն, կյանքի վերջում պարզվում է, որ Էդիպն աշխարհում ամենադժբախտ մարդն է, որովհետև սպանել էր իր հորը, ամուսնացել իր մոր հետ: Նրա մայրն ինքնասպան է լինում: Էդիպը հանում է իր աչքերը, որ Հադեսի թագավորության մեջ էլ չտեսնի իր հորն ու մորը, իսկ նրա երկու տղաներն իշխանության համար կռվելիս՝ սպանում են մեկը մեկին, իսկ աղջկան փակում են քարանձավում:

Էզոթերիկ գիտությունների լույսի տակ մենք կարող ենք պնդել, որ այժմյան պատկերացումները՝ որ Էդիպը լուծել է խնդիրը, սխալ է:

Առասպելի իմաստը շատ ավելի բարդ է ու անմիջապես

կապված է հունական աշխարհընկալման հետ: Հույները գտնում էին, որ ճակատագիրը պարտադիր է բոլորի համար, և անգամ աստվածները չեն կարող փոխել ճակատագիրը: Էդիպի ճակատագիրը ծնվելու պահից որոշված էր: Էդիպը պետք է սպաներ իր հորը և ամուսնանար իր մոր հետ:

Էդիպի հոր, հետո Էդիպի բոլոր քայլերը ոչ միայն չփոխեցին ճակատագիրը, այլ՝ քայլ առ քայլ իրականացրեցին դրա կատարումը: Այս պայմաններում պարզ է դառնում, որ Էդիպը սֆինքսի խնդիրը լուծել է միայն մակերեսորեն, ժամանակի կարճ հատվածի համար, իսկ խնդրի էզոթերիկ, հիմնական լուծումը այժմ էլ մնում է չբացահայտված:

Այս օրինակները նաև ցույց են տալիս, որ պարտադիր չէ, որ թաքնագիտությունը պարտադիր հաղորդվի բանավոր: Պարզապես, հնարավոր է գրել դրանք պարզ, պատումների ձևով և միայն գիտակ մարդկանց, որոնք գիտեն թվային կամ խորհրդանշական էությունները կդառնա պարզ ու հասկանալի:

Հնարավոր է թաքնագիտությունը փոխանցել էկզոթերիկ գիտելիքների ձևով, որով նրա էզոթերիկ գաղափարը շատ ավելի լավ է թաքնվում:

Աստվածաշնչում բերված Քրիստոսի առակները և նրա մասին պատումները ներկայացվում և քարոզվում են բառացի էկզոթերիկայի սկզբունքով, որը ճիշտ չէ և դրա մասին ասվում է հենց Քրիստոսի բերանով:

Քրիստոսի աշակերտները հարցնում են նրան, թե ինչու՞ է Քրիստոսը ժողովրդի հետ խոսում առակների լեզվով և նա անմիջապես պատասխանում է, որ ինքը խոսում է առակներով, որ ժողովուրդը չհասկանա և հետո ավելացնում է. «Մարգարիտները շաղ մի տուր խոզերի առաջ»:

Նորից նույն գաղափարը կարելի է տեսնել Արիստոտելի և Ալեքսանդր Մակեդոնացու նամակագրության մեջ:

Գրվում է, որ Մակեդոնացին ծանոթանալով Արիստոտելի նոր աշխատության հետ, այնտեղ հանդիպում է էզոթերիկ գիտելիքների՝ գրված բաց տեքստով:

Իր պատասխան նամակում մեղադրում է Արիստոտելին դրա համար, նշելով, որ եթե հասարակ մարդիկ ծանոթանան էզոթերիկ գիտելիքների հետ, այլևս չի լինի տարբերություն՝ ընտրյալների և հասարակ ժողովրդի միջև:

Դրան Արիստոտելը պատասխանում է, որ ինքը գրել է բաց տեքստով, բայց միևնույն է, հասարակ ժողովուրդն այն չի հասկանա, այնպես որ գրել կամ չգրելը տալիս է նույն արդյունքը:

Այստեղ տեղին է նշել, որ մեր նախնիները և մյուս երկրների քրմերը վախենալով, որ էզոթերիկ գիտելիքներն ընկնելով անպատրաստ կամ առավել ևս չարամիտ մարդկանց ձեռքը, կարող են վնաս բերել առհասարակ մարդկությանը, սկսեցին թաքցնել իրենց գիտելիքները:

Յավոք սրտի պատմությունը ցույց է տալիս, որ այդ գիտությունները հենց ընկան այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, այդ գիտելիքներն օգտագործում են իրենց նեղ շահերի համար՝ ընդդեմ հասարակության:

Պատմական որոշակի շրջանում այդ գիտելիքները միայն իրենց ձեռքը կենտրոնացնելու համար մեր նշած ուժերը, սկսեցին ոչնչացնել հանրային գրադարանները և տարբեր ազգերի հազարամյա մշակույթը:

Այժմ, առանձին անհատներ ուսումնասիրում և նորից են վերականգնում մեր նշած թաքնագիտությունը և իմ կարծիքով, անհրաժեշտ է կարևորագույն սկզբունք դարձնել այդ գիտելիքների մասսայական տարածումը և համամարդկային հավատի վերականգնումը, որի պահանջը խիստ զգացվում է XXI հազարամյակում:

ՄՈՎՍԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԻՈՆԻՉՍ ԵՎ ՄՈՎՍԵՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Յավոք սրտի բնակչության լայն շրջաններում հաճախ ընդհանրացվում է մովսեսական ժողովուրդը սիոնիզմի, իսկ սիոնիզմն էլ մովսեսական կրոնի հետ, որի հետևանքով տարբեր ժողովուրդների մոտ առաջանում է ատելություն, անգամ բացահատ թշնամանք այդ ժողովրդի հասարակ ներկայացուցիչների նկատմամբ:

Ամեն մի ժողովուրդի նման մովսեսականներին նույնպես բնորոշ է արարելու, երջանիկ ապրելու, շրջապատի հետ լեզու գտնելու երազանքն ու ցանկությունը:

Սակայն մենք տեսանք, որ մովսեսական կրոնի ձևավորման նպատակը հենց եղել էր այդ ժողովրդին առանձնացնելն ու թշնամացնելը նույն տարածքում բնակվող այլ ժողովուրդներից:

Հետագա դարերում էլ տարբեր երկրներում մովսեսական վերնախավը հակառակ ժողովրդի իղձերի ու շահերի, ժողովրդին իրեն ենթարկեցնելու, իր ազդեցության տակ պահելու համար, շարունակում էր տեղի ժողովուրդների հետ մովսեսականներին թշնամացնելու քաղաքականությունը:

Էնգելսը, խոսելով մովսեսականների մասին նշում է, որ ամենամեծ մեղքի բաժինը այն բանում, որ տարբեր ժողովուրդներ կասկածանքով ու թշնամանքով են նայում մովսեսականներին, հենց իրենք մովսեսականներն են, իրենց փակվածությամբ և ուրիշ դավանանքի մարդկանց հետ շփվելու չկամությամբ:

Բազմաթիվ մովսեսական ուսումնասիրողներ գտնում են, որ այդ ժողովուրդը պահպանվել է միայն այն պատճառով, որ մշտապես ենթարկվել է հետապնդումների:

Սիոնիզմի հիմնադիրներից Բենիամին Գորցլը գրում է. «Մովսեսականները երկու սերունդի գոյության ժամանակահատվածում պատմության մեջ ձուլված կլինեին, եթե չլիներ նրանց նկատմամբ հետապնդումներն ու հալածանքները»:

Գոնե վերջին 100 տարվա մեջ կարելի է նկատել դեպքեր, երբ ուղղակի կամ անուղղակի մովսեսական վերնախավն է հրահրել թշնամանք իր իսկ ժողովրդի նկատմամբ:

1930-ական թվականներին համաշխարհային սիոնիստական համագումարի խոսնակ Վեցմանը, խոսելով մովսեսականների Պաղեստին տեղափոխվելու մասին, գրում էր. «Հները կգնան, նրանք փոշի են, տնտեսական և քաղաքական փոշի հին աշխարհի, կմնա միայն հավերժականը՝ հանձինս Իսրայել պետության»:

Նույն սիոնիստական համագումարի ներկայացուցիչներն էին, որ մշակեցին չոր ճյուղերը այրելու քաղաքականությունը՝ լկտիորեն հայտարարելով, որ հնարավոր չէ 6 միլիոն տեղափոխել Պաղեստին, սակայն կարելի է կրթել սիոնիզմի գաղափարախոսությամբ 100 հազար երիտասարդի և տեղափոխել Պաղեստին, իսկ մնացածներին, որպես չոր ճյուղեր կարելի է և այրել:

Այժմ որքան էլ ցանկանան թաքցնել, որքան էլ փորձենք չտեսնելու տալ, միևնույն է կապը սիոնիզմի և նացիոնալ-սոցիալիզմի միջև բացահայտ է: Այս շփումները հավանաբար ամենաանմարդկային, ամենաանբնականն են, որովհետև կազմակերված, ուղղված են եղել սեփական ժողովրդի դեմ:



В конце 1934 г. офицер СС Леопольд фон Мильденштейн и представитель сионистской федерации Германии Курт Техлер совершили совместный шестимесячный вояж в Палестину для изучения на месте «возможностей сионистского развития». Вернувшись из поездки, фон Мильденштейн написал серию из 12 статей под общим названием «Нацист путешествует по Палестине» для гебельсовской газеты «Ангрифф». Он выражал искреннее восхищение «пионерским духом и достижениями еврейских поселенцев». По его убеждению, «нужно всячески содействовать сионизму, ибо он полезен как для еврейского народа, так и для всего мира». Видимо, для того, чтобы увековечить память о совместной поездке нациста и сиониста, «Ангрифф» даже выпустила медаль, на одной стороне которой была изображена свастика, а на другой — шестиконечная звезда Давида. (Журнал «Истори тудей». Лондон, № 1, 1980 г.).

Նկ. 13. Շքանշան, որը խորհրդանշում է ՍՍ-ի կապը սիոնիզմի հետ

Բերվող վկայությունը կարող է թվալ անհավանական, որի համար շքանշանի ներքևում տրված (Նկ. 13) մեկնաբանությունները բերում ենք ամբողջությամբ. «В конце 1934г. офицер СС Леопольд фон Мильденштейн и представитель сионистской федерации Германии Курт Техлер совершили совместный шестимесячный вояж в Палестину для изучения на месте /возможностей сионистского развития. / Вернувшись из поездки, фон Мильденштейн написал серию из 12 статей под общим названием /Нацист путешествует по Палестине/ для гебельсовской газеты /Ангрифф/. Он выражал искреннее восхищение /пионерским духом и достижениями еврейских поселенцев/. По его убеждению, /нужно всячески содействовать сионизму, ибо он полезен как для еврейского народа, так и для всего мира/. Видимо для того, чтобы увековечить память о совместной поездке нациста и сиониста, /Ангрифф/ даже выпустила медаль, на одной стороне которой была изображена свастика, а на другой - шестиконечная звезда Давида. (Журнал /Истори тудей./ Лондон, 1,1980г.)»:

Գերմանական զորքերը 1939 թ., երբ մտան Վարշավա, մեծահարուստ մոլուխականները և սիոնիստները տեղա-

փոխվեցին Շվեցարիա: Նրանց ուղեկցում էին գերմանական բարձր պաշտոնյաները:

Նույն ժամանակ կազմվում էին շարքային մովսեսականների ցուցակները, որոնց պետք է ուղարկեին մահվան ճամբար:

Սիոնիզմը, որպես գաղափարական հոսանք, դատապարտվել է ՄԱԿ-ի 1975 թ. որոշմամբ, բնութագրվելով՝ որպես հակամարդկային, ռասիստական, ազգայնամոլական տեսություն: Չնայած այժմ ցանկացած անձ, եթե փորձի քննադատել սիոնիզմի գաղափարախոսությունը, կարող է որակավորվել հակասեմիտ, որով ոտնահարվում է ամենաբարձր մակարդակներով ՄԱԿ-ի որոշումը:

Իրականում հենց սիոնիզմն է տիպիկ հակասեմական գաղափարախոսություն, որովհետև չի ընդունում սեմական ծագման պաղեստինցիների պատմական իրավունքը՝ բնակվելու իրենց պատմական հայրենիքում:

Ըստ սիոնիստական գաղափարախոսության՝ իրենց պետությունը պետք է տարածվի Նեղոս գետից մինչև Եփրատ գետը՝ իր մեջ ընդգրկելով նաև Սիրիան, Իրաքը, Եգիպտոսի մի մասը, իսկ այդ տարածքների այժմյան բնակիչները չունեն որևէ քաղաքական ինքնուրույնության իրավունք:

Կարևոր է, թե ինչպիսին են ներքին կապերը սիոնիզմի և մովսեսական կրոնի հետ: Այս հարցում կան իրար հակամերժ երկու տեսություններ:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ սիոնիզմը կրոնական ուղղություն է և հենվում է Թորայի սկզբունքների վրա: Երկրորդ ուղղությունը հակառակը, պնդում է, որ սիոնիզմը տիպիկ աշխարհիկ գաղափարախոսություն է և չունի որևէ կապ կրոնի հետ:

Սիոնիզմի հիմքը այն գաղափարն է, որ մովսեսականները պետք է հավաքվեն Պաղեստինում և իր անունը

ստացել է Սիոն լեռան անունից, որի վրա Մովսեսը ըստ ավանդույթի ստացել է իրենց աստծուց նրա պատգամները:

Այս գաղափարը նորմալ է, հասկանալի ցանկացած սառը դատող մարդու համար: Ամեն մի ժողովուրդ իրավունք ունի իր պատմական տարածքում հավաքվելու և իր ազգային պետությունը ստեղծելու: Ապրելու իրեն հարմար օրենքներով ու ավանդույթներով:

Նորից հասկանալի է, որ պետության ձևավորման անհրաժեշտությունը ստացել է նաև որոշակի կրոնական երանգ: Ցանկացած ազգի առասպելները, ավանդույթները հենց դրա համար էլ ստեղծվում են, որպեսզի դաստիարակեն և ուղղություն տան տվյալ էթնոսին:

Սիոնիստական գաղափարախոսության մեջ քննվում է փրկչի՝ մեսիայի գաղափարը: Մովսեսականները գտնում էին, որ իրենք կորցրել են իրենց պետությունը և ցրվել ողջ աշխարհում իրենց գործած մեղքերի համար: Նրանք սպասում էին մովսեսականների փրկչին, որը ինքնազոհաբերման միջոցով կքավի իր ժողովրդի մեղքերը և կվերականգնվի Իսրայել հզոր պետությունը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսվում է մովսեսականների շրջանում քարոզվել այն գաղափարը, որ մեսիան կարող է և չլինել կոնկրետ մարդ և, որ մեսիան իրականում ծանր, քրտնաջան պայքարն ու դաստիարակությունն է, որի շնորհիվ կիրականանա մեղքերի քավությունը:

Այս գաղափարախոսության ազդեցության տակ էլ Ռուսաստանում սկսվում է երիտասարդների շրջանում ամրապնդվել այն տեսակետը, որ պետք է բուն հայրենիքում ուսումնասիրել Թորան: Մի շարք երիտասարդներ վերաբնակություն են հաստատում Պաղեստինում:

1880 թվականին սիոնիստական վերնախավը քարոզում և շահագրգռում էր մովսեսականներին հաստատվել Պաղեստինում: Ալեքսանդր երկրորդի սպանության պատճառով հալածանքներ սկսվեցին մովսեսականների նկատմամբ, որը շատ նպաստեց Պաղեստինում մովսեսական բնակչության աճին: Ավելի քան երեսուն հազար մարդ Ռուսաստանից հեռացան Պաղեստին:

Չենք պնդում, որ սա կազմակերպված էր, սակայն շատ նման իրավիճակ ստեղծվեց 20-րդ դարի 90-ական թվականներին: Իսրայել պետությունը խիստ շահագրգռված էր, որպեսզի քանդվող ԽՍՀՄ-ից բարձր որակավորում ունեցող մասնագետները և համաշխարհային հռչակ ունեցող գիտնականները գային Իսրայել: Նաև խնդիր կար արաբական դիմադրության ակտիվացման դեմ մեծացնել Իսրայելի մովսեսական բնակչությանը:

Հենց այդ շրջանում Ռուսաստանում սկսվեց ակտիվորեն գործել «Պամյատ» կոչվող կազմակերպությունը, որը վարում էր խիստ ընդգծված հակասիոնիստական, հակամովսեսական գաղափարախոսություն: Տեղի ունեցան անմեղ երեխաների սպանություններ և մի շարք վայրերում ավերվեցին ու պղծվեցին մովսեսականներին պատկանող գերեզմանները:

Սկսվեց մասսայական արտագաղթ, որը կարելի է բնութագրել որպես համընդհանուր փախուստ: Կարճ ժամանակահատվածում Իսրայելում հաստատվեցին 800 հազարից ավել մովսեսականներ, նաև որոշ քանակությամբ ոչ ռուս այլազգի բնակչություն, որոնց հաճույքով ընդունեց Իսրայելը:

Դրանից հետո այդ կազմակերպությունը դադարեցրեց իր գոյությունը, մարեց նաև հակասիոնիստական քարոզչությունը:

Հետագայում ապացուցվեց, որ «Պամյատ» կազմակերպությունը հիմնվել և անմիջականորեն ղեկավարվել է սիոնիստական կենտրոնի կողմից: Այժմ քիչ բան է փոխվել:

Այս ժողովրդի ներկայացուցիչները իրենց աշխատասիրությամբ, պրպտուն միտք ունենալու շնորհիվ բավականին ակտիվ դիրք են գրավում աշխարհում և այդ մարդկանց միակ ցանկությունը հանգիստ ապրելն է, ինչպես իրենց Իսրայել պետությունում, այնպես էլ այն երկրներում, որտեղ հաստատվել են դեռևս իրենց պապերը:

Չնայած սրան, մենք տեսնում ենք, որ հանձինս համաշխարհային սիոնիստական վերնախավի և դրանց սպասարկող ընտանիքների շահերի աշխարհի տարբեր վայրերում նորից թշնամանք է հրահրվում և ոչնչացվում են տարբեր ժողովուրդների ազգային արժեքները:

Վերջերս եվրոպական երկրները և ԱՄՆ-ը ստիպված էին բանակցություններ սկսել Իրանի հետ և խոստացան վերացնել այն պատժամիջոցները, որնք մտցվել էին Իրանի դեմ: Դա դուր չի գալիս համաշխարհային նավթ արդյունաբերողներին և հատկապես Ռուտշիլդների ընտանիքին:

Թվում է, որ այդ պայմանագրից առաջինը պետք է ուրախանար Իսրայելը, որովհետև իր իսկ հայտարարությամբ կնվազեր, եթե ընդհանրապես չվերանար Պարսկաստանից վտանգը: Իրականում Իսրայելի ղեկավարությունը պահանջում է դադարեցնել բանակցությունը Իրանի հետ նույնիսկ ռազմական գործողություններ սկսել նրա դեմ:

Բոլորին է հայտնի, որ առճակատման դեպքում անդառնալի կորուստներ կկրի Իսրայելը, կզոհվի անմեղ բնակչությունը և ամենայն հավանականությամբ կվերանա այդ պետությունը: Չնայած դրան, որովհետև դա է պահանջում համաշխարհային սիոնիզմը, Իսրայելի պետությո-

յունը պատրաստ է գնալ պետականության ոչնչացման և 100 հազարավոր անմեղ բնակչության զոհողության:

Սա նաև լավ են հասկանում հասարակ ժողովրդի ներկայացուցիչները: Պատահական չէ, որ ոչ միայն տարբեր երկրներում, այնպես էլ բուն Իսրայելում ակտիվորեն աճում են հակասիոնիստները:

Նույնիսկ մովսեսական հոգևորական մի խումբ հանդիպում ունեցավ Իրանի նախագահի հետ և հայտարարեց, որ իրենք դեմ են հակաիրանական քաղաքականությանը և անելու են ամեն ինչ տարածաշրջանում հնարավորինս խաղաղություն հաստատելու և արաբների հետ ընդհանուր լեզու գտնելու համար:

Երբ, ես հավաքում էի նյութեր այս հատորը գրելու համար, հանդիպեցի մովսեսական ժողովրդի մի ազնիվ, այդ տեսակը բնութագրող ներկայացուցիչի, որի հետ կիսեցի իմ մտքերը: Նա հիմնականում ընդունեց իմ եզրահանգումները և խնդրեց, որ ավելացնեմ նաև իր տեսակետը, որը և անում եմ:

Նա ներկայացրեց մովսեսական «քավության նոխազի»-ի գաղափարը: Մեղավոր մարդն իր մեղքերը քավելու համար գնում էր երկու այծ, որոնցից մեկին զոհաբերում էր Յահվահի տաճարում, իսկ մյուսի վրա բարդելով իր կատարած մեղքերը՝ տանում և թողնում էր անապատում, որպեսզի ծարավից ու սովից սատկելով քավի իր մեղքերը:

Դրանից հետո նա ավելացրեց, որ իրենք՝ մովսեսականները եղել են նորմալ ժողովուրդ, մի քիչ ավելի ձեռներեց, որովհետև կյանքն է ստիպել իրենց, որի հետ ես ամբողջությամբ համաձայն եմ:

Վիճակը փոխվել է, երբ ավերվեց Յահվահի տաճարը, ցրվեցին այդ մարդիկ աշխարհով մեկ: Աստիճանաբար

ծնավորվեց փողի և ունեցվածքի հիման վրա մովսեսական վերնախավը:

Այժմ, իրենց իշխանությունը պահելու և ավելի շատ հարստանալու համար, նրանք գտել են նոր «քավության նոխազ» ու որովհետև չկա այլևս Յահվահի տաճարը, և չեն կարող կենդանի զոհաբերել, այդ մարդիկ ուրիշ ազգերի ձեռքով մշտապես զոհաբերում են շարքային մովսեսականներին:

Գլուխ 2

ՀԻՆ ՀՌՈՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐԸ

Ամեն անհատ մի աշխարհ է, ամեն անհատ տարբեր է զգում իր շրջապատը: Բնությունը՝ մեր շրջապատը տարբեր է ամեն մտածող անհատի համար: Կրոնը իր դոգմաներով, որոնք ստեղծման պահին հիմնականում արդեն լինում են ժամանակավրեպ ու հնացած, կապանք են դառնում ազատ մտքի թռիչքի համար: Իսկ համաշխարհային կրոնները մարդկության մի խմբի կողմից ստեղծած լինելով բանտ են ողջ մարդկության համար:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Չնայած Բ.ա. VI դարից սկսում են ձևավորվել աշխարհակալ պետություններ, ինչպիսիք էին Աքեմենյան Պարսկաստանը, Չինաստանը: Կային այդ պետությունների կողմից հովանավորվող կրոններ, ինչպես օրինակ, զրադաշտությունը կամ կոնֆուցիզմը, սակայն դա չէր խանգարում տեղական կրոնների գոյությանը:

Ինչպես տեսանք, ենթակա ժողովուրդների միավորմանը խոչընդոտելու համար պարսկական Արքայից Արքաները հովանավորում էին առանձին ձևավորված կրոնները:

Քաղաքական վիճակը կտրուկ փոխվեց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով: Նրա բարբարոս գործունեության հետևանքով ոչնչացավ զրադաշտական կրոնը: Սպանվեցին հին կրոնի գիտակ քրմերը, իսկ սրբազան գրքերը հավաքվեցին ու այրվեցին: Ծանր հարված հասցվեց նաև նախկին հասարակական հարաբերություններին և նախկինում գոյություն ունեցող տնտեսական կապերին:

Գրաված տարածքներում տարածվեց նյութապաշտությունը, քայքայվեցին արյունակցական կապի վրա ձևավորված հարաբերությունները և մեծ տարածում ստացան դրամա-իրային հարաբերությունները: Այս բոլորը ճնշող ազդեցություն ունեցան մարդկանց հոգեբանության վրա:

Բնակչության մի խոշոր մասը, կորցնելով հավատը բարձր, հոգևոր արժեքների նկատմամբ, սկսեց բացահայտ գովերգել հաճույքի համար ապրելու գաղափարը, և որպես փիլիսոփայական ուղղություն՝ առաջին պլան մղվեց սկեպտիցիզմ, ցինիզմը, որոնց քարոզած հիմնական գաղափարներն էին, որ ցանկացած իրողության ապացուցման կամ բացատրման համար կարելի է բերել բազմաթիվ մեկը մեկին մերժող փաստեր, այսինքն տրամաբանական եզրակացությունը գալիս է նրան, որ աշխարհում չկա կայուն ոչ մի բան, և կյանքից պետք է վերցնել այն ամենն, ինչ հնարավոր է:

Բնական է, որ այդ համատարած բարոյալքումը պետք է ծներ նաև մարդկանց, որոնք պետք է փորձեին փիլիսոփայության ճանապարհով գտնելու իրավիճակի բացատրման և դրանից դուրս գալու ճանապարհները:

Սա էր պատճառը, որ ոչ միայն Հունաստանում, այլև հելլենիստական կոչվող տարածքներում մեծ տարածում է ստանում նոր պլատոնականությունը, որը ցանկանում էր

տալ աշխարհի ամբողջական լինելու գաղափարը՝ հիմնականում հենվելով վերևում քննարկված հավատի վրա:

Պլատոնյան և պյութագորեսյան ուսմունքների հիման վրա ձևավորվեց ստոիկների ուսմունքը: Ստոիկները քարոզում էին, որ ողջ տիեզերքը մեկ ամբողջական մտածող էակ է, և մարդիկ կազմում են այդ էակի անբաժանելի մասերը, ամբողջի վիճակը շատ բանով կախված է անհատ մարդկանց գործունեությունից:

Ոչ մի հին կրոն կամ գոյություն ունեցող փիլիսոփայական ուղղություն այդ շրջանում չէր կարողանում տալ բացատրություն թե ո՞վ և ինչպե՞ս կարող է մարդկանց դուրս բերել ստեղծված ծանր վիճակից: Եվ այս շրջանում է, որ ձևավորվում է փրկչի գաղափարը:

Մարդիկ գտնում էին, որ մարդկությանը կարող է փրկել միայն այն էակը, գերուժը, ով անձնապես ենթարկվել է հալածանքների, կարողացել է հաղթանակով դուրս գալ այդ պայքարից և կցանկանա ձեռք մեկնել իր կարիքն ունեցող մարդկանց:

Տարբեր կրոններից առաջին պլան են մղվում այնպիսի աստվածություններ, որոնք համապատասխանում են մեր նշված սկզբունքներին:

Հունական Դիոնիսոսը, եգիպտական Օսիրիսը կամ զրադաշտության մեջ Միհրը չունեին որևէ իշխող, նույնիսկ, կարևոր տեղ՝ հին կրոններում: Սակայն, նրանք բոլորն էլ հետապնդվել էին, նույնիսկ սպանվել, որից հետո դարձել էին արդարության պահապաններ:

Տեսնում ենք, որ մեր նշած աստվածությունները, աստիճանաբար ավելի վառ անհատականություններ ստանալով, սկսում են դառնալ եթե ոչ առանձին կրոնների ամբողջական հիմք, ինչպես օրինակ միհրականությունը, ապա գոնե

առանձին կրոնական համայնքների գլխավոր պաշտամունքի առարկա:

Ողջ հելլենիստական աշխարհում սնկի պես աճում են հիմնականում փակ կրոնական համայնքները, որոնք ձևավորում են իրենց կրոնական աշխարհաճանաչումը և ծիսակարգը: Մարդ մասնակցելով այդ աստվածներին նվիրնած արարողություններին հավատում էր, որ ինքը նույնպես կարող է փրկվել:

Ատտիսին նվիրված տոնակատարության ժամանակ քուրմը ասում էր. «Հուսադրվեք այնպես, ինչպես փրկվեց աստված, կփրկվեք և դուք»:

Հելլենիզմը չըջանցեց նաև Պաղեստինը: Մովսեսական համայնքը նույնպես ենթարկվեց հիմնարար փոփոխությունների: Դրա կարևոր պատճառներից մեկը համաաշխարհային առևտրում դերերի փոփոխումն էր:

Աքեմենյան Պարսկաստանում առևտուրը հիմնականում իրականացվում էր պետական մակարդակով, չնայած չէր արգելվում անհատական առևտուրը:

Մակեդոնացու գրավումներից հետո պետական առևտուրը դադարեց գոյություն ունենալուց: Հույներն ու մակեդոնացիներն իրենց ձեռքն էին վերցրել զինվորական գործն ու պետական կառավարումը, իսկ տեղի ժողովուրդները հիմնականում չունեին անհատական առևտրի փորձ, որի համար ծովային առևտուրն ամբողջությամբ կենտրոնացավ Փյունիկյան քաղաք-պետությունների ձեռքում, որոնք հիմնեցին իրենց գաղութները՝ ողջ Միջերկրածովային երկրներում:

Յամաքային առևտուրը նույնպես կենտրոնացավ սեմական ժողովուրդների ձեռքին և հատկապես մեծ տեսակարար կշիռ ձեռք բերեցին մովսեսականները: Մովսեսականները չեզոք, նույնիսկ բարեկամական վերաբերմունք ունեին

նոր իշխանությունների հետ, որի շնորհիվ էլ հիմնեցին իրենց գաղութները հելենիստական բոլոր երկրներում:

Մենք նշել ենք, որ Թորայում արգելվում է Երուսաղեմի Յահվահի տաճարից դուրս սրբավայրերի կառուցումը և գոհերի մատուցումը: Սրա հետևանքով, հիմնված մովսեսական գաղութներում բացվում են ոչ թե տաճարներ, այլ՝ սինագոգներ, որոնք լինելով աշխարհիկ կառույցներ, մեծ հնարավորություն էին տալիս արագ արձագանքել գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական փոփոխություններին:

Սինագոգների գործնեությունը այնքան է դառնում ձեռնտու, որ մովսեսականները սկսում են սինագոգներ բացել նույնիսկ Պաղեստինում, որտեղ շարունակում էր գործել Յահվահի տաճարը:

Սինագոգում գաղութը ղեկավարող ռաբբին չուներ հոգևորականի տիտղոս, աշխարհիկ մարդ էր և բնական է, որ այդ պաշտոնում առաջ էին քաշվում նյութապես ավելի հարուստ, համայնքում մեծ ազդեցություն ունեցող անհատները:

Մովսեսական համայնքի համար միշտ էլ խնդիր է եղել ներքին շփման լեզվի հարցը: Չնայած, Թորան գրվել էր հին մովսեսական եբրայերեն կոչվող լեզվով, որի հիմքը սեմական է, բայց արդեն բաբելոնյան գերությունից հետո այդ լեզուն հասկանալի չէր մովսեսականներին և հիմնական խոսակցական լեզուն արամերենն էր:

Նոր շրջանում տարբեր ազգերի ներկայացուցիչներն իրար հետ շփվում էին հունարեն և մովսեսականները հունարենը դարձնում են իրենց համայնքի ներսում խոսակցական լեզու: Սա ոչ միայն հնարավորություն է տալիս ազատ շփվել տեղի ժողովուրդների հետ, այլև ծանոթանալ

հունական մշակույթին, որը ստեղծում էր հնարավորություն՝ լավ կապեր հաստատելու նաև իշխող վերնախավի հետ:

Մովսեսականների դերի կտրուկ աճը Ք.ա. II դարի սկզբներին առաջացրեց լարվածություն հույների և մովսեսականների միջև:

Անտիոքում, Ալեքսանդրիայում տեղի ունեցան բախումներ, որոնց դիմակայելու համար առաջինը Եգիպտոսում փորձ արվեց հաշտեցնել երկու համայնքներին և մերձեցնել նրանց: Սրա համար պետական մակարդակով սկսեցին հունարեն թարգմանել Թորան և քարոզել հունական միջավայրում:

Սա բավականին ազդեցություն ունեցավ, և հայտնի է, որ բավականին մեծ քանակությամբ պաշտոնյա հույներ ընդունեցին մովսեսականությունը և դարձան այդ ժողովրդի մասը: Սա ստեղծեց ավելի լավ պայմաններ, որ մովսեսականները մեծացնեին իրենց ազդեցությունը տեղական կառավարման մարմիններում:

Այս երևույթները շարունակվեցին նաև, երբ Մերձավոր Արևելքում հույներին եկան փոխարինելու հռոմեացիները: Նաև կարևոր փոփոխություններ տեղի ունեցան Պաղեստինում:

Մովսեսական համայնքի ներսում ձևավորվեցին մի շարք քաղաքական կրոնական ու հասարակական ուղղություններ, որոնք հիմնականում կարելի է բաժանել երեք խմբի. առաջինը՝ փարիսեցիներն էին, որոնց մասին քրիստոնեության գաղափարական ազդեցության տակ բավականին կողմնակալ սխալ տեսակետ է ձևավորվել:

Նույնիսկ իրեն աթեիստ համարող Էնգելսը փարիսեցիների մասին գրել է, որ նրանք ստախոս, կեղծարար մարդիկ էին, որ ցանկանում էին թաքցնել իրենց իրական դեմքը:

Իրականում փարիսեցիներն մովսեսական կրոնի անմիջական գաղափարական պայքարող թևն էին: Նրանք գտնում էին, որ Թորան բացարձակ ճշմարտություն է և փոխանցվել է նրա հիմքը՝ Հնգամատյանը Մովսեսին՝ Յահվահից: Դրա համար ոչ հավատում և ոչ էլ նշված ապրելակերպում որևէ փոփոխություն մտցնել չի կարելի և շփումն օտարների հետ, եթե չի կարելի արգելել, ապա պետք է սահմանափակել:

Երկրորդ խումբը՝ սադուկեցիներն էին: Սրանք կազմվել էին մովսեսական ժողովրդի վերնախավից, անգամ քրմական դասի ներկայացուցիչներից, որոնց նպատակն իրենց կրոնական, նաև աշխարհիկ իշխանության պահպանումն էր:

Այս դասը, ելնելով իր նեղ խմբակային շահերից, մշտապես դավաճանում էր մովսեսական ժողովրդի ընդհանուր շահերին և համագործակցում էր օտար նվաճողների հետ:

Համաժողովրդական ապստամբության ժամանակ նրանք բացահայտ անցան հռոմեացիների կողմը և արյան մեջ խեղդեցին համաժողովրդական ապստամբությունը:

Երրորդ խումբն ընդհանուր անունով կարելի է կոչել եսսեիներ, չնայած սրանց ներսում կային բավականին իրարամերժ ուղղություններ:

Եսսեիների մի խումբը հիասթափված ստեղծված իրավիճակից մերժում էր գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, հարաբերությունների հիմք կազմող մասնավոր սեփականությունը, ճոխ ապրելակերպը և գտնում էր, որ մովսեսականների պայմանագիրը Յահվահի հետ սպառել է իրեն և անհրաժեշտ է նոր հարաբերություններ հաստատել աստծո հետ:

Սրանց շրջանում է, որ առաջին անգամ ձևավորվում է փրկչի գաղափարը: Չի կարելի խառնել այժմ ստեղծված

փրկչի հասկացողությունը նախկինում գործածվող օծյալ՝ մեսիա հասկացողության հետ:

Նախկինում օծյալ նշանակում էր անկախ էթնիկական պատկանելությունից օծված թագավոր: Եսսեիների համար փրկիչ նշանակում էր գերագույն էություն կամ նրա մաս, որը պետք է գա և փրկի մովսեսականներին և վերականգնի հին թագավորությունը:

Նրանք կարծում էին որ փրկիչը պետք է ծնվի Դավիթի տոհմից, որի համար կոչում էին նրան նաև օծյալ: Այս գաղափարը ձևավորվել էր ինչպես և վերևում մենք նշեցինք, ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական պայմանների հետևանքով:

Այս խմբի անդամները հեռանում էին անբնակ վայրեր և այնտեղ ձևավորում իրենց համայնքները հանրային սեփականության հիման վրա, և արգելում էին ինչպես համայնքի ներսում, այնպես էլ ուրիշների հետ անհատական առևտուրը:

Եսսեիների ավելի մեծ խումբ էին կազմում նրանք, ովքեր նույնպես ընդունում էին, որ հին պայմանագիրը Յահվահի հետ սպառել է իրեն, սակայն գտնում էին, որ անհրաժեշտ է ակտիվորեն համագործակցել այլ ազգերի հետ, վերցնել նրանցից իրենց մշակույթն ու ապրելաձևը և շարունակել ապրել:

Սրանք, փաստորեն հելլենիզացված մովսեսականներն էին, որոնք հետագայում, մեծ գործ կատարեցին մովսեսականների տարածման գործում իրենց որպես ղեկավար ունենալով սաղովկացիներին:

Այս իրավիճակն էր, որ ստեղծեց պայմաններ Մերձավոր Արևելքում, հետո նաև Հռոմեական ողջ կայսրության տարածքում, համաշխարհային կրոնի ձևավորման համար:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հռոմեական պետությունը հավանաբար ամենամեծ հետքն է թողել Եվրոպական քաղաքակրթության ձևավորման մեջ և այժմ էլ բազմաթիվ երևույթներ, գիտական նվաճումներ գալիս են Հին Հռոմից, սակայն մեր քննարկման նյութի համար հատկապես կարևոր են երկու գործոններ:

Առաջին, որ Հռոմը և հռոմեական հասարակությունը մեզ հայտնի առաջին բացարձակ նյութականացված հասարակությունն էր: Հռոմում այդպես էլ չզարգացան այնպիսի գիտության ճյուղեր, ինչպես՝ աստղագիտությունը, որ անմիջապես կապված չէր մարդու առօրյա կարիքների բավարարման հետ:

Այնպիսի ոչ գիտական ճյուղեր, ինչպիսին են փիլիսոփայությունը, հռետորական արվեստը, պատմագրությունը նաև գեղարվեստական գրականությունը, թատրոնը զարգանում էին, քանի որ դարձել էին կամ մարդկանց զվարճացնելու միջոց, կամ էլ ծառայում էին իշխող դասակարգի առանձին խմբերի շահերին: Այսպիսի հասարակության մեջ բնական է, որ բոլոր հարաբերությունները ի վերջո հանգում էին դրամա-իրային հարաբերությունների:

Երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն էր, որ Հռոմը ձևավորվել էր որպես քաղաք-պետություն և աստիճանաբար մեծանալով՝ որոշակի ժամանակահատվածը մեկ, ստիպված էր հիմնովին փոխել ինչպես իր կառավարման ձևերն ու պետության կառուցվածքը, այնպես էլ իրականացնել կրոնական փոփոխություններ, որ համապատասխաներ նոր հասարակական հարաբերություններին:

Սկզբում Հռոմի հոգևոր կյանքը ձևավորվել էր էտրուսների և հույների կրոնական պատկերացումների հիման վրա, և միակ առանձնահատկությունը, կրոնի խիստ նյութականացված լինելն էր: Հռոմեական գրականության մեջ պահպանվել է մի դրվագ, թե ինչպես է հռոմեացին առևտուր անում աստծո հետ՝ իր խոստացած զոհաբերությունը չկատարելու համար:

Հռոմը գերտերություն դառնալու հետ մեկտեղ, սկսում է պաշտոնական դիցարան մտցնել նաև ենթակա ժողովուրդների աստվածներին և նրանց համար տաճարներ կառուցել: Նույնիսկ կա նշում, որ Հռոմում գտնվող գլխավոր Պանթեոն տաճարում կար տեղ, որը նվիրվում էր այն աստծուն, որը ծանոթ չէր հռոմեացիներին և նրան նույնպես զոհեր էին մատուցվում:

Հռոմի գեր տերություն դառնալու հետ մեկտեղ, կրոնական ճգնաժամ է սկսվու նաև այստեղ:

Նյութականացված հասարակություննում կրոնական ճգնաժամը ստանում է ամենավայրի ձևեր: Ծաղկում է սնտիապաշտությունը, մոգությունը, կրոնի բացարձակ մերժումը որոնք հետապնդվում էին օրենքով:

Օգտավիանոսը մի քանի օրենքներ ընդունեց, որով ցանկանում էր ամրապնդել հռոմեական հին կրոնը և նախկին ավանդական, պարզ բարքերը: Նա նույնիսկ դատի տվեց իր կնոջը և աղջկան, բայց անօգուտ:

Պատմաբանները մանրամասն ուսումնասիրել են ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական փոփոխությունները, որ տեղի էին ունենում Հռոմում այդ շրջանում: Դրան հակառակ ավելի վատ է ուսումնասիրված կրոնական ճգնաժամի պատճառները:

Ինչպես ավելի վաղ, արևելքի անսահմանափակ կառավարում ունեցող երկրներում, այնպես էլ Հռոմում, փորձ

է արվում ստեղծել մեկ ընդհանուր համապետական պաշտամունք՝ հանձինս կայսերական անձի աստվածացման: Բացահայտ երևում էր, որ Հռոմում նույնպես խորանում էր կրոնական ճգնաժամը:

Ք.ա. I դարում Հռոմում և հատկապես զինվորականության շրջանում մեծ տարածում էր ստանում միհրականությունը: Զինվորականությունն այս կրոնը տարածում է ողջ հռոմեական կայսրության տարածքում և թվում էր, որ միհրականությունը շուտով կդառնա համահռոմեական ընդհանուր կրոն:

Մինչև XX դարի սկզբները արևմտյան ուսումնասիրողները համարում էին, որ միհրականությունը Հռոմ է թափանցել Պարսկաստանից և միհրականությունը համարվում էր զուտ պարսկական կրոն:



Նկ. 14. Միհր

Սակայն նորագույն շրջանում այս տեսակետը մերժվեց, որովհետև առաջին հերթին Պոմպեոսի զինվորներն էին, որ Հռոմեացիներից առաջինը ընդունեցին միհրականությունը, իսկ նրանք ընդհանրապես չէին շփվել Պարսկաստանի և պարսկական բնակչության հետ:

Դրան հակառակ, Պոմպեոսի զորքերը երկար ժամանակ գտնվել էին Հայաստանում և բարիդրացիական հարաբերություններ ունեին հայկական զինվորների հետ, նույնիսկ միասնական արշավանք էին կատարել, որը պետք է ավելի մերձեցներ նրանց իրար հետ:

Կարևոր ապացույց է համարվում նաև այն, որ Հռոմում և Եվրոպայում Միհրը պատկերվում է փռուզիական կամ հայկական գլխարկով, որը բացարձակ խորթ էր պարսիկներին և նորից ցույց է տալիս Միհրի պաշտամունքի արմատների գտնվելը Հայաստանում:

Բազմաթիվ հայ ուսումնասիրողներ անմիջական կապ են տեսնում Միհրի և հայկական էպոսի Մհերների հետ: Միհրի ծնվելը ժայռից, նրա գործնությունը, հետո քարանձավում փակվելը և այնտեղից դուրս գալով՝ արդարության պահապան դառնալը շատ բնական են դարձնում այս տեսակետը:

Միհրը մարտնչող աստվածություն էր, որի համար էլ առաջին հերթին հատկապես մեծ տարածում ստացավ զինվորականության շրջանում, որոնք իրենց համարում էին արդարության պահապաններ:

Այս պատճառով միհրականները քարոզում էին, որ ամեն ոք պարտավոր է առաջին հերթին հզոր լինել ֆիզիկապես ու հոգեպես և հետո, պաշտպանել նրանց, ովքեր կարիք ունեն պաշտպանության և չեն ընկճվում դժվարության ու կեղծիքի առջև:

ՊԱՂԵՍՏԻՆԸ I ԴԱՐՈՒՄ

60-ական թվականների ապստամբությունը ծանր հետևանք ունեցավ Պաղեստինի մովսեսական բնակչության համար: Մեծ քանակությամբ բնակավայրեր ավերվեցին, շատերը հեռացան երկրից: Ավելի ամրապնդվեց հելլենիզմը և մովսեսական վերնախավը անցնելով թշնամու կողմը, բացարձակ թշնամացավ հասարակ ժողովրդի հետ:

Այս պայմաններում, մեր նշված հասարակական հոսանքների միջև լարվածությունն ավելի շատացավ: Կարևոր խնդիր էր նաև Պաղեստինի բնակչության կազմը:

Մովսեսական ժողովուրդը շարունակում էր կազմել բնակչության ոչ գերակշռող մասը, մանավանդ, որ մովսեսական համայնքի մի ստվար խումբ դարձել էր Գալիլեայի բնակիչները:

Գալիլայի կելտերը որոշ տվյալներով, Ք.ա. IV դարում, իսկ որոշ տվյալներով Ք.ա. VII դարում, գաղթել և հաստատվել էին Փոքր Ասիայի Կոնիայի դաշտում, այժմյան Անկարայի շրջակայքում:

Հարևան տարածքների բնակիչների հետ բախումներ ունենալու հետևանքով, նրանց մի մասը տեղափոխվեց Պաղեստին և իրենց տարածքները նախկին հայրենիքի անունով կոչեցին Գալիլիա:

Այս բնակչությունը երկար ժամանակ դիմադրում էր Յահվահի տաճարի քրմերի ճնշմանը և պահպանում իր կրոնը: Միայն Ք.ա. II դարի վերջում և I դարի սկզբներն էր, որ հռոմեացիների հովանավորչությամբ զենքի ուժով Գալիլիայի բնակչությունը հիմնականում ընդունեց մովսեսականությունը, սակայն, հետո էլ որոշակի քանակությամբ այս բնակչության մեջ մնաց նրանց սովորությունները և աշխարհաճանաչման սկզբունքները:

Շատ տասնամյակներ հետո էլ բուն մովսեսականները գալիլիացիներին համարում էին հեթանոսներ և աշխատում էին նրանց հետ չչփվել:

1947 թվականին Մեռյալ ծովի մոտ հայտնաբերվեցին հին ձեռագրեր, որոնք բավականին նոր տեղեկություններ էին պարունակում I-III դարերում Պաղեստինի հոգևոր կյանքի մասին, երբ իր ձևավորման առաջին շրջանն էր, անցնում մի նոր համաշխարհային կրոն, հանձին քրիստոնեության:

Հայտնաբերված ձեռագրերը պատկանում են Նազովրեցի կոչվող հոսանքին, որոնք արդեն բավականին ամուր գաղափարական հիմքեր էին ստեղծել:

Պարզվում է, որ նրանց գոնե մի մասը, սկսում է մովսեսականներին ընդունել ոչ թե առանձին՝ մյուս ժողովուրդների թշնամի տարր, որը իր աստծո համար ընտրյալ ժողովուրդ է, այլ ընդունում է ամբողջական մարդկության մի մաս: Ընդունում, որ Աստված հանդիսանում է բոլոր ազնիվ, արդար մարդկանց պահապանը և թշնամի է այն ամենին, ինչը չար է և թշնամի է մարդուն:

Որքա՞ն է այս գաղափարների վրա կելտական ծագման գալիլիացիների ազդեցությունը, այժմ պարզելը երևի անհնար է: Բայց այն, որ Նոր Կտակարանի գլխավոր գործող անձինք դուրս են գալիս Գալիլիայից, քրիստոնեության մեջ օգտագործվող մի շարք գաղափարներ ու սիմվոլներ անմիջապես կապվում են հնդեվրոպական մտածելակերպի և հին հավատի հետ, ապա պետք է որ այդ ազդեցությունը բավականին մեծ լիներ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Քրիստոնեությունը իրականում ոչ միայն կրոն է, այլև աշխարհաճանաչման տեսակ, որով գոնե 1500 տարի կրթվել է Եվրոպայի բնակչությունը, իսկ հետո Եվրոպայի կողմից քրիստոնեությունը աստիճանաբար վեր է ածվել համաշխարհային քաղաքակրթության հիմնական սյուներից մեկին, իսկ այժմ էլ փորձ է արվում այս աշխարհաճանաչումը քաղաքական, տնտեսական լծակներով տարածել ողջ մարդկության վրա:

Մեզ համար ամենակարևոր խնդիրն է պարզել, թե ինչու հենց այս գաղափարախոսությունը դարձավ գերիշխող 4-րդ դարում եվրոպական քաղաքակրթության բնօրրան հանդիսացող Հռոմում:

Առաջին դարում Հռոմում մեծ ազդեցություն ունեին Իգդիի, Օսիրիսի և երկրում հիմնական ուժ հանդիսացող զինվորականության շրջանում Միիր աստծո պաշտամունքը:

Թվում է, այս երեք պաշտամունքներն էլ, հատկապես միհրականությունը, ունեին բոլոր հնարավորությունները դառնալու համաշխարհային կրոն: Սակայն ոչ միայն այս կրոնները չհաղթեցին, այլև հիմնովին արամատախիլ արվեցին, և փաստորեն արդեն 4-5-րդ դարում ամբողջությամբ ջնջվեցին նրանց հետքերը:

Գլխավոր պատճառներից մեկը համարվում է, որ այս պաշտամունքները ունեին բարդ ծիսակարգ, որը վանում էր հավատացյալներին: Իրականում կարող ենք տեսնել դրա լրիվ հակառակ պատկերը քրիստոնեության զարգացման ընթացքում:

Քրիստոնեությունը, սկզբնական շրջանում մեզ հասած տեղեկությունների համաձայն ընդհանրապես չունեի որևէ մշակված կրոնական ծիսակարգ, բայց շատ արագ արարողությունների կարգը սկսում է բարդանալ և ավելի մեծ շուքով իրականացվել, որով էլ հենց դեպի իրեն է ձգում նոր հավատացյալների: Պատահական չէ, որ քրիստոնեության ամենամեծ ուղղություն հանդիսացող կաթոլիկությունը ունի ամենաճոխ և բարդ արարողակարգը և աչքի է ընկնում իր եկեղեցիների մեծ ճոխությամբ:

Մեր կարծիքով քրիստոնեության արագ հաղթանակի ոչ ամենակարևոր, բայց մեծ նշանակություն ունեցող պատճառներից մեկը այն է, որ քրիստոնեությունը քարոզում էր պասիվ ապրելակերպ և կոչ էր անում չընդդիմանալ և չպայքարել իրենց կարծիքով չարի դեմ:

Ք.ա. առաջին դարում Հռոմը և նրա մաս կազմող Առաջավոր Ասիան ենթարկվում էին մեծ ցնցումների, տեղի էին ունենում ստրուկների ապստամբություններ, տարբեր ժողովուրդների ընդվզումներ, որի ժամանակ առաջին հերթին զոհ էր գնում ակտիվ փոքրամասնությունը:

Պասիվ մեծամասնությունը կարիք ուներ ուրիշներին և հենց իրեն ապացուցելու իր դիրքորոշման պասիվ պահվածքի ճիշտ լինելը: Պատահական չէ, որ քրիստոսը քարոզում էր չմտածել, թե որտեղից է ձեռք բերելու մարդն իր հագուստն ու սնունդը, քանի որ այդ բոլորն Աստված կտա նրան:

Պայքարում առաջինը չլինելու, ինքնուրույն չմտածելու, նույնիսկ խելքով, գիտելիքներով աչքի չընկնելու քարոզ է տանում Աստվածաշունչը, հայտարարելով, որ Աստծո կողմից վերջինները դառնալու են առաջիններ, իսկ տգետներն աչքի են ընկնելու, որպեսզի իմաստուններն ու առաջիններն ամաչեն:

Ինչ վերաբերում է իրենց չարքաշ, անտանելի իրողությանը, Քիրստոսը հանգստացնում էր պասիվ ամբոխին, որ ավելի շուտ ուղտը կանցնի ասեղի անցքով, քան հարուստ մարդը կընկնի դրախտ:

Կարևորն այն է, որ ծառաները ենթարկվեն իրենց տերերին, ինչպես Աստծուն: Իսկ մեր նշած միհրականությունը ոչ միայն պահանջում էր ամենօրյա մարզումների միջոցով հզորանալ մտքով և մարմնով, այլև ակտիվորեն պայքարել չարի, վատի դեմ, որը երբեք չէր կարող հրապուրել, դեպի իրեն ձգել պասիվ մասսային:

Սա է պատճառը, որ այս կրոնը շատ արագ նաև տարածվում է իշխող դասի շրջանում, և ստրկատերերը, օրինակ աջակցում էին, որ իրենց ստրուկներն ընդունեն քրիստոնեություն: Սրա հետևանքով ուսումնասիրողների մոտ առաջացել է այն սխալ կարծիքը, որ քրիստոնեությունը սկզբնական շրջանում տարածված է եղել ստրուկների և չքավորների շրջանում:

Եթե հենվենք միայն քրիստոնեական աղբյուրների վրա և ընդունենք, որ Քրիստոսը խաչվել է 33 թվականին, նշանակում է 20-30 տարվա ընթացքում նրա 12 աշակերտները կարողացել են նոր ուսմունքը տարածել ողջ Հռոմեական կայսրությունում և ստեղծել այնքան հզոր համայնքներ, որ արդեն Հռոմեական կայսրությունը ստիպված է եղել մտահոգվել նրանց քանակի աճից և դաժան հալածանքների է ենթարկել նրանց:

Անմիջապես հարց է ծագում, թե այդ ինչ ստրուկներ կամ չքավորներ են, որ կարողացել են ողջ կայսրության տարածքում զբաղվել քարոզչությամբ, առաջին առաքյալների գրած նամակները տեղափոխել մի համայնքից մյուս համայնք և ի վերջո ամբողջ համայնքի անդամների համար կազմակերպել կիրակնօրյա ճաշկերույթներ:

Վերջինը նույնպես իրականում մեծ նշանակություն ուներ, որովհետև կազմակերպելով ամեն շաբաթ՝ դեպի իրեն էր ձգում նոր անդամների և կազմակերպվում էին բավականին բարձր մակարդակով:

Մեզ են հասել այդ շրջանի փաստաթղթեր, որում նշվում է, որ բազմաթիվ հավատացյալներ ոչ միայն կարողանում էին սնվել ողջ ընտանիքով, այլև սնունդ էին տանում ամբողջ շաբաթվա համար:

Այսինքն, որպեսզի հնարավոր լիներ այդպիսի արագությամբ տարածել նոր կրոնը, անհրաժեշտ էր շատ մեծ քանակությամբ նյութական միջոցներ և կրթված մարդկանց ստվար բանակ՝ նոր գաղափարախոսությունը տարածելու համար: Պետք էր նաև Հռոմեական կայսրության լայնարձակ տարածքում ունենալ սկզբնական հենակետեր:

Մեր նշված ժամակակաշրջանում կար միայն երկու ժողովուրդ, որոնք մի կողմից ողջ կայսրության մեջ ունեին լավ տարածված գաղթօջախներ, մյուս կողմից էլ նյութական միջոցներ:

Վերևում նշեցինք, որ հատկապես Հռոմի արևելյան նահանգներում սկզբում առաջացել էր թշնամանք հույների և մովսեսականների միջև, իսկ հետո այս երկու ժողովուրդները սկսել էին մերձենալ իրար և թարգմանությունների միջոցով ծանոթ էին մեկը մյուսի աշխարհաճանաչումներին և մշակութային արժեքներին:

Քրիստոնեական լուրջ ուսումնասիրողները գտնում են, որ քրիստոնեությունը մովսեսականության և հունական աղավաղված և գռեհակցրած փիլիսոփայության սինթեզի արդյունք է, որը կատարվել է կազմակերպված, միևնույն կենտրոնից՝ ունենալով որոշակի քաղաքական նպատակներ:

Սկզբնական շրջանում հավանական է քրիստոնեությունը նպատակ ուներ պարզապես լուծել այն փիլիսոփայական

հակասությունները, որ առաջացել էր մովսեսականության և հունական փիլիսոփայության սինթեզի արդյունքում:

Եգիպտոսի Ալեքսանդրիա կենտրոնով առաջանում է էզոթերիկ հիմքերի վրա փիլիսոփայական մի քանի ուղղություններ, որոնցից հատկապես մեզ համար հետաքրքիր են գնոստիկները:

Նրանք, հենվելով հունական փիլիսոփաների ուսումնասիրությունների վրա, հատկապես նոր պլատոնականության և ստոիկների դպրոցի, մշակում են Աստծո որդու գաղափարը, որը հանդես է գալիս որպես Աստծո խոսք՝ Լոգոս:

Նրանք գտնում են, որ Աստված որոշակի ժամանակահատվածը մեկ կապված մարդկային հասարակության հարաբերությունների փոփոխման հետ ուղարկում է իր որդուն, որը փոխանցում է մարդկությանը նոր հարաբերությունների ընդհանուր սկզբունքները:

Այս գաղափարը հակասում է հետագայում ձևավորված իշխող քրիստոնեության գլխավոր սկզբունքներին և կորում էր անհրաժեշտությունը արհեստականորեն Թորան կապել նոր ձևավորված ուսմունքի հետ, որի համար էլ քրիստոնեությունը ամենադաժան պայքարն է սկսում մղել իր գլխավոր գաղափարախոսության հիմնադիր գնոստիկների դեմ:


ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստոնեության ձևավորման փուլում պարզ դարձավ, որ առանձին համայնքներ ունեն իրարից տարբեր նպատակներ և իրենց առջև դրված խնդիրներ:

Այս տարբեր ուղղությունները, տարբեր համայնքները ունեին նաև տարբեր խորհրդանիշներ: Տարածված խորհրդանիշ էր ծուկը, ինչ պես նաև գառը: Գառան պատկերը հասկանալի է: Այն նույնացվում էր իրեն կամավոր զոհաբերող Քրիստոսի հետ:

Ոչ հաճախ պատահում է նաև հրեշի պատկեր՝ գլխամասը զարդարված աստվածություն խորհրդանշող շրջանով: Նկ. 15

Ձուկը հետագայում բացատրվում էր որպես հապավում: Հունարեն ձուկ՝ իխտիս բացվում է, որպես. «Հիսուս Քրիստոս, որդի աստծո, փրկիչ»։ Ձկան պատկերումը բացատրվում է նաև առաքյալների հիմնական զբաղմունքով, կամ Հիսուսի կողմից բնակչությանը ձկով կերակրելու դրվագով:



Նկ. 15. Վաղ քրիստոնեական խորհրդանիշներ

Հավանական է նաև ձկան և հրեշի պատկերները ունեն էզոթերիկ իմաստ: Այդ կերպարները, ինչպես տեսանք վերևում, գալիս են հին հավատից և խորհրդանշում են հիմնարար ինֆորմացիան՝ Լոգոսը: Այս տեսակետը ընթերցողին կարող է թվալ անհավանական, սակայն հաշվի առնենք, որ այժմ էլ քրիստոնական եկեղեցին իր հազուստներում օգտագործում է նույն խորհրդանիշերը: Նկ. 8

Առաջին ամենամեծ ուղղությունը դրանք այն քրիստոնյաներն էին, որոնք ունեին մովսեսական ծագում: Նրանք չէին կտրել իրենց կապը Թորայից և Քրիստոսին ընդունում էին որպես մովսեսական ժողովրդի փրկիչ, մովսեսարան պետության վերականգնող, որով նրա կապն այլ ժողովուրդների հետ դառնում էր անիմաստ:

Այս ուղղությունն ընդունված է կոչել հուդա-քրիստոնեություն և նրա առաջնորդին կարելի է համարել առաքյալներից Պետրոսին: Այս հավատի կողմնակիցներն ակտիվորեն քարոզում էին պայքար Հռոմի դեմ և գտնում, որ Քրիստոսը ոչ թե եկել է փոխելու Թորայի օրենքները, այլ միայն ազատելու մովսեսականներին:

Այս ուղղվածության հետևանքով է, որ ավետարաններում բազմաթիվ անգամ Քրիստոսի բերանով նշվում է, որ ինքը եկել է Իսրայելի 12 ցեղերի համար: Նաև պատգամում է աշակերտներին իր գաղափարները տարածել միայն մովսեսականների շրջանում՝ ըստ գրքի տրամաբանության՝ միակ ճանապարհը փրկության տալ միայն իրենց հավատակիցներին:

Մի քանի առակներ էզոթերիկ սկզբունքով կամ բաց տեքստով նորից այդ են հաստատում: Օրինակ՝ սամարացի կնոջ պատմությունը, երբ այդ կինը պատահաբար կպչում է Քրիստոսի հագուստին Քրիստոսը զգում է, որ իր ուժը

պակասեց և շուռ գալով տեսնում է այդ սամարացի հիվանդ կնոջը և հայտարարում. «Շուն, ով քեզ ցույց տվեց փրկության ճանապարհը, ես եկել եմ միայն Աբրահամի տան մոլորված գառներին փրկելու»:

Գաղտնի էզրթերիկ իմաստ ունի լեգեոնի մասին պատումը: Քրիստոսը ցանկանում է բուժել մի հիվանդ մարդու և դիմում է նրա մեջ բուն դրած չարքերին և իմանալով գործի էությունը՝ պահանջում է նրանցից ազատել մարմինը: Նշված չարքերը, որոնք կոչվում են լեգեոն խնդրում են Քրիստոսից իրենց բնակվելու տեղ տալ և Քրիստոսը պահանջում է նրանցից մտնել մոտակայքում թափառող խոզերի մեջ: Խելագարված խոզերը իրենց գլորում են ձորը:

Եթե հաշվի առնենք, որ մովսեսականների համար խոզը ամենապիղծ կենդանին է, որին անգամ դիպչելը համարվում է պղծություն, բացարձակ իմաստից զուրկ է, որ խոզերը խմբով գտնվեին հավատացյալների բնակավայրում: Իրականում պատումի իմաստը ուրիշ է և ունի քաղաքական քարոզչական իմաստ:

Այդ ժամանակ Պաղեստինում տեղակայված էր Շանդարգելների լեգեոնը, որի դրոշին արևելքում մեծ տարածում ստացած վարազի պատկերը մովսեսականների պատկերացմամբ խոզն էր: Հիվանդ մարդը այստեղ ներկայացվում է որպես Իսրայելը, որը հիվանդ է, որովհետև նրան մեջ բուն է դրել հռոմեական լեգեոնը:

Իսրայելից վտարելով հռոմեացիներին՝ ոչ միայն առողջանում, փրկվում է Իսրայելը, այլև ինքնառջնչացման է գնում հռոմեական լեգեոնն ու հռոմեական իշխանությունը:

Այս երկու պատմությունն էլ բացահայտ հակահռոմեական, ազգայնամոլական ուղղվածություն ունեն և գաղափարապես հակասում են Քրիստոսի այլ պատումներին:

Քրիստոսը, երբ նրան հարցնում են հռոմին հարկ տալու մասին, նա վերցնելով ցույց է տալիս հռոմեական փողի վրա պատկերված կայսեր պատկերը և հայտարարում. «Աստծունը տուր Աստծուն, իսկ Կեսարինը՝ Կեսարին»:

Այս պատմությունը կարող էր ստեղծվել միայն Պաղեստինից դուրս, ոչ մովսեսական միջավայրում, որտեղ չունեիրև նշանակություն կվերականգնի իր անկախությունը Իսրայելը, թե ոչ: Հեղինակը նաև ցույց է տվել իր չիմացությունը Պաղեստինում տիրող իրավիճակին: Ցանկացած մարդու, անգամ կենդանու պատկերումը մովսեսականները համարում էին կռապաշտություն:

Երբ Հռոմը փորձեց հռոմեական փող մտցնել Իսրայել, այնտեղ սկսվեցին խռովություններ և Հռոմը ստիպված էր այդ փողերը հանել շրջանառությունից և կտրել հատուկ փող, որի վրա չկային կենդանիների և մարդկանց պատկերներ, որոնք շրջանառության մեջ էին միայն Պաղեստինի տարածքում:

Մեր նշած դեպքը և այն, որ Քրիստոսի և նրա աշակերտների ճանապարհորդության ուղին ու նկարագրված կենդանիներն ու բույսերը ճիշտ չեն պատկերում Պաղեստինի տարածքը, ցույց է տալիս, որ ավետարանների կազմողների մի խոշոր մասն ընդհանրապես ծանոթ չեն եղել Պաղեստինի, այնտեղ գտնվող քաղաքներին, բուսական ու կենդանական աշխարհին:

Այս ճյուղը նաև վատ էր հասկանում կամ ուշադրություն չէր դարձնում Թորայի առաջ քաշած գաղափարներին: Եսային գրում է, որ նազարիայից կառաջանա շիվը: Նազարի, բառը ծագել է եբրաերեն նեցեր բառից, որը լայն իմաստով նշանակում է ճյուղ, բայց օգտագործվել է օձյալ, մեսիա իմաստով: Սա պատճառ է դարձել, որ ձևավորվի

Քրիստոսի այդ ժամանակ գոյություն չունեցած Նազարեթ քաղաքում ծնված լինելու տեսակետը:

Սրանք կազմում են քրիստոնեության երկրորդ ճյուղը, որոնց պայմանականորեն կոչենք հեթանոս-քրիստոնյաներ: Սրանց առաջնորդը եղել է Պողոսը: Այս մարդը Հռոմի քաղաքացի էր և չուներ որևէ կապ մովսեսականների ձգտումների հետ:

Նա ձևավորում էր մի ընդհանուր գաղափարախոսություն Հռոմեական կայսրության ողջ բնակչության համար, որը պետք է ապահովեր կայունություն Հռոմեական կայսրությունում և պաշտպանում էր Հռոմի միջին և հարուստ քաղաքացիների շահերը:

Այս երկու ուղղությունները բավականին լավ ուսումնասիրված են և կարելի է կանոնավոր Ավետարանի մեջ մտցված առաքյալների թղթերից կարծիք կազմել, թե ինչ դաժան պայքար է գնացել այս երկու ուղղությունների միջև:

Նրանք իրար մեղադրում են կեղծիքի, ստախոսության և մարդկանց մոլորեցնելու մեջ և անգամ Պողոսը բացահայտ հայտնում է, որ ով իրեն հակառակ է գրում ոչ թե առաքյալ է, այլ շուն:

Շատ վատ, անգամ կարելի է ասել, չի ուսումնասիրված քրիստոնեության երրորդ ճյուղը, որը պայմանական կոչենք արիական, որովհետև իր որոշակի սկզբունքներ վերցրել է հին արիական աշխարհաճանաչումից:

Քրիստոնյաները շատ ուշ սկսեցին որպես խորհրդանիշ օգտագործել խաչը: Դա շատ բնական էր: Ավետարանի նկարագրած դեպքերի հիմնան վրա կարելի է կարծել, որ հավատացյալները պետք է ատեին խաչը՝ որպես մահվան գործիք:

Դրան հակառակ խաչը հին հավատում և հավատից առաջացած կրոններում շատ տարածված էր իր բազմաթիվ տարբերակներով: Խաչը առաջին հերթին նույնացվում էր Կենաց Ծառի հետ որով պայմանավորված էր բնության և հասարակական զարգացումները: Հավատի տեսանկյունից Քրիստոսի խաչ բարձրանալը նշանակում է ոչ թե մահ, այլ այն, որ Քրիստոսը միանում է Կենաց Ծառին, հանդես գալով որպես միջնորդ մարդկանց և Արարիչի միջև:

Արևմտյան քրիստոնեությունը բավականին ուշ ընդունեց որպես խորհրդանիշ խաչի պատկերը, բայց չհասկացավ այդ պատկերի խորհուրդը:

Երկար ժամանակ արևմուտքում խաչը պատկերվում էր լատինական T տառի տեսքով, ինչպիսին իրականում եղել է հռոմեական մահվան գործիքը: Նաև հնարավոր է, որ այս նշանը ընդհանրապես կապ չի ունեցել խաչի հետ, այլ խորհրդանշում է քրիստոնեական Սուրբ Երրորդությունը և T տառը Trinitas՝ երեք, բառի առաջին տառն է:

Ոչ մոլմեսականության, և ոչ էլ այդ ժամանակ իշխող հունական անտիկ փիլիսոփայության ճյուղերը չէին ընդունում աշխարհի կառավարման եռաստիճան համակարգը:

Պլատոնը նշում էր, որ գոյություն ունի տիեզերական գերագույն իդեա և իդեաների աշխարհ, որի աղավաղված արտացոլանքն է նյութական աշխարհը, սակայն, միևնույն է տիեզերական իդեան՝ միտքը համարվում էր բացարձակ և ամբողջական:

Սրան հակառակ մենք արդեն տեսանք, որ հին արիական հավատում ցանկացած համակարգ նաև տիեզերքի գերագույն կառավարող ուժերը հանդես էին գալիս Սուրբ Երրորդության տեսքով: Այս Սուրբ Երրորդության գաղափարը արիական հավատից էր, որ մտավ քրիստոնեու-

թյան մեջ՝ որպես Հայր Աստված, Սուրբ Հոգի և Որդի Աստված:

Հին արհները, ընդունելով այս երեք ուժերի առանձին բնույթներ ունենալը անհատական լինելը ընդունում էին, որ նրանք միասին են և գործում են նույն համակարգում՝ փոխլրացնելով մեկը մյուսին: Ովքեր Սուրբ Երրորդության գաղափարը մտցրեցին Քրիստոնեության մեջ, լավ ծանոթ էին մովսեսական աշխարհաճանաչմանը:

Սեմական ժողովուրդների մոտ կա Սուրբ Հոգու գաղափարը, որը ի տարբերություն Յահվահի, ունի իգական բնույթ և լրացնում էր արական սկիզբ ունեցող Յահվահ աստծուն: Սրան հակառակ, Մարիամը հղիանում է Սուրբ Հոգուց, որը անտրամաբանական և անբնական է:

Քրիստոսը հաճախ նշում է, որ ինքը չի եկել փոխելու հին գրված օրենքները, որը համարվում է գլխավոր ապացույցներից, որ հոգեբանորեն ու գաղափարապես Նոր Կտակարանը շարունակում էր Հին Կտակարանին:

Սակայն, բազմաթիվ անգամներ Քրիստոսը դեմ է գնում մովսեսական կրոնի այնպիսի սկզբունքներին, որոնք ըստ Թորայի անմիջապես տրված է Յահվահի կողմից, և դրանց խախտման դեպքում մահապատիժ էր սպառնում:

Կարևորագույն սկզբունք էր շաբաթ օրվա, որպես ոչինչ չանելու և Աստծուն այդ օրը նվիրելու պահանջը: Սակայն, երբ Քրիստոսը աշակերտների հետ ցորենի հասկեր է հավաքում շաբաթ օրը և այդ մասին նրան հիշեցնում են, նա հանգիստ պատասխանում է, որ շաբաթը մարդկանց համար է, այլ ոչ թե մարդիկ են շաբաթ օրվա համար:

Շաբաթ օրվա թեման շատ ավելի խորն է բացահայտվում մեկ այլ օրինակում. երբ Քրիստոսը տեսնում է մեկին, ով աշխատում է շաբաթ օրը, դիմելով նրան ասում է.

«Եթե գիտակցված ես անում քո գործը, օրինված ես, իսկ եթե անգիտակից՝ անիծված լինես»:

Այստեղ նորից բացահայտ շեշտվում է, արիական հիմնական սկզբունքը, որը հատուկ է միայն հավատին. ոչ մի դեպքում չունենալ կոյր, քարացած հավատ, այլ փորձել հասկանալ գոյություն ունեցող հասարակական ու բնական օրենքները, և գիտակցված կատարել դրանք:

Նրա քարոզներում կան մի շարք բացահայտ հակա-արիական սկզբունքներ, ինչպիսին է օրինակ, արհամարհանքը՝ ընտանիքի և ընտանեկան արյունակցական կապերի նկատմամբ:

Քրիստոսը բացահայտ շեշտում է, որ ինքը խաղաղություն չի բերել, այլ՝ սուր: Եկել է թշնամացնելու միմյանց հետ ամուսնուն ու կնոջը, ծնողին ու երեխային, եղբայրներին ու քույրերին: Եվ ավելացնում է, որ որևէ մեկը, ով իր հարազատին ավելի շատ է սիրում, քան իրեն, անիծված է և արժանի չէ իրեն:

Այլ մասերում նա հակասում է ինքն իրեն: Արիական սկզբունքով է գրված մերձավորների և մարդու միջավայրի հետ հարաբերությունների ձևավորման սկզբունքը:

Քրիստոսը բացահայտ խոսում է, որ կրոնական ցանկացած արարողության գնալուց առաջ, եթե անձը նեղացրել է եղբորը, հարազատին կամ նեղացած է նրանցից, առաջին հերթին պետք է գնա և հաշտվի նրանց հետ:

Շատ կարևոր են այն խոսքերը, երբ նա նորից խոսելով եղբայրների, հարազատների մասին՝ գրում է, որ մենք տեսնում ենք մեր եղբոր աչքի փուշը և չենք տեսնում մեր աչքի գերանը: Եվ, որ առաջին հերթին մենք պետք է դատենք, քննենք մեզ, հետո նոր՝ մեր մեծավորին:

Աստվածային կամքի աստիճանի է հասցնած Թորայում հարստացման տենչը, Յահվահն օտարին թալանելու, սպա-

ներու, իր կամքից անկախ մեղք գործել տալու միջոցով մովսեսականներին խորհուրդ է տալիս հարստանալ:

Քրիստոսը, դրան հակառակ, հայտարարում է, որ իմաստ չունի հարստություն կուտակել երկրի վրա, չնայած Հիսուսը միշտ գրվածքներում աչքի է ընկնում իր կենսավառ բնավորությամբ, որը հին արիական բնավորության հիմնական գծերից է:

Մեր նախնիները սիրում էին կյանքը, ուրախ ապրելակերպը, բայց նաև մեծ նշանակություն չէին տալիս նյութական բարիքներին և արհամարհում էին ժլատությունը, անիմաստ էին համարում նյութական բարիքների կուտակումը:

Արիականության հավատքից է գալիս նաև այն, որ նրա քարոզի համաձայն, ամեն ոք կարող է անմիջապես դիմել ու խնդրել աստծուն և որ անմիջական կապի շնորհիվ, եթե մարդու ցանկությունները բարի են, ուրեմն՝ կկատարվեն:

Սակայն, նույն տեղում արդեն գնում է ոչ արիական, նույնիսկ հակաբնական քարոզ, որի սկիզբը գալիս է մովսեսականությունից: Ադամի և Եվայի գործած մեղքի համար աստված անիծում է Ադամին, որ նա իր ճակատի քրտինքով հաց վաստակի:

Քրիստոսն էլ շարունակում է անիմաստ համարել աշխատանքը, քարոզելով, որ կարիք չկա հոգ տանել այն մասին, թե ի՞նչ պետք է մենք հագնենք կամ ուտենք, որով քարոզում է պասսիվություն, որ մարդը չձգտի իր ճակատի քրտինքով, իր տաղանդով բարձրացնի իր կենսամակարդակը:

Շատ կարևոր է, երբ Քրիստոսը պատգամում է, թե ինչպիսին պետք է լինի հավատացյալի պահվածքը աղոթքի կամ կրոնական ծիսակատարությունների ժամանակ:

Նա ջախջախիչ քննադատության է ենթարկում ուղղափառ մովսեսականությունը ներկայացնող փարիսեցիներին, որոնք ընդունված կարգի համաձայն պասսի ժամանակ հագնվում էին շատ աղքատիկ, արգելվում էր զարդերի կրումը և իրենց դեմքին տալիս էին լրջության, նույնիսկ սգավորի արտահայտություն: Նաև ընդունված ձև էր ցուցադրաբար մերձավորին օգնելը և խմբակային աղոթելը:

Քրիստոսը հիմնավորելով, որ Աստված ամենատես է, գտնվում է ամենուր և մեր հետ շփվում է մտքի՝ այսինքն ինֆորմացիոն դաշտից եկող ալիքներով, խորհուրդ է տալիս պասսի ժամանակ հետևել իրեն, լինել ուրախ, ծածուկ անել բարեգործություն և աղոթել՝ առանձնանալով, քանզի դրանք բոլորը գաղտնի չէին կարող մնալ աստծուց, և ցանկացած ճիշտ ու բարի գործի համար մարդը ստանում է իր վարձատրությունն Աստծուց՝ արարչից:

Արիական գաղափարական հիմք ունի նաև այն պնդումը, որ եթե մարդ մանանեխի հատիկի չափ հավատ ունենա և լեռանն ասի՝ շարժվի՛ր, այն կշարժվի: Այս պնդումը գալիս է արիական մտքի զգացումային դաշտի գաղափարից, որով առաջնային էր համարվում միտքը՝ ոգին, զգացումային դաշտը՝ հոգին, որոնց ծառայության է տրված նյութական աշխարհը:

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փիլոն Ալեքսանդրացին ապրել է Ք.ա. առաջին դարից Ք.հ. առաջին դարը: Ծնվել է ազդեցիկ մովսեսականի ընտանիքում, որոնք սերտ կապեր են ունեցել մի կողմից Հերովդեսի, մյուս կողմից էլ սփյուռքի մովսեսական համայնքների վերնախավի հետ:

Կրթված լինելով մովսեսական ուղղափառ հավատացյալի ընտանիքում՝ նա մինչև վերջ մնաց պայքարող մովսեսական և մինչև վերջ քարոզում էր, որ ամեն մի մովսեսական իր առաջին գործը պետք է համարի իր ժողովրդի շահերի պաշտպանությունը, պետականության վերականգնումը և Մովսեսի գրած օրենքների հիման վրա ավանդույթների պահպանումը:

Միաժամանակ նա Ալեքսանդրիայում ստացել էր իր ժամանակի համար փայլուն, հունական կրթություն, գերազանց տիրապետել է հույն փիլիսոփաների աշխատություններին և հատկապես բարձր է գնահատել Նոր Պլատոնական և Ստոիկների փիլիսոփայական ուղղությունները:

Մենք վերևում նշեցինք, որ հատկապես Ալեքսանդրիայում շատ ավելի վաղ պետության հովանու ներքո սկսվել էր հույների և մովսեսականների հոգևոր մերձեցումը: Փիլոնը դարձավ այդ մշակույթների վերջնական սինթեզի իրականացնողը: Նա բացարձակ ճիշտ համարելով Թորան, գտնում էր, որ հատկապես Հնգամատյանում, որն, ըստ ավանդության գրել է Մովսեսը, նկարագրված դեպքերը բացարձակ ճշմարտություն են, սակայն, ներկայացված են փոխաբերական իմաստով:

Այս տեսակետից նա նոր փիլիսոփայական մեկնաբանություն էր տալիս աշխարհի արարման, դրախտից վտարման,

աշտարակաշինության, Կայենի և Աբելի հակասության և մյուս դրվագներին: Չնայած այդ մեկնաբանությունները շատ անգամ անտրամաբանական են և անհամոզիչ, բայց այդ բոլորը հնարավորություն էր տալիս Փիլոնին կամուրջ գցել մովսեսական և հունական աշխարհաճանաչումների միջև:

Որպեսզի կարողանա բացատրել աստծո՝ Յահվահի գործունեության հակասությունները, որպես ողջ մարդկության միակ աստծո, որը պաշտպանում է միայն մովսեսականներին ու հրամայում ոչնչացնել մյուս ազգերին, Փիլոնը նշում է, որ Աստված ճանաչելի, գնահատելի է միայն ստորին ոլորտներում, իսկ բարձր ոլորտներում, նա վեր է ու դուրս գեղեցկությունից, բարությունից, նույնիսկ՝ գիտակցությունից:

Այստեղից էլ եզրակացնում է, որ Աստծուն հանարավոր չէ ճանաչել, հասկանալ ու գնահատել, որից էլ հետագայում ձևավորվեց քրիստոնեության այն գլխավոր դոգմատը, ըստ որի անքննելի են Աստծո գործերը: Փիլոն Ալեքսանդրացին գտնում էր, որ ի սկզբանե եղել են Աստված և Քաոսը: Եվ որ Քաոսից է ձևավորվել մեր նյութական աշխարհը: Չնայած սրան՝ Փիլոնը չէր ընդունում, որ Քաոսից նյութական աշխարհի ստեղծումը իրականացրել է Աստված:

Ըստ նրա, Աստծո նախասկզբնական որդին՝ Լոգոսը, հանդիսանում է նյութական աշխարհի արարման սկիզբը: Ըստ այս տեսության, որոշակի դրվագներում Լոգոսը հանդես է գալիս, որպես Աստծո սրբազան միտք:

Իսկ մյուս կողմից Լոգոսը ներկայացվում է գործող ուժերի՝ հրեշտակների ամբողջություն, որոնք, լինելով ավելի նուրբ ոլորտներ, արարվել, ստեղծվել են առաջին հերթին: Նույն շրջանում էլ արարվում է, իդեաների՝ նախատիպերի հոգևոր աշխարհը, որոնք թափանցելով նյութական աշխարհ, նյութականանալով՝ ձևավորում են առարկաները:

Սրանով Լոգոսը դառնում է կապող օղակ մի կողմից Աստծո, մյուս կողմից՝ նյութական աշխարհի միջև:

Փիլոնը նշում է, որ ինչես անհատ մարդու մոտ կարող են լինել տարբեր մտքեր, այնպես էլ Լոգոսը կազմված է տարբեր իդեաներից: Եվ ինչպես մարդու տարբեր մտքերը ի վերջո կազմում են մեկ ամբողջություն, այնպես էլ Լոգոսն ամբողջական է:

Այս գաղափարները շատ մոտ էին Պլատոնի իդեայի գաղափարին և ստոիկների այն պնդմանը, որ ողջ աշխարհը մեկ ամբողջական մտածող էակ է: Ստոիկներից էր վերցված նաև Լոգոսի և Աստծո դուալիստական գոյությունը: Ստոիկները պնդում էին, որ աշխարհը կազմված է հոգևոր և մարմնական մասերից:

Մեզ ստույգ հայտնի է, որ Փիլոնն իր համախոհների հետ այս գաղափարները տարածում էր ինչպես մովսեսականների և հույների, այնպես էլ Մերձավոր Արևելքում բնակվող այլ ժողովուրդների միջավայրում, օգտվելով իր ընտանիքի ունեցած բարձր հեղինակությունից:

Հետաքրքիր է, որ եթե մովսեսականների շրջանում Փիլոնը քարոզում էր ամեն գնով պահպանել կապը իրենց հայրենիքի, ազգականների ու ավանդույթների հետ, ապա այլ ժողովուրդների ներկայացուցիչներին նա սովորեցնում էր, որ Աստված նյութական չէ, և Աստծո հետ միանալու միակ ճանապարհը նյութից, երկրային կապերից ազատվելն է, այսինքն՝ հրաժարվել հայրենիքից, ընտանիքից, հարազատներից ու նվիրաբերվել միայն Աստծուն:

40 թվականին, Փիլոնն արդեն բավականին ծեր էր, բայց մովսեսականների կազմած խմբի հետ գնաց Հռոմ՝ կայսր Կալիգուլայի մոտ: Ներկայացնում է, որ այդ պատվիրակության նպատակն էր համոզել Կալիգուլային, որ Պաղեստինում չկան գնեցվեն կայսրի արձանները և չպարտադրվի մովսե-

սականներին զոհեր մատուցել նրան, որովհետև դա բացարձակ կռապաշտություն է:

Սակայն, ուշադիր ուսումնասիրությունները, նաև այլ ենթադրությունների տեղիք են տալիս: Հռոմը դարձել էր հսկայածավալ կայսրություն, որն իր մեջ էր ընդգրկում տարբեր աշխարհաճանաչում, տարբեր կրոն ունեցող ժողովուրդների, որոնք գտնվում էին զարգացման տարբեր աստիճաններում:

Այդ ժողովուրդներին իրար հետ միացնելու նպատակով, սկզբնական շրջանում Հռոմը գրաված ժողովուրդների աստվածներին մտցնում էր հռոմեական պանթեոն, նույնիսկ աջակցում, որ այդ աստվածների համար կառուցվեն տաճարներ:

Սակայն, այս քայլը ոչ միայն չմերձեցրեց այդ ժողովուրդներին, այլև խառնաշփոթ մտքրեց հռոմեական պանթեոնում, որը պատճառ դարձավ հավատի անկմանը: Սա էր պատճառը, որ երկար ժամանակ փորձ էր արվում բոլոր ժողովուրդների մեջ մտցնել կայսրի աստվածային ծագման և նրա երկրային աստված լինելու գաղափարը:

Բնակչության մի խոշոր մասը անտարբերությամբ ընդունեց այս գաղափարը, սակայն, եղան նաև խիստ դժգոհող մարդիկ: Ստրկացված ժողովուրդների մի խոշոր մասը գտնում էիր, որ այս գաղափարի արմատավորման դեպքում, ավելի կամրապնդվի Հռոմի իշխանությունը և իրենց ստրկական կախումը Հռոմից, իսկ մի մասն էլ՝ հատկապես մովսեսականները, կտրուկ դեմ էին կրոնական տեսակետից, չնայած կար նաև բարոյական և հասարակական հարաբերությունների փոփոխման խնդիր:

Մովսեսականների նշված կռապաշտությունը ճանապարհ բացեց, որ հեղինակը սկսի արագորեն թափանցել Պաղեստին և քայքայի հին մովսեսական ավանդույթները և ձևավորված նախկին հասարակական հարաբերությունները:

Ծերունի Փիլոն Ալեքսադրիացին այս բոլորին խոչընդոտելու համար, առաջարկում էր հռոմի ժողովրդին միավորելու նոր ծրագիր, այսինքն՝ կայսրի անձի աստվածացման փոխարեն մտցնել իր առաջ քաշած գաղափարների հիման վրա նոր կրոն:

Մեր ներկայացված փաստերն ու ուսումնասիրություններն իհարկե չեն պնդում, որ քրիստոնեությունը ստեղծել է Փիլոն Ալեքսադրիացին և սխալ են այն ուսումնասիրողները, ովքեր քրիստոնեության հայր համարում են նրան:

Քրիստոնեությունը շատ բարձր է գնահատել նրա աշխատությունները և հավանաբար, նա միակ փիլիսոփան է, ում ոչ մի աշխատություն քրիստոնեաները չեն ոչնչացրել:

Հայոց եկեղեցու ղեկավարները նույնպես բարձր գնահատական են տվել նրան, որպես քրիստոնեական գաղափարախոսության կարևոր հիմնադիր և քրիստոնեություն ընդունելուց անմիջապես հետո թարգմանել են նրա աշխատությունները և այժմ Փիլոնի աշխատությունների մի խոշոր մասը պահպանվել են միայն հայերեն թարգմանության շնորհիվ:

Քրիստոնեության գաղափարախոսության կարևոր հիմքերից մեկը հանդիսացող գնոստիկները բավականին մտքեր վերցրել էին Փիլոնի գաղափարախոսությունից և նրանց արդեն կարելի է համարել քրիստոնեական կրոնի, եթե ոչ հիմնարար, ապա գոնե կարևորագույն սյուներից մեկը:

Լոգոսի գաղափարը, որպես աստծո որդու, մնաց քրիստոնեության մեջ, հատկապես Եգիպտական համայնքում որպես արիոսականություն: Նաև այս ճյուղը մեծ տարածում ստացավ Գալիայում, գերմանական ցեղերի մոտ, որովհետև ուներ որոշակի գաղափարական ընդհանրություն հին արիական աշխարհաճանաչման հետ:

Սակայն, շատ էր բարձր այս գաղափարը՝ ոչ նյութական: Ըստ Քրիստոնեական եկեղեցու առաջնորդների՝ Լոգոսի

գաղափարը կարող է դառնալ անընկալելի հասարակ ժողովրդի համար, որի պատճառով այս գաղափարախոսության հիմնադիր Արիոսը բարբարոսաբար սպանվեց և արյան մեջ խեղդվեց արիոսականությունը:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԵՍԻԱՅԻ ԱՐԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Եղեսիան կամ պատմական Օսրոյենը գտնվում է Հյուսիսային կամ Հայկական Միջագետքում: Այս պետությունը պատմական դիպվածներով հաճախ առանձնացվել է Մեծ Հայքի թագավորությունից, սակայն մշտապես պահպանել է իր հոգևոր և մշակութային կապը բուն Հայաստանի հետ:

Հայկական, ասորական և հունական ավանդազրույցները նշում են, որ դեռևս Քրիստոսի կենդանության ժամանակ պետական մակարդակով Եղեսիան ընդունել է քրիստոնեությունը:

Ըստ ավանդույթի Աբգար թագավորը հիվանդ էր և, լսելով Քրիստոսի կատարած հրաշագործությունների մասին, հավատացել է, որ նա Աստծո որդի է և իր ծառա Անանին ուղարկել է Երուսաղեմ Քրիստոսի մոտ՝ գրելով նրան, որ չնայած իր թագավորությունը փոքր է, սակայն կբավականացնի իրենց երկուսին էլ և հրավիրել է իր մոտ:

Պատվիրակությունը գալիս է Պաղեստին այն ժամանակ, երբ Քրիստոսը քարոզում էր: Նա ծանոթանալով նամակին հայտնում է, որ նա այլ կարևոր նպատակով է եկել երկիր, բայց խոստանում է՝ իր աշակերտներից մեկին ուղարկել Աբգարին և Եղեսիայի մյուս հիվանդներին բուժելու մարմնով և հոգով:

Ավանդույթը պատմում է, որ հատուկ այդ նպատակով

ուղարկված նկարիչը բազմաթիվ անհաջող փորձեր է կատարում նկարելու Քրիստոսին: Այդ տեսնելով՝ Քրիստոսը լվանում է իր երեսը և շորի կտորով սրբում, որից հետո այդ կտորի վրա հայտնվում է Քրիստոսի պատկերը: Պատմում են, որ այդ անձեռակերտ Քրիստոսի նկարը պահպանվում էր Եդեսիայում:

Մովսեսական պատմագիր Հ. Փլավիոսը նշում է, որ հայկական մեկ այլ թագավորության Ադիաբենեյի թագավորը, նրա մայրը ընդունել են մովսեսականությունը և մեծ օգնություն են ցույց տվել մովսեսականներին և Յահվահի տաճարին:

Մենք վերևում նշել ենք, թե ինչպես ողջ Առաջավոր Ասիայում, այնպես էլ Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով առաջացել էր բարոյահոգեբանական և կրոնական ճգնաժամ:

Ք.Ա. 134 թ.-ին Արշակունի Վաղարշակը փորձեց հաղթահարել այդ ճգնաժամը՝ հույս ունենալով վերականգնել հին հայկական հավատը: Մովսես Խորենացին, գրելով նրա մասին, նշում է, որ Վաղարշակը տաճարներ կառուցեց՝ նվիրված Արևին ու Լուսնին, նաև կանգնեցրեց իր նախնիների արձանները:

Այսինքն, Վաղարշակը փորձում էր առաջին հերթին հրաժարվել Հունաստանից բերված մարդ-աստվածների՝ փաստացի կուռքերի պաշտամունքից և վերադառնալ տիեզերաստեղծ արական և իգական սկզբունքների պաշտամունքին, իսկ երկրորդ հերթին էլ ամրապնդել նախնիների պաշտամունքը:

Մ. Խորենացու՝ հետագա դեպքերի նկարագրությունը ցույց է տալիս, որ, ցավոք սրտի, այս քայլերը հաջողությամբ չեն ավարտվել և հետագայում Տիգրան Մեծը և նրա հայրը ստիպված էին հենց իրենք Հունաստանից բերել և

Հայաստանում կանգնեցնել հունական աստվածների արձանները:

Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս կրոնական ճգնաժամը խոր հետք էր թողել նաև հիմնականում հայաբնակ Ադիաբենեում և Եդեսիայում, որոնց հայկական ծագում ունեցող թագավորները նույնպես փորձում էին գտնել ճանապարհ՝ ազատվելու համար կռապաշտությունից:

Այս երկրներում կար այլազգի զգալի բնակչություն, որը հավանաբար խոչընդոտում էր հայկական հին հավատքի հիման վրա՝ միաստվածության ձևավորմանը, որի համար էլ այս երկու պետություններում կամ երկու պետություններից մեկում փորձ արվեց նոր ձևավորվող քրիստոնությունը ընդունել որպես պետական կրոն:

Կան բացահայտ փաստեր, որ Ադիաբենեի թագավորը և նրա մայր Ելենան իրականում մեծ օգնություն են ցույց տվել Երուսաղեմի բնակչությանը, և անգամ Ելենան, իր կտակի համաձայն, թաղվել է Երուսաղեմում և նրա անունով էր կոչվել Երուսաղեմի դարպասներից մեկը:

Ադիաբենեի թագավորությունը հիմնականում համընկնում էր հին Մաննա երկրի հետ: Այս երկիրը և այնտեղ ժառանգաբար քրմապետի պաշտոնը վարող Բագրատունիները մեծ նշանակություն են ունեցել հայության և ողջ մարդկության պատմության մեջ, որը դեռ ճիշտ չի գնահատվել:

Այստեղ կա անհրաժեշտություն որոշակի տեղեկություններ տալ հայկական Բագրատունիների տոհմի մասին: Այս տոհմի մասին առաջին անգամ հիշատակվում է Վանի թագավորության ժամանակ:

Հայտնաբերված փաստաթղթերից պարզ է դառնում, որ Մուծաձիր, կամ Արդին քաղաքը Մաննա երկրի

մայրաքաղաքն էր, և այնտեղ էր գտնվում Վանի թագավորության կրոնական կենտրոն Խալդ-Հայկի տաճարը:

Ըստ Սարգոն Երկրորդ թագավորի արձանագրության՝ այս երկրի քուրմ-թագավորը սպանվել է իր հրամանով, և թագավոր է դարձել նրա որդին, որի անունը եղել է Բագադատտի:

Վանի թագավորները օժվում և թագ էին ստանում Խալդ-Հայկի տաճարում: Բագադատտ անունը և նրա պատկանելը արքայական տոհմին մեզ հնարավորություն է տալիս ենթադրել, որ մեր հայտնի Բագրատունիների տոհմը այս քաղաքից պետք է սերված լիներ:

Մենք գիտենք, որ ինչպես Վանի թագավորները, այնպես էլ նրանց արյունակից Երվանդունիները, Աքեմենյանները և մարական արքայական տոհմը ծագում էին այս նույն տարածաշրջանից:

Մովսես Խորենացին Բագրատունիներին ծագեցնում է մովսեսականներից՝ գրելով, որ Վաղարշակն է նրանց տոհմի հիմնադիր Շամբատին բերել Հայաստան: Շամբատ անունը, որից ծագում է Սմբատը իր շամ արմատով նշանակում է լույս, արև, որը նորից անմիջական կապ ունի հին հայկական տիեզերական արևի պաշտամունքի հետ:

Բագրատ անվան բազ, բագին արմատը նույնպես հուշում է, որ այս տոհմը պետք է լիներ հնագույն քրմական տոհմ: Մ.Խորենացին գրում է, որ Վաղարշակը այս տոհմին հանձնեց արքաների թագադրման գործը՝ նրանց մատուցած ճանապարհների համար, բայց այդ ժամակ ձևավորվել էր այն տեսակետը, որ արքա դառնում են աստվածների կամքով:

Կնշանակի ոչ մի դեպքում այդ պաշտոնը չէր կարող հանձնվել մի տոհմի, որը կապ չունենար քրմության հետ:

Մ. Խորենացու նշումը նույնպես ցույց է տալիս, որ Բագրատունիները քրմեր էին, բայց ոչ մովսեսական:

Հռոմեական պատմիչները նշում են, որ Կարթագեն քաղաքի հիմնադրումից շատ առաջ այդտեղ եղել են հայկական յոթ քաղաքներ, որոնց գլխավորել էր Բագարան քաղաքը:

Ադիաբենեն մեր թվարկության սկզբին ինքնուրույն ձեռք բերեց Մանոբազյան տոհմի գլխավորությամբ, որը հայկական Մանավազյան տոհմն է: Այդ շրջանում Ադիաբենեում շարունակում էին որպես քրմական տոհմ մնալ Բագրատունիները:

Մ. Խորենացին նշում է, որ երբ Թադևոսը եկավ Եդեսիա, իջավ հրիա Տուբիայի մոտ, որը Բագրատունիների տոհմից էր: Բոլոր պատումներում Բագրատունների հանդես գալը չի կարող լինել պատահական:

Հավանաբար Բագրատունիների հրեական ծագման ավանդույթը կապված է այն պատմական փաստի հետ, որ Ադիաբենեի քրմական տոհմ հանդիսացող Բագրատունիները ընդունել էին քրիստոնեություն դեռևս առաջին դարում և այդ մասին կան մի շարք պատմական փաստեր:

Մենք վերևում նշեցինք, որ այդ ժամանակ քրիստոնեությունը դեռևս չէր կտրել իր կապը մովսեսականությունից և հաճախ դրանք ընկալվում էին որպես մեկ ընդհանուր կրոն: Փլավիոսի բերված տեղեկություններից նույնպես դա պարզ երևում է:

Ադիաբենեի թագավորի քրիստոնեություն ընդունելուն վերաբերվող փաստաթղթերում կա մի շատ հետաքրքիր փաստ. եկած քրիստոնյաներից մեկը բացատրում է, որ թլպատման արարողությունը չունի կարևոր նշանակություն և խորհուրդ է տալիս չկատարել այդ բարբարոսական արարողությունը: Մեկ այլ քրիստոնյա հակաճառում է այս

կարծիքին և հայտարարում, որ դա մեծ մեղք է և անհրաժեշտ է հետևել Մովսեսի հաստատած կանոնին:

Պատմությունից հայտնի է, որ այս վեճը շարունակվել է անգամ երկրորդ դարում, երբ արդեն քրիստոնեությունը սկսել էր ի հայտ գալ որպես անբողջություն, անկախ կրոն, և ձևավորվել էր իրեն հատուկ դոգմաները՝ փորձելով հակադրվել մովսեսականությանը:

Հիմա համաշխարհային պատմագիտության մեջ նշվում է, որ Ադիաբենեն Ք.ա առաջին դարում ընդունել է մովսեսականություն: Նշված շրջանում Ադիաբենեն գտնվում էր Հայաստանի կազմում, և Մոնոբազը, նրա եղբայր Իզատեսը և նրանց մայրը՝ Ելենան չէին կարող կառավարել Ադիաբենեում: Փլավիոսը, նաև ավելացնում է, որ Իզատեսը մովսեսականությունն ընդունել է առևտրական Անանիայի խորհրդով անվտանգության տեսանկյունից ելնելով:

Աբգարի պատվիրակության ղեկավարի անվան համապատասխանելը, և այլ նույնություններն ու տրամաբանական ընդհանրությունները ցույց են տալիս, որ երկու պատմությունները կամ օգտվել են մեկը միուսից, կամ ունեցել են մեկ ընդհանուր պատմական հիմք: Խոսել երկրի անվտանգության ապահովման մասին կրոնափոխման միջոցով՝ պարզապես ծիծաղելի է:

Ոչ միայն Ադիաբենեն այլև Պաղեստինը գտնվում էին Հայաստանի գերիշխանության ներքո, և այդ մասին լավ գիտեր Փլավիոսը: Ստիպված պետք է ընդունենք, որ այս դեպքում նորից մենք գործ ունենք քաղաքական նպատակներով պատմության բացահայտ կեղծման փաստի հետ:

Այս պատմական միջադեպը ևս մի կարևոր ուսումնասիրման նյութ է՝ հասկանալու համար, թե ինչու հենց քրիստոնեությունը դարձավ համաշխարհային կրոն և ոչ,

օրինակ, միհրականությունը կամ Իզիդի և Օսիրիուսի պաշտամունքները:

Քրիստոնեության տարածման ժամանակ մենք տեսանք, որ կար խիստ անհրաժեշտություն նոր կրոնի, որը խորթ չլիներ բազմազգ Հռոմի բնակչությանը և կարողանար բավարարել այդ բնակչության հոգևոր պահանջմունքները:

Մեր նշած կրոնները արդեն ամբողջությամբ ավարտել էին իրենց ձևավորման փուլը, ծագումով և գաղափարախոսությամբ կապված էին կոնկրետ էթնոսի հետ և չէին կարող բավարարել բոլորի մտավոր և հոգևոր պահանջմունքները: Դրանց հակառակ քրիստոնեությունը դեռևս գտնվում էր սաղմնային վիճակում և առաջ էր քաշում ընդամենը մի քանի կետեր.

1. Հասարակ ժողովրդին բացատրում էր, որ ստեղծված ծանր կացության պատճառը մարդու սկզբնական ադամական մեղքն է:
2. Արթնացնում էր հույս, որ փրկչի գալով և նրա կամավոր զոհաբերությունով այդ մեղքը վերացել է:
3. Դրանից եզրակացվում էր, որ շուտով գալու է արդարացի Աստծո կառավարման ժամանակը և այդ թագավորության մեջ ապրելու միակ պայմանը այն է, որ նրանք հավատան Հիսուս Քրիստոսի աստվածային ծագմանը:

Կարևոր է այն, որ առաջին քրիստոնյաները համոզված էին, որ Քրիստոսի երկրորդ գալուստը լինելու է շատ մոտ ժամանակներում, որի մասին բազմաթիվ հղումներ կան բուն աստվածաշնչում: Օրինակ՝ Քրիստոսը, երբ ուղարկում է իր աշակերտներին քարոզելու, նշում է, որ նրանք անգամ չեն կարողանա Իսրայելի բոլոր քաղաքներում ավարտել իրենց քարոզը, երբ ինքը կվերադառնա:

Այս նույն շուտափույթ հաղթանակի տրամբանությամբ է գրված նաև Հովհաննեսի ավետարանը, որը ժամանակագրությամբ գրվել է առաջինը՝ Ներոնի մահվանից անմիջապես հետո:

Հետագայում Ներոնը՝ Աստվածաշնչում նշված Նեռը դարձավ բարի Աստծո հակառակորդ ուժը և ձևավորվեց այն կարծիքը, որ հետագայում անորոշ ժամանակ հետո, Աստծո երկրորդ գալուստից առաջ գալու է այդ առասպելական Նեռը:

Իրականում Ներոնի սպանության ժամանակ ինչպես Հռոմի բնակչության մի խոշոր մասը, այպես էլ մովսեսականների բավականին մեծ խումբ հավատում էին, որ Ներոնը չի սպանվել, այլ փրկվելով փախել է արևելք, հավանաբար Պարսկաստան կամ Հայաստան և շուտով վերադառնալու է մեծ զորքով և այրելու, ոչնչացնելու է ժողովրդի համար ատելի դարձած Հռոմեական պետությունը և Հռոմ քաղաքը:

Այժմ բազմաթիվ մարդիկ Հովհաննեսի գրած «Բաբելոնյան պոռնիկ» հասկացողության մեջ ցանկանում են տեսնել իրենց ժամանակակից պետություններին կամ երևույթները, իսկ հեղինակը՝ խոսելով յոթը գլխի և տասը եղջյուրների մասին, պարզապես նկատի էր ունեցել յոթը բլուրների վրա հիմնված Հռոմ քաղաքը և հռոմեական տասը կայսրերին, որոնք հալածել էին քրիստոնեյաներին:

Այս ամբողջ գրվածքին հակառակ, մյուս ավետարանները արդեն չեն պարունակում նախկին լավատեսությունը քրիստոնյաների ու տառապող ժողովրդի ապագայի վերաբերյալ: Պարզ էր դարձել, հատկապես հրեական 133-135 թ-ի ապստամբությունից հետո: Իսրայել պետության վերականգնումը, Հռոմի կործանումը՝ այսինքն փրկչի երկրորդ գալուստը հետաձգվում է անհայտ ժամանակաշրջանում:

Քրիստոնեության ձևավորումը շարունակվեց հարյուրամյակներ, և մենք տեսնում ենք, որ տիեզերական ժողովների միջոցով սկսվում են հաստատվել քրիստոնեական դոգմաները, և ամեն մի նոր որոշման ընդունումը պատճառ է դառնում պառակտման և արյունահեղության:

Այսպես դաժանաբար ոչնչացվեցին արիոսականները, հետագայում սկսվեց պայքար այսպես կոչված աղանդավորության դեմ, իսկ հետո ձևավորվեցին նեստորականները և հականեստորականները, առանձնացավ Հայկական Առաքելական եկեղեցին, իսկ հետո առաջացան կաթոլիկ, ուղղափառ և բողոքականություն եկեղեցիները:

Այս բոլորը ցույց է տալիս, որ քրիստոնեության մեջ գոյություն ունեն բազմաթիվ հակասություններ, չպարզաբանված կարևոր դրույթներ, որոնք պառակտումների պատճառ են դառնում:

ՄԵՂՔԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք գրել ենք, որ Հին Կտակարանի կարևորագույն դրույթներից մեկը նախասկզբնական մեղքն էր, որի միջոցով մովսեսական քրմերը հավատացյալներին մշտապես պահում էին վախի մթնոլորտում և ենթարկեցնում իրենց: Թվում է՝ քրիստոնեությունը պետք է վերացներ այս խնդիրը և ազատեր մարդկանց մեղավոր լինելու գաղափարից, որով մարդը կդառնար ավելի ազատ և կկարողանար ակտիվ գործել:

Քրիստոնեության ձևավորման շրջանում ընդունվում էր, որ Քրիստոսի կամավոր խաչելիության գնալը ամենամեծ զոհաբերությունն է, որով և վերանում էր նախասկզբնական

մեղքը: Այժմ էլ քրիստոնեությունը նշում է, որ Քրիստոսը երկինք համբարձվելուց առաջ իջել է դժոխք և խորտակել դժոխքի դարպասները, որից հետո արդար մարդկանց համար բացվել են դրախտի դռները:

Քրիստոնեական եկեղեցին չէր ընդունում մատաղը, քանի որ Քրիստոսը ինքն իրեն զոհ էր մատուցել: Հավանաբար հետագայում եկեղեցու վերնախավը և նրանց հետ դաշինք կնքած աշխարհիկ իշխանությունները հասկացան թե ինչ կարևոր նշանակություն ունի մարդկանց առաջնային մեղքի գաղափարը: Մարդուն պասիվացնելը և այն գաղափարի արմատավորումը, որ իրենց դժբախտությունների պատճառը շարունակում է մնալ առաջնային մեղք դառնում էր կարևոր գեներ իշխանության պահպանման համար: Հիմա էլ քրիստոնեություն է ընդունում է, որ մարդկությունը կրում է նախասկզբնական մեղքը:

Տարբեր եկեղացական ուղղություններ մեղքից ազատման նկատմամբ ունեն տարբեր կարծիքներ: Ուղղափառ եկեղեցին ընդհանրապես գտնում է, որ ինչպես ողջ մարդկությունը, այնպես էլ անհատները ընդհանրապես չեն կարող այդ մեղքից ազատվել և մնում են այդ մեղքի մեջ մինչև մեռնելը: Հնարանոր է լավ, աստվածահաճո գործերով միայն մահից հետո ազատվել առաջնային մեղքից:

Կաթոլիկ եկեղեցին գտնում է, որ անհատ մարդիկ կարող են ազատվել այդ մեղքից, բայց միայն ու միայն եկեղեցու միջոցով իրենց աստվածաավախությամբ, օրինակելի վարքով: Այս տեսակետը թվում է ավելի մարդասիրական, բայց գիտենք, որ այս գաղափարի հիման վրա կաթոլիկ եկեղեցին դարեր շարունակ ինչպիսի բարբարոսություններ և չարաշահումներ է իրականացրել:

Եկեղեցին հասել էր այնտեղ, որ մեղքից ազատման թղթեր՝ ինդուլգենցիաներ էր վաճառում, նույնիսկ հետա-

գայում կատարվելիք մեղքերի համար: Հարյուր հազարավոր մարդկանց տարբեր երկրներում այրում էին, որպեսզի նրանց հոգին ազատվի, մաքրվի կրակի միջոցով:

Բողոքականությունը այս երկու տեսակետների միջև է գտնվում: Այս ուղղությունը գտնում էր, որ անհատ մարդիկ կամ ի ծնե ազատված են սկզբնական մեղքից կամ իրենց ապրելաձևով, համեստությամբ, ժուժկալությամբ կարող են մաքրվել:

Առաջին տեսակետը ծնեց բողոքականության, կալվինիզմի տեսությունը, որը չարիք դարձավ մարդկության համար: Կենսիկիստները պնդում էին, որ անկախ իրենց ապրելակերպից, անկախ կատարած գործերից մարդկանց մի մասը աստծո կողմից ընտրյալ է՝ ազատված մեղքերից և պետք է գնան դրախտ, իսկ մարդկանց մնացած մասը դատապարտված է դժոխքում դատապարտվելու և դրա չափանիշը համարվում էր այն, թե մարդը հաջողակ է, թե անհաջող իր գործերի մեջ:

Հայկական եկեղեցին առանձին չի անդրադարձել մեղքի գաղափարին: Եկեղեցական բազմաթիվ առաջադեմ ուսումնասիրողների գործերից կարելի է վստահորեն պնդել, որ հայկական եկեղեցին շարունակում է մնալ առաջին քրիստոնյաների այն տեսակետին, որ Քրիստոսի խաչելիությամբ մարդկությունը ազատվել է ադամական մեղքից և մարդու ճակատագիրը մահից հետո կախված է միայն ու միայն տվյալ անհատի գործունեությունից:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁ

Ուսումնասիրողների մոտ հակադիր կարծիքներ են ձևավորվել այն հարցի շուրջը, թե որքան է կարևոր եղել՝ արդյոք իրականում Հիսուս, թե ոչ: Այն, որ քրիստոնյա ուսումնասիրողները համարում են, որ միանշանակ, Քրիստոսը եղել է, և եղել է հենց այնպիսին, ինչպիսին նկարագրված է աստվածաշնչում մեր քննարկման նյութը չէ: Առաջին հերթին մեզ հետաքրքրում է, թե որքան է կարևոր նրա կենդանի անձ լինելու, կամ չլինելու հարցը:

Մատերիալիստ ուսումնասիրողները, հետևելով Էնգելսի օրինակին գտնում են, որ նրա անձի լինելիությունը չունի նշանակություն և կարևորն այն է, թե ինչ հետևանք է ունեցել քրիստոնեության գաղափարախոսությունը մարդկության ընդհանուր զարգացման վրա:

Այս տեսակետը բավականին հիմնավոր է, և մենք էլ մեր հիմնական շեշտը դրել ենք այն կետի վրա, թե ընդհանրապես կրոնները և մասնավորապես քրիստոնեությունը ինչպիսի ազդեցություն է ունեցել մարդկության աշխարհաճանաչման ձևավորման վրա:

Այդ մասին այլ՝ շատ հետաքրքիր միտք է առաջ քաշել Դոստոևսկին: Նա քննարկելով քրիստոնեությունը, գրում է. «Կարևոր չէ քրիստոնեական գաղափարախոսությունը և ընդհանրապես, այստեղ չկա գաղափարախոսություն, այլ կարևոր է եղել՝ է արդյոք Քրիստոսը, արդյոք կարո՞ղ է խոսքը նյութականանալ և ստանալ մարդկային տեսք»:

Հիսուսի, որպես մարդ լինելու և նրա գործունեության մասին կխոսենք մի քիչ հետո, իսկ այժմ մեզ թվում է ավելի կարևոր է բացահայտել Դոստոևսկու տեսակետը և տալու դրա մասին որոշակի բացատրություն:

Հնագույն կրոններում կար աստծո որդիների գաղափարը, որը փոխանցվել է նաև գնոստիկներին, որոնք գտնում էին, որ հասարակական զարգացումները հնարավոր չեն առանց Աստծո միջամտության և որ որոշակի ժամանակահատվածը մեկ, երբ հասարակությունը լինում է պատրաստ, Աստված ուղարկում է իր երկրային որդուն, իր պատգամը՝ Լոգոսը, որը օգնում է հասարակությանը բարձրանալու նոր, ավելի բարձր աստիճանի:

Դոստոնսկին գտնում է, որ Քրիստոսը փաստորեն չի կարողացել արմատավորել Աստծո նոր խոսք հասարակության մեջ, այս է ցույց տալիս նրա այն պնդումը, ուստի քրիստոնեության մեջ չկա անգամ գաղափարախոսություն: Նրա համար էական, կարևոր խնդիրը մնում է այն, թե Քրիստոսի անհաջող գործունեությունից հետո արդյոք հնարավոր է նոր Լոգոսի, Աստծո նոր պատգամի ուղարկվելը:

Ոչ այսպիսի տեսանկյունից, սակայն մոտավորապես նույն գաղափարը հուզել է նաև միջնադարյան հայ մտածողներին: Գ. Նարեկացին քննելով մարդ, Քրիստոս, Հայր Աստված հարաբերությունները հանգում է այն եզրակացության, որ Քրիստոսը, լինելով կապող օղակ Աստծո և մարդկանց միջև եղել է կատարյալ մարդ և կատարյալ Աստված:

Մարդիկ, կրելով Աստծո շունչը և ստեղծված լինելով Աստծո կերպարանքով, նույնպես իր տեսակի մեջ կատարյալ են, սակայն ընկնելով մեղքի մեջ՝ դարձել են ոչ կատարյալ Աստված և ոչ կատարյալ մարդ: Այս պարագայում չափից դուրս առաջադիմական և հեղափոխական է դառնում Գ. Նարեկացին: Նա եզրակացնում է, որ ամեն մարդ մարմնով և հոգով կատարելագործվելու ճանապարհով կարող է դառնալ կատարյալ մարդ և կատարյալ Աստված: Նա իր գրքում գրում է.

Եվ այն, ինչ ասելն իսկ ահավոր է,
Գրում եմ այստեղ ես՝ ի հիշատակ մեծ երախտիքիդ.
Կարող եմք լինել մենք աստված նույնիսկ շնորհներով
ընտիր
Եվ ստեղծողիդ հետ միանալ...

Սրանով Նարեկացին ընդունելով Արարչի գոյությունը, ընդունելով, որ Արարիչը անմիջական ազդում է անհատի և հասարակության գործունեության վրա շատ ավելի մեծ տեղ է տալիս հենց անհատին, որով պատասխանում է Դոստոևսկու բարձրացրած հարցին: Այո, սրբազան խոսքը՝ Լոգոսը, կարող է նյութականանալ մարդու տեսքով, կարող է կրել Աստծո խոսքն ու պատգամը:

Այդ հնարավորությունը՝ լինել Աստծո որդի, կրել նրա սրբազան խոսքը, տրված է մեզ՝ բոլորիս և ամեն ոք իր տեղում կարող է հոգով ու մարմնով դառնալ կատարյալ: Կատարյալ մարդ ու կարտարյալ աստված վիճակում մարդը կարող է միանալ Արարչին, նաև բարձրացնել հասարակությանը նոր, ավելի բարձր աստիճանի:

Երկրորդ հարցը Հիսուսի անձի, ծագման կապն է նրա գաղափարների հետ: Չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, որ Հիսուսի անձը առանձնացվի նրա բերված ուսմունքից, որովհետև որքան էլ փոփոխվել ու սղագրվել է Հիսուսի ուսմունքը և ծագումը, երբ միևնույն է կարելի է հիմնարար, կարևորագույն սկզբնակետեր գտնել հասկանալու համար այն գաղափարախոսությունը, որը քարոզել է պատմական անձնավորություն Հիսուսը:

Առաջին հերթին կարևոր է, որ նրան կոչում են ըստ բնույթի, որը հետագա բացահայտ ձևափոխումների արդյունք է, երբ ցանկացել են նրա անձի մեջ տեսնել մովսեսականների փրկչին:

Այս կերպարը հակասում է գրքի հիմնական տրամաբանությանը, երբ բացահայտ երևում է նրա՝ խիստ ընդգծված, բացասական վերաբերմունքից, որը նա ունի մոլեսեսական կրոնի տառից կառչող, որևէ նորը ընդունել չկամեցող հոգևորականների նկատմամբ:

Մյուս՝ Հիսուսին տրված մականունը նազովրեցին է, որը փորձ է արվում կապել նրա ծննդավայրի հետ: Իրականում արդեն վաղուց ապացուցված է, որ այդ ժամանակ Պաղեստինում այդպիսի բնակավայր ընդհանրապես չի եղել, և այն հիմնվել է միայն միջնադարում:

Վերևում մենք գրեցինք Նազովրեցիների ուսմունքի մասին, որոնք մեծ ազդեցություն են ունեցել քրիստոնեության ձևավորման վրա, նաև Քրիստոսի հանդերձանքը, երկար մազեր կրելու ձևը, քարոզները խոսում են նրա այդ համայնքին պատկանելու մասին:

Հռոմյական դատարանը, երբ դատում էին Պողոսին, նրան մեղադրում են խռովություն հրահրելու, համայնքում ապրելու և նազովրեական աղանդին պատկանալու մեջ:

Ավելին, մեզ հասած նազովրական համայնքի փաստաթղթերից մեկում խոսվում է Հիսուսի մասին, որը եղել է համայնքի կարևորագույն գործող անձ ու մեծ հարգանք է վայելել և մահապատժի է ենթարկվել հռոմեացիների ձեռքով:

Այժմ հնարավոր չէ պնդել, որ խոսքը վերաբերվում է նույն անձնավորությանը, սակայն, որ Հիսուս Քրիստոսի կերպարի և նրա գաղափարների ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել այս շարժումը անխուսափելի է:

Քննարկման համար շատ կարևոր է նաև այն միջավայրը, որում ձևավորվել և գործում է Հիսուս: Նրա աշակերտները, առաջին հերթին ձկնորսներ են, և Հիսուսն է

ասում, որ նրանք իրեն միանալուց հետո ոչ թե ձուկ, այլ մարդկանց պետք է որսան:

Սա անմիջապես կապվում է մեր վերևում քննարկված նյութին, երբ մենք ցույց տվեցինք, որ ձուկ – ջուր, հրեշ – կրակ հասկացությունները կապված են ինֆորմացիայի փոխանցման հետ: Այս պարագայում ներկայացվում է այն նոր ինֆորմացիան, նոր գաղափարները, որոնք պետք է Քրիստոսի միջով փոխանցեն իր աշակերտները մարդկանց:

Այստեղ Քրիստոսը և իր տասներկու աշակերտները հանդես են գալիս որպես տասներեք, որով ապահովվում են նոր ինֆորմացիոն շրջանի բացումը և նոր հասարակական հարաբերություններ ձևավորումը:

Երկրորդ կարևոր խնդիրը նրա աշակերտների և անձամբ Հիսուսի ծագումն է Գալիլիայից: Մենք վերևում նշեցինք, որ, Գալիլիայի բնակչությունը ծագում էր կելտերից, և որ միայն ՔԱ 1-ին դարի վերջում էր, որ նրանց մեջ բռնությամբ տարածվել Յահվահի պաշտամունքը:

Նույնիսկ Հիսուսից հետո էլ մովսեսականները Գալիլիայի բնակչությանը համարում էին հեթանոսներ և աշխատում էին չչփվել նրանց հետ: Կնշանակի, ինչպես Հիսուսը, այնպես էլ նրա աշակերտները, եթե ոչ կատարյալ, ապա գոնե որոշակի պատկերացում պետք է ունենային հին արիական հավատի և հավատից ձևավորված կրոնի մասին:

Սրանով Քրիստոսի գիտելիքների աղբյուրի փնտրտուքը Եգիպտոսում, առավել ևս Հեռավոր Հնդկաստանում դառնում է ավելորդ: Նա իր նախասկզբնական գաղափարները կարող էր ստանալ բուն Գալիլիայում որտեղ այդ գաղափարները դեռ, եթե ոչ բացահայտ, ապա թաքնված

պահպանված կլինեին անպատճառ, քանի որ դեռ քիչ ժամանակ էր անցել բռնի կրոնափոխությունից:

Քրիստոսի էությունը պարզ ներկայացված է նրա դեմ կազմակերպած դատավարության տեսարանում: Այստեղ, Պոնտո Պիլատը, ներկայացնում է Հռոմը: Իրականում նա փոխաբերական իմաստով ներկայացնում է հնդեվրոպական, արիական աշխարհը, որը այդ շրջանում կորցրել էր իր ամբողջականությունը, իր դիրքորոշման պահպանման ու դրա համար պայքարելու ընդունակությունը: Պիլատը լվանում է իր ձեռքերը և դառնում կողմնակի դիտորդ: Նա ընդամենը դառնում է Հռոմի նեղ շահերի պահապանը:

Իրականում, պատմական այսպիսի դրվագ չէր կարող լինել, որովհետև դրանով Հռոմը ցույց կտար իր անկարողությունը, որը հռոմի ոչ մի պաշտոնյա իրեն չէր կարող թույլ տար: Նաև հայտնի է, որ կրոնական, ներքին խնդիրներին հռոմեական պաշտոնավորները ընդհանրապես չէն խառնվում:

Դրվագում Քրիստոսը ներկայացվում է որպես Աստծո որդի, որը բերել է Աստծո պատգամը, Աստծո խոսքը: Ըստ նոր բերված տեսության Աստված միասնական է բոլոր ազգերի համար և բոլոր մարդիկ, ըստ Քրիստոսի, ոչ միայն մարդու որդիներ են, այլ նաև Աստծո որդիներ:

Դրա համար Հիսուսը իր մասին խոսելիս իրեն կոչում է ինչպես Աստծո որդի, այնպես էլ մարդու որդի: Նույն պատճառով Հիսուսը երկու ձևով էլ մշտապես դիմում է մարդկանց: Նրա դիմաց, որպես հակառակ տեսակետ, կանգնած է Բարաբա: Բարաբա ինչպես և Քրիստոս անունները իրականում ցույց են տալիս իրենց էությունները և ոչ թե անձնանունները:

Բարաբա, սեմական լեզվով, նշանակում է հոր որդի և այդպիսի անուն չկար մովսեսականների մոտ, որովհետև

անտրամաբանական էր, բայց, նշելով այդ մականունը, հեղինակը ցույց է տալիս, որ վերջինս կրում է մովսեսականների համար կարևոր սկզբունք, որ իրենք ծագումնաբանությամբ հասնում են մինչև Մովսեսին ու Աբրահամին և որ իրենց աստված Յահվաիի հետ կնքված պայմանագիրը անքննելի ու չփոփոխվող է: Սրան դեմ էին նազովրեցիների մի մասը՝ այսինքն Քրիստոսը:

Տեղի է ունենում պատմության մեջ առաջի դեմոկրատական, ազատ քվեարկությունը, և մովսեսականները Հիսուսն դատապարտում են մահապատժի: Կարևոր է նրանց կամքի արտահայտման ձևը, որտեղ նրանք ում ազատել հարցին երեք անգամ կրկնում են՝ Բարաբային, Բարաբային, Բարաբային:

Այսինքն եռաստիճան համակարգում՝ նյութական, հոգևոր և ոգեղեն, մովսեսականները ընդունում են իրենց կապվածությունն ու հնազանդությունը Յահվայիի հետ կնքված պայմանագրին: Դրա համար նրանք պատրաստ են մովսեսականի համար ամենամեծ պատժին: Նրանք նշում են. «Թող Հիսուսի անմեղ արյունը մեր և մեր երեխաների վրա լինի, Բարաբային, Բարաբային, Բարաբային»:

Կնշանակի՝ նրանք լավ գիտեին, որ Հիսուսի բերած գաղափարները ճիշտ են, որ Աստված մեկն է և չի կարող լինել ընտրյալ ժողովուրդ, և որ Աստված լինելով սեր, հոր նման սիրում է իր որդիներին, և մարդ–Աստված հարաբերությունները չեն կարող լինել տիրոջ ու ստրուկի հարաբերություններ և որ ամենակարևորն է՝ Հայր Աստվածը երբեք չի կարող կնքել պայմանագիր մի ժողովրդի հետ՝ պահանջելով որ այդ ժողովուրդը հանուն այդ Աստծո ոչնչացնի մյուս ժողովուրդներին:

Եթե մովսեսականներն ընդունեին այս, իրենց համար հեղափոխական գաղափարները, կնշանակեր պետք է

դադարեին գոյություն ունենալուց՝ որպես սոցիալական միավոր, որպես ժողովուրդ: Ձավորման պահից, լինելով տարբեր ռասսաների, տարբեր էթնոսների անհատներ, նրանց ոչինչ իրար հետ չէր կապում, բացառությամբ Յահվահի հետ կնքած պայմանագրից:

Այս բոլորից հետո կարելի է նաև ուսումնասիրել Հիսուսի անձնավորությունը՝ որպես իրական պատմական անձ, և փորձել ընդհանուր գծերով հասկանալ, թե ինչ գաղափարներ էր նա առաջ քաշում և թե որքանով են նրա գաղափարները կապված այժմ քարոզվող քրիստոնեության հետ և վերջապես հասկանալ արդյոք կապ կա Հին ու Նոր կտակարանների միջև:

Ենթ նշեցինք, որ Հիսուսը քարոզում էր տիեզերական Հայր Աստծո գաղափարը, որը տիեզերական սերն է, որի տակ կարելի է հասկանալ ոչ միայ սերը իր բոլոր դրսևորումներով, այլև կանոնավոր համակարգված տիեզերական օրենքներն ու օրինաչափությունները, որից դուրս ամեն ինչ Հիսուսը համարում էր չարն ու վատը, որի համար էլ դիմելով մովսեսականներին՝ ասում էր, որ նրանց նախնիները պաշտել են դևի:

Բացարձակ կեղծ ու անիմաստ է Հիսուսի ծննդի մեկնաբանությունը: Մի կողմից մեզ համոզում են, որ նա ծնվել է Մայրամից ու Սուրբ Հոգուց, որ ինչպես վերևում տեսանք անտրամաբանական է: Նա նաև նշվում է որպես Դավիթի տոհմից է, Հովսեփի միջոցով, որն ընդհանրապես անիմաստ է և փաստորեն Յահվահի խոստումը, որ Դավիթի տոհմից պետք է ծնվի Եշուան՝ փրկիչը, չի կատարվել:

Միայն հետագա դարերում քրիստոնեա հոգևորականները որպես փաստ ընդունեցին Քրիստոսի թլփատված լինելը, որով նրան ահեստականորեն կապեցին մովսեսա-

կանների հետ, որը եթե նույնիսկ ինչ-որ չափով կա, ապա շատ թույլ է:

Նույն ժամանակ եկեղեցին ուսմունքից հանեց այն, որ Հիսուսը ընդունում էր մարդկանց վերածննդի գաղափարը. նա, խոսելով Հովհաննես Մկրտիչի մասին, նշում է, որ Հովհաննեսը վերադարձած Եղիան էր, բայց ոչ ոք չճանաչեց և չընդունեց նրան:

Եկեղեցին հանեց այս կետը, որպեսզի հիմնավորվի դժոխքի և դրախտի, հետո նաև քավարանի գաղափարը, որով կարելի էր ազդել, նաև շահագործել հասարակ բնակչությանը: Ընդունելով Հայր Աստծո գաղափարը, նաև լինելով նազովրեցի՝ Հիսուսը չէր ընդունում ինչպես բնակչության բաժանումը ըստ ունեցվածքի, այնպես էլ ժողովուրդների արտոնյալ կամ ստորադասված լինելը:

Նա կոչ էր անում ժողովուրդներին և մարդկությանը բարեկամության և եղբայրության: Սրանով կարելի է բացել Քրիստոսի խոսքերը գրված Եդեսիայի թագավորին, որ երանելի են նրանք, ովքեր իրենք չտեսած հավատացին, կամ հռոմեական սպային տված բնութագիրը, որ նրա նման հավատով և մաքրությամբ ոչ մի մարդ չկա ողջ Պաղեստինում: Այսինքն իր և մեր բոլորի Հայր Աստծո առաջ ազգերն ու անհատները հավասար են:

Համարվում է, որ Քրիստոսի ծննդյան մասին գրված է Հին կտակարանում. «Եվ այս ամենը եղավ որ կատարվի մարգարեի ձեռովը, Տերիցն ասուածը, որ ասում է. Ահա կույսը կհղիանա և որդի կծնի»: Նշված մարգարեն իրականում ըստ բնագրի, ասում է ոչ թե կույսը այլ երիտասարդ կինը երեխա կունենա, և երեխան դեռ չի հասցնի խոսել, Հուդայի թշնամիները կպարտվեն:

Մենք չենք կարող և չենք էլ ցանկանում քննարկման նյութ դարձնել, թե որքան անաղարտ ու ազնիվ էին

փոխանցում Հիսուսի աշակերտները Հիսուսի մտքերը նրա մահից հետո: Միայն արժե նշել, որ գոնե նրանց մեծամասնությունը, եթե ոչ ընդհանրապես, ապա գոնե հիմնական, կարևորագույն հարցերը այդպես էլ չընկալեցին:

Պետրոսը, որը, ըստ Քրիստոսի կարծեցյալ խոսքերի, պետք է դառնար այն քարը, որի վրա պետք է կառուցվեր Քրիստոսի եկեղեցին, այսինքն հավատացյալների համայնքը, երեք անգամ հրաժարվեց իր ուսուցչից, ինչպեսև նախազգուշացրել էր Հիսուսը: Մյուս աշակերտներն էլ, չկարողանալով մինչև վերջ հասկանալ, թե ինչ է քարոզում Հիսուսը, մնացածների նման հարցնում էին. Արդյո՞ք իրականում Հիսուսը Աստծո որդին և խոստացված մեսիան է, թե ոչ՝, որին հիասթափված Հիսուսը ոչինչ չէր կարող պատասխանել և մշտապես կրկնում էր. «Դու ասեցիր»:

Յավոք սրտի, Քրիստոսի կերպարի վրա շատ վատ է զգացվել այն մովսեսական տեսակետները, որոնք վերագրել են նրան: Քրիստոսի կերպարում շատ լավ երևում է նրա ձգտումը. ապրել ազատ, լի էներգիայով, բայց նաև կառչած չլինել կյանքից և չվախենալ մահից: Քանի որ նա համոզված էր, արիական այն հիմնական սկզբունքում, որ մենք գալիս ենք մեր Հայր Աստծուց և վերադառնում ենք նրա մոտ:

Այսպիսի աշխարհընկալում ունեցողը չէր կարող ունենալ այնպիսի արհամարհական, նույնիսկ թշնամական վերաբերմունքը, որ ներկայացված է Քրիստոսի վերաբերմունքում իր ընտանիքի և իր մոր նկատմամբ: Անհասկանալի է, երբ հարսանիքի արարողության ժամանակ Հիսուսը իր մորը դիմելով հարցնում է, թե ինչ կապ կա իր և նրա միջև: Իսկ երբ մեկ այլ դրվագում նրան հայտնում են, որ իր մայրը, եղբայրներն ու քույրերը եկել և ուզում են տեսնել իրեն, նա հայտարարում է, որ իր շրջապատի մարդկանցից բացի, ինքն ուրիշ հարազատներ չունի:

Այս բոլորի գաղափարապես հակառակ և մեր համար հասկանալի է այն դրվագը, երբ Քրիստոսը խաչի վրա վերջին պահին մտածում է մոր մասին և իրեն հավատարիմ, իր կողքին մնացած Հովհաննես աշակերտին պատգամում է հոգ տանել նրա մասին:

Այս բոլոր նշումները, չնայած ամբողջական չեն, սակայն մեր կարծիքով բավական են ցույց տալու համար, որ իրականում եղել է Հիսուս անունով մեկը, որը իր հայրենի Գալիլիայում ստացել է մովսեսականներին ոչ հատուկ կրթություն, նաև բավականին խորը գիտելիքներ հին հավատի մասին:

Հավանաբար, գտնելով, որ բավականին ակտիվացած նազովրեցիները պատրաստ են ընդունելու հին հավատի գաղափարները, որովհետև առաջին հերթին նրանք ընդունում էին, որ հին պայմանագիրը՝ հին կտակը, աստծու հետ սպառել է իրեն և անհրաժեշտ է նոր պայմանագիր՝ նոր կտակ, կազմել, սկսեց քարոզել նրանց շրջանում: Հավանաբար այն, որ նազովրեցիները միևնույն է մնում էին կառչած մովսեսական ավանդույթներին և Մովսեսի ձևավորված օրենքներին, Հիսուսը հիասթափվեց նրանցից և սկսեց քարոզել հասարակ ժողովրդի մեջ:

Այն, որ Հիսուսը, ըստ Աստվածաշնչի նկարագրության մեծ շուքով մտավ Երուսաղեմ, ավելի շատ ներկայացվում է այն ցանկությունը, այն սպասելիքները, որ ուներ այս մեծ պատմական անձը, սակայն Քրիստոսի խոսքերով ասած, ոչ մի մարգարե չի ընդունվում իր երկրում և այդ մարդը սպանվեց երկու անգամ, առաջինը մովսեսական հոգևորականության, իսկ երկրորդ անգամ առաջին քրիստոնյաների ձեռքով, որոնք աղավաղեցին նրա տեսությունը և սարքեցին զենք այն գաղափարների դեմ, որոնք բերել և ցանկանում էր տարածել Հիսուս Քրիստոսը:

Մեր քննարկումներն իրավունք են տալիս համեմատելու պատմական Հիսուսին՝ որպես մտածողի հայ միջնադարյան իմաստասեր Գ. Նարեկացու հետ:

Իհարկե, պետք է անմիջապես նշել, որ Նարեկացու աշխարհընկալման հիմնական աղբյուրը քրիստոնեությունն է, սակայն նա, հավանաբար ունենալով միաժամանակ հայ հին մտածողների ուսումնասիրությունները, կարողացել է զերծ մնալ Նոր Կտակարանում տեղ գտած հակասություններից և ձևավորել քրիստոնեության այն հիմնական դրույթները, որոնք վերցված էին հնագույն հավատից և արիական աշխարհաճանաչումից:

Եթե քրիստոնեական եկեղեցին քարոզում էր, որ հոգու ազատագրման, Աստծուն միանալու համար պետք է ճգնելով, հյուծելով մարմինը սպանել այն, որպեսզի ազատագրվի հոգին, ապա Նարեկացին կարևորում է նաև նյութական մարմինը, նշելով, որ անհրաժեշտ է պահպանել նաև կավը, այսինքն՝ նյութական մարմինը, քանի որ նա հոգու տաճարն է:

Շատ կարևոր է, որ Նարեկացին դեմ է արհեստական չքավորությանը, ասկետիզմին և երկու ծայրահեղությունների մեջ ընկնելուն: Նրա համար կարևոր է հոգու և մարմնի ներդաշնակության հասնելը:

Պատահական չէ, որ Գ. Նարեկացին, ինչպես և Անանիա Նարեկացին, որը նաև իր ուսուցիչն էր, հալածվել են պաշտոնական եկեղեցու կողմից, իսկ ժողովուրդը սրբացրել է ոչ միայն նրան, այլև նրա հիմնական ստեղծագործությունը՝ «Մատյան ողբերգությունը» գիրքը սիրով կոչելով «Նարեկ»:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՌՈՄՈՒՍ

Քրիստոնեության տարածումը և նրա սկզբնական գործունեությունը իրականում մնում է բավականին մութ, որովհետև հետագա դարերում քրիստոնեական եկեղեցին ոչնչացրել է այն բոլոր պատմական հիշատակությունները, որոնք վերաբերվում էին քրիստոնեության տարածմանը: Հին գրողներից միայն Փլավիոսի և Տաղիտի աշխատություններում են, որ պահպանվել է որոշակի նշումներ:

Փլավիոսը նշում է, որ Երուսաղեմում եղել է մի մարգարե, որը բուժել է մարդկանց և հետո խաչի վրա մահացել: Գրվածքում նշվում է, որ նա կոչվել է Մեսսիա, որ իրականում նրա գործերը հասարակ մարդու համար անիրականացվող էին: Հետագայում գտնվեց այդ աշխատության արաբերեն թարգմանությունը, որից պարզ դարձավ, որ վերջին արտահայտությունը հետագայում է ավելացվել քրիստոնյա արտագրողի կողմից:

Տաղիտը նշումը է քրիստոնյաների մասին՝ կապված Հռոմը այրելու հետ, որից հետո ավելացնում է, որ նրանց անունը առաջացել է իրենց կրոնի հիմնադրի անունից, որին մահվան է դատապարտել Պոնտի Պիլատը: Մասնագետների մեծ մասը այս վկայության վերջնամասը նորից համարում են, որ ավելացրել են հետագայում:

Հակառակ ծայրահեղության մեջ է ընկած մովսեսական Թալմուդը, այնտեղ գրված է, որ Հիսուսը եղել է անբարոյական կնոջ և հռոմեական զինվորի ապօրինի զավակ և կախարդության միջոցով ազդել է որոշակի մարդկանց վրա, որի համար էլ սպանվել է քարկոծվելով: Թալմուդը գրվել է ավելի ուշ և այս նշումները չեն կարող ունենալ որևէ պատմական լուրջ հիմք:

Քրիստոնեական պատմիչները հետագայում էլ Հռոմին

ներկայացնում են որպես քրիստոնեության անհաշտ թշնամի և համարում, որ տասնյակ հազարավոր քրիստոնյաներ սպանվել են հռոմեական կայսրերի անմիջական հրամանով: Այդ կայսրերից հատկապես առանձնացնում են Ներոնին և Դիոկլետիանիոսին:

Նշվում է, որ Ներոնը եղել է ինքնահավան, կիսախելագար, որը իր խելագար ցանկությունները բավարարելու համար այրել է Հռոմը: Որևէ լուրջ փաստարկ, որ Ներոնն է իրականացրել Հռոմի այրումը, չկա:

Աղետից հետ Ներոնի վարքագիծը հակառակն է ապացուցում: Ներոնը բացեց իր պալատի դռները և հրամայեց իրենց տներից զրկված և վնասված մարդկանց բնակեցնել պալատում և ցույց տալ անհրաժեշտ օգնություն: Բարբարոսական այդպիսի արարք կատարողը չէր կատարի հաջորդ քայլը, որն ընդանրապես բնորոշ չէր հռոմեական կայսրերին ու արիստոկրատներին:

Ներոնի՝ հետագայում Հռոմի վերակառուցումը և փաստացի Հռոմ քաղաքի հիմնադիր դառնալը, համարվում է գլխավոր ապացույցներից մեկը, նրա կատարած հանցագործության, որը նույնպես անտրամաբանական է:

Քրիստոնյա պատմիչները գրում են, որ Ներոնը իր մեղքը թաքցնելու համար անհիմն մեղադրել է քրիստոնյաներին քաղաքը հրկիզելու մեջ: Ցավոք սրտի մեզ չի հասել դատավարությանը վերաբերող որևէ փաստաթուղթ, և չենք կարող կարծիք կազմել, թե որքան արդարացի է իրականացվել դատավարությունը: Սակայն հայտնի է, որ հրդեհը սկսվել է միաժամանակ մի քանի կետերում, և հատկապես սկսել են այրվել այն թաղամասերը, որտեղ ապրում էին հարուստները: Հետո քամու հետևանքով կրակը տարածվել է ողջ քաղաքում: Սա բացահայտ ցույց է տալիս, որ քաղաքը այրվել է մտածված, դիտավորյալ:

Եթե հաշվի առնենք, թե որքան ծանր, խառնակ վիճակ էր ստեղծված հռոմեական կայսրությունում նաև բուն Հռոմ քաղաքում, որի բնակչության մի խոշոր մասը իրավազուրկ ստրուկներ էին և հռոմեացիներին ատող այլ ազգերի ներկայացուցիչներ, և այն, որ այրել է սկզբում հարուստների տները, կարող ենք վստահորեն պնդել, որ այս բարբարոսական քայլը իրականացրել են չքավորները՝ ազգային ու կրոնական դրդապատճառներից մղված:

Սա չի կարող ապացույց համարվել, սակայն նշենք՝ այդ ժամանակ Հռոմ քաղաքի բնակչության ավելի քան տասնհինգ տոկոսը մովսեսականներ էին, որոնց մեջ նաև շատ էին քրիստոնեություն ընդունածները:

Վերևում նշված տասը կայսրերը, որոնք ըստ Աստվածաշնչի հետապնդել են քրիստոնյաներին և որոնց թիվը համապատասխանում է գազանի տաս եղջուրներին, սրանք են. Ներոն, Դոմիցիան, Տրայանոսը, Մարկոս Ավրելիոս, Սևերան, Մաքսիմիանոս, Դեցիոն, Վալերիանոս, Ավրելիանը և Դիոկլետիանոսը: Իրականում, այս ցուցակը անհիմն է և ավելի շատ ունի խորհրդանշական իմաստ:

Դոմիցիանի կառավարման տարիներին, երբ սենատը մեղադրեց քրիստոնյաներին պետական դավադրության մեջ և Պաղեստինից Հռոմ բերվեցին Հիսուսի տան անդամները և մի քանի հոգի Դավիթի կենդանի մնացած հաջորդներից, Կայսրն ինքն անձամբ հետևում էր դատավարությանը և տեսնելով, որ Դավիթի տան անդամները անմեղ են, հրամայեց ազատել և մեծ շուքով վերադարձնել Պաղեստին:

Տրայանոսի կառավարման տարիներին ապրել և նահանգի կառավարիչ է եղել Պլինիա Կրտսեր պատմիչը, որը Կայսրին գրել է, որ կան բազմաթիվ քրիստոնյաներ, որոնք բացահայտ զոհեր չեն մատուցում կայսրի պատկերին, և նրանց վրա բազմաթիվ անստորագիր բողոքներ է գալիս

բնակչությունից: Կայսրը պահանջում է, որ անստորագիր նամակներին ուշադրություն չդարձնել, քրիստոնյաների հետ վարվել մեղմաբար, իսկ ովքեր արհամարհում կամ պղծում են հին հավատը, պատժվեն իրենց մեղքերին համապատասխան:

Մարկոս Ավրելիոսը մի կողմից կայսր էր և պարտավոր էր պաշտպանել պետական կրոնը, իսկ մյուս կողմից էլ, լինելով հելլենիստական դաստիարակության փիլիսոփա, արհամարհում էր քրիստոնյաներին, որի համար էլ ոչ այն մակարդակի, ինչպես ընդունում են հետագայի քրիստոնյա պատմիչները, բայց եղել են հալածանքներ, հատկապես քրիստոնեական վերնախավի նկատմամբ: Այժմյան Լիոնում 177 թվին Եվսեբիոսի տվյալներով մահապատժի է ենթարկվել 48 քրիստոնյա:

Իրական հետապնդումներ եղան Կայսր Տիցիանի օրոք, որի հրամանով Տիր քաղաքում բոլոր քաղաքացիները պարտավոր էին զոհաբերություն կատարել աստվածներին և Կայսրի պատկերին, որից հետո ստանում էին հատուկ փաստաթուղթ:

Սրա հետևանքով, մի շարք քրիստոնյաներ բանտարկվեցին, անգամ ենթարկվեցին մահապատժի և հետագայում սրբացվեցին քրիստոնեական եկեղեցու կողմից: Եղան նաև շատերը, և դա նույնպես նշվում է քրիստոնյա պատմիչների մոտ, ովքեր ուրացան Քրիստոնեությունը, կամ կաշառքի միջոցով կեղծ հավաստագրեր ստացան: Հետագայում, երբ ճնշումներն ավարտվեցին, բավականին բուռն քննարկումներ սկսվեցին արդյոք կարելի՞ է նրանց նորից ընդունել քրիստոնեական համայնքների մեջ:

Հաջորդ կայսրը, որ քրիստոնյաների հանդեպ հալածանքներ է իրականացրել, եղել է Դիոկլետիանոսը: Նա փորձում էր ամրապնդել հին հռոմեական պետության հիմ-

քերը, որի համար էլ զբաղվել է նաև կրոնական հարցերով, սակայն անմիջական քրիստոնյաների դեմ ոչ մի հրաման չի արձակել մինչև 303 թ.: Նրա հրամանով այն սենատորները, բարձր պաշտոնյաները, որոնք դավանում էին միհրակա-նություն, քրիստոնեություն կամ հռոմեական հավատից հե-ռացված այլ դավանանք, զրկվում էին իրենց պաշտոններից:

Այս քայլը բխում էր հռոմեական իրավունքի հիմքը կազ-մող 12 տախտակների օրենքից, ըստ որի, նախնիների հավատն ուրացող հռոմեացի քաղաքացիները, եթե ազդեցիկ պաշտոնյաներ էին, վտարվում էին երկրից, իսկ շարքային քաղաքացիները ենթարկվում էին մահապատժի:

Նաև բնական է, որ ամեն մի պետության ղեկավար պետք է պայքարի, որ իր երկիր չթափանցեն օտար կրոններ, որոնք հակասում են տվյալ երկրի կրոնի հիմնական սկզբունքներին:

Փաստորեն, մենք տեսանք, որ ոչ այն մակարդակով, որ ներկայացնում են քրիստոնյա պատմիչները, բայց իրա-կանում եղել են որոշակի հալածանքներ քրիստոնյաների նկատմամբ: Անհրաժեշտ է հասկանալ, թե որո՞նք էին դրա իրական պատճառները.

1. Մենք նշել ենք, որ կայսրության տարածման հետ միաժամանակ, Հռոմեական պետությունը ստիպված էր իր պանթեոն ընդգրկել նաև ենթակա ժողովուրդ-ների ավելի նշանավոր և մեծ ազդեցություն ունեցող աստվածներին, սակայն, դա հնարավորություն չստեղ-ծեց միավորել հռոմեական ժողովրդին: Կրոնական ինչ-որ ընդհանրություն ձևավորելու համար էր, որ մտցվեց կայսրի աստվածային ծագման տեսությունը, որը քրիստոնյաներն ընդունեցին խիստ բացասաբար:
2. Քրիստոնյաներն իրենց արարողություններն իրակա-նացնում էին գիշերները և ստորգետնյա գերեզ-

մաններում: Հռոմեական օրենքը թույլ էր տալիս կրոնական ցանկացած արարողություն իրականացնել բաց, և ընդունված էր արևապաշտությունից եկող կարգը, որ այդ արարողություններն իրականացվում էին արևածագին: Սրանց հետևանքով, քրիստոնյաների պահվածքը կասկածանք էր առաջացնում հռոմեացիների լայն շրջաններում, որի համար էլ ասեկոցներ էին պատվում, որ քրիստոնյաները զբաղվում էին անառակությամբ և արյունապղծությամբ, իրականացնում են երեխաների զոհաբերություններ:

3. Քրիստոնյաներին մեղադրում էին, որ նրանք զբաղվում են մոգությամբ և կախարհությամբ: Դրա պատճառը ոչ միայն քրիստոնյաների պատմած ավանդություններն էին Քրիստոսի հրաշագործությունների մասին, այլև այն, որ սկզբնական քրիստոնյաների մոտ կային հատուկ մարդիկ, ովքեր համարվում էին Աստծուն մոտ կանգնած և կարող էին զբաղվել հատուկ մշակված նախադասությունների, աղոթքների ու հատուկ իրերի միջոցով իրականացնել հմայման (закливание) արարողություններ և ազդել մարդու ֆիզիկական վիճակի կամ ճակատագրի վրա: Այդ բոլորը Հռոմում արգելված էր, և դրանցով զբաղվողները, ըստ օրենքի դատապարտվում էին մահվան: Սա էր պատճառը, որ քրիստոնյաների դեմ հալածանքների տարիներին, հատկապես հռոմեական պաշտոնյաները, փորձում էին գտնել քրիստոնեական բովանդակության գրքերը և ոչնչացնել դրանք:
4. Քրիստոնեական կրոնը, ոչ միայն մերժում էր հին հռոմեական կրոնը, այլև հասարակական կարգը, Հռոմում գործող ընտանեական ինստիտուտը, հռո-

մեական ձևավորված բարոյականությունը և ի վերջո՝ Հռոմեական պետությունը, որի ոչնչացումից հետո ըստ քրիստոնյաների, երկրի վրա պետք է հաստատվեր աստծո թագավորությունը:

Այս բոլորը լուրջ պատճառներ էին, որ ոչ միայն իշխանությունները, այլև հռոմեական հասարակ քաղաքացիները, եթե ոչ թշնամաբար, ապա գոնե կասկածամտորեն վերաբերվեին քրիստոնեաներին:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԵԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դիոկլետիանոս կայսրը 303 թվականին ընդունեց օրենք, որն ուղղված էր նաև քրիստոնյաների դեմ: Նույն ժամանակ Գալիայի, Իսպանիայի և Մեծ Բրիտանիայի կառավարիչ՝ Կոնստանտիոսը դեմ գնաց այս հրամանի կատարմանը և ոչ միայն բռնություններ չիրականացրեց քրիստոնյաների դեմ, այլև իր պաշտպանության տակ վերցրեց նրանց:

Սա ուներ ոչ թե կրոնական, այլ քաղաքական դրդապատճառներ: Հռոմում հալածանքները տարածվեցին ոչ միայն քաղաքացիների, այլև զինվորականության շրջանում, որի հետևանքով բազմաթիվ քրիստոնյա զինվորներ մտան Կոնստանտիոսի բանակ: Սրա շնորհիվ, ոչ միայն Կոնստանտիոսը ստեղծեց քանակապես մեծ բանակ, այլև որակապես նոր տեսակի ռազմական ուժ:

Քրիստոնյա զինվորների համար պատերազմը դառնում էր ոչ թե ապրուստի միջոց, այլ՝ սրբազան պայքար՝ քրիստոնեությանը թշնամի հեթանոսության դեմ: Նշանակում է ամեն մի զինվոր հավատում էր, որ զոհվելու դեպքում ինքը մարտիրոսանում է և արժանանում դրախտի:

Սա էր պատճառը, որ նրա որդի Կոնստանդինը դառնա-

լով նրա հաջորդը շարունակեց իր հոր քաղաքականությունը: Նա կարողացավ հաղթել իր հակառակորդ մյուս կայսրերին և 324 թվականին Լիցինիային հաղթելուց հետո դարձավ Հռոմի միանձնյա ղեկավար:

Չնայած սրան, Կոնստանդինը լավ էր հասկանում, որ նոր կրոնը չունի հենարան բուն Հռոմում, իսկ Փոքր Ասիայում ավելի տարածված էր քրիստոնեությունը, նաև Փոքր Ասիային մոտ էր պետականորեն քրիստոնեություն ընդունած Հայաստանը, որի հետ կնքվել էր ռազմական դաշինք:

Այս բոլորը հաշվի առնելով, Փոքր Ասիայի Բյուզանդիոն բնակավայրի տեղում հիմնեց մի նոր մայրաքաղաք՝ Կոնստանդինապոլիսը: Ունենալով հիմնականում քրիստոնյաներից կազմված բանակ, նաև հենարան՝ նոր մայրաքաղաքում, նա սկսեց բռնությամբ տարածել քրիստոնեությունը և արգելել հեթանոսությունը:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՌՈՄՈՒՄ

Քրիստոնեությունը հռոմեական պետության պատմության մեջ բացեց նոր էջ և հետագայում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Շատ ուսումնասիրողներ գտնում են, որ քրիստոնեությունը գլխավոր պատճառներից մեկն էր անտիկ շրջանի ավարտի և միջին դարերի ժամանակաշրջանի սկսվելուն:

Հռոմի գլխավոր թերություններն էին.

1. Ստրկությունը, որը քրիստոնեության ընդունումով չկրեց որևէ փոփոխություն և պահպանվեց դեռևս երկու հարյուրամյակ,
2. Մեծ չափերի հասած և ճյուղավորված կոռուպցիան: Քրիստոնեությունը ոչ միայն չպայքարեց կոռուպցիայի

դեմ, այլև ինքը դարձավ այդ կոռուպցիայի մասը: Մասսայական բնույթ սկսեց կրել քրիստոնեական եկեղեցիների և բարձր հոգևորականների կողմից խառնվելը պետական գործերին, նաև հանրային ու անձնական ունեցվածքի զավթումը կեղծ կտակների միջոցով:

Վերջինս հասավ այնպիսի չափերի, որ 370 թվականին ընդունվեց հատուկ օրենք, որով անօրինական էին ճանաչվում անհատների կողմից կազմված կտակները հօգուտ բարձր հոգևորականների:

3. Քրիստոնեությունը քարոզում էր, որ անհրաժեշտ է խղճալ, օգնել չքավորներին, սակայն, դառնալով պետական կառույցների կարևորագույն մաս, ոչինչ չարեց պայքարելու համար չքավորության դեմ և օրինակ, V-VII դարերում չքավորությունը շատ ավելի մասսայական բնույթ էր կրում, քան նախաքրիստոնեական III դարում:

4. Այժմյան ուսումնասիրողները ցույց տալու համար Հռոմի անմարդկային վայրի բնույթը, առաջին հերթին նշում են գլադիատորական մարտերը և բավականին բաց ներկայացումները, որոնք մեծ տարածում ունեին Հին Հռոմում: Տարածվել է այն կարծիքը, որ քրիստոնեության շնորհիվ վերացվեցին գլադիատորական մարտերը, իրականում դրանք գոյություն ունեցան դեռ շատ երկար:

Մեր նշած ազատ, անբարոյական ներկայացումները, արարողությունները եկեղեցու պահանջով և հսկողության շնորհիվ արգելվեցին:

5. Պետական կառավարման մեքենան կաթվածահար էր, և փոփոխությունները, որ փորձում էին իրականացնել, կայսրները արդյունք չէին տալիս: Քրիստոնեությունը, դառնալով պետական կրոն, սկսեց պաշտպանել հարուստների և ստրկատերերի շահերը:

Թվում է, թե համագործակցելով պետության հետ՝ քրիստոնեությունը պետք է փորձեր փոխել պետության կառուցվածքը և ամրապնդեր վերջինիս հիմքերը:

Իրականում, քրիստոնեությունը չկատարեց նաև պետության ամրապնդման դերը: Նույնիսկ հակառակն, որոշակի լուրջ ուսումնասիրողներ գտնում են, որ հռոմեական պետության կործանման հիմնական պատճառը քրիստոնեության ընդունումն էր: Եվ որպես գլխավոր կռվան, նշում են, որ միշտ էլ քրիստոնեական եկեղեցին փորձել է վերացնել աշխարհիկ իշխանությունը և ստեղծել քրիստոնեական կրոնապետություն:

Բյուզանդիան, ինչպես Արևմտյան Հռոմեական կայսրությունը, չոչնչացավ: Բյուզանդիան պահպանեց իր գոյությունը նաև տարածաշրջանում իր հզորությունը ևս հազար տարի: Դա բացատրվում է նրանով, որ կայսրերը, ինչպես Հին Հռոմում չէին աստվածացվում, բայց կայսրի տիտղոսը սրբազան էր և կայսրն էր համարվում առաջին հերթին եկեղեցու առաջնորդը: Պատրիարքը ենթարկվում էր կայսրին և չէր կարող խառնվել պետության գործերին:

Այս նշումներում կա որոշակի պատմական ճշմարտություն, սակայն, մեր կարծիքով, հարցն ավելի խորն է, և մինչ այժմ լավ չի ուսումնասիրված:

Հռոմեական կայսրությունը հենվում էր նյութական աշխարհի գովերգման վրա, որը հասնում էր նույնիսկ պաշտամունքի աստիճանի: Տնտեսության, մշակույթի, գաղափարախոսության հիմքը դեռ այն ժամանակ սահմանվում էր «հաց և զվարճություններ» կարգախոսով:

Մյուս կողմից էլ Հռոմի քաղաքացի լինելը ծնում էր մի շարք պարտականություններ: Բայց առաջին հերթին նա շատ պատվաբեր էր և հռոմեացիների մեծ մասը կարող էին

զնալ ինքնագոհաբերման՝ հանուն հռոմեական քաղաքացիության ու Հռոմի փառքի:

Քրիստոնեությունը քարոզում էր արհամարհել նյութական աշխարհը և աշխարհի նյութական բարիքները: Այս գաղափարն անմիջապես հակասության մեջ էր մտնում Հռոմի հիմնական նյութապաշտական աշխարհաճանաչման հետ: Սա չէր կարող բացասաբար չանդրադառնալ ինչպես տնտեսության, այնպես էլ կենտրոնի և ծայրամասերի միջև եղած նախկին կապերին:

IV դարի վերջում սկսվում է արագ տնտեսական կապերի թուլացումը երկրի տարբեր շրջանների միջև, նաև արհեստների և գյուղատնտեսության անկումը: Այս բոլորը փորձում են բացատրել նրանով, որ ձևավորվում էր ֆեոդալիզմը, որի հետևանքով, ավելի ու ավելի մեծ տարածում էին ստանում կոլոնների ու ճորտ գյուղացիների աշխատանքի վրա հենված տնտեսություններ, որոնք դառնում էին փակ, ինքնաբավ տնտեսական միավորներ:

Իրականում լրիվ հակառակն էր. ձևավորված հոգեբանությունը տնտեսության զարգացման նկատմամբ ձևավորված անտարբերությունը պատճառ դարձան տնտեսական և առևտրական կապերի թուլացման և քաղաքների անկման մեկնարկին:

Հռոմեական քաղաքացու գաղափարին քրիստոնեությունը հակադրում էր կոսմոպոլիտիզմը և եթե ոչ թշնամանքը, ապա անտարբերությունը հռոմեական պետության գոյության նկատմամբ: Սրա հետևանքով, աստիճանաբար, Հռոմի քաղաքացիները չեն մտնում բանակ և պարտավորված չեն լինում հոգալ երկրի անվտանգության մասին:

Բանակը սկսում է կազմավորվել հիմնականում Հռոմի ենթակա կամ նույնիսկ հարևան տարածքների ժողովուրդներից, որոնց համար բանակը միայն շահույթ ստանալու

միջոց էր, և նրանք հաճախ ավիրում և թալանում էին հենց հռոմեական բնակավայրերը, և ի վերջո հռոմեական բանակն էր, որ պատճառ դարձավ պետականության կորստին:

Բյուզանդիայի համար կարևոր նշանակություն ունեին վերևում նշված կետերը, սակայն, մեզ համար թվում է՝ ավելի կարևոր է Հայաստանի պատմական փորձը: Հետագայում մենք կնշենք, թե ինչ նշանակություն ունեցավ քրիստոնեությունը Հայաստանի համար: Այստեղ միայն նշենք, որ Բյուզանդիան կարողացավ ճիշտ դասեր քաղել Հայաստանի փորձից և բավականին սխալներ չկրկնեց:

Նաև մեծ նշանակություն ունեցավ այն, որ քրիստոնեությունն ավելի վաղ էր տարածվել Բյուզանդիայում, քան Արևմտյան Հռոմեական կայսրությունում, որի հետևանքով քրիստոնեությունն ավելի շատ էր փոփոխվել և հարմարեցվել տեղի հասարակական պայմաններին, որի հետևանքով Բյուզանդիայում մեր նշած բացասական երևույթները տեղի չունեցան, չքայքայվեց տնտեսությունը, պահպանվեցին քաղաքները և պահպանվեց պետությունը:

Գլուխ 3

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ովքեր են այդ սևազգեստները, որտեղից են եկել:
Իրենց համարում են հովիվ, իսկ մեզ դրել են
ոչխարի տեղ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ

1. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Ողջ հայ պատմագրությունը մինչև 19-րդ դար եղել է եկեղեցու մենաշնորհը և պատահական չէ, որ այժմ էլ բնակչության մի ստվար զանգվածը հենվելով այդ պատմագրության վրա մնում է այն կարծիքին, որ հայությունը եղել է արևելյան բարբարոս մի ժողովուրդ՝ ներծծված կռապաշտության և անբարոյականության գորշ մթնոլորտում և միայն քրիստոնեությունն է, որ հայությանը ազատել է սնոտիապաշտությունից, տգիտությունից և անբարոյականությունից:

Մեզ հասած հայոց պատմագրությունը սկսվում է հայության քրիստոնեություն ընդունելու շրջանից: Ըստ այդ պատմագրության 224 թվականին Պարսկաստանում տապալվում է Արշակունիների հարստությունը և երկրում հաստատվում է Սասանյանների իշխանությունը: Քանի որ Հայաստանում կառավարում էր պարթև Արշակունիների կրտսեր ճյուղը հայոց թագավոր Խոսրովը որոշում է վրեժ լուծել Սասանյան հարստության հիմնադիր Արտավանից, որը սպանել էր Արշակունի Արտաշիրին:

Ըստ եկեղեցական պատմագրության Խոսրովը 10 կամ 11 տարի ավերում է Պարսկաստանի տարածքները և Արտավանին ստիպում փախչելով ամրանալ արևելյան իր տարածքներում:

Արտավանը, չկարողանալով դիմադրել, դիմում է դավադրության և խոստանում Արշակունիների ճյուղ հանդիսացող Սուրենի տոհմին վերադարձնել նրանց կալվածքները, ճանաչել այդ տոհմի իրավունքը թագավորից հետո երկրորդ գահը ունենալը, եթե նրանք կարողանան սպանել Խոսրովին:

Սուրենի տոհմից մեկը՝ Անակ անունով, հանձն է առնում սպանել Խոսրովին, որի համար իր եղբոր և իր ընտանիքներով գալիս է Հայաստան: Երբ նրանք հասնում են Արտազ գավառ և վրաններ խփում Թադևոս առաքյալի թաղված նշխարների մոտ՝ ըստ Մովսես Խորենացու և Ջենոբե Գլակի, սաղմնավորվում է հետագայում Հայաստանում քրիստոնեությունը տարածող Գրիգորը:

Այս և հետագա բոլոր նշվող դրվագները հիմնավորում են, որ ի սկզբանե, ի վերուստ որոշված էր հետագա դեպքերի ընթացքը և, որ հենց Գրիգորն էր, որ պետք է իրականացներ այդ աստվածահաճո գործը՝ հանձինս Հայաստանի քրիստոնեացման:

Անակը պատշաճ ընդունելություն է գտնում Խոսրովի մոտ, որը նրանց ընդունում է որպես իր մոտիկ ազգականների: Խոսրովի վստահությունը շահելով՝ Անակը և նրա եղբայրը դավադրաբար սպանում են Խոսրովին: Այս հանցագործության համար հայ նախարարները սպանում են Անակի ընտանիքի բոլոր անդամներին և միայն Բուդաղ անունով մի մարդ կարողանում է փախցնել գրկանոց Գրիգորին և հասցնել Կապադովկիա:

Բնական է, որ Գրիգորին չէր կարող կերակրել կաթով որևէ հեթանոս, որն ըստ քրիստոնյության տեսակետի, արդեն մեղավոր էր, որովհետև քրիստոնեա չէր, որի համար էլ Աստված արդեն ապահովել էր, որ Գրիգորին կաթնամայր էր դարձել քրիստոնյա Բուդաղի կին Սոփին: Բուդաղը Տրդատին տանում և հանձնում է այդ ժամանակ Կապադովկիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսին, որը նրան դաստիարակում է՝ որպես նվիրյալ քրիստոնյա:

Երբ լրանում է Գրիգորի 12 տարին, Դավիթ անունով մի մեծահարուստ նրան ամուսնացնում է իր աղջիկ Մարիամի հետ: Քրիստոնեական ավանդազրույցները պնդում են, որ ինչպես Գրիգորը, այնպես էլ նրա կինը գարշանք էին զգում ամենից, ինչը նյութական և մարմնական էր, և երբ նրանցից ծնվում են նրանց երկու որդիները՝ Վրթանեսը և Արիստակեսը, որոնց նկատմամբ Աստված նույնպես մեծ ծրագրեր ուներ Մարիամը մտնում է կուսանոց՝ դադարեցնելով որևէ շփում իր ամուսնու հետ:

Գրիգորն էլ, ցանկանալով քավել իր հոր մեղքերը, /իսկ Մ. Խորենացին էլ ավելացնում է, որ նաև, որպեսզի նախապատրաստի Հայաստանում իր առաքելությունը/ գալիս է Խոսրովի որդի Տրդատի մոտ:

Խոսրովի սպանվելուց հետո պարսկական զորքերը Արտավանի գլխավորությամբ մտնում են Հայաստան և Տրդատին փրկելու համար նրան փախցնում և տանում են Հռոմ: Երբ Գրիգորը գալիս է Տրդատի մոտ ծառայելու, Տրդատն այդ ժամանակ գտնվում էր զինվորական ծառայության մեջ: Պատմում են, որ Տրդատը շատ քաջ և ուժեղ մարդ էր և բազմաթիվ անգամներ աչքի էր ընկել իր գործած քաջագործություններով:

Նկարագրություններից կարելի է եզրակացնել, որ նա նաև ունեցել է բռնկվող բնավորություն և հակում է ունեցել

արկածախնդրության: Տրդատը արևելքի կայսր Կարոսի հետ կռվում էր պարսիկների դեմ, և հռոմեացիները պարտվեցին: Տրդատը զրահավորված կարողանում է լողալով անցնել Եփրատ գետը՝ իր հետ տանելով անգամ թամբը:

Մեկ այլ անգամ, երբ հռոմեացիները կռվում էին գոթերի դեմ, նա Դիոկլետիանոս կայսեր փոխարեն կռվում է գոթերի թագավորի հետ և հաղթելով՝ փաստորեն, հաղթանակով ավարտում է պատերազմը:

Մովսես Խորենացին նշում է, որ Դիոկլետիանոս Օգոստոսի կառավարման երրորդ տարին, այսինքն 287 թվականին Դիոկլետիանոսը Տրդատին ճանաչում է հայոց թագավոր և հռոմեական զորքերի հետ ուղարկում Հայաստան: Տրդատը ոչ միայն ազատում է Հայաստանը, այլև Պարսկաստանի տարածքում բազմաթիվ հաղթանակներ է տանում պարսկական զորքերի դեմ:

Իր հաղթանակները տոնելիս նա զոհեր է մատուցում հայ աստվածներին և հատկապես Հայաստանի պահապան դիցուհի համարվող Անահիտին: Գրիգորը, լինելով հոգով ամուր քրիստոնյա հրաժարվում է զոհեր մատուցել և երկրպագել հայ աստվածներին: Տրդատը սկսում է ստիպել նրան որպիսզի Գրիգորը զոհեր մատուցի և բազմաթիվ օրեր ու շաբաթներ սարսափելի տանջանքների է ենթարկում նրան:

Չնայած այդ բոլորին՝ Գրիգորը հավատարիմ է մնում քրիստոնեությանը, իսկ աստված կարողանում է պահպանել նրան այնպիսի տանջանքներից, որոնց չէր կարող դիմանալ ոչ մի մարդ:

Հետաքրքիր է, որ Տրդատը այդ տանջանքների միջև ընկած ժամանակահատվածներում համոզում և նույնիսկ կարելի է ասել խնդրում էր Գրիգորից, որպեսզի նա հրաժարվի քրիստոնեությունից: Չնայած այդ բոլորին՝ Գրի-

գորն ամենավերջին բառերով քննադատում, պախարակում և հայիոյում էր ոչ միայն աստվածներին, այլև Տրդատին և նրա նախնիներին:

Վիճակը չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, երբ Տրդատն իմացավ, որ Գրիգորն իր հորը դավադրաբար սպանած Անակի որդին է: Նոր փորձությունները ոչինչ չեն տալիս և Տրդատը որոշում է Գրիգորին գցել Խոր Վիրապի բանտը, որտեղ, իհարկե, նորից անմիջական աստծո միջամտությամբ Գրիգորը մնում է ըստ Ագաթանգեղոսի մի նշման 13, մեկ այլ հատվածում 15 տարի:

Աստված, հավանաբար ցանկանալով ավելի մեծ մեղքեր բարդել Տրդատի վրա և ավելի ցայտուն դարձնել իր ամենազորությունը Հայաստան է ուղարկում Հռիփսիմե և Գայանե կույսերին, իրենց 40 ընկերների հետ, որոնք 70-ից ավելի էին: Նրանք փախչում էին Դիոկլետիանոսի ցասումից, որը ցանկացել էր ամուսնանալ Հռիփսիմեի հետ և մերժում էր ստացել: Նա նամակ է գրում իր եղբայր Տրդատին, որպեսզի Տրդատը գտնի նրանց, կոտորի բոլորին, իսկ եթե ցանկանում է, Հռիփսիմեին պահի իրեն:

Այս մարդիկ, որոնք փախել և ցանկանում էին թաքնվել աշխարհակալ Հռոմեական օգոստոսի ցասումից գալով Տարոն, քրիստոնեական մղումից դրդված՝ սկսում են պղծել աստվածների տաճարներն ու արձանները, իսկ հետո հանգիստ շարունակում են ճանապարհը դեպի մայրաքաղաք Վաղարշապատ:

Որովհետև նրանք չունեին ապրուստի միջոցներ, սկսում են պատրաստել կանացի զարդեր և դրանք ցուցադրում ու վաճառում էին շուկայում, որպեսզի ապրուստի միջոց հայթայթեն: Տրդատը ստանալով Դիոկլետիանոսի նամակը, հրամայում է փնտրել ու գտնել նրանց, չնայած, որ պատմիչը նշում է, որ քաղաքի հեթանոս, այլասերված, վավա-

շոտ տղամարդկանց մեծ մասն արդեն գիտեին նրանց գեղեցկության մասին և գալիս էին դիտելու կույսերին:

Ի վերջո Տրդատն էլ է իմանում նրանց մասին և մի քանի անգամ մարդկանց և զորք է ուղարկում, որպեսզի Հռիփսիմեին մեծ շուքով բերեն պալատ: Սկզբնական փորձերը անհաջող են անցնում, որովհետև Աստված սարսափելի պատիժներ է տեղում ոչ միայն նրանց պալատ տանել ցանկացողների, այլև քաղաքի բնակիչների գլխին: Չնայած այդ բոլորին՝ Հռիփսիմեին կարողանում են բռնել և բերել Տրդատի մոտ, որի գեղեցկությունը տեսնելով Տրդատը որոշում է ամեն գնով տիրանալ նրան:

Ինչպես նշում է Ագաթանգեղոսը, Տրդատը շատ ուժեղ տղամարդ էր, սակայն ժամեր շարունակ Հռիփսիմեն կարողանում է կռվել նրա հետ, և Տրդատը հոգնած ստիպված է լինում կանչել տալ Գայանեին, որպեսզի վերջինս համոզի Հռիփսիմեին:

Հռիփսիմեն իհարկե հրաժարվում է: Տրդատի հրամանով Հռիփսիմեն, Գայանեն և նրանց ուղեկիցները բարբարոսաբար սպանվում են:

Սա արդեն պատճառ է դառնում, որ Աստված միջամտում է և Տրդատը, իր շրջապատը, իսկ ըստ Ջենոբե Գլակի, ողջ Հայաստանի բնակչությունը դառնում են վարազներ, կորցնում իրենց բանականությունը: Այստեղ նորից միջամտում է Աստված, և ինչպես քրիստոնեություն տարածելու մյուս բազմաթիվ դեպքերում՝ կանանց միջոցով:

Տրդատի քույր Խոսրովիդուխտը երազում տեսնում է, որ Տրդատին և մնացած բնակչությանը կարող է փրկել միայն Գրիգորը: Սկզբում նրա ասածին ոչ ոք ուշադրություն չի դարձնում, որովհետև բոլորը գիտեին, որ մահվան դատապարտվածների համար ստեղծված Խոր Վիրապում ոչ ոք չի կարող մնալ անգամ մի քանի օր:

Երբ երազը կրկնվում է որոշում են ստուգել և գնում են Խոր Վիրապ որտեղ պարզվում է, որ ոչ միայն Գրիգորը կենդանի է, այլև առողջ է ինչպես մտքով, այնպես էլ մարմնով, իհարկե նաև հաստատական մնացել է իր հավատին:

Գրիգորը գալով առաջին հերթին թաղում է սրբացած կույսերին և կանգնեցնում նրանց վրա հիշաքարեր, որից հետո սկսում է իր բժշկման գործը: Վարազ դարձած թագավորին և նրա մերձավորներին հավաքում բերում են Գրիգորի մոտ և վերջինս 66 օր լսում են Գրիգորի քարոզները:

Ի վերջո հիվանդները բուժվեցին: Բնական է, տեսնելով այդ բոլոր հրաշքները Տրդատն ու իր շրջապատը դարձան պայքարող քրիստոնյաներ:

Սկսվում է Հայաստանի քրիստոնեացումը, իսկ ըստ Ղևոնդ Ալիշանի՝ վերադարձը քրիստոնեության, որովհետև ըստ նրա հայերը սկզբում ունեցել են ճիշտ կրոն, հետո շեղվել են ճիշտ հավատից, իսկ Գրիգորի ջանքերով նորից վերադարձել են ճիշտ հավատի:

Գրիգորի գլխավորությամբ Տրդատն ու հայկական բանակը սկսում են ավերել հեթանոսական տաճարները: Տաճարների շարժական ու անշարժ գույքը, նաև տաճարի սպասավորները դառնում են եկեղեցու սեփականությունը:

Հետագայում ձևավորվող հոգևորականների կարիքները բավարարելու համար մտցվում է ինչպես մովսեսականների մոտ, տասանորդ հարկը, նաև պարտավոր էին գյուղացիներն առանձին հարկ մուծել ստացած բերքից, ունեցած անասուններից:

Ցանկացած դաստակերտից և ագարակից 7 կտոր հող է առանձնացվում՝ որպես եկեղեցու սեփականություն, ինչ-

պես թագավորը, այնպես էլ առանձին նախարարներ հողեր են հատկացնում եկեղեցուն: Ըստ Ագաթանգեղոսի նաև Վաղարշապատը հայտարարվում է եկեղեցու սեփականություն:

Գրիգորը չուներ եկեղեցական աստիճան, որի համար էլ գնում է Կեսարիա և օժվում եպիսկոպոս: Ագաթանգեղոսը նշում է, որ Գրիգոր եպիսկոպոսով լուսավորվեց Հայաստանը, որը մինչ այդ չէր տեսել ճշմարտության լույսը: Հավանաբար Թադևոս և Բարդուղեմեոս առաքյալները Աստծո աչքին ավելի նվաստ էին երևում և նրանց բերած լույսը շատ թույլ էր, քան Գրիգոր եպիսկոպոսը և նրա լուսավորումը, որի համար էլ եկեղեցին տվեց նրան Լուսավորիչ անվանումը:

Գալով Հայաստան՝ Գրիգոր եպիսկոպոսը ավելի ակտիվորեն է շարունակում տաճարների ավերումը, և Ագաթանգեղոսը նշում է, որ տաճարներից դուրս եկած դևերը, մարդու տեսքով փորձում էին դիմադրել Գրիգոր եպիսկոպոսին, բայց պարտվելով, փախնում էին կամ Կովկասի լեռները, կամ հեռանում այն վայրերը, որտեղ դեռ Գրիգորը չէր հայտնվել: Ողջ Հայաստանում հիմնվում են եկեղեցիներ, և Գրիգորը հատուկ նամակներով դիմում է Փոքր Ասիայի, Ասորիքի, Պաղեստինի քրիստոնեաներին, որպեսզի գան և հաստատվեն հիմնված այդ եկեղեցիներում:

Նրանց կարիքները հոգալու համար թագավորը նոր, շեն բնակավայրեր է նվիրում հիմնված եկեղեցիներին, որոնք համարվում էին ընդհանուր եկեղեցու սեփականություն: Գրիգորն էլ իր հերթին մի շարք գավառներ, որոնցում հավանաբար հեթանոսներն ու «դևերը» խիստ ամուր հիմքեր էին դրել, դարձնում է իր սեփականությունը:

Գալով Վաղարշապատ՝ Գրիգոր եպիսկոպոսը երազ է տեսնում, որ Քրիստոսը ցանկանում է հենց Վաղարշապատի մեջ, որտեղ թաղված էին սրբացած կույսերը ունենալ իր գլխավոր տունը: Ըստ նույն աղբյուրների, մինչ այդ, այդտեղ եղել էր Սանդարամետի տաճարը, այսինքն՝ չարության բևեռին նվիրված տաճար: Այդ վայրում հիմնվում է կաթողիկե եկեղեցի, իսկ Վաղարշապատի այդ տարածքը ստանում է Էջմիածին, այսինքն՝ միածինի՝ Քրիստոսի իջած վայր:

Իրենց կյանքի վերջում, ինչպես Տրդատը, այնպես էլ Գրիգորը, հրաժարվում են աշխարհիկ կյանքից և հեռանում ճգնելու: Որպեսզի Հայաստանը և հայկական հոտը անտեր չմնա Գրիգոր եպիսկոպոսը իր որդի Արիստակեսին օժում է եպիսկոպոս և հոր մահից հետո անմիջապես ժառանգում է ինչպես գահը, այնպես էլ չարչարանքով ձեռք բերված ունեցվածքը:

2. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Ինչպես նշել էինք վերևում երրորդ դարի կեսերին քրիստոնեությունը դարձել էր մեծ ուժ: Քրիստոնեությունը տարածվել էր Հռոմում, ոչ միայն միջին դասի, այլև իշխող սենատորների, անգամ կայսրերի ընտանիքում: Օրինակ՝ հայտնի է, որ Դիոկլետիանոսի ինչպես կինը, այնպես էլ աղջիկը, քրիստոնյաներ էին:

Եկեղեցին վերջնականապես ձևավորել էր իր հիերարխիկ կառուցվածքն ու խոշոր քաղաքներում, վարչական մեծ միավորներում համայնքի ղեկավար դարձած եպիսկոպոսները մեծ ազդեցություն ունեին ինչպես իրենց ենթակա տարածքներում, այնպես էլ ողջ պետության մեջ:

Հաճախ բանակը, որի մի զգալի մասը դարձել էր քրիստոնյա, բացահայտ ըմբոստանում էր ոչ միայն իր անմիջական հրամանատարների, այլև կայսրերի դեմ, երբ նրանց հրամանները դիպչում էին իրենց կրոնական սկզբունքներին: Սա էր հիմնական պատճառը, որ Դիոկլետիանոսը սկսեց հալածանքներ քրիստոնյաների նկատմամբ:

Քրիստոնեությունը արդեն մինչ այդ թափանցել էր Հայաստան և չկա իրականում որևէ փաստարկ, որ հայկական իշխանությունները հալածեին քրիստոնյաներին իրենց հավատի համար: Միայն այն, որ Բարդաճան քրիստոնյա քարոզիչը ոչ միայն առանց դիմադրության հանդիպելու քարոզել է Հայաստանում, այլև քրմերը թույլ են տվել նրան, որ նա Արամազդի տաճարում ուսումնասիրի արխիվները, ծանոթանա հայոց պատմությանը, ինքն էլ շարադրի երկրորդ դարի իրադարձությունները, ցույց է տալիս Հայաստանի և հայ քրմերի, եթե ոչ բարեկամական, ապա հանդուրժող վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Այսպիսին էր վիճակը, երբ ինչպես նշեցինք Պարսկաստանում Սասանյանները եկան իշխանության գլուխ:

Մեր քննարկման համար որպես թվագրություն և դեպքերի շարադրանք կվերցնենք՝ այն ժամանակագրությունը, որն ընդունել է եկեղեցին և որն այժմ էլ ընդունված է հայ պաշտոնական պատմագրության կողմից:

Սասանյանները Պարսկաստանում սկսեցին ապստամբությունը 224 թվականին և վերջնական հաղթանակ տարան 226 թվականին: Խոսրովը տասը տարի ավերում էր Պարսկաստանը, այսինքն՝ Անակը Հայաստան է ուղարկվել 236 թվականին: Կնշանակի Գրիգորը ծնվել է 237 թվականին: Մոտավորապես այդ տարիքն է ունեցել Տրդատը:

Խոսրովի մահը, Գրիգորի և Տրդատի տարվելը Հռոմ եղել է 239 թվականին:

Առաջին կարևոր բացթողումը այն իրավիճակի նշումն է, որ տիրում էր Հայաստանում Խոսրովին սպանելուց հետո: Մովսես Խորենացին նշում է, որ պարսկական զորքերը երբ մտան Հայաստան, Պարսկաստանի արքա Արտավանը միայն քանդեց Վաղարշակի կառուցած Արևին և Լուսնին նվիրված տաճարները: Այդ տաճարները պետական կրոն դարձած զրադաշտության տեսակետից հակակրոնական էին:

Դրան հակառակ՝ պատմիչը նշում է, որ Արտավանը վերականգնեց կարգ ու կանոնը, բոլոր նախարարներին վերադարձրեց իրենց պաշտոններին և կարգավորեց երկրի ներքին կյանքը: Մեզ հասած փաստաթղթերից հայտնի է, որ Հայաստանը նաև չի կրել որևէ քաղաքական վնաս:

Հայաստանը շարունակում էր պահպանել իր քաղաքական հեղինակությունը և թագավոր է դառնում Արշակունի Արտավազը:

259 թվականին Վալերիանոս կայսրը արշավեց Պարսկաստանի վրա, սակայն Եդեսիայի մոտ ոչ միայն պարտություն կրեց, այլև գերի ընկավ: Հռոմեացիները՝ որպես միջնորդ հենց հայոց թագավոր Արտավազդին խնդրեցին, որպեսզի նա միջնորդի կայսրին գերությունից ազատելու համար:

Քրիստոնյա պատմիչները սրա մասին լռում են, որպեսզի Տրդատին, առավել ևս Գրիգորին ներկայացնեն նաև որպես քաղաքական փրկիչ, որոնք հայությանը փրկել են բարբարոս Պարսկաստանի սարսափելի տառապանքներից: Շատ տարօրինակ են այն թվերը, որոնք վերաբերվում են Տրդատի գործունեությանը, Տրդատի տարիքին:

Մովսես Խորենացին, որը մշտապես աչքի է ընկել իր ճշգրիտ թվագրությամբ և շեշտել է, որ առանց թվագրության չկա պատմություն, նշում է, որ Տրդատը հայոց թագավորությունը վերականգնեց Դիոկլետիանոսի կառավարման երրորդ տարին: Նրա կառավարումը սկսվել է 284 թվականին, և Տրդատը կնշանակի թագավոր է դարձել արդեն 287 թվականին:

Այս թիվը ընդունվում է նաև պաշտոնական պատմագրության մեջ: Սակայն նույն Մ. Խորենացին գրում է, որ Կարոս կայսրը, երբ արշավեց Պարսկաստանի վրա Տրդատը գտնվում էր նրա բանակում, իսկ այդ արշավանքը տեղի է ունեցել 282 թվականին և Տրդատը չէր կարող այդքան արագ արևելյան՝ պարսկական ռազմաճակատից տեղափոխվել արևմտյան ռազմաճակատ, մանավադ, որ գոթերի հետ ռազմական բախումները եղել են շատ ավելի ուշ:

Նաև պետք է հաշվի առնել, որ Հռոմի համար եկել են ծանր ժամանակներ և Հռոմը պարզապես չէր կարող զորքեր տրամադրել 287թ-ին Տրդատին Հայոց գահին նստեցնելու համար: Դրան հակառակ՝ մենք տեսնում ենք, որ Դիոկլետիանոսի գործունեությունը արևելքում՝ Պարսկաստանի դեմ և Հռոմեա-Պարսկական բախումները եղել են 298 թվականին, որն ավարտվեց Հռոմի հաղթանակով, և կնքվեց Մծբինի 40ամյա հաշտության պայմանագիրը:

Հայ միջնադարյան պատմիչների մոտ այս պայմանագրի մասին կան բազմաթիվ նշումներ և այն համարվում է բարօրություն Հայաստանի ու հայության համար, որովհետև արևելքում 39 տարի տիրեց խաղաղություն:

Սակայն չի նշվում, որ նույն Դիոկլետիանոսը Հայաստանից խլեց Ծոփքը, Անգղ Տունը, Աղծնիքը, Կորդուքը և այլ տարածքներ, որոնք նշվում են պայմանագրի մեջ: Կնշա-

նակի բանակցությունների ժամանակ Հայաստանը հանդես է եկել որպես անկախ կողմ և որպես Պարսկաստանի դաշնակից՝ կրել է նյութական, տարածքային կորուստներ:

Տրամաբանությունը հուշում է, որ ծանր վիճակում գտնվող Պարսկաստանը ստիպված է եղել նաև Խոսրովի որդի Տրդատին, կամ նրան, ում ներկայացրել են որպես Տրդատ, ճանաչել հայոց թագավոր:

Միայն դրանից հետո էր, որ Տրդատը և Գրիգոր եպիսկոպոսը կարող էին քաղաքական ու կրոնական գործունեություն վարել Հայաստանում: Պարսկաստանը դրանից հետո բավականին թույլ էր, և Հռոմը փաստացի ամողջությամբ վերահսկում էր Առաջավոր Ասիան, որի հետ նաև Հայաստանը:

Հավանաբար, Տրդատը շատ ուրախ էր, որ կարողացել է վերականգնել իր թագավորությունը, սակայն նաև նա որոշակի հիասթափություն էր ապրում, որովհետև, ինչպես նշեցինք, Մծբինի պայմանագրով Հայաստանից խլվել էին զգալի տարածքներ:

Չնայած դրան՝ նա ոչինչ անել չէր կարող, մանավանդ, որ Հայաստանում շարունակում էին մնալ հռոմեական զորքերը: Այս պարագայում բացարձակ անտրամաբանական է, որ Տրդատը կարողանար սկսել կրոնական հիմնարար փոփոխություններ և քրիստոնեությունը դարձնել պետական կրոն, երբ 303 և 305թթ.-ին ողջ Հռոմի տարածքներում սկսվել էին հալածանքներ քրիստոնեության դեմ:

Հատկապես հալածանքները մեծ չափերի էին հասել Մաքսիմինոս կայսրի օրոք, որին հանձնված էր Աֆրիկայի, Պաղեստինի, Ասորիքի կառավարումը: Նշում են, որ ինքը անձամբ էր հետևում, թե ինչպես է իրականացվում հալածանքները քրիստոնյաների դեմ:

Մենք տեսանք, որ Հայաստանը բավականին հանդուրժող էր քրիստոնյաների նկատմամբ, և այդ շրջանում, իրականում, մեծ քանակությամբ քրիստոնյաներ փոխադրվեցին Հայաստան: Նաև մեզ հայտնի է, որ Արևմուտքում կայսր նշանակված Կոստանտինոսը չէր հալածում քրիստոնյաներին, որի հետևանքով բազմաթիվ քրիստոնյազինվորներ հավաքվեցին նրա շուրջը: Նրա որդի Կոնստանդինը, երբ հաջորդեց հորը, արդեն իր բանակի մեծ մասը քրիստոնեություն էր դավանում:

Բացառված չէ, որ նույն սկզբունքով Հայաստան գալիս նաև Մաքսիմինոսի բանակի քրիստոնյա զինվորները: Չկան ուղղակի փաստեր, բայց հնարավոր է, որ անկազմակերպ այս շարժումը ժամանակի ընթացքում սկսվեր կազմակերպվել Կոնստանտինոսի կողմից, որը իր տիտղոսներում կրել է նաև «Հայաստանի գերագույն մեծություն» տիտղոսը:

Երրորդ դարի երկրորդ կեսից ձևավորված, հիերարխիկ, կուռ կառավարում ունեցող քրիստոնյական եկեղեցին սկսեց կազմակերպված ստեղծել իրեն ենթակա տարածքներ:

5-րդ դարի պատմիչ Սողոմենը նշում է, որ մեր նշած շրջանում քրիստոնեության տարածման գործում մեծ տեղ ունեին հայերը, հատկապես Եդեսիայի բնակիչները: Նա նշում է, որ Պարսկաստանում քրիստոնեությունը տարածեցին հենց հայերը ու եդեսիացիները: Երբ Սասանյանները հաստատվեցին Պարսկաստանում, արդեն Պարսկաստանում գործում էր խոշոր քրիստոնեական համայնք իր եպիսկոպոսով:

Եվսեդիոս Կեսարացին գրում է, որ Հայաստանում նույնպես գոյություն ունեին քրիստոնեական համայնքներ, որոնք հատկապես շատ և կազմակերպված էին Հայաստանի հարավային շրջաններում: Նա նշում է Մերուժան եպիս-

կոպոսի մասին, որը ակտիվորեն գործել է ոչ միայն Հայաստանում, այլև Կապադովկիայում՝ մասնակցելով եկեղեցական ընդհանուր ժողովներին:

Մեր նշած շրջանում որոշ մտածողներ փորձում են դուրս գալ կրանական ճգնաժամից և ստեղծել մի ընդհանուր կրոնական ուսմունք /հատկապես նշանավոր էր Մանիի փորձը/: Նա Առաջավոր Ասիայում գոյություն ունեցող կրոնների հիման վրա փորձեց ստեղծել իր ուսմունքը, որը ստացավ մանիքեականություն անունը: Չնայած 276թ-ին նրան սպանեցին, սակայն այս ուսմունքը հետագայում էլ մեծ տարածում ուներ: Այս ուսմունքի դեմ նույն ժամանակ քննադատական աշխատություն է գրել Տարոնի եպիսկոպոս Արքեղայոսը, որը նույնպես ազգությամբ եղել է հայ:

Սասանյան Պարսկաստանը այդ շրջանում ակտիվորեն չէր պայքարում քրիստոնեության դեմ, այլ աշխատում էր թույլ չտալ քրիստոնեության տարածումը բուն Պարսկաստանում:

Այդ շրջանի գոյություն ունեցող փաստաթղթերը ցույց են տալիս, որ Հայաստանը դառնում է տարածաշրջանում կարևորագույն տարածք:

Կեսարիայում կենտրոնացված քրիստոնյաները, որոնց ազդեցությունը տարածվում էր նաև Փոքր Հայքի, Ծոփքի և Արևմտյան Հայաստանի քրիստոնյաների վրա, որոշում են Հայաստանը դարձնել քրիստոնեական երկիր և հենակետ ողջ տարածաշրջանի քրիստոնեացման համար:

Ո՞վ էր Գրիգորը: Այժմ պարզել հնարավոր չէ: Կա մի քանի տեսակետ: Առաջին տեսակետը ներկայացրել է Մառը, ըստ որի Գրիգորը պետք է, որ լիներ հարավային Հայաստանի նշանավոր տոհմերից մեկի զավակը, որով էլ բացատրվում է Մամիկոնյաների և Արծրունիների ակտիվ աջակցությունը նրա գործունեությանը:

Հաջորդ տեսակետի համաձայն նա պետք է լիներ Փոքր Հայքի հայերից, որոնք, վաղուց կտրվելով բուն Հայաստանից, գտնվում էին հելլենիզմի ազդեցության տակ:

Երրորդ տեսակետը այն է, որ նա եղել է կամ հույն կամ մովսեսական և երիտասարդ հասակից արդեն նրան նախապատրաստել են Հայաստանում գործելու համար:

Երրորդ տեսակետի կողմնակիցները գտնում են, որ Մ. Խորենացու այն պնդումը, որ Գրիգորը եկավ Տրդատի մոտ ոչ միայն իր հոր մեղքը քավելու, այլև ծրագրավորված իր գործը Հայաստանում կատարելու նպատակով, այս տեսակետն է հաստատում:

Ընտագա դեպքերը ցույց են տալիս, որ Հռոմի ներքին պայքարում մեծ տեղ էր տրված նաև Հայաստանին և Հայաստանի քրիստոնեացմանը: Եվսեդիոս Կեսարացին նշում է, որ Մաքսիմինոս կայսրը ջախջախիչ պարտություն է կրել հայոց թագավոր Տրդատից:

Դիոկլետիանոսը և Մաքսիմիանոսը «Օգոստոս» տիտղոսից և երկրի կառավարումից հրաժարվեցին, որի հետևանքով սկսվեց պայքար տեղական կայսրերի միջև:

Արևմուտքում պայքարն ընթանում էր Կոնստանդինի և Մաքսենտիոսի միջև, իսկ արևելքում Լիցինիոսի և Մաքսիմինոսի միջև:

Տրդատը Հռոմում զինվորական լինելու ժամանակ ծանայել էր Լիցինիոսի ենթակայության տակ և, ինչպես նշում են աղբյուրները, նրա հետ ուներ շատ լավ հարաբերություններ: Արդեն մենք տեսանք, որ Հայաստանում գտնվող հռոմեական զորքերի մեջ բավականին մեծ թիվ էին կազմում քրիստոնյաները, որոնք խիստ բացասական էին տրամադրված քրիստոնեությանը հալածող Մաքսիմինոսի նկատմամբ:

Շատ բնական է, որ Լիցինիոսը իր հակառակորդին թուլացնելու համար հովանավորեր և հզորացներ նրա թիկունքում գտնվող հռոմեական քրիստոնեական զորքերին: Լիցինոսը իր դաշնակից Կոստանդինի հետ քաղաքական նպատակով ընդունեց 313 Միլանի որոշումը, որով դադարում էին քրիստոնեության դեմ հալածանքները:

Բնական է, որ քրիստոնյա հոգևորականությունը, որը արդեն մեծ աշխատանք էր տարել Հայաստանում չէր կարող անուշադրության մատնել այնպիսի մի փաստ, ինչպիսին էր քրիստոնեական բանակի գոյությունը Հայաստանում:

Ինչպես է իրականացվել քրիստոնեական հեղաշրջումը Հայաստանում, մանրամասն պարզել այժմ անհնարին է: Այն, որ քրիստոնեաները մեծ տեղ են տալիս Տրդատի քրոջը՝ Խոսրովիդուխտին և կնոջը՝ Աշխենին, ցույց է տալիս, որ քրիստոնյաները օգտվել են իրենց՝ մինչ այդ և հետագայում էլ մշտապես իրեն արդարացնող միջոցից, երբ ավելի շատ զգացումային և տպավորվող կանանց զցում էին իրենց ազդեցության տակ և, դարձնելով քրիստոնյա, նրանց միջոցով ազդում թագավորների և բարձր պաշտոնավորների վրա:

Մինչ այդ, այս միջոցը նրանք օգտագործեցին Դիոկլետիանոսի դեմ՝ նրա կնոջն ու աղջկան դարձնելով քրիստոնյա, բայց չհասան իրենց նպատակին. Նույն ծրագիրն էլ օգտագործում են Հայաստանում: Մեր նշած պատմաբան Սողոմենը նշում է. «Ասում են, թե Տրդատը այս ազգի գլուխը մի արտակարգ հրաշքի պատճառով, որ տեղի ունեցավ նրա տան մեջ, քրիստոնյա դարձավ»:

Այս մեջբերումը ցույց է տալիս, որ Հայաստանի քրիստոնյաների վարազ դառնալու պատմությունը բացարձակ որևէ հիմք չունի, բայց նորից բուժման կամ մոգության միջոցով, որը տարածված էր այդ ժամանակ քրիստոնյաների

մեջ, նրանք կարողացել են բավականին լուրջ աղդեցություն ձեռք բերել Տրդատի և նրա շրջապատի նկատմամբ:

Չնայած սրան, անգամ հայ քրիստոնյա պատմիչների գրածները ուսումնասիրելիս պարզ երևում է, որ քրիստոնեության հիմնական տարածման մեջ գլխավոր դերը տրված է բանակին և այն, որ հեղաշրջումից անմիջապես հետո Տրդատը, որպես քաղաքական գործող անձ, փաստորեն դադարում է գործել այդ զինվորական ուժը եղել է հռոմեական բանակը:

Ինչպես նշեցինք վերևում, եթե Ագաթանգեղոսը նկարագրում է, որ բանակը ստիպված էր կռվել դևերի և քրմերի դեմ, ապա Ձենորբե Գլակը, ավելի ազնիվ գտնվելով, նշում է, որ քրիստոնեական զորքերի և նրանց հիմնականում միացած հարավային նախարարների՝ /Արծրունիներ Աղծնիք, Մոկք/ դեմ կռվում են իրենց հավատը պաշտպանող քրմերը, հայ նախարարները և հասարակ բնկաչությունը:

Ձենորբե Գլակը, հաճույք ստանալով, նկարագրում է, թե ինչ դաժանությամբ է հռոմեական զորքը ոչնչացնում իրենց դեմ կռվող հայերին: Տրդատի՝ իշխանությունից զրկված լինելը շատ լավ երևում է նաև ունեցվածքի վերաբաժանումից: Իրեն հենարան ունենալով հռոմեական բանակը՝ Գրիգորը զավթում է Հայաստանի մի խոշոր մասը:

Ըստ Փ. Բուզանդի՝ բացի բոլոր համայնքներից, ագարակներից ու դաստակերտներից խլված հողաբաժինների, նրան է անցնում ամբողջությամբ 15 գավառ: Դրանից հետո էր, որ նույն հռոմեական զորքերը, քրիստոնյա դարձած հայերի հետ հաղթանակ տարան Մաքսիմիանոսի դեմ և ստեղծեցին պայմաններ, որ Կոնստանտինը սկզբում դաշնակցի Լիցինոսի հետ, ջախջախի Մաքսենտիոսին, իսկ հետո նաև Լիցինոսին և հաստատի իր միանձնյա իշխանությունը ողջ կայսրությունում:

Նա, հաշվի առնելով Հայաստանի դերը, Հայաստանի հետ դաշինք կնքելիս Հայաստանին վերադարձրեց այն տարածքները, որոնք Դիոկետիանոսը 298 թ-ին խլել էր Հայաստանից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՊԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ

Կոնստանտոփինը չնայած Հայաստանին էր վերադարձնում պատմական հայկական հողերը, սակայն դա չէր նշանակում, որ Հռոմը պատրաստ է որպես հավասար ճանաչել Հայաստանը: Ավելին, ստեղծված նոր իրավիճակը Հայաստանին դնում էր ոչ միայն ենթակա երկրի, այլ Հռոմի ծայրամասային գավառի կարգավիճակում:

Գրիգորը, ինչպես նշեցինք, երբ քրիստոնեացնում էր Հայաստանը, չուներ որևէ կրոնական պաշտոն և հանդես էր գալիս որպես հասարակ քարոզիչ: Իր վրա դրված խնդիրը լուծելուց հետո միայն նա հնարավորություն ստացավ իր արժանի տեղը գրավել եկեղեցու հիերարխիայում: Բնական է, որ լինելով Կեսարիայի գործակալը, նա չէր կարող հույս ունենալ, որ կարող է Կեսարիայի եպիսկոպոսից ավելի բարձր, անգամ նրան հավասար տեղ ստանալ գոյություն ունեցող հիերարխիայում:

Իրականում, նա գնում է Կեսարիա և այնտեղ օձվում եպիսկոպոս, որով ճանաչում է իր կախվածությունը Կեսարիայի եկեղեցուց: Այս վիճակը շարունակվեց մինչև Պապ թագավորի կառավարումը, երբ կաթողիկոս դարձավ Աղբիանոսների տոհմի ներկայացուցիչը, որը ինչպես կոտենենք, ուներ ազգային պատկերացում եկեղեցական գործունեության նկատմամբ:

Հայկական եկեղեցու ենթակայությունը Հոռմի նահանգներից մեկին չէր նշանակում միայն կրոնական կախում, այլ ուներ ընդգծված քաղաքական նշանակություն:

Հայ պատմագրությունը մշտապես եղել է եկեղեցու խիստ հսկողության տակ և մշտապես ենթարկվել է վերաքննության: Քրիստոնեական եկեղեցին կազմակերպված ոչնչացրեց ոչ միայն հին հայկական կրոնը, մշակույթը, այլ նաև այն գործերը, որոնք թողել են իրենցից առաջ գործած քրիստոնյաները: Օրինակ՝ մեզ հայտնի հեթանոս պատմիչների հետ ոչնչացվեց նաև քրիստոնյա նշանավոր գիտնական, պատմագիր Բարդաձանի գրած պատմությունը, որը վերաբերվում էր Հայաստանին:

Հետագայում ոչնչացվեցին նաև 5-րդ դարի պատմիչների մի շարք աշխատություններ, որոնք արդեն չէին համապատասխանում ավելի ապագայնացված քրիստոնեական եկեղեցուն: Օրինակ՝ Մ. Խորենացու, Փ. Բուզանդի «Հայոց պատմության» պակասող գլուխները:

Չնայած սրան, մենք տեսնում ենք, որ հայ քրիստոնյա պատմիչները միաձայն նշում են, որ Գրիգոր եպիսկոպոսը եղել է հայ թագավորին դավադրաբար սպանած Անակի որդին: Այս փաստը, ինչպես տեսանք, ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլև խիստ սևացնում և ստվեր է գցում Գրիգորի հեղինակության վրա:

Սա չէին կարող չհասկանալ այս պատմիչները: Կնշանակի նրանք ունեին ինչ-որ կարևոր նպատակ ու ծրագիր այս կեղծիքը պատմության մեջ մտցնելու համար: Քչերին է հայտնի, որ նույն տեղում խոսվում է նաև Գրիգորի եղբոր Սուրենի և մյուս մերձավոր ազգականների տարբեր երկրներում թագավոր դառնալու մասին: Օրինակ, նշվում է, որ Գրիգորի եվբայր Սուրենը երկար ժամանակ թագավոր է եղել հեռավոր Չինաստանում:

Չունենալով ոչ մի պատմական կամ ավանդույթային հիմք՝ Արշակունիներին Մ. Խորենացին ծագեցնում է մովսեսական առասպելական նախահայր Աբրահամից: Այս բոլորը մեզ հիմքեր է տալիս կարծելու, որ քրիստոնեաները այս կեղծիքների միջոցով ցանկանում էին հիմնավորել իրենց կառավարելու իրավունքը գոնե արևելքում:

Պարսկական Արշակունիների վերացումից հետո, դրանից ծագած Սուրենի տոհմը ավելի մեծ իրավական հիմք էր ունենում իշխելու և արքայից արքա կոչվելու քան հայ, քուշան, մար կամ մասքուֆ Արշակունիները: Գրիգորին ծագեցնելով Սուրենի տոհմից քրիստոնյաները փաստորեն ուզում էին նաև աշխարհիկ իշխանությունը խլել Արշակունիների ձեռքից:

Սա է պատճառը, որ մինչև վերջ Գրիգորի տոհմի անդամները բացահայտ կամ գաղտնի պայքար էին մղում թագավորական իշխանության դեմ՝ չխորշելով ոչ մի միջոցներից: Նույն պատճառով էլ նրանք մշտապես խառնվում էին Արշակունի թագավորների գործերի մեջ՝ իրենց համարելով իրական երկրի տերերը, իսկ թագավորներին պարզապես իրենց ստորադասներ:

Քրիստոնյաների ծրագրերը չիրականացան, որովհետև մի կողմից Սասանյանները դաժան միջոցներով արմատախիլ արեցին քրիստոնեությունը, երբ Հռոմում, հետո Բյուզանդիայում քրիստոնեությունը դարձավ պետական կրոն: Հռոմը լավ դաս քաղեց Հայաստանի բացասական փորձից:

Կոնստանդինը այդպես էլ չընդունեց քրիստոնեությունը: Ըստ ավանդության մահից առաջ է միայն կնքվել որպես քրիստոնյա, որով չկար նրա վրա քրիստոնեա հոգևորականների քաղաքական ճնշումը: Նա, չնայած վերադարձրեց

նախկինում քրիստոնյաներից խլած շարժական ու անշարժ գույքը, սակայն նոր հարստություն չհատկացվեց նրանց:

Ավելին, 370թ-ի հատուկ որոշումով արգելվեց անհատներին իրենց սեփականությունը կտակել հոգևորականների, որով նաև թույլ չտրվեց եկեղեցու խիստ տնտեսական հզորացմանը: Կոնստանդինից սկսած սկզբում Հռոմի, հետո Բյուզանդիայի կայսրերը դարձան փաստացի եկեղեցու առաջնորդներ, որոնց ենթարկվում էին Կ. Պոլիսի պատրիարխները:

Կոնստանդինը, չլինելով քրիստոնյա, նաև լավ չընկալելով կրոնի նրբությունները, միևնույն է իրեն իրավունք էր վերապահում կրանական հարցեր որոշելու: 325թ-ին նա գլխավորեց տիեզերական ժողովը, որտեղ քննարկվում էր արիոսականության հարցը:

Այսպիսով պլանավորվում էր Հայաստանը քրիստոնեության միջոցով Հռոմին ենթակա շրջան դարձնել, որը պետք է անմիջապես ենթարկեր Հռոմի կայսրին և պատրիարխին:

Եկեղեցին ամբողջությամբ իր ձեռքում էր կենտրոնացնում երկրի կառավարման գործը: Մինչ այդ Հայաստանի ներքին և արտաքին կարևորագույն հարցերը քննարկվում էին աշխարհաժողովներում, որին մասնակցում էին ոչ միայն նախարարները, այլև ներկայացուցիչներ՝ քաղաքային ու գյուղական բնակչությունից:

Աշտիշատի ժողովի որոշումով աշխարհաժողովները վերանում են և դրան փոխարինում է միայն բարձր հոգևորականներից գումարվող եկեղեցական ժողովները: Դատական գործը հանձնվում է եկեղեցուն:

Փորձ է արվում նաև ամբողջությամբ եկեղեցու ձեռքում կենտրոնացնել տեղական կառավարման մարմինները: Ըստ նահանգների և գավառների ստեղծվում են եպիսկոպոսու-

թյունների ցանց, որոնք պետք է նախարարներից խլելին տարածքների կառավարումը:

Հայաստանում տեղական, նախարարական իշխանությունը գալիս էր հնուց և համապատասխանում էր հին հայկական համակարգին, որի հետևանքով շատ ամուր էր: Մի կողմից նախարարները կարողանում են իրենց ենթակայության տակ դնել եպիսկոպոսական պաշտոնը՝ այնտեղ նստեցնելով իրենց տոհմի ներկայացուցիչներին, մյուս կողմից էլ շատերը սկսում են բացահայտ թշնամանալ անգամ զինված պայքար մղել հոգևորականության դեմ, որի ցայտուն ներկայացուցիչն էր 4-րդ դարում Մերուժան Արծրունին, իսկ 5-րդ դարում Վասակ Սյունին:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի քրիստոնեացումից հետո չէր նշանակում, որ պայքարը ավարտվել էր: Այժմ հոգևոր իշխանության համար, երկրի շահագործումը, թալանը իրականացնելու համար սկսվում է պայքար քրիստոնեական երկու ուղղությունների միջև:

Մենք վերևում տեսանք, որ քրիստոնեությունը առաջինը Հայաստան մտել էր Ասորիքից, և այս քրիստոնեական ուղղությունը փորձում էր իր ձեռքում պահել արդեն ձեռք բերված իշխանությունը և ավելի ամրապնդել այն: Դրան հակառակ՝ նոր Հայաստան մտած ավելի հելլենիստ քրիստոնեաները, որոնք հիմնականում հույներ և նախկին մովսեսականներ էին, ցանկանում էին ամբողջ իշխանությունը կենտրոնացնել իրենց ձեռքում:

Վերջիններս ավելի կրթված էին և այդ տեսակետից ավելի նախապատրաստած ու կազմակերպված: Դրա հետաքրքիր օրինակ կարող է ծառայել Աթենքում մեծ հեղինա-

կություն ձեռք բերած ազգությամբ հայ Պրոտեստիոսը և նրա գործունեությունը:

Այս մարդը ծնվել էր Փոքր Հայքում, սկզբնական կրթությունը ստացել էր Անտիոքում, հետո տեղափոխվել Աթենք և ուսումն ավարտելուց հետո դասավանդում էր այնտեղ: Լինելով քրիստոնեա ծնողների զավակ՝ նա մշտապես ստացել է քրիստոնյաների աջակցությունը, իսկ հետո էլ՝ վարելով ասկետիստական կյանք, ինքն է նյութական մեծ աջակցություն ցույց տվել քրիստոնյաներին:

Նա երբեք չէղավ Հայաստանում, սակայն նրա համբավի շնորհիվ բազմաթիվ հայ երիտասարդներ հավաքվեցին նրա շուրջը և ամեն հարցում աջակցություն էին ցույց տալիս նրան, որի համար էլ այդ երիտասարդները ստացան «մարտնչողներ» մականունը:

Այս կրթված երիտասարդներն էին, որ գաղափարական ներգործություն էին ունենում մեր նշված քրիստոնեական ուղղությունների միջև պայքարում: Ցավոք սրտի, իրենց ուսուցչի նման նրանք նույնպես հեռու էին ազգային մտածելակերպից և ազգային շահերից:

Հակառակ սրանց՝ ասորական ուղղությունը շատ ուժեղ էր, և Գրիգորն ու նրա հաջորդները ստիպված էին մեծ զիջումների գնալ, օրինակ, հայտնի է, որ Տարոնի հարուստ շրջանը հանձնվեց այս ուղղությանը և այդ ուղղության ներկայացուցիչներից էր Զենոբե Գլակը, որը դարձավ Տարոնի առաջին եպիսկոպոսը:

Շուտով այս երկու ուղղությունների կողքին առաջանում է երրորդ ուղղությունը, որը, հիմնականում սերված լինելով հին հայկական քրմական դասի երեխաներից, չէին մոռացել իրենց ազգային արմատները և ամեն ջանք գործադրում էին, որ քրիստոնեությունը Հայաստանում ստանա ազգային դիմագիծ:

Այս ուղղության հիմնադիր և ակտիվ գործիչ դարձավ Աղբիանոսների տոհմը, որը տվեց մի շարք կաթողիկոսներ: Սրանց շնորհիվ էր, որ քրիստոնեությունը որոշակի ազգային դիմագիծ ստացավ:

Հայկական եկեղեցին ընդունեց մի շարք հին հայկական դոգմատներ, եկեղեցին ընդունեց նաև հեթանոսական որոշակի արարողություններ, իսկ քրիստոնեական հիմնական տոները միացվեցին ինչպես նշվող օրերով, այնպես էլ գաղափարապես հին հայկական կրոնական տոներին:

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեության բռնի տարածումը դեռևս չէր նշանակում, որ հայությունը վերջնականապես ենթարկվում էր իրեն օտար այդ գաղափարախոսությանը: Քրիստոնեությունը ինքն էլ, ինչպես երևում է գոյություն ունեցող աղբյուրներից, երկրորդական էր համարում հայությանը ամբողջությամբ քրիստոնյա դարձնելու խնդիրը:

Առաջնայինը համարվում էր հայ վերնախավին՝ նախարարներին և քրմությանը դարձնել քրիստոնյա, գոնե ենթակա տարր, որից հետո, թվում էր, հեշտությամբ կարելի է օգտագործել հայությանը որպես առաջնային հարվածող ուժ մյուս երկրներում իրենց իշխանությունը տարածելու համար:

Այս էր պատճառը, որ առաջին քրիստոնեաները ազգային մշակույթը, ազգային ապրելակերպն ու օրենքները ոչնչացնելու հետ միասին սկսեցին փորձել քրիստոնեությունը տարածել նաև Հայաստանից կախման մեջ գտնվող հարևան երկրներում: Պարսկաստանը սկզբնական շրջանում անտարբեր էր երկրից դուրս քրիստոնեական համայնքներ ձևավորելու հարցում:

Սակայն, երբ Հռոմը պետականորեն ընդունեց քրիստոնեությունը Պարսկաստանը սկսեց հասկանալ, որ իր գլխավոր հակառակորդ Հռոմը քրիստոնեությունը օգտագործում է իր երկիրը թուլացնելու համար և սկսեց արմատական պայքար մղել ու ոչնչացնել քրիստոնեությունն իր տարածքում: Սա նշանակում էր, որ նույն եղանակով ինչպես իրականացվեց Հայաստանում հնարավոր չէ գործել Պարսկաստանում, որի համար էլ քրիստոնեության տարածման գլխավոր ուղղություններ դարձան Վրաստանը, Աղվանքը և Հյուսիսային Կովկասը:

Զենոբե Գլակը նշում է, որ Տարոնում քրիստոնեություն տարածելուց առաջ, որը կոչում է կրոնական երկրորդ պատերազմ, եղել է կրոնական առաջին պատերազմը հյուսիսային ժողովուրդների հետ: Ըստ հայ պատմիչների այս պատերազմում հայերը, պետք է հասկանալ քրիստոյա զորքերը, հաղթանակ են տարել:

Իրականում էլ մոտ 335 թվականին Վրաստանն ու Աղվանքը դարձել էին քրիստոնյա: Հայաստանում հիմնավորված Գրիգոր եպիսկոպոսը և նրա կողմնակիցները հասկացան, որ անհրաժեշտ է ամրապնդել իրենց դիրքերը Հայաստանում: Հայությունը և հատկապես հայ նախարարները, հասկանալով կատարվածը, սկսեցին բացահայտ և հատկապես թաքնված պայքար մղել քրիստոնեության դեմ:

Սպանվեց հայոց թագավոր Տրդատը, հավանաբար նաև Գրիգորը, որից հետո նրան փոխարինեց կաթողիկոս Արիստակեսը, որին սպանեց Ծոփքի նախարարը: Արիստակեսի մահից հետո, նրա եղբայր Վրթանեսը, որը այդ ժամանակ բավականին ծեր էր, միևնույն է, բազմեց կաթողիկոսական գահին:

Հայ նախարարները փորձեցին Աշտիշատում սպանել նաև նրան, սակայն անհաջող: Վրթանեսը կարողացավ

ամբողջությամբ իր ազդեցության տակ գցել Տրդատին փոխարինող Խոսրովին: Նա իր անչափահաս 12 տարեկան որդուն ամուսնացրեց արքայազն Տիրանի աղջկա հետ, իսկ 15 տարեկան Գրիգորիսին, խախտելով բոլոր եկեղեցական օրենքները, օծեց եպիսկոպոս և ուղարկեց Աղվանք: Այս երիտասարդը, ունենելով իր հոր և հռոմեական զորքերի աջակցությունը, փորձեց քիրստոնեություն տարածել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների շրջանում:

Նորագույն շրջանի պատմությունից մեզ լավ հայտնի է, թե ինչ է նշանակում պերմանենտ հեղափոխություն հասկացողությունը: Այս տեսությունը մշակել է համաշխարհային սիոնիզմի և բոլշևիզմի ներկայացուցիչ Լև Տրոցկին: Ըստ այս տեսության մի երկրում հեղափոխություն իրականացնելուց հետո անհրաժեշտ է միավորել այդ երկրի ողջ ներուժը և փորձել հեղափոխությունը տեղափոխել հարևան երկիր: Եթե փորձը չի հաջողվում, անհրաժեշտ է նահանջել, նոր ուժեր համախմբել և նորից անցնել հարձակման:

Այս տեսության վերջնական մշակումից հարյուրամյակներ առաջ քիրստոնեությունն արդեն իրականացնում էր այս ուղղության հնարքը: Գրիգորիսը անհաջողության մատնվեց, որովհետև մասքութների թագավոր Արշակունի Սանեսանը ձերբակալեց նրան և մահապատժի ենթարկեց:

Հավանաբար նա այս հանդուգն քայլն իրականացրեց, որովհետև Հայաստանում էլ բավականին խառն էր վիճակ: Փայտակարանում հայոց իշխան Սանատրուկը, դեմ գնալով քիրստոնեությանը, ապստամբել էր և իրեն հռչակել անկախ:

Օգտվելով սրանից՝ Սանեսանը միացնում է Հյուսիսային Կովկասի ցեղերին և արշավելով Հայաստան՝ հասնում մինչև Արարատյան դաշտ: Հետագայում մենք կանդրադառնանք Մամիկոնյան տոհմին և նրանց հարաբերություններին կաթողիկոսների տոհմի հետ, սակայն այստեղ անհրաժեշտ է

նշել, որ միայն Վաչե Մամիկոնյանի՝ հայոց սպարապետի Հայաստան վերադառնալուց հետո էր, որ հնարավոր եղավ կանգնեցնել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների այդ ավերիչ արշավանքը: Կովում սպանվեց նաև մասքութների թագավոր Սանեսանը:

Պատմիչները նշում են, որ սպանվածները այնքան շատ էին, որ Խոսրովը հատուկ հրաման է հանում բերել շինականներին և ընդհանուր գերեզմանոցում թաղել բոլորին, որովհետև դիակներն արդեն սկսել էին նեխել:

Խոսրովը գտնելով Սանեսանի գլուխը, սկսում է արտասվել: Հայ պատմաբանները այստեղ տեսել են միայն այն, որ Խոսրովը բավականին թուլակամ, զգացումներին տրվող անձնավորություն էր:

Իրականում ողբերգությունն ավելի խորն էր: Խոսրովը, փաստորեն, լինելով պատանդ քրիստոնեության և Հռոմի ձեռքին, հասկանում էր, որ դարձել է գործիք և ստիպված է պայքարել իր ազգի, իր տոհմի և փաստորեն ինքն իր դեմ: Այդ բոլորը շատ շուտով բացահայտ երևաց:

Սկսվեցին ապստամբություններ, ինչպիսիք էին Աղձնիքի բդեշխ Բակուրի ապստամբությունը, որը բացահայտ անցավ պարսիկների կողմը և նրանցից օգնություն խնդրեց: Թշնամու կողմն անցավ նաև Դադաբեն Բզնունին և պատմագրերը բացահայտ նշում են, որ թշնամու կողմն անցնելու պատճառը նրանց հեթանոսությանը վերադառնալն էր:

Նույն շրջանում խոսվում է, որ սկսվում է արյունահեղ ընդհարումներ Մանավազյան և Օրդյան տոհմերի միջև ո՞րն էր այս ընդհարումների պատճառը, հայտնի չէ, բայց այն, որ քրիստոնեության հետևանքով թուլացավ թագավորի իշխանությունը երկրում և առաջին անգամ սկսվեցին նախարարների միջև ընդհարումներ, անվիճելի փաստ է:

Այս բոլորը հանգեցրեց նրան, որ Խոսրով Կոտակը, զգալով նախարարական տների թշնամական վերաբերմունքը իր և ընդհանրապես թագավորական տան նկատմամբ, ընդունեց որոշում, որ այն նախարարները, որոնք ունեն հազարից ավելի անձնական զորք, մշտապես պետք է գտնվեն իր մոտ:

Սա նշանակում է, որ այլևս Հայաստանը որպես միասնական, ամուր երկիր դադարում էր գոյություն ունենալուց և ամեն մի նախարար ինքնուրույն էր սկսում լուծել իր խնդիրները և ինքն էր որոշում իր արևմտյան կամ արևելյան, քաղաքական կամ կրոնական կողմնորոշումը:

Այս պայմաններում հայամետ կողմնորոշումը դառնում էր անհավանական և հետագայում մենք տեսնում ենք, որ հազվագյուտ քաղաքական գործիչներ են, որ կարողանում են զերծ մնալ արտաքին քաղաքական կողմնորոշումներից և վարել զուտ հայրենասնպաստ գործունեություն:

Ինչպես է մահացել Խոսրով Կոտակն ու Վրթանես կաթողիկոսը մնում է անհայտ, սակայն հռոմեացի պատմագիր Հովհաննոսը գրում է, որ այդ ժամանակ հայերի մեծ մասն ապստամբել էին և միացել էին պարսիկներին ու ավերիչ արշավանքներ էին կատարում Հայաստանին հարևան հռոմեական տարածքների վրա:

Այս պայմաններում արքայազն Տիրանը փախչում է Հայաստանից Հռոմ և միայն հռոմեական զորքերի միջոցով կարողանում է խաղաղեցնել Հայաստանը և նստել իր հոր գահին:

Հավանաբար այս դեպքերն էին պատճառը, որ Տիրանը փորձում էր ավելի անկախ քաղաքականություն վարել եկեղեցուց: Չնայած դրան նա կախման մեջ էր Հռոմից և հռոմեական զորքերի ենթակայության տակ ստիպված էր շարունակել ճանաչել Գրիգորի ժառանգներին հայոց կաթողիկոս:

Վրթանեսի երկու որդիներն անհայտ պայմաններում մահացել էին և Տիրանը կաթողիկոս է ճանաչում նրա թոռ Հուսիկին, որը մինչ այդ նորից գտնվում էր Հռոմեական կայսրությունում տարածքում:

Ըստ ընդունված կարգի՝ որպես հայկական եկեղեցու ենթակայություն Կեսարիայի եպիսկոպոսությանը Հուսիկը գնում է Կեսարիա և օժվում կաթողիկոս: Այդ շրջանի հիմնական պատմիչ Փավստոս Բյուզանդը նշում է, որ Հուսիկը մշտապես խրատում և ուղղություն էր տալիս Տիրանին, սակայն Տիրանը մշտապես Հուսիկից գաղտնի չար գործեր էր անում:

Տիրանի կախվածությունը Հուսիկից հասնում է այն աստիճանի, որ ոչ միայն նախարարներին այլև Տիրանին Հուսիկը թույլ չի տալիս մտնել եկեղիցի պատճառաբանելով նրա ոչ քրիստոնյա վարքը:

Ընտագա գրվածքից և դեպքերի զարգացումից պարզ է դառնում, որ Տիրանը փորձում էր չվատացնելով հարաբերությունները Հռոմի հետ, հաստատել նորմալ հարաբերություններ նաև Պարսկաստանի հետ: Այս քայլերը տալիս են իրենց դրական արդյունքը:

Պարսկաստանը ոչ միայն բարիդրացիական հարաբերություններ է հաստատում Հայաստանի հետ, այլև կարողանում է աջակցել է Հայաստանին՝ սանձել Հյուսիսային Կովկասի ցեղերին:

Մի պահ փոխվեց քաղաքական վիճակը մեր տարածաշրջանում: Հռոմում իշխանության եկավ Հուլիանոսը, որը հրաժարվեց քրիստոնեությունից և փորձեց վերականգնել հին կրոնը, նաև հին հարաբերությունները, որոնք հենվում էին հեթանոսության վրա: Նա պահանջեց Տիրանից հին հռոմեական կրոնի հիմնական սկզբունքի՝ կայսրերի սրբացման սկզբունքով իր պատկերը դնել եկեղեցում:

Հուսիկը հասկացավ, որ այլևս հայոց եկեղեցին չունի հռոմեական զորքի աջակցությունը և զայրացած ըմբոստացավ: Նույնը լավ էր հասկանում նաև Տիրանը, որը համոզված էր, որ ազատվել է կաթողիկոսների գերիշխանությունից և հրամայեց բրածեժ անելով սպանել Հուսիկին:

Սակայն վիճակն արագ փոխվեց: Հռոմում նորից քրիստոնյաները վերցրեցին իշխանությունը և հայ թագավորները շարունակեցին մնալ քրիստոնեական եկեղեցու գերիշխանության տակ:

Հայաստանում ստեղծված ծանր վիճակը ստիպում էր Տիրանին ինքնուրույն քաղաքականություն վարելու փոխարեն խուսանավել Հռոմի և Պարսկաստանի միջև: Այս քաղաքականությունը ի վերջո պետք է հանգեցներ և հանգեցրեց նրան, որ նորից սկսված Հռոմեա-պարսկական պատերազմի ժամանակ Տիրանը ստիպված, թեկուզ պասիվ մասնակցեց Հռոմի կողմից պատերազմական գոծողություններին և դավադրաբար ձերբակալվեց ու կուրացվեց:

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Շապուհ Երկարակյացը իր երկարատև կառավարման ժամանակ լավ էր հասկացել, որ իր անհաջողությունների գլխավոր պատճառը Հռոմի դեմ պայքարում հայերի արևմտյան կողմնորոշումն է: Որպեսզի ապահովի իր ազդեցությունը Հայաստանում, Շապուհը առանց Հռոմի կարծիքը հաշվի առնելու՝ հայոց գահին է նստեցնում Տիրանի կրտսեր որդի Արշակին:

Հռոմը ի վիճակի չլինելով նոր պատերազմական գործողություններ սկսել, ստիպված ճանաչում է Արշակին և իր ազդեցությունը պահպանելու համար սկսում է գործել քրիստոնեական եկեղեցու միջոցով: Հուսիկի երկու որդիներն

անհայտ պատճառով մահացել են (ըստ քրիստոնեա պատմագրերի սպանվել էին միասին կայծակից):

Հուսիկի թոռ Ներսեսը, նույն աղբյուրների համաձայն, չէր ցանկանում կաթողիկոս դառնալ, սակայն Գրիգորի կուսակցության ճնշման տակ, Արշակը նրան է հանձնում կաթողիկոսական աթոռը: Ներսեսի անմիջական ակտիվ գործունեությունը ցույց է տալիս, որ նա մինչև կաթողիկոս դառնալն արդեն ուներ լավ մշակված քաղաքական ծրագիր:

Գրիգորի և նրա հաջորդների գործունեության հիմքը ուժի կիրառումն էր: Նրանք հիմնականում հենվում էին դրսից բերված հոգևորականության և զինվորականության վրա: Ներսեսի համար պարզ դարձավ, որ եթե քրիստոնեությունը չունի ամուր հենարան ժողովրդի մեջ, նախարարական տները ևս չեն պաշտպանում իրեն, հնարավոր է կրկնվի նույն իրավիճակը, ինչ տեղի ունեցավ իր պապի հետ:

Քրիստոնեությունը բնակչության լայն շրջաններում ամրապնդելու համար Ներսեսը իրականացրեց երկու քայլ: Առաջինը՝ քաղաքական էր: Աշտիշատում գումարվեց եկեղեցական ժողով, որտեղ որոշվեց, որ երկրի համար կարևորագույն խնդիրները պետք է քննարկվեն և լուծվեն ոչ թե աշխարհաժողովներում, այլ եկեղեցական ժողովներում:

Եկեղեցին վերջնականապես դատական գործը վերցրեց իր ձեռքը:

Փորձ արվեց կարգավորել հասարակական հարաբերությունները: Նախարարների շրջանում՝ հենց Գրիգորի հաջորդների մոտ, որոշակի քանակությամբ եղել էին մերձավոր հարազատների միջև ամուսնություններ, որոնք ունեին քաղաքական բնույթ: Խստորեն արգելվեց մերձավորների ամուսնությունը:

Հայերի մոտ երբեք տարածված չի եղել բազմակնությունը, սակայն հավանաբար Պարսկաստանի ազդեցության տակ,

բազմակնության առանձին դեպքեր էին նկատվում նաև հայ նախարարների շրջանում, որը նույնպես արգելվեց:

Երկրորդ կարևորագույն քայլը բարեգործական հաստատությունների բացումն էր: Բացվում են բորոտանոցներ, ծերանոցներ, աղքատանոցներ, որոնց պահելու համար պետությունը նոր հողեր ու միջոցներ է հատկացնում: Հատկապես այս երկրորդ քայլը պետք է մեծ չափով նպաստեր բնակչության շրջանում եկեղեցու հեղինակության բարձրացմանը:

Արշակ Երկրորդը զգալով, որ չունի ամուր հենարան երկրում ստիպված էր ընդունել այս որոշումները և միաժամանակ փորձում է իր համար ստեղծել ամուր հենարան: Այս էր պատճառը, որ նա հիմնում է Արշակավան քաղաքը: Արշակունիների անձնական սեփականություն հանդիսացող Այրարատում քաղաք է հիմնում և նախկին պարտականություններից և հանցագործության պատժից ազատելու մասին հրաման է հանում բոլոր նրանց համար, ովքեր կրնակվեն Արշակավանում:

Արշակ Երկրորդը ցանկանում էր այդ քաղաքում հավաքել իրենց նախարարներից դժգոհ, գուցե նաև եկեղեցական հալածանքների ենթարկված բնակչությանը, որը կարող էր դառնալ իր համար լավ հենարան:

Նշենք, որ այս նույն ճանապարհով մոտ 1000 տարի հետո Ֆրանսիան կարողացավ հաղթահարել ֆեոդալական մասնատվածությունը և ստեղծել բացարձակ միապետություն: Ցավոք սրտի, Արշակ Երկրորդը չկարողացավ իրականացնել իր ծրագիրը: Հայ նախարարները և եկեղեցին լավ էին հասկանում, թե ինչ նպատակ ունի Արշակավանի կառուցումը:

Մ. Խորենացին գրում է, որ հայ նախարարները, օգտվելով պատերազմական իրավիճակից ավերեցին քաղաքը, սրի քաշելով ողջ բնակչությանը, իսկ Ներսեսը հրամայում է կրծքի երեխաներին հավաքել և պահել: Փավստոս Բյու-

զանդը առասպելական տեսք է տալիս Արշակավանի ավերմանը՝ նշելով, որ Ներսեսի անեծքի հետևանքով երեք օրում Արշակավանի 20000 բնակչությունը մեռավ ժանտախտից:

Այս երկու նշումների համեմատումը ցույց է տալիս, որ քաղաքի ավերման և բնակչության ոչնչացման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել, ինչպես հայ նախարարները, այնպես էլ Ներսես կաթողիկոսը:

Ներսեսի գործած հաջորդ քայլը ուղղված էր Հայր Մարդպետի դեմ: Այս տոհմը ժառանգաբար վարում էր թագավորական կալվածքների և թագավորի եկամուտների հետ կապված խնդիրները: Այս տոհմի անձինք ի պաշտոնե շահագրգռված էին թագավորական հզորության ամրապնդման և դրան հակառակ եկեղեցու ու հզոր նախարարների թուլացման գործում:

Հայր Մարդպետը մի կողմից փորձում էր նախարարներից խլել, հատկապես, սահմանային գոտում գտնվող հողերը, ինչպես վարվեցին Արծրունիների և Ռշտունիների հետ, իսկ մյուս կողմից էլ թուլացնել եկեղեցուն:

Նորից մենք տեսնում ենք, որ Ներսեսի «անեծքից հետո» սպանվում է Հայր Մարդպետը, որը Ներսեսին սպառնացել էր, որ թագավորի մոտ հասնելուց հետո պետք է հասնի նրան, որ Աշտիշատը հետ խլվի եկեղեցուց:

Արշակի կառավարման սկզբնական շրջանը անցավ խաղաղ, չնայած, Հռոմը նախապատրաստել էր Արշակի իր ազդեցության տակ պահելը: Դրա համար էլ, երբ Ներսեսը վերադարձավ Կոստանդինապոլից իր հետ բերել էր, ինչպես մինչ այդ Կոնստանդինապոլսում պատանդ գտնվող և հռոմեական հոգով դաստիարակված Տիրիթին ու Գնելին, այնպես էլ, որպես Արշակ Երկրորդին կին՝ կայսրի եղբոր նշանած Օլիմպիային:

Մեզ հասած տվյալները ցույց են տալիս, որ այս քայլերը զուր չեն անցնում: Առաջին հերթին Արշակի մոտ կասկած է առաջանում Գնելի վերաբերյալ, որը Կոնստանդնուպոլսում մեծ հարգանք ուներ և համարվում էր կայսեր բարեկամը՝ խախտելով Խոսրով Կոտակի ընդունած որոշումը հաստատվում է Այրարատում:

Այս բոլորը հանգեցնում է նրան, որ Արշակի հրամանով սպանվում են Գնելն ու Տիրիթը: Թունավորվում և սպանվում է նաև Օլիմպիան:

Այս եղեռնագործությունները, որ կատարվում էին արքունիքում պետք է իրենց ազդեցությունը թողնեին նախարարական տների հոգեբանության և գործունեության վրա:

Նախարարական տները ավելի վաղ արդեն բաժանվել էին հռոմեական և պարսկական ուղղությունների, իսկ այս դեպքերը ավելի են լարում իրավիճակը: Այս դեպքերը հոգեբանորեն արդարացնում էին, անկախ միջոցներից իրենց նպատակին հասնելու, գաղափարը նախարարների մոտ:

Այս պայմաններում սկսվեց նոր պատերազմ, որը նաև բացահայտ պառակտեց Հայաստանը: Հայկական զորքերի սպարապետ Վասակ Մամիկոնյանը ամբողջությամբ նվիրված էր Արշակին, սակայն դա չի նշանակում, որ նա որպես Մամիկոնյան դադարել էր եկեղեցու գլխավոր հենարան լինելուց, մանավանդ, որ ամուսնական կապերով կապված էր Ներսեսի հետ:

Լարվում էին հարաբերությունները Հռոմի և Պարսկաստանի միջև: Այս պայմաններում պատերազմող երկու կողմն էլ սիրաշահում էին Արշակին, փորձելով գրավել իրենց կողմը: Նույնիսկ Կոստանդինոս կայսրը հարկից ազատեց Արշակի այն բոլոր կալվածքները, որոնք գտնվում էին իր տարածքում:

Այս պայմաններում Արշակը ստիպված մնաց հավատարիմ Հռոմին և մտավ պատերազմի մեջ: Հռոմեական զորքերը պարտվեցին, կայսրը մեռավ, իսկ նոր կայսրը, ըստ հռոմեական պատմիչ Ամմիանոսի՝ կնքեց Ամոթալի պայմանագիրը, որով Հայաստանը մնում էր միայնակ Պարսկաստանի դեմ կռվում:

Տրդատից սկսած հայ թագավորների վարած քաղաքականության հետևանքով Հայաստանը ռազմականապես խիստ թուլացել էր, հայ նախարարները բացահայտ կռվում էին իրար ու թագավորի դեմ, չնայած սրան, Արշակը և Վասակ սպարապետը տարիներ շարունակ հերոսաբար կռվում էին և նույնիսկ հայկական զորքերը հաճախ նախահարձակ լինելով մտնում էին Պարսկաստանի տարածքներ:

Հիմնականում նախարարների պառակտված լինելը ստիպեց Արշակին փորձել լեզու գտնել պարսիկների հետ, բայց դավադրաբար ձերբակալվեց և մեռավ բանտում: Որոշ ժամանակ Հայաստանը մնաց անիշխանության պայմաններում, մինչև որ հռոմեացիների աջակցությամբ հայոց թագավոր դարձավ Արշակի որդի Պապը:

Ներսեսը դասեր չքաղեց Արշակի և Հայաստանի դառը ճակատագրից և փորձում էր Պապին նույնպես ենթարկեցնել իրեն ու շարունակել իր վարած նախկին քաղաքականությունը:

Պապը, լինելով երիտասարդ և ունենալով իր մշակած ծրագիրը, մշտապես ընդդիմանում էր նրան և բանը հասնում է նրան, որ նրանց մեջ առաջանում է բացահայտ հակամարտություն: Նորից Պապն էր, որ որոշում է թուլացնել լարվածությունը և Ներսեսին կանչում է իր մոտ, որտեղ էլ Ներսեսը հանկարծամահ է լինում:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգորը, գալով Հայաստան և ունենալով հռոմեական բանակի ամբողջական աջակցությունը, բնական է, որ պետք է փնտրեր հենարան նոր ուսմունքի և իր գործունեության համար նախարարների շրջանում:

Մենք տեսանք, որ ըստ Ձեռնոք Գլակի, Գրիգորին պաշտպանում էին հիմնականում այն նախարարների զորքերը, որոնց հողերը զավթվել էին Դիոկլետիանոսի կողմից: Բայց հետագա աղբյուրները նշում են, որ արդեն Խոսրով Կոտակի ժամանակ հենց այդ նախարարներն էին, որ դեմ էին գնում եկեղեցու վարած քաղաքականությանը:

Գրիգոր եպիսկոպոսը լավ էր հասկանում, որ քրիստոնեության հենարան կարող է դառնալ այն անհատը, կամ այն տոհմը, որը չունի ազգային արմատավորված կրոն և ավանդույթներ:

Այդ շրջանում Հայաստան են գալիս ու հաստատվում երկու նախարարական տներ: Առաջինը Մամիկոնյաններն էին, որոնց ծագումը Մ. Խորենացին կապում է Չինաստանի հետ: Հայ պատմագիտության մեջ այս տոհմի ծագումը դեռ պարզված չէ և դուրս է մեր գրքի քննարկման նյութից, բայց փաստ է, որ Մամիկոնյանները կրոնով և հավատով կապված չէին հայության հետ:

Կամսարականներն էլ, լինելով պարթևական տոհմ, ավելի մոտ էին հելլենիզմին, նաև որոշակի զրադաշտությանը, բայց ոչ երբեք Հայաստանին ու հայությանը:

Գրիգոր եպիսկոպոսը և նրա հաջորդները իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են այս երկու տոհմերի վրա: Այս երկու տոհմը, լինելով օտար հայկական միջավայրին, բնական է, որ նույնպես փնտրում էին իրենց համար դաշնակիցներ, և մերձենալ Հայաստանի հոգևոր առաջնորդների հետ՝ նրանց ամենաբաղձալի ցանկությունն էր:

Այս հողի վրա սկսվում է նրանց միջև ամուսնական կապեր: Միաժամանակ հայ կաթողիկոսները աշխատում են կարևորագույն պաշտոնը՝ հանձնիս սպարապետության որպես ժառանգական սեփականություն հանձնել Մամիկոնյաններին:

Արդեն Խոսրով Կոտակի ժամանակ մենք տեսնում ենք, որ հայոց սպարապետ է դառնում Վաչե Մամիկոնյանը, որը իր քաջությամբ և ռազմական տաղանդով կարողանում է ամրապնդել այս պաշտոնում նաև իր հաջորդներին:

Ճիշտ է, որոշակի ժամանակահատվածներում, երբ Գրիգորի հաջորդների դիրքերը թուլանում են թագավորները, օրինակ՝ Տիրանը, կամ Խոսրովը փորձում էին սպարապետի պաշտոնը վերցնել Մամիկոնյանների ձեռքից, սակայն աստիճանաբար սպարապետությունը դառնում է Մամիկոնյանների տոհմական ժառանգությունը:

Մյուս կողմից էլ Մամիկոնյաններն ու կաթողիկոսական տոհմը ամուսնական կապեր ունեին Կամսարականների և Արշակունիների հետ և պատմական բազմաթիվ հանգույցներ հնարավոր չէ լուծել չքննելով այս ամուսնական կապերի ազդեցությունը դեպքերի զարգացման վրա:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մենք վերևում նշեցինք, որ հայ պատմագիտության մեջ շատ վատ է ուսումնասիրված այն քրիստոնյա գործիչների դերը, որոնք իրենց արմատներով գալիս են հայկական հեթանոսությունից և ողջ եկեղեցական պատմության մեջ թողեցին իրենց մնայուն, կարևոր հետքը:

Ներսեսի մահից հետո Պապը կաթողիկոսության պաշտոնը հանձնում է Ալբիանոսների տոհմից ծագած Հուսիկ – Շահակ կամ Հուսիկ-Սահակ անունով մեկին: Այս կաթողի-

կոսը մեծ հեղինակություն ուներ իր վարքով և ապրելակերպով, բայց ի տարբերություն նախկին կաթողիկոսների առաջնային էր համարում ոչ թե եկեղեցու, առավել ևս Հռոմի շահերը, այլ հայության և Հայաստանի շահերը:

Նրա օրոք միայն հնարավոր դարձավ հայոց եկեղեցին դուրս բերել Կեսարիայի եպիսկոպոսության ենթակայության տակից: Սա նաև հնարավորություն էր տալիս վերացնել կամ գոնե թուլացնել Հայաստանի կախվածությունը Հռոմից:

Պապը սկսեց առաջին հերթին ամրացնել և հզորացնել երկիրը: Նրա առաջին քայլերը ուղղված էին ըմբոստ նախարարների իրեն ենթարկեցնելու ուղղությամբ: Վասակի որդի Մուշեղը կարողացավ ունենալով ընդամենը 12000 բանակ դաժանորեն ճնշել Հայաստանից իրենց անկախ հռչակած նախարարներին: Հայակական զորքերը մտան Վրաստան ու Աղվանք և ստիպեցին, որ վերջիններս նորից ճանաչեն իրենց կախվածությունը Հայաստանից:

Պապը, որոշակի հաջողության հասնելով երկրի միավորման գործում, սկսեց քաղաքականապես և տնտեսապես հզորացնել երկիրը: Դրա գլխավոր խոչընդոտը Պապը տեսնում էր եկեղեցու տնտեսական ու քաղաքական հզորության մեջ: Առաջին հերթին անհրաժեշտ էր թուլացնել եկեղեցուն տնտեսապես, նաև խաթարել ամրապնդվող հեղինակությունը բնակչության շրջանում:

Պապի հրամանով եկեղեցուց խլվեց տրված 7 կտոր հողերից 5-ը, ամեն գյուղում թողնվեց միայն մեկ երեց և մեկ սարկավազ: Այս հոգևորականների բոլոր հարազատներն ու բարեկամները, որոնք ծանր լուծ էին դարձել համայնքի բնակչության համար, մտցվեցին ծառայության պետության կամ բանակի մեջ: Վերացվեց բնակչությունից գանձվող տասանորդը և բերքի հարկը:

Պետության համար բավականին ծախսատար էր Ներ-

սեսի հիմնած բարեգործական հաստատությունները, որոնք բարձրացնում էին եկեղեցու հեղինակությունը, դրանք դարձել էին բոլոր ծրիակերների ու աշխատել չցանկացողների համար օրինականացված որջեր: Այս բոլոր հաստատությունները նույնպես փակվեցին:

Փակվեցին մենաստաններն ու կուսանոցները: Կանանց Պապը ստիպեց ամուսնանալ, իսկ տղամարդկանց մտցրեց ծառայության մեջ: Այս քայլերի շնորհիվ հայկական բանակի թիվը անցավ 90000-ից: Դադարեցին հեթանոսների նկատմամբ հալածանքները: Պապը կարողացավ կառավարել ընդամենը չորս տարի և չկարողացավ ավարտել իր սկսած բարենորոգումները:

Աղբյուրները նշում են, որ հայոց կաթողիկոսը հագնվում էր հայ քրմապետի նման, այս ցույց է տալիս, որ Պապը Ալբիանոսների տոհմի կաթողիկոսի հետ նպատակ ունեին հեռու գնացող ծրագրեր իրականացնել:

Միանշանակ պարզ է, որ Պապը և այս կաթողիկոսները նպատակ չունեին և չէին էլ կարող վերադառնալ հին հայկական կրոնին: Բայց փաստերը ցույց են տալիս, որ նրանք ցանկանում էին ոչ թե հայությանը հարմարեցնել քրիստոնեությանը, այլ քրիստոնեությունը դարձնել ազգային կրոն:

Յավոք սրտի, իրար փոխարինած Ալբիանոսների տոհմի կաթողիկոսները կասկածելի ձևով շատ կարճ կյանք էին ունենում, բայց այս չորս կաթողիկոսները մեծ հետք թողեցին հայկական եկեղեցու ձևավորման և որոշակի ազգային դիմագիծ ձեռք բերելու գործում:

Ամենայն հավանականությամբ, նրանց օրոք էր, որ քրիստոնեության մեջ մտան մի շարք հեթանոսական արարողություններ և աշխարհաճանաչողական սկզբունքներ:

Յավոք սրտի, Հայաստանը այնքան հզոր չէր, որ Պապը կարողանար իրեն ապահովել արտաքին կազմակերպված վտանգներից, որոնց աջակցում էին նաև ներքին ուժերը:

Մուշեղ Մամիկոնյանը, լինելով իրական հայրենասեր և շատ բան արած լինելով հայության և Հայաստանի համար, շարունակում էր մնալ իր տոհմական ավանդույթների կրողը: Նա եթե ոչ անմիջական մասնակցությամբ, ապա լուռ համաձայնությամբ մասնակցեց Պապի դեմ կազմակերպված և իրականացված սպանությանը:

Պապից հետո պարզ էր, որ Հայաստանը արագ գնում է իր քաղաքական անկախության կորստին: Դա չէր նշանակում, որ Հայաստանը դարձել էր տնտեսապես կամ ռազմականապես ավելի թույլ:

Պարզապես Հայաստանում գործող արևմտյան և արևելյան ուժերի միջև հակասությունն այնքան էին սրվել, որ այլևս չկար երկրի ներսում որևէ ուժ, որ կարողանար նրանց հաշտեցնել կամ ստիպողաբար ենթարկեցնել ազգային շահերին:

Պապից հետո թագավոր է նստում Վարազդատը, որի ժամանակ փաստացի իշխանությունը անցնում է Մուշեղ Մամիկոնյանի ձեռքը: Մուշեղ Մամիկոնյանը երկրի միակ փրկությունը տեսնում էր հռոմեական զորքին ապավինելու մեջ, որը նշանակում էր, գուցե և Հայաստանի ամբողջականության պահպանում, բայց նրա փաստացի, անկախության կորուստ և Հռոմին մաս դառնալ:

Սրան դեմ էին պարսկամետ ուժերը, որոնք սկսում են կազմակերպել դավադրություն և հայտնում են Վարազդատին՝ Պապի սպանության գործում Մուշեղի մասնակից լինելը: Մուշեղը սպանվեց նույն ձևով ինչպես սպանել էին Պապին:

Դա հանգեցրեց նրան, որ Վարազդատի դեմ ապստամբեց Մանվել Մամիկոնյանը, որը Պապի որդիների անվան տակ կառավարեց երկիրը, իսկ իր մեռնելու պահին Հայաստանը և հայող թագավորին հանձնեց հռոմեական կայսրի հովանավորությանը:

Հայաստանի բաժանումից հետո Հայաստանի մեծ մասը անցավ Պարսկաստանին: Պարսկաստանը երկրում հաստատեց ձևական գերիշխանություն: Սկզբում նա ընդհանրապես չէր խառնվում Հայաստանի ներքին գործերին, իսկ երբ հայ նախարարների պահանջով վերացավ թագավորական կառավարումը, սկսեց նշանակել մարզպաններ, որոնք մեծ մասամբ նորից հայեր էին:

Այլ էր վիճակը արևմտյան մասում: Հայոց պատմությունը չափից դուրս շատ կասկածելի մարդկանց է մտցրել սրբերի դասը, և այդպիսի սրբերից մեկը Թեոդոս կայսրն է: Այս մարդն էր, որ ամեն ինչ արեց, Հայաստանը թուլացնելու և մասնատելու համար, իսկ հետո էլ՝ Արշակ Երրորդի մահից հետո վերացրեց հայկական թագավորությունը:

Այս կայսրը նաև աչքի է ընկել համաշխարհային պատմության մեջ: Նրա օրոք էր, որ իր անմիջական հրամանով ավերվեց Ալեքսանդրիայի Սերապիոն տաճարը, ոչնչացվեցին հարյուրամյակներում հավաքված արվեստի գործերը և ամենամեծ հարվածը եղավ այն, որ նորից իր անմիջական հրամանով այրեցին այնտեղի մատենադարանը:

Ոչնչացան 500 հազարից ավել պատմական, գիտական, մշակութային, գեղարվեստական ստեղծագործություններ: Այդ քայլով մարդկությունը բարբարոսաբար կտրվեց իր անցյալից:

Նրա օրոք 381 թվականին տեղի ունեցավ տիեզերական ժողով, որտեղ քննարկվում էր Մակեդոն եպիսկոպոսի առաջ քաշած տեսությունը, ըստ որի Սուրբ Հոգին կարող է արտահայտվել միայն Հայր Աստծո և Որդի Աստծո միջոցով և ուրեմն հավասար չէ նրանց: Այս տեսությունը քննադատվեց և նրա կողմնակիցները սկսեցին դաժանորեն հետապնդվել:

Պատահական չէ, որ այս «սրբազան» կայսրի օրոք մասունքների պաշտամունքը մեծ տարածում ստացավ:

Հավանաբար կայսրի տեղը սրբերի ցուցակում ապահովելու համար ուղղափառ եկեղեցին սկսեց սրբերի ցուցակում մտցնել քրիստոնեությունից հազարամյակներ առաջ առասպելական և կիսապատմական գործիչներին: Արդյունաբերական հիմքերի վրա դրվեց մասունքների առքն ու վաճառքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ

Հավանաբար գոյություն չունի հայոց պատմությամբ հետաքրքրվող որևէ ուսումնասիրող, որը անդրադարձած չլինի հայկական այբուբենի ստեղծման պատմությանը: Մինչև այժմ էլ ուսումնասիրողների շրջանում բուռն վեճ է ընթանում արդյո՞ք Մեսրոպ Մաշտոցը հեղինակն է հայկական այբուբենի, թե նա միայն վերականգնել է նախկինում գոյություն ունեցող այբուբենը:

Այն գիտնականները, ովքեր պնդում են, որ Մեսրոպ Մաշտոցի հանճարի շնորհիվ է, որ մենք ունենք հայկական այբուբեն և 5-րդ դարի գրական մշակույթ, գտնում են, որ հակառակ պնդողները գիտակցելով, թե անգիտակցաբար ոսնձգություններ են կատարում միջնադարից սրբացված և ժողովրդի կողմից պաշտված Մեսրոպ Մաշտոցի նկատմամբ:

Իրականում մենք վստահ ենք, որ այս խնդրի շուրջը քննարկումներն ընթացել են սխալ հիմքերի վրա, որի հետևանքով այժմ նսեմացվում է այն իրական, մեծ դերը, որ կատարել է Մաշտոցը հայ մշակույթի պահպանման գործում:

Նյութն ամբողջ խորությամբ հասկանալու համար անհրաժեշտ է նոր տեսակետից ուսումնասիրել այն պատմական ժամանակաշրջանը, երբ ապրել և գործել են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Մենք նշեցինք, որ Պապից սկսած հայ չորս կաթողիկոսները պատկանում էին Ալբիանոսների տոհմին և նրանց ջանքերով էր, որ քրիստոնեությունը Հայաստանում ձեռք բերեց որոշակի ազգային դիմագիծ:

Այս կաթողիկոսներից Ասպուրակեսի մահից հետո Խոսրով 4-րդը, առանց Պարսկաստանի կարծիքը հաշվի առնելու կաթողիկոս է նշանակում Ներսես Մեծի որդի՝ Սահակին, որը դեռ իր ժամանակ ստանում է Պարթև մականունը: Հավանաբար այս մականունը ինքն է վերցրել, որպեսզի ցույց տա իր կապը պատմական Անակ Պարթևի հետ և դրա միջոցով նաև կարողանա իր հարաբերությունները կարգավորել Սասանյան Պարսկաստանի հետ:

Ըստ Մ. Խորենացու նրան դա հաջողվում է և Սահակ Պարթևը գնալով Պարսկաստան ոչ միայն ամրապնդեց իր դիրքերը, այլև կարողացավ Պարսկաստանի աջակցությամբ սպարապետի պաշտոնը վերադարձնել Մամիկոնյաններին՝ Սմբատ Բագրատունու մահից հետո:

Մեր կարծիքով, և դա են նշում գոյություն ունեցող փաստերը, Խոսրով 4-րդը Սահակ Պարթևին, և Համազասպ Մամիկոնյանին, որը Սահակի փեսան էր, իրենց տոհմական պաշտոններին վերադարձնելով՝ ցանկանում էր լավ հարաբերություններ հաստատել նաև Հռոմի հետ:

Այդ ժամանակվա աղբյուրները նշում են, որ Խոսրովը գաղտնի կապեր է հաստատում Կոստանդնուպոլսի հետ, որպեսզի Արևմտյան Հայաստանը նույնպես հանձնվի իրեն:

Մ.Խորենացին և մյուս պատմիչները նշում են, որ սա պատճառ դարձավ, որ Խոսրովը հեռացվեց իր պաշտոնից և բանտարկվի: Նրա փոխարեն թագավոր դարձավ նրա եղբայր Վռամշապուհը:

Դժվար է կարծել, որ Խոսրովին գահընկեց անելու պատճառը միայն այդ բանակցություններն էին, որովհետև

բանակցությունների դրական արդյունքի դեպքում Պարսկաստանը ոչ թե տուժվում, այլ միայն շահում էր, որովհետև իր ազդեցությունը տարածում էր նաև Արևմտյան Հայաստանի վրա:

Հավանաբար Պարսկաստանը հասկացել է, որ Խոսրովի գործունեությամբ Հռոմի ազդեցությունն է սկսվում տարածվել Արևելյան Հայաստանի վրա: Վռամշապուհը ավելի մեղմ քաղաքականություն է սկսում վարել և փաստորեն, դառնում է ընդամենը կապող օղակ հայ նախարարների և պարսկական արքունիքի միջև:

Կարևոր խնդիր է, թե ինչու հենց այդ ժամանակ հրատապ խնդիր դարձավ հայկական գրերի ստեղծման կամ վերականգնման հարցը: Իսկ, որ խնդիրը հրատապ էր, պարզ երևում է նրանից, որ միաժամանակ իրարից անկախ այդ հարցով սկսել էին հետաքրքրվել ինչպես Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, այնպես էլ թագավոր Վռամշապուհը:

Նախկին կաթողիկոսների գործունեության շնորհիվ խիստ թուլացել էր ինչպես ասորական, այնպես էլ հունական դպրոցների ազդեցությունը հայոց եկեղեցու ներսում: Նաև փոխվել էր քաղաքական իրավիճակը տարածաշրջանում:

Կոպիտ է համեմատությունը, սակայն Գրիգոր եպիսկոպոսի և նրա հաջորդների գործելաճճը որոշակի ընդհանրություններ ուներ այն քայլերի հետ, որ նորագույն շրջանում իրականացրեց բոլշևիկյան կուսակցության հիմնադիր Ուլյանով Լենինը:

Մենք վերևում նշեցինք, որ Գրիգոր եպիսկոպոսը մի կողմից ոչնչացնում էր հայակական մշակույթը, դրա հետ բնական է նաև գոյություն ունեցող գիրը, իսկ մյուս կողմից

փորձում էր Հայաստանի օրինակով քարոզչության ու զենքի միջոցով քրիստոնեությունը տարածել արևելքում:

Վերևում նաև տեսանք, որ նույն ձևով բուլղարիկներն էին փորձում պերմանենտ հեղափոխության սկզբունքով հեղափոխության կրակը տարածել մյուս երկրներում:

Լենինն էլ գտնում էր, որ ազգությունն ու ազգայինը սոցիալիզմի ժամանակ կդադարեն գոյություն ունենալուց և կստեղծվի միանման սոցիալիստական ժողովուրդ: Դրա հիմքերը դնելու համար Լենինը ընդունեց դեկրետ սլավոնական տառերի փոխարեն մտցնել լատինական տառերը և ռուսական քերականությունը հարմարեցնել լատինական քերականության սկզբունքներին: Նույնն էր պատրաստվում իրականացնել նաև Ռուսաստանում ապրող ժողովուրդների համար:

Գրիգոր եպիսկոպոսն էլ, բացելով հունական ու ասորական դպրոցներ, գտնում էր, որ այս երկու լեզուները պետք է դառնան ապագա քրիստոնեական աշխարհի միասնական ժողովրդի խոսակցական լեզուն:

Հայաստանի միացումը Պարսկաստանին նշանակում էր այս ծրագրերի ձախողում, որովհետև Պարսկաստանը երբեք թույլ չէր տա քրիստոնեության բռնի տարածումը մյուս արևելյան երկրներում:

Նույնը կատարվեց նաև բուլղարիկների ծրագրերի պարագայում, երբ պարզ դարձավ, որ հնարավոր չէ հեղափոխությունը արտահանել այլ երկրներ, մերժվեց նաև լատիներենին անցման ծրագիրը, և սկսվեց խորհրդային ժողովուրդների այբուբենի հիմքը դարձնել սլավոնական այբուբենը:

Քչերին է հայտնի, որ փորձ արվեց նաև փոխելու հայերեն և վրացերեն այբուբենները և մեծ ջանքերի շնորհիվ այդ հնագույն այբուբենները որոշակի աղավաղումներով հանդերձ պահպանեցին իրենց գոյությունը:

Չորրորդ դարի վերջերին հայկական եկեղեցու առջև ծառայել էր մի կողմից աղանդավորության տարածման խնդիրը, օրինակ՝ մանիքենականությունը, իսկ մյուս կողմից էլ վերականգնվող, ակտիվացող հեթանոսությունը: Այս պայմաններում անհրաժեշտ էր ժողովրդի մեջ արագ տեմպով ամրապնդել թուլացող քրիստոնեությունը:

Ղազար Փարպեցին նշում է, որ երբ Մեսրոպ Մաշտոցը գալիս է Սահակ Պարթևի մոտ և հայտնում իր մտադրությունը, Սահակը ընդունում է գործի կարևորությունը, սակայն նաև նշում, որ այդ գործը բավականին դյուրին է, որ ինքը կարող է տալ գիտակ մարդկանց, իսկ վերջում էլ դժվարություններ հանդիպելիս կուղղի բաց թողնված սխալները:

Նույն հեղինակը նաև նշում է, նախկինում գոյություն ունեցած գրերի մասին: Այս փաստը ցույց է տալիս, որ խնդիրը ոչ թե նոր այբուբեն ստեղծելու մասին է, այլ հայկական քերականության վերականգնման, որը իրականում մեծ խնդիր էր:

Դանիելյան գրերը նույնպես մեծ վեճերի տեղիք են տվել: Որոշ ուսումնասիրողներ այս գրերը համարում են հին հայկական գրեր, որոնք պատահաբար հայտնաբերել էր Դանիել ասորի եպիսկոպոսը: Մի մասն էլ գտնում էին, որ Դանիելը կամ մեկ այլ մարդ փորձ է արել հնարել հայկական այբուբեն, սակայն անհաջող:

Երբ խորությամբ նայում ենք մեզ հասած աղբյուրները հավանական է դառնում, որ այս երկու կարծիքն էլ ունեն որոշակի հիմքեր, բայց ամբողջական չեն: Հայկական գրերի խնդիրը տեսանք, որ հրատապ էր և կարող էր դառնալ մրցակցության պատճառ հունական և ասորական դպրոցների միջև:

Այսինքն՝ ասորական ծագման եպիսկոպոս Դանիելը կամ նրանից առաջ մեկը գուցե և լավ չիմանալով հայերեն

լեզվի ամբողջական նրբությունները, փորձել է հին հայկական այբուբենը ասորական լեզվի միջոցով օգտագործել նորովի:

Ինչպես այժմ, Վանի թագավորության սեպագրերը փորձում են կարդալ հիմք ունենալով ասորական սեպագրերի գրման ձևն ու քերականությունը, որից էլ աղավաղվում է գրված բուն հայկական բառերի մի մասը:

Կարճ ժամանակից հետո Մաշտոցին պարզ է դառնում, որ Դանիելի ձևափոխված ու հարմարեցված այբուբենը ամբողջությամբ չի համապատասխանում հայկական քերականությանը, որի համար էլ նա գնում է Եդեսիա, հետո Ուրֆա:

Որոշ ուսումնասիրողներ այս քաղաքների ընտրությունը բացատրում են, որ սրանք գտնվում էին Պարսկաստանին ենթական տարածքներում, իսկ կրթության ավելի բարձր օջախներ, ինչպիսիք էին Ալեքսանդրիան, Կոնստանդնուպոլիսը, Աթենքը, լինելով Հռոմին ենթական տարածքներ, նրանց համար փակ էր:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունները հակառակն են պնդում: Առաջին՝ կարևոր է, որ Մաշտոցը իր հետ տանում է աշակերտների, որոնց մի մասը պատրաստվում էին ասորական դպրոցներում, իսկ մի մասն էլ հունական դպրոցներում սովորելու: Կնշանակի խնդիրը շարունակվում էր համարվել ոչ շատ բարդ:

Կարևոր է, որ Կորյունը, խոսելով Մաշտոցի մասին, գրքի վերնագրում նրան նշում է ոչ թե հայկական այբուբենի ստեղծող, այլ թարգմանիչ: Այժմ էլ հայոց եկեղեցին տոնում է ոչ թե այբուբենի ստեղծման, այլ թարգմանչաց տոնը:

Փավստոս Բյուզանդը կոնկրետ նշում է, թե ինչու է ընտրվել հենց Եդեսիա քաղաքը: Այստեղ էր գտնվում Հարավ-արևմտյան Հայաստանի՝ Օսրոյենի մայրաքաղաք Եդեսիան, որտեղ ըստ նույն աղբյուրի պահպանվել էր

դիվանը՝ այսինքն, պետական արխիվը, որի ղեկավարն էր Պղատոս անունով իշխանը:

Հեղինակը կոնկրետ շեշտում է, որ Պղատոսը առաջին հերթանոս էր և երկրորդ՝ հայտնի ճարտասան: Պարզ է, որ Մաշտոցը հույս ուներ գտնել հին հայկական ձեռագրեր և նշված հռետորի միջոցով վերականգնել հին հայկական քերականությունը:

Շարունակության մեջ այս տեսակետը ավելի է հաստատվում: Պարզվում է, որ Պղատոսը չգիտե ողջ խորությամբ հայերեն քերականությունը, բայց ստույգ նշում է, որ իր ուսուցիչ Եպիփանոսը կարող է օգնել քերականությունը վերականգնելուն, սակայն նա դիվանից վերցրել է գիտական գրքերը և հեռացել է՝ քրիստոնեություն ընդունելով:

Կարելի է եզրակացնել, որ Եպիփանոս կոչվածը, դառնալով քրիստոնյա, նաև ինչպես երևում է անունից, ազգությամբ հույն լինելով չէր ցանկանում, որ վերականգնվի հին հայկական գրության համակարգը և հայերը դուրս գան հունական մշակույթի գերիշխանությունից:

Մաշտոցը գնում է Սամոս, իհարկե, որևէ խոչընդոտ չտեսնելով, որ այդ քաղաքը գտնվում է հռոմեական տարածքում, սակայն պարզվում է, որ այդ Եպիփանոսը արդեն վախճանվել է:

Բոլոր սկզբնաղբյուրները Մաշտոցի կողմից այբուբենի և քերականության հայտնագործումը կապում են նրա ջերմեռանդ քրիստոնյա լինելու և հրաշքի հետ: Նշվում է, որ Մաշտոցը ջերմեռանդ աղոթքներից հետո, կիսաքուն, կիսարթուն վիճակում տեսնում է, որ հրեշտակի ձեռքով քարի վրա փորագրվում է հայկական այբուբենը և տառերի միջև գոյություն ունեցող կապերը:

Եթե դուրս գանք քրիստոնեական մոլեռադությունից կարելի է եզրակացնել, որ Մեսրոպ Մաշտոցը երկարատև

քրտնաջան աշխատանք է տարել հավանաբար մեր նշած Եպեփանոսի տարած հին հայկական գրքերի վրա, հավանաբար, նրան օգնել է նաև գոյություն ունեցող ինչ-որ հին հայատառ ժայռագիր արձանագրություն, որով էլ հայության համար իրական սուրբ Մեսրոպ Մաշտոցը ամբողջությամբ կարողացել է վերականգնել հայկական լեզվի քերականությունը:

Այնքան մեծ է Մաշտոցի գործը, որ գուցե չկա մեզ հայտնի մեկ այլ լեզվաբան աշխարհում, որը արած լինի նույնը, այսինքն՝ այնքան հիմնարար ձևավորի, հայտնաբերի որևէ լեզվի քերականություն, որ այդ լեզուն 1700 տարի բնական փոփոխության ենթարկելուց հետո էլ պահպանի նույն քերականական կանոնները, որ ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Յավոք սրտի նույնը չի կարելի ասել խորհրդային շրջանում ստեղծված հայոց լեզվի քերականության մասին, որը մշտապես ենթարկվում է փոփոխության, իսկ բառերի մեծ մասը նույն քերականության պատճառով կորցրել են իրենց գաղափարական արմատները:

Մաշտոցը վերադառնալով սկսում է իրականացնել Սահակ Պարթևի հետ միասին իրենց գլխավոր ծրագիրը.

առաջին հերթին անհրաժեշտ էր նորից վերականգնված քերականության շնորհիվ բացել դպրոցներ և կրթել հայկական ծագմամբ հոգևորականներ, որոնք, իհարկե նաև հիմք ունենալով քրիստոնեությունը, պետք է վերականգնեին և զարգացնեին հայկական գիտությունն ու մշակույթը:

Երկրորդ հերթին նրանց համար մեծ նշանակություն ուներ կուտակված հունարեն և ասորերեն կրոնական գրականությունը հայերեն թարգմանել, որի համար էլ մեծ քանակությամբ որոշակի կրթություն ստացած երիտասարդ-

ների ուղարկել էին այդ ժամանակ մեծ համբավ ունեցող դպրոցներում սովորելու:

Առաջին դպրոցների բացելու ծրագիրը շատ հաջողությամբ իրականացվում է և մենք տեսնում ենք, որ ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստաններում բացվում են բազմաթիվ դպրոցներ:

Այլ էր խնդիրը, երբ սկսվում է թարգմանչության գործը: Փավստոս Բյուզանդը բողոքում է, որ Հայաստանից սովորելու ուղարկված երիտասարդները մինչև կվերադառնալին հայրենիք, մահանում են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Սա պատճառ է դառնում, որ նրանք գալով հայրենիք՝ հանդիպում են ոչ միայն սառը անտարբերության, այլև բացահայտ թշնամանքի: Հեղինակը նշում է, որ ոչ միայն հալածում էին կենդանիներին, այլև քանդում են գերեզմանները և ջուրն են լցնում մահացածների ոսկորներն:

Այժմյան ուսումնասիրողները գտնում են, որ թշնամանքը պետք է փնտրել հունական և ասորական դպրոցների միջև: Իբրև թե, ասորական կրթություն ունեցած հոգևորականները, որոնք նաև աչքի չէին ընկնում իրենց կրթվածությամբ, թշնամաբար էին տրամադրվել շատ ավելի կրթված հունական դաստիարակություն ստացած երիտասարդ հոգևորականների դեմ՝ հանձինս նրանց տեսնելով մրցակիցների:

Իրականում կար մրցակցություն հունական և ասորական քրիստոնեական դպրոցների միջև, սակայն նրանք այդ մրցակցությունը ինչպես ողջ քրիստոնեական աշխարհում, այնպես էլ Հայաստանում չէին հասցրել այդպիսի թշնամանքի, որ ոտնահարեին մի դպրոցի կողմից սրբացված հոգևորականի գերեզմանը:

Հակառակը, մենք տեսանք, թե ինչպես, երբ տեղի էր ունենում տարածքների, եկամուտների բաժանում, այս երկու դպրոցները հանգիստ կարողացան բաժանել Հայաստանը իրար միջև:

Այժմ, երբ փաստացի չկար այդպիսի ծանր խնդիր, դեռ չէին առաջացել հակասություններ հունական ու ասորական եկեղեցիների միջև, այդպիսի արյունահեղ բախումն անհնարին էր: Ավելին, ինչպես ասորի, այնպես էլ հույն հոգևորականները կարող էին դեմ լինել կրթված հայ երիտասարդների վերադառնալուն, որը կմիավորեր նրանց, ոչ թե հակառակը:

Ամենայն հավանականությամբ Սահակ Պարթևի մահից հետո նորից ակտիվացել էին ազգային քրիստոնեական ուղղության կողմնակիցները, որոնք հայկական եկեղեցու հիմքում բնական է կցանկանային տեսնել հայ գիտնականների և հայ սրբերի մասին գրված գրքեր, այլ ոչ թե դպրոցում սովորեցնել հույն գիտնականների ստեղծագործությունները, կամ քարոզել հունական և ասորական եկեղեցիների կողմից սրբացված մարդկանց մասին գրվածքները:

Սրա կողմնակի ապացույց կարող է համարվել Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի պայքարը, որ նրանք վարել են ինչպես քրիստոնեական աղանդների, այնպես էլ հայ հին կրոնի ներկայացուցիչների դեմ:

Միանման են ներկայացվում Գրիգոր եպիսկոպոսի գործունեությունը, և այն, ինչ Մաշտոցը անում է Գողթան գավառում. նորից նկարագրվում է, թե ինչպիսի դաժան հալածանքների են ենթարկում հայ հեթանոսներին, և ինչպես են դևերը, չկարողանալով դիմադրել Մեսրոպ Մաշտոցին, փախչում են դեպի Մարաստան:

Դժվար է կարծել, որ Գողթան գավառում այդ ժամանակ պահպանվել էին հեթանոսական տաճարներ և հոժ հեթա-

նոսական համայնք, բայց որ հին մշակույթը, հին հավատը կար այս գավառում, նշում է նաև Մ, Խորենացին: Հնարավոր է, որ հին հավատի արմատավորման պատճառով այստեղ նաև ավելի արմատավորված էր ազգային քրիստոնեությունը, որոնց դեմ էլ ընթանում էր այս պայքարը:

Թե ինչպես ավարտվեց մեր նշած մրցակցությունը, կարելի է տեսնել Մովսես Խորենացու օրինակով: Պատմահայրը պատկանում է հունական դպրոցին և նրա համար հունական մշակույթը, հունական գիտությունը նույնիսկ հին հունական հեթանոսական առասպելները ունեն անգնահատելի նշանակություն:

Նա միանշանակ համարում է, որ քրիստոնեությունը հայության փրկության միակ ճանապարհն էր: Սակայն նա ստորադասելով հայկական հնագույն մշակույթը, չունի արհամարհական վերաբերմունք և հաճախ նաև օգտվում է հենց գողթան գավառում պահպանված հեթանոսական առասպելներից ու երգերից, բացահայտելու համար հայոց պատմության կնճռոտ հարցերը, իհարկե, դրանց հնարավորության սահմաններում տալով քրիստոնեական երանգ ու բացատրություն:

Հավանաբար, սա քիչ նշանակություն չի ունեցել, որ Մովսես Խորենացին ոչ միայն չի հալածվել, այլև ըստ իր նշման ունեցել է մեծ հարգանք և հասել է եպիսկոպոսի աստիճանի:

Մ. Խորենացին, որը իր գրվածքներում ամենասուր խոսքերն է գրում տգետ հոգևորականների հասցեին և իրեն հակադրում է նրանց, նշելով իր մասին որպես լուսավոր անհատականություն առաջինը պետք է, ըստ վերևում նշված տրամաբանությամբ, ենթարկվեր ասորի տգետ հոգևորականության հալածանքներին:

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՅՔԱՐԸ ԱՂԱՆԴՆԵՐԻ ԴԵՄ

Քրիստոնեական եկեղեցին, ստանալով պետական կարգավիճակ, արագ մոռացավ, որ ինչ-որ ժամանակ եղել է հալածված պետության և պետական կրոնի կողմից և ինքը սկսեց անխնա հալածել և ոչնչացնել մյուս կրոնները:

Կարճ ժամանակահատվածում ոչնչացան տասնյակ հազարավոր անտիկ շրջանի մշակութային արժեքներ, ճարտարապետական կոթողներ և պատմական և կրոնական միլիոնավոր գրքեր, որոնք անդառնալի մեծ կորուստ էին ողջ մարդկության համար:

Այժմ չկա որևէ հին ժողովուրդ, որը կարողանա ամբողջությամբ ներկայացնել իր պատմության սկզբնական շրջանը, որովհետև քրիստոնյա հոգևորականները ոչնչացրեցին այդ շրջանի ողջ պատմական գրականությունը՝ թողնելով միայն հույն, ասորի, լատին և մովսեսական գրողների աշխատությունները, որոնք հենց իրենց գնահատմամբ պատմությունը դարձրել էին զենք քաղաքականության համար և մշտապես կեղծել իրական պատմությունը:

Քրիստոնեությունը, ինչպես նշել էինք գրքի առաջին հատորում, ձևավորված լինելով երկրագնդի հակասությունների բևեռ հանդիսացող Պաղեստինում, նաև սկսեց պայքարել ոչ միայն այլ կրոնների, այլև պետական քրիստոնեությունից առանձնացած այլ ուղղությունների դեմ: Այսպիսի ուղղությունները, որոնք որոշակի կետերում չէին ընդունում պաշտոնական եկեղեցու որոշակի դոգմանները, ստացան հերձվածություն կամ աղանդներ անվանումը:

Հայոց եկեղեցին, լինելով հունական եկեղեցու մասը և մինչև Պապ թագավորը ենթարկվելով Կեսարիայի եպիսկոպոսությանը, ժառանգեց նաև աղանդների դեմ պայքարի նույն տակտիկան: Դեռևս Սահակ Պարթևը դաժան պայ-

քար սկսեց մանիքենականության դեմ և Շահապիվանի ժողովում ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնցով դաժան պատիժներ էին սահմանվում այս աղանդին պատկանող անձանց դեմ:

Որոշվեց այդ աղանդում կասկածվող մարդկանց վերջույթների ջլերը կտրել և թողնել որ նրանք մահանային անօգնական, սովից ու ծարավից:

Պետականության կորուստը ավելի մեծ հարված հասցրեց հայության և հատկապես նրա վերնախավ հանդիսացող նախարարությանը: Այժմ մենք մեր երիտասարդությանը սովորեցնում ենք, որ 450թ-ին Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հայ ժողովուրդը ապստամբել է պարսկական դաժան ճնշման դեմ և չնայած չեն հասել հաջողության, բայց հայությունը տարել է բարոյական հաղթանակ: Իրականությունը, ցավոք սրտի, շատ է հեռու այն բոլորից, ինչ մենք ասում ենք:

Իրականությունն այն է, որ Հայաստանը շարունակում էր այդ ժամանակ մնալ տնտեսապես և ռազմականապես շատ հզոր: Հայերը կազմում էին, ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ Պարսկաստանի բանակների կորիզը: Հազվերտ Երկրորդը հպարտությամբ նշում էր, որ երջանիկ է այն տիրակալը, որն ունի այնպիսի զինվորներ, ինչպիսիք հայերն են:

Այս պայմաններում հայ նախարարները բաժանված բյուզանդական ու պարսկական կողմնորոշումների դավեր էին նյութում իրար դեմ և վիճում, թե ով պետք է ավելի մեծ ազդեցություն ունենա դեռևս չանկախացած Հայաստանում:

Վարդան Մամիկոնյանը, որը շատ անգամներ քաջությամբ աչքի էր ընկել քուշաններ դեմ կռվելիս, Տիգրանից անմիջապես վերադառնալուց հետո հավաքեց իր ընտանիքը ու ուզում էր փախչել Բյուզանդիա՝ թողնելով երկիրը առանց սպարապետի:

Վահան Ամատունին էլ, որովհետև ատում էր Վասակ Սյունեցուն, ամեն ինչ արեց, որ ապստամբությունը օր առաջ, առանց նախապատրաստության սկսվեր, որպեսզի Տիգրանում Հազկերտի ձեռքով սպանվեին Վասակի երկու անմեղ որդիները:

Վասակն էլ իր հերթին, ուշադրություն չդարձնելով, թե ինչպես է ընթանում Վարդան Մամիկոնյանի վարած պատերազմը հյուսիսում, միակողմանի բանակցություններ է սկսում Պարսկաստանի հետ: Այս բոլորից հետո բնական է, որ հայությունը պետք է պարտվեր չնայած այդ պարտությունը ոչ մի դեպքում չէր համապատասխանում այն հնարավորություններին, որ ուներ հայ ժողովուրդը այդ ժամանակ:

Այս պայմաններում ժողովրդի շարքային անդամները ինքնուրույն պետք է փորձեին դուրս գալ ստեղծված ծանր վիճակից: Խորհրդային պատմագիտությունը Հայաստանում սկսված աղանդավորական շարժումները ցանկանում էր բացատրել դասակարգային պայքարի տեսակետից: Իրականում այդ շարժումները, չլինելով միայն կրոնական, ունեին շատ ավելի խորը պատճառներ, քան դասակարգային պայքարն էր:

Հայոց պատմության մեջ ամենախոշոր աղանդավորական շարժումը Պավլիկյան էր, որի մասին առաջին գրավոր տեղեկությունները մեզ հասել է 554թ-ից, երբ արդեն այդ շարժումը մեծ թափ էր ստացել և եկեղեցին ստիպված էր պայքար սկսել այդ շարժման դեմ: Կնշանակի՝ այդ շարժման սկիզբը պետք է համարել 5-րդ դարի վերջը կամ 6-րդ դարի սկիզբ, երբ թվում է բավականին թուլացել էր Վահան Մամիկոնյանի հաղթանակից հետո պարսկական ճնշումը և Հայաստանում, ըստ նշված աղբյուրների, հաստատվել էր խաղաղ, կայուն վիճակ:

Նշված թվականին տեղի է ունենում Դվինի ժողովը, որտեղ որոշվում է ծանր պատիժներ սահմանել աղանդի ներկայացուցիչների դեմ: Այս շարժումը հատկապես մեծ թափ ստացավ 6-րդ դարի վերջին, որի դեմ էլ եկեղեցին սկսեց ավելի անողոք պայքար մղել: Պավլիկյանները, խուսափելով եկեղեցական և աշխարհիկ իշխանությունների ճնշումներից սկսում են մասայաբար տեղափոխվել բյուզանդական իշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի տարածքներ: Այնտեղ Կոնստանտին Սիլվանի գլխավորությամբ սկսում են հիմնել համայնքներ:

Բյուզանդիան, ունենալով հայկական եկեղեցու աջակցությունն ու դրդված լինելով նրա կողմից սկսեց զորքի օգնությամբ ոչնչացնել պավլիկյաններին: Պավլիկյանները ուժին որոշեցին պատասխանել ուժով և սկսեցին կազմակերպել իրենց առաջին զինյալ ջոկատները, որոնք կարճ ժամանակահատվածում դարձան հզոր ռազմական ուժ:

Պավլիկյանները տվեցին այնպիսի տաղանդավոր զորահրամանատարներ, ինչպիսիք էին Խրիստիսիլը, Կարբիասը, որոնք բազմաթիվ անգամներ կարողացան ջախջախիչ պարտության մատնել բյուզանդական կանոնավոր զորքերին:

Ամենացավալին այն է, որ այդ կռվներում հիմնականում ներքաշված էին երկու կողմից էլ հայեր: Բնական է, որ պավլիկյանները հայեր էին, բայց այդ ժամանակ բյուզանդական վերնախավը և բանակը նույնպես հիմնականում կազմված էին հայերից: Ի վերջո, պավլիկյաններին արյան մեջ խեղդող կայսր Բարսեղը նույնպես ազգությամբ հայ էր:

Այս կրոնական ընդհարումները ունեցան մի շարք ծանր հետևանքներ: Ոչ միայն տասնյակ հազարավոր հայեր ոչնչացան Բարսեղի հրամանով, ավելի շատ քանակություն էլ վտարվեց Հայաստանից Բալկանյան թերակղզի, այլև հայերի մի ստվար մաս էլ, փորձելով ստանալ արաբների աջակ-

ցություները, ընդհանրապես հրաժարվեց քրիստոնեությունից, ձևավորեց մուսուլմանության մի առանձին ճյուղ, որ այժմ հայտնի է ավալիտներ անունով:

Պավլիկյան ուղղությունը, ընդունելով Քրիստոսի գոյությունը որպես Աստծո որդի, նաև շատ բան վերցրել էր հին հայկական կրոնից ու հավատից: Նրանք ընդունում էին, որ Քրիստոսն ու Հայր Աստվածը տիեզերական համընդհանուր սեր են և այն ամենը ինչ կա վատ, դուրս սիրուց ու ներդաշնակությունից չի կարող լինել Հայր Աստծո ստեղծածը:

Դրանից նրանք գալիս էին այն եզրակացության, որ գոյություն ունի նաև Չարի Աստված, որի գործունեության արդյունքն են գոյություն ունեցող անարդարությունները, աններդաշնակությունը և այդ բոլորը պաշտպանող պետությունն ու եկեղեցին:

Նրանք գտնելով, որ մարդը տիեզերքի մոդելն է, ուրեմն պետք է մարդու մեջ էլ լինեին այդ երկու իրար հակառակ գործող ուժերը:

Մարդը, լինելով ակտիվ գործող էություն, պետք է կատարելագործվեր, հաղթեր իր ներսում գտնվող չարին, իսկ հետո էլ պայքարեր աշխարհում չարը վերացնելու համար: Այս էր պատճառը, որ Պավլիկյանները ընդունում էին միայն Նոր Կտակարանը՝ առանց Պողոսի թղթերի:

Նրանց պատկերացմամբ մովսեսական Յահվահը, որը միայն հոգ է տանում իր ընտրած ժողովրդի մասին և դրդում այդ ժողովրդին ոչնչացնել մնացածներին՝ կանգ չառնելով ամենաստոր միջոցների առջև, չի կարող նույնը լինել, ինչ Հայր Աստվածն է: Չկա անմիջական փաստեր, սակայն հնարավոր է, որ որպես Չարն Աստծո էություն Պավլիկյանները ընդունեին հենց Հին Կտակարանում նշված Յահվահին:

Ֆրանսիական ազգագրատներից մեկը, խոսելով Պավլիկյան շարժման մասին, նշել է, որ Պավլիկյան շարժումը

ցնցեց արևելքը և լուսավորեց արևմուտքը: Կարելի է ասել, որ սա շատ մեղմ բնութագիր է Պավլիկյան շարժման համար: Իրականում Պավլիկյան շարժումը դարձավ հիմքը այն բոլոր լավ գաղափարների, ձեռքբերումների, որը ունեցել է ոչ միայն Արևմտյան Եվրոպան, այլև Ռուսաստանը:

Պավլիկյանների մեծ զանգվածները մտան Բալկանյան թերակղզի և այնտեղ, տարածելով իրենց գաղափարները, հիմք դարձան, որ ձևավորվող բուլղարացիների մոտ ստեղծվի բոգոմիլների շարժումը, որը դարձավ գլխավոր գեները Բյուզանդիայի դեմ կռվում, որ ավարտվեց բուլղարացիների հաղթանակով և Մեծ Բուլղարիայի ստեղծումով:

Հայերի մեծ զանգվածներ, շարժվելով արևմուտք, բնակչություն հաստատեցին Փարիզում, Օւլեանում, Բորդոյում, Տուլուզայում, Միլանում և այլուր: Այս հայերի շնորհիվ էր, որ Ֆրանսիայում, Իտալիայում մեծ զարգացում ապրեց ճարտարապետությունը, գիտությունը, մշակույթը:

Բազմաթիվ արվեստագետներ անժխտելի են համարում հայ ճարտարապետության հիմնարար ազդեցությունը արևմտյան ճարտարապետության վրա:

Սկզբնական շրջանում արևմտյան կաթոլիկ եկեղեցին ոչ միայն չէր խոչընդոտում Պավլիկյաններին, այլև աջակցում էր նրանց և մի շարք հայեր մասնակցեցին նաև քրիստոնության տարածմանը Եվրոպայի հյուսիսային շրջաններում: Օրինակ՝ Ֆրանսիայում մինչև այժմ էլ սրբացվում է սուրբ Գրիգորը, որը 11-րդ դարում ապրել է Օւլեյանի մերձակայքում:

Նրա կենսագիրները նշում են, որ Գրիգորը եղել է ազգությամբ հայ և ծնվել է Փոքր Հայքի Միկոպոլիս քաղաքում: Գրիգորը, գալով Օւլեան, դիմում է ազգությամբ հայ կարդինալ Էրմեն Գարդիի քույր Ալիսին և խնդրում իրեն հող

հատկացնել եկեղեցի կառուցելու համար: Նրան հատկացվում է տարածք հայկական բնակավայրի շրջակայքում:

Պավլիկյանների գաղափարախոսության ազդեցության տակ Ֆրանսիայում և Իտալիայում ձևավորվում են Կատարների և Ալբիգոյցիների շարժումները, որոնք մեծ տարածում ստանալով՝ քարոզում էին սեր մերձավորի հանդեպ, ծարավ գիտության և գեղեցկության նկատմամբ:

Պապական իշխանությունները, տեսելով, որ այս շարժումները մեծ տարածում են ստանում, սկսեցին զինված պայքար նրանց դեմ: Պատմագիրը նշում է, որ ասպետներից մեկը արշավանքից առաջ հարցնում է Պապին, թե ինչպես կարելի է տարբերել ճշմարիտ հավատացյալին աղանդավորից: Պապը հանգիստ պատասխանում է, որ անհրաժեշտ է կոտորել բոլորին, իսկ Աստված վերևում կճանաչի իսկական քրիստոնյաներին:

Իտալական քաղաք-պետությունները ավելի հզոր էին, և Պապը չհանդգնեց Ֆրանսիայի հարավի նման ավերել նաև Իտալիան: Սրա շնորհիվ Իտալիայում սկսվեց ինչպես վերածնունդը, անյպես էլ հումանիստների շարժումը:

Պավլիկյանները թափանցեցին նաև Ռուսաստան, հատկապես մեծ էր Պավլիկյանների ազդեցությունը հյուսիսային և կենտրոնական շրջաններում: Վերջերս գտնվել է «Նովգորոդսկիյ կոդեքս» կոչվող գիրքը, որը Ռուսաստանում գտնված ամենահին սլավոնատառ գիրքն է:

Գրքում տրված է քրիստոնեության գլխավոր գաղափարները: Նրանում բացահայտ երևում է գաղափարախոսության դուալիստական բնույթը և գովերգվում են այն քրիստոնյաները, որոնք զենքը ձեռքերին պայքարել են բյուզանդական պաշտոնական եկեղեցու դեմ:

Գրքում բացահայտ երևում է Պավլիկյանների ազդեցությունը: Գրքի հեղինակը, որ իրեն համարում է Ալեքսանդր

Հայի եկեղեցու հետևորդ խնդրում է աղոթել Ալեքսանդր Հայի համար: Նշելով, որ Ալեքսանդր Հայը Քրիստոսի առաքյալն է և նրա առաջապահ զինվորը:

Ռուս ուսումնասիրող Զալիզյակը իր հոդվածում գրում է. «Անգամ իր ժամանակ Ալեքսանդր Հայը նույնացվել է աստծո հետ», վերջում ավելացնում է, որ տեղի ռուսները ընդհանրապես հայերին պաշտում էին որպես աստվածներ և աստծո որդիներ:

Պավլիկյան շարժումը դաժանորեն ճնշվեց, որը հանգեցրեց նրան, որ բնակչության շրջանում առաջացան գաղափարական տարանջատումներ: Հետագա շրջանում գործող կրոնական շարժումը ընդունված է կոչվել Թոնդրակ գյուղի անունով՝ Թոնդրակյան շարժում:

Այս շարժումը չունեի իր միասնական գաղափարախոսությունը, կային խմբեր, որոնք ընդհանրապես մերժում էին ոչ միայն կրոնը, այլև ցանկացած հասարակական կապվածություն, ընտանիք և քարոզում էին ամենաբոհի, անասնական բնագրիները:

Կային նաև խմբեր, որոնք մնացել էին հավատարիմ Պավլիկյան գաղափարախոսությանը, սակայն զգալով իրենց թուլությունը՝ բացահայտ չէին պայքարում և գործում էին թաքնված:

Իշխանությունները սրանց դեմ էլ դաժան պայքար էին մղում, սակայն մինչև վերջ էլ չկարողացան արմատախիլ անել այս շարժումը: Այժմ էլ հայության մի խոշոր մասի մոտ կա չթաքնված հակակրանք հոգևորականների նկատմամբ, որը գալիս է դեռևս թոնդրակեցիներից:

Պավլիկյան շարժումը չի կարելի նույնացնել այժմ արևմուտքից կազմակերպված Հայաստան բերվող աղանդների հետ: Պավլիկյան շարժումը դա ներքևից զինված փորձ էր հայոց եկեղեցին դարձնել ավելի ազգային, մոտ ժողովրդին:

Այն, որ Պավլիկյան հոգևորականները ոչ թե ցանկանում էին ապրել ժողովրդի հաշվին և հագուստով ու ապրելակերպով չտարբերվելով ժողովրդից, համարում էին իրենց բնակչության ուսուցիչներ ու խորհրդատուներ, ցույց է տալիս որ նրանք, ժողովրդի մասին մտածող իրական մտավորականներ էին:

Այժմյան աղանդները հեռացած են ոչ միայն հայությունից, այլև հայկական եկեղեցուց և քարոզում են ապազգային գաղափարներ, որոնք սպառնալիք են առաջին հերթին ոչ թե եկեղեցու, այլ հայության ու հայկական պետականությանը համար:

Այժմյան աղանդների դեմ կա պայքարի միայն մեկ ճանապարհ՝ անհրաժեշտ է, որ հայոց եկեղեցին դուրս գա իր դարավոր քնից, զինվի նորագույն ազգային գաղափարախոսությամբ և ոչ թե խոսքով, այլ գործով կանգնի հայության և ազգային դիմագծի պաշտպանության առաջին գծերում:

ԿՐՈՆԱՓՈՒՍ ՄՈՎՍԵՍԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԿՐՈՆԱՓՈՒՍ ՀԱՅԵՐ

Առաջին հայացքից այս վերնագիրը ոչ միայն տարօրինակ, այլև անբնական է: Մենք մեր առաջին հատորում ցույց տվեցինք, որ մովսեսականները ժողովուրդ են, որոնց միավորում է մովսեսական կրոնը: Այդ մասին նաև մանրամասն քննարկեցինք վերևում: Դրանից անմիջապես ծագում է այն միտքը, որ անհնարին է կրոնափոխ մովսեսականների գոյությունը:

Այդ մասին պարզորեն նշում է նաև Թորան, գրելով որ, ամեն ոք, ով ուրանում կամ շեղվում է Յահվահի նկատմամբ հավատից, պետք է մեռնի: Մովսեսական քաղաքագետ Ե.

Սատանովսկին գրում է, որ թեկուզ հազար անգամ անձնավորության հայրն ու մայրը լինեն հուդայական, եթե նա հրաժարվում է իր կրոնից, ապա դադարում է նաև այդ ժողովրդի անդամ լինելուց: Իսկ եթե անձի ոչ մի ծնողը արյունով այդ ժողովրդի հետ կապված չէ, բայց ընդունուում է կրոնը, ուրեմն այդ ժողովրդի ներկայացուցիչն է:

Չնայած այս բոլորին, պարզվում է, որ իրականում կան առերես կրոնափոխված մեծաքանակ մովսեսականներ, որոնց գործունեությունը մեծ հետք է թողել ինչպես ողջ մարդկության, այնպես էլ հատկապես հայերի պատմության վրա: Իսուքը վերաբերվում է սաբետի և մարանո էթնոսներին:

15-րդ դարի վերջին Իսպանիայի թագուհու հրամանով սկսվեց հալածանքներ մովսեսականների նկատմամբ: Նրանց մեծ մասը հեռացավ Իսպանիայից և բնակչություն հաստատեց այլ երկրներում: Մի մասն էլ առերես քրստոնեությունը ընդունեց և շարունակեց ապրել Իսպանիայում:

Երբ սկսում ենք ուշադիր ուսումնասիրել Իսպանիայի ինկվիզիցիայի պատմությունը, պարզվում է, որ ինկվիզիցիայի կառույցում ներգրավված հոգևորականների մի խոշոր մասը եղել են հենց կրոնափոխված մովսեսականները:

Այս կրոնափոխված մովսեսականները ստացել են մարոնո անվանումը: Արդեն անցել է ավելի քան 500 տարի, սակայն այս էթնոսի հոգեբանությունը և գործունեության ձևերը չեն փոխվել: Նրանք շարունակում են ամուսնանալ և բարեկամական կապեր հաստատել միայն իրենց ներսում, առերես չընդունելով մյուս մովսեսականներին՝ գործում են ելնելով իրենց նախկին ազգակիցների շահերից:

Պատահական չէ, որ 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական իշխանությունները տարբերություն չէին դնում մովսեսականների և սրանց միջև և

նրանց նույնպես կամ ուղարկում էին Պաղեստին կամ համակենտրոնացման ճամբարներ:

Մի քիչ այլ ձևով են ձևավորվել սաբերտիստները: Եթե Մարաները բռնությամբ էին ընդունել քրիստոնեությունը, ապա մարանոնները կամավոր մուսուլմանություն ընդունած մովսեսականներն են:

Այս շարժումը սկսվել է 16-րդ դարից և նրանց կենտրոնը եղել է Սալոնիկը: Արդեն 19-րդ դարի սկզբներին Սալոնիկում բնակվող հարյուր հազար մովսեսականներից ավելի քան քսանհինգ հազարը պատկանում էին մարոնո կոչվող էթնոսին:

Մարոնոները շատ ավելի ակտիվ են գործել սաբերտներից և նրանցից շատերը եղել են բացահայտ կամ թաքնված մասոններ և սիոնիստական կազմակերպության անդամներ: Տեղին է նշել, որ ինչպես երիտթուրքական պարագլուխները, այնպես էլ նրանց փոխարինած Աթաթուրքը եղել է մարոնո կոչված մովսեսականներից:

1908թ-ին, երբ երիտթուրքերը վերցրեցին իշխանությունը, առաջին անգամ ողջ համաշխարհային պատմության մեջ Կ. Պոլիսում գումարեցին մասոնների բաց համագումար, որում արդեն մատնանշվում էր հետագայում կատարվելիք իրենց քայլերը:

Մեր նշված օրինակները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ մովսեսականները գուցե աշխարհում ամենակազմակերպված, ամուր հիմքերի վրա դրված ժողովուրդն են, որոնք կարող են հարյուրամյակներով, թեկուզ թաքնված, պահպանել իրենց էությունը, տասնամյակների և անգամ հարյուրամյակների համար կազմեն ծրագիր և իրականացնեն այն քայլ առ քայլ:

Եթե դա հնարավոր է սոցիալական միավոր հանդիսացող ժողովրդի համար, բնական է, որ առավել ևս հնարա-

վոր է ազգի համար, որը ինչպես նշել ենք միասնական, ամբողջական, կենսաբանական միավոր է և պետք է կարողանա լուծել իր խնդիրները:

Ազգապահպանության հարցում դա կարելի է տեսնել բազմաթիվ ազգերի մոտ: Ճապոնացու համար ոչ մի էական նշանակություն չունի, թե իր ազգակիցը պատկանում է սինտո թե բուդդիզմ կրոններին: Ավելին, շատ ճապոնացիներ իրենք էլ լավ չգիտեն, թե այդ կրոններից, որին են դավանում:

Նույն ճապոնացին կարող է կնքվել սինտոյի տաճարում, իսկ մեռնելուց հետո թաղվել բուդդիստական արարողությամբ: Նույն ճապոնիայում բուդդայական տաճարներում դրվում է նաև սինտո կրոնի աստվածների արձանիկները, իսկ սինտոյիստական տաճարում էլ պարտադիր դրված է Բուդայի արձանը:

Յավոք սրտի հայության մեջ արմատավորված է այն կարծիքը, որ հայ և քրիստոնյա համարժեք հասկացողություններ են: Եվ դա գալիս է քրիստոնության ընդունման սկզբնական շրջանից:

Փավստոս Բուզանդը, խոսելով Մերուժան Արծրունու և Վարդան Մամիկոնյանի քրիստոնությունից հրաժարվելու մասին, նշում է, որ նրանց շատերը հետևեցին և հայերից շատերը պակասեցին: Այդ ժամանակ ընդամենը 50 տարի էր, որ քրիստոնությունը մտել էր Հայաստան և անգամ թարգմանված չէր Աստվածաշունչը: Հոգևորականները պատարագն ու քարոզները իրականացնում էին հայերին անհասկանալի՝ ասորերեն և հունարեն լեզուներով, իսկ հեղինակը հավասարության նշան է դնում քրիստոնեության և հայության միջև:

Որպեսզի պատկերացնենք, թե ով քրիստոնյա չէ, ուրեմն հայ չէ նշանաբանը, ինչքան մեծ վնաս է տվել հայությանը,

քննենք Լեհաստանի հայության դեպքերը, որ տեղի ունեցավ 17-րդ դարում: Այդ ժամանակ Լեհաստանում բնակվում էր մոտ հարյուր հազար հայ: Բազմաթիվ քաղաքներ հիմնվել էին հայերի կողմից և հիմնականում հայաբնակ էին: Հայերը մեծ տեղ ունեին ինչպես տնտեսության, առևտրի, այնպես էլ գիտության ու մշակույթի ոլորտներում: 17-րդ դարում Լեհաստանի հայկական համայնքի և եկեղեցու առաջնորդները, կաշառք վերցնելով իշխանություններից, ընդունեց կաթոլիկություն:

Հայկական եկեղեցու առաջնորդները ոչինչ չարեցին վիճակը շտկելու համար: Այս պատճառով Լեհաստանի հայությունը մնաց առանց հոգևոր առաջնորդի ու անպաշտպան: Իշխանությունները սկսեցին պարտադրել հայերին ընդունել կաթոլիկություն: Հայերը ստիպված եղան ընդունել կաթոլիկությունը, իսկ նրանց որոշ մասն էլ հատկապես սևծովյան շրջանի հայերը ընդունեցին մոլվեսականություն, որովհետև նույն ժամանակ լեհական իշխանությունները մեծ արտոնություններ էին տվել մոլվեսականներին:

Այդ պահին էր, որ Էջմիածինը անմիջապես արտահայտեց իր վերաբերմունքը: Կաթողիկոսները չէին խորշում Լեհաստանի մեծահարուստ հայերից նվիրատվություններ ստանալ, սակայն հայտարարեցին, որ Էջմիածինը չի ճանաչում Լեհաստանի հայությանը՝ որպես հայության մի մաս: Սա պատճառ դարձավ, որ կաթոլիկություն ընդունած հայության ճնշող մեծամասնությունը, հրաժարվի նաև հայությունից և ծովլի լեհերին: Այժմ, հավանաբար չկա Լեհաստանում բնակվող որևէ մարդ, որի երակներում չի ուսի հայկական արյուն:

Նույն դրդապատճառով միլիոնավոր հայեր աշխարհի տարբեր ծայրերում հեռացել էին հայությունից և փոխել իրենց ազգությունը: Վրաստանի բնկաչության ամենաքիչը մեկ-երրորդը իրականում ունեն հայկական ծագում:

Իվան Զաքարյանը, երբ ընդունեց վրացական ուղղափառություն, նրան հետևելով Կախետի և այլ շրջանների բազմաթիվ հայեր սկզբում ընդունեց ուղղափառություն, հետո սկսեցին խոսել ու գրել վրացերեն, իսկ վերջում էլ ընդհանրապես հրաժարվեցին հայությունից: Օրինակ՝ քչերը գիտեն, որ Գյուրջիև և Գյուրջիյան անունների հիմք կազմող գուրջի բառը նշանակում է պարզապես ուղղափառ հայ և նշանավոր Գյուրջիևը ոչ միայն մոր, այլև հոր կողմից հայ էր:

Այս տոհմի նման հազարավոր հայկական տոհմեր Բյուզանդիայի գոյության ժամանակ ընդունել էին ուղղափառությունը, իսկ հետո էլ պետական պաշտոններ գրավելու համար ուրացել էին իրենց ազգությունը:

Բազմաթիվ հայեր պարծենում են, որ Բյուզանդական կայսրերի կեսից ավելին ունեցել են հայկական ծագում: Հետաքրքիր է նրանք ուսումնասիրել են, թե այդ կայսրերից ով է որևէ լավ բան արել անձամբ Հայաստանի կամ հայության համար:

Դեռ ավելին հենց հայկական ծագման կայսրերի օրոք էր, որ դավադրաբար ոչնչացավ Անիի Հայկական թագավորությունը, որն էլ գլխավոր պատճառներից մեկն էր հետագայում հայության գլխին ընկած աղետների համար:

Այստեղ արդեն անիմաստ է խոսել կամավոր կամ պարտադրանքով իսլամ ընդունած հայերի մասին, որոնց հետ խոսելիս ինչպես պետությունն ու եկեղեցին, այնպես էլ անհատ հայերը, նրանց որպես հայ ճանաչելու առաջին պայմանը համարում են, որ այդ ստվար բնակչությունը պարտավոր է քրիստոնեություն ընդունել, որը ոչ միայն անհնարին է ու խոչընդոտում է հայության համախմբմանը, այլև խիստ վտանգավոր է այժմ, երբ արհեստականորեն լարված հարաբերություններ են ստեղծվում մեր տարածաշրջանում առանձին կրոնների և կրոնական ուղղությունների միջև:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերևում խոսեցինք Աղբյանոսների տոհմից ծագած չորս կաթողիկոսների գործունեության մասին և ցույց տվեցինք, որ նրանց կարճ, բայց հեղինակավոր գործունեության շնորհիվ հայկական եկեղեցին ստացավ որոշակի ազգային դիմագիծ: Դրա շնորհիվ հայկական եկեղեցու ներսում որոշակիորեն ամրապնդվեց այդ ուղղության ներկայացուցիչների դիրքերը:

Չնայած դրան, պետք է նշել, որ այս կաթողիկոսներից հետո հիմնականում եկեղեցին ղեկավարվել է ոչ ազգային դիմագիծ ունեցող կաթողիկոսների կողմից: Դա այնքան շեշտված է երևում եկեղեցու պատմության մեջ, որ նույնիսկ կաթողիկոսների ամենափոքր իսկ կատարած ազգանվեր գործը ժողովրդի կողմից շատ բարձր է գնահատվել և հակառակը՝ ժողովուրդը բնական է համարել, որ կաթողիկոսները և եկեղեցու բարձր աստիճանավորները միշտ պետք է գործեն երկրի և ժողովրդի դեմ:

Ո՛չ ժողովրդին և ո՛չ էլ նախարարներին չէր զարմացնում, որ Ներսես կաթողիկոսը ամեն գնով դեմ էր գնում Թեոդորոս Ռշտունուն, որը պատվաբեր և հայերին շատ ձեռնտու պայմանագիր էր կնքում արաբների հետ, և փաստորեն Հայաստանը դարձնում էր անկախ երկիր: Նա գտնում էր, որ թեկուզ երկրի ավերման գնով Հայաստանը պարտավոր է Բյուզանդիայի հետ կռվել արաբների դեմ:

Հովհան Օճնեցին, որը աչքի էր ընկել իր դաժանությամբ, պավլիկյանների դեմ պատիժներ կիրառելիս, նաև ողջ տարածաշրջանում խոսելիք էր դարձել նրա պճնամուլությունը, սակայն, երբ կարողացավ ի նպաստ ժողովրդի բանակցություններ վարել արաբների հետ, ժողովուրդը շատ բարձր գնահատեց նրան և Հայաստանի ժամանակավոր

խաղաղ վիճակի հաստատումը կապեց նրա անվան հետ, նույնիսկ ստեղծվեցին առասպելներ նրա կատարած հրաշքների մասին:

Չնայած համատարած ապագգային մթնոլորտին հայոց եկեղեցու ողջ պատմության մեջ կարելի է հանդիպել մեր նշած ազգային հոգևորականներին, որոնք դեմ գնալով ընդհանուր տրամադրություններին՝ կարողացել են շատ բան անել հայ ժողովրդի և հատկապես հայկական մշակույթի համար:

Միայն Մխիթար Սեբաստացին կամ Օրմանյանը, լինելով իրական քրիստոնյա հավատացյալներ, առաջին հերթին եղել են հայ հայրենասերներ և մտավորականներ և հաստատում են մեր ասածը, սակայն մեր նշած գիտնական հոգևորականները, թե որքան են տառապել հայ եկեղեցու ձեռքին: Երկուսն էլ ստիպված են եղել ընդունել կաթոլիկություն, որպեսզի կարողանան ապահովել իրենց անվտանգությունը ու շարունակեն ծառայել իրենց ժողովրդին:

Այդպիսի ազգային հոգևորական էր նաև Գևորգ 5-րդ կաթողիկոսը, որը Հայաստանի ամենաձանր օրհասական պահին հրաժարվեց հեռանալ Էջմիածնից Սևանի կղզի, և կոչ արեց հայ հոգևորականությանը հիշել Վարդանանց պատերազմը և զինվորների կողքին կռվել թուրք բարբարոսների դեմ:

Եթե հայ հոգևորականների ճնշող մեծամասնությունը Ավետարանի համաձայն կոչ էր անում չընդիմանալ թշնամուն, 13-րդ դարի վերջին Տարսաիճ Օրբելի իշխանի թոռ Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսը մերժեց այս կոչը և հիմնեց եկեղեցու հատուկ տեսակ, որտեղ զինվորականությունը կոիվ գնալուց առաջ օրհնություն և մեղքերի թողություն էր ստանում: Նկ. 16. Այսպիսի եկեղեցիները հետագայում կոչվեցին Ջորաց եկեղեցիներ:



Սկ. 16. Չորաց եկեղեցի

Երբ հայությունը սկսեց զինված պայքար թուրքական իշխանությունների դեմ, նորից ազգային հոգևորականության ներկայացուցիչներն էին, որ հաճախ զենքը ձեռքերին ոչ միայն գլխավորեցին հայերի պաշտպանողական մարտերը ջարդարարների դեմ, ինչպես 1894թ-ին Մալաթիայում Եղիշե քահանան, այնպես էլ մտան հայդուկյան ջոկատներ ու կռիվ էին մղում կանոնավոր զորքերի դեմ: Ժողովուրդը սիրով այդ հոգևորականներին տվեց «խենթ քահանա» ընդհանուր անունը:

Բայց նորից ստիպված ենք նշել, որ եկեղեցին անգամ սրանց դեմ պայքար էր մղում՝ վտարելով եկեղեցուց կամ այլ պատիժներ սահմանելով:

Ինչպես հայոց եկեղեցում, այնպես էլ ողջ հայության հպարտությունն ու պարծանքն է Մկրտիչ Խրիմյանը, որին ժողովուրդը սիրով կոչել է Հայրիկ:

Ուրիշ ոչ ոք այդքան կարճ, բայց դիպուկ չի նկարագրել հայ եկեղեցու անցած պատմական ուղին և նրա կատարած սխալները. «Երանի թե այսքան եկեղեցիներ կառուցելու փոխարեն, այդքան դպրոց ու բերդեր կառուցեինք»:

Ընդամենը այս մի նախադասությունը ցույց է տալիս, որ ինչպես առաջ, այնպես էլ հիմա մենք ավելի ու ավելի ենք ծանրացնում մեր վիճակը: Դպրոցներ կառուցելու և ժողովրդի ու բանակի վիճակը բարելավելու փոխարեն պատահական վայրերում հիմնում ենք ավելի ու ավելի շատ եկեղեցիներ, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն ժողովրդի ու հավատի հետ և պարզապես սառը անհրապույր կառույցներ են:

Բոլորին է հայտնի Խրիմյան Հայրիկի երկաթե շերտփի պատմությունը, որին մենք չենք անդրադառնա և կնշենք միայն դրանից մի պահ, որը մեր կարծիքով շատ կարևոր է և ընդհանրապես չի շոշափվում: Բեռլինում Խրիմյանը մոտենում է Օտտո Բիսմարկին և խնդրում նրան օգնել՝ լուծելու հայկական հարցը: Օտտո Բիսմարկը, դիմելով Խրիմյանին, ասում է. «Նայիր սերբերին, մինչև հիմա նրանց սրերից արյուն է կաթում, ո՞վ կարող է, ո՞վ կհանդգնի չլսել նրանց պահանջը: Գնա, գնա սևազգեստ և եթե մի անգամ էլ այսպիսի հավաք լինի, զինվոր ուղարկեք, զինվոր, որ լսվի նրա ձայնը»:

Այս հայրենասեր մարդը լավ է հասկանում, որ կիսազգային եկեղեցին կարիք ունի հիմնարար բարեփոխումների, որի համար էլ փորձեց գումարել եկեղեցական ընդհանուր ժողով, որը պետք էր արմատական բարեփոխումներ անցկացնել եկեղեցու կառուցվածքում, կառավարման մեխանիզմներում և կրոնական դոգմաներում: Սակայն նորից ապագայնացված հոգևորականները միավորվեցին նրա դեմ և հասան նրան, որ ժողովը փակվեց՝ չտալով որևէ արդյունք:

Խրիմյան Հայրիկը պատահական չէ, որ ամբողջ կյանքում չէր սիրում լինել էջմիածնում, այնտեղի հոգևորականների շրջապատում:

ԷԶՈՐԵՐԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քրիստոնեությունը, ինչպես նշեցինք, պայքարում էր այն ամենի դեմ, ինչը ոչ միայն դեմ էր քրիստոնեական հիմնական սկզբունքներին, այլև այն ուսմունքների դեմ, որոնք փորձում էին դրսևորել թեկուզ որոշակի չնչին ինքնուրույնություն:

Քրիստոնեական եկեղեցին դաժանորեն արմատախիլ արեց գնոստիկների գաղափարախոսությունը, հաշվի չառնելով, որ քրիստոնեական ուսմունքի կարևորագույն հենասյունը և գաղափարախոսության ընդհանրացնողը եղել էր գնոստիցիզմը:

Եթե 5-րդ դարի պատմիչների կատարած մեջբերումների շնորհիվ մեզ որոշակի ծավալով հասել են մեր հեթանոս պատմիչների աշխատություններից, ապա գիտության մշակույթի մյուս ճյուղերից, փաստորեն, գրավոր մեզ ոչինչ չի հասել:

Բազմաթիվ ուսումնասիրողներ հիմք ընդունելով, որ կարճ ժամանակահատվածում հայ ուսումնասիրողները կարողացան ձևավորել համակարգված, լավ մշակված պատմագրական դպրոց, աչքի ընկան մի շարք գիտնականներ գիտության այլ ճյուղերում, եզրակացրել են, որ պատմագրությունը և այլ գիտությունները պետք է, որ իրենց նշանակալի զարգացման փուլերն անցած լինեին արդեն նախաքրիստոնեական շրջանում:

Մենք տեսանք, որ սխալ է այն կարծիքը, թե Մեսրոպ Մաշտոցը դատարկ տեղում ստեղծել է հայկական այբուբենը: Պարզ է, որ նա անաղարտորեն վերականգնել է մեր հին հայկական քերականությունը: Մաշտոցի բեղուն գործունեությունը դրանով չի ավարտվել:

Հատկապես երաժիշտները և եկեղեցուն մոտ կանգնած մարդիկ լավ գիտեն, որ հայկական առաջին շարականները ստեղծվել են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կողմից:

Կասկած չի հարուցում, որ շարականների երաժշտությունը բնիկ հայկական է և շարականների երաժշտության բարձր մշակված լինելը ցույց է տալիս, որ ամենայն հավանականությամբ շարականների հիմքում նորից ընկած է հեթանոսական կրոնական երաժշտությունը:

Մաշտոցն ու Սահակ Պարթևը, որպեսզի հիմնեին մեր հոգևոր երաժշտությունը պետք է նաև քերականության հետ միասին վերծանեին մեր հնագույն խազերը ճիշտ ընկալելու համար երաժշտությունը:

Այս նախնական ինֆորմացիայի նշումից հետո տեղին է խոսել մեզ հասած բավականին առեղծվածային գրական ստեղծագործության մասին, որը հայտնի է որպես «Յոթնագրյանք», կամ «Վեցհազարյակի» /Գրքի մասին տվյալները վերցված են Պ. Մ. Պողոսյանի «Յոթնագրեանք»-ի առեղծվածը և «Դավիթ Անհաղթը» աշխատությունից/:

Այս գրքերի օրինակները մեզ հասել են մեծ քանակությամբ, սակայն գրման ձևից, նաև գրքին կցած գրիչների հաղորդած տեղեկություններից պարզ է, որ արդեն 13-րդ դարում այս գրքերի բովանդակությունը դարձել էր անհասկանալի գրիչների կողմից:

Պարզվում է, որ այս ստեղծագործությունները ունեցել են ծանր ճակատագիր: Անանիա Շիրակացին նախնական կրթություն ստանալուց հետո, փորձել է վերծանել այդ ժամանակ շրջանառության մեջ գտնվող օրինակները, սակայն անհաջող:

Ստիպված երկար դեգերելուց հետո, նա հասնում է Տրապիզոն Տյուքիկոս կոչված հույն գիտակի մոտ, որը մեծ հռչակ ուներ ողջ տարածաշրջանում, և նույնիսկ Կոստանադնուպոլսից գալիս էին նրա մոտ կատարելագործելու իրենց գիտելիքները: Անանիա Շիրակացին նշում է, որ այս մարդը չնայած հույն էր, բայց գերազանց տիրապետում էր

հայերենին և կարողանում էր հունական բնագիրը անմիջապես ընթերցել հայերեն:

Տյուբիկոսը իմանալով, որ Անանիա Շիրակացին Հայաստանից է, ցանկանում է ուսումնասիրել «Վեցհազարյակ», հայտնում է, որ ինքը Հայաստանում երկար փնտրտուքներից հետո կարողացել է վերծանել այդ աշխատության վերծանման բանալին: Անանիա Շիրակացին նշում է, որ այս ստեղծագործությունը այն փառքն է, որ ծածկում է ողջ Հայաստանը և լուսավորում այն:

Այս աշխատության հիմքը կազմում է հայկական այբուբենը և հատկապես նրա հիմքը կազմող յոթ ձայնավորները, որի համար էլ այս գրքերի տարբերակներից մեկը կոչվում է «Յոթնագրյանք»:

Այբուբենը քննվում է տառերը չորս սյուների բաժանման սկզբունքով: Անանիա Շիրակացին նշում է, որ եթե ուսումնասիրողը կարողանա բացել թեկուզ այդ սյուներից մեկը, ուրեմն կարող է 12 հազար ճառ ասել, որոնք կվերաբերվեն ոչ միայն հաշվանքի, այսինքն՝ լայն իմաստով թվաբանությանը, այլև այն ամենին, ինչ կարելի է ուսումնասիրել ու գիտենալ՝ սկսած բժշկությունից մինչև պատմություն ու աստվածաբանությունը:

12 հազար ճառ հասկացողությունը չպետք է հասկանալ բառացի: Այն նորից ունի թաքնագիտական իմաստ: Այստեղ այն նորից խորհրդանշում է ամբողջական՝ ողջ գաղտնի և բաց գիտելիքները, ըստ նրա նշման:

Այս աշխատության մեջ նշվում է, որ ամեն տառերի սյուները ունեն, ինչպես իրենց անունները, թվային համապատասխանելիությունը, այնպես էլ իրենց բնավորությունը, ազդեցության ոլորտը և աշխարհակառավարման իրենց տեղը: Նաև նշվում է, որ ամեն մի տառը նույնպես ունի իր բնավորությունը և ազդեցության ոլորտը:

Օրինակ՝ նշվում է, որ Ա տառը արքայական տառ է և սկիզբը ամեն արականության: Հետաքրքիր է, որ նույն ժամանակ առաջացել է մեր այբուբենի և տառերի մասին այն տեսակետը, որ ամեն մի տառ կազմված է իր ձևից, հնչյունից, թվից և գաղափարից:

Այժմ միայն մենք սկսում ենք շատ աղոտ պատկերացնել մեր առանձին տառերի իրական իմաստը և այբուբենի ընդհանուր կառուցվածքի իրականում աստվածային լինելը: Այժմյան մի շարք հայ ուսումնասիրողներ բավականին հաջող, սակայն դեռևս ոչ ամբողջությամբ սկսում են բացել այն, ինչ մեր նախնիները գիտեին հարյուրամյակ – հազարամյակներ առաջ:

Պատահական չէ տառերի դասավորության համապատասխանելիությունը միայն 19-րդ դարում հայտնագործած Մենդելեևի պարբերական աղյուսակի հետ: Նյութերի հին հայկական անունների տառերի թվային արտահայտումը համապատասխանում է այդ նյութի գրաված տեղին աղյուսակում:

Հետաքրքիր է, նաև այն, որ փորձ է արվել հայկական այբուբենը տեղադրել Չվարթնոց տաճարի մոդելում, որը նորից բավականին հաջող է ստացվել: Այս դրվագը նորից ցույց է տալիս, որ հնագույն շրջանում աշխարհի ուսումնասիրումը կատարվում էր ամբողջական: Բնական, հասարակական գիտությունները և մշակույթը դիտվում էին միասին:

Չվարթնոցի տաճարի համար Ներսես կաթողիկոսը ենթարկվել է խիստ քննադատության: Պատմության մեջ համարվում է, որ Չվարթնոցի տաճարը իր գաղափարական հիմքով քաղկեդոնական է, որովհետև Ներսես կաթողիկոսը ցանկանում էր հաշտեցնել հայկական և հունական եկեղեցիները ու միավորելով երկու ժողովուրդներին միասնական պայքար մղել արաբների դեմ:

Իրականում Չվարթնոցը ոչ միայն հունական, այլև ընդհանրապես քրիստոնեական գաղափարախոսության հետ չունի որևէ կապ: Նրա շրջանաձև հիմքը նորից գալիս է 12 թվի և կայուն համակարգված շրջանի գաղափարից: Նրա դրսից 3 հարկերի բաժանումը և 4 մուտքեր ունենալը ցույց է տալիս սուրբ երրորդության և սուրբ չորրորդության գաղափարը, որոնց մասին մենք մանրամասն գրել ենք գրքի առաջին հատորում:

Երրորդություն գաղափարը ներկայացնող եռահարկ կառույցը չի համապատասխանում քրիստոնեական սուրբ երրորդության գաղափարին: Քրիստոնեական եկեղեցիները նույնպես բաժանվում են երեք մասի, սակայն այս մասերի միջև կա բաժանում, որովհետև քրիստոնեությունը ընդունելով սուրբ երրորդության միասնությունը, նաև ընդունում է Հայր Աստծուն, Որդի Աստծուն և Սուրբ Հոգուն որպես առանձին անհատականություններ:

Չվարթնոցի պարագայում այս բաժանումը թվացյալ է: Ներսից տաճարն ամբողջական է, որովհետև ըստ հին հայկական հավատի, աշխարհի բաժանումը նյութական, հոգևոր ու ոգեղեն մասերի հարաբերական է, հատկապես տիեզերքի կենտրոնում նրանք մշտապես փոխարինվում են մի ձևից մյուսին: 360 պատուհանները խորհրդանշում էին տարին, քանի որ 5 հավելյալ օրերը չէին հաշվում:

Անանիա Շիրակացու, նաև մեզ հասած օրինակների նշումները հաստատում են, որ դեռևս Դավիթ Անհաղթը լավ ծանոթ էր «Յոթնագրյանքին»: Մի քանի ուսումնասիրողներ հայտնել են այն կարծիքը, որ այս աշխատությունը Դավիթ Անհաղթը վերցրել է հույներից և հարմարեցրել հայկական այբուբենին:

Այսպիսի կարծիք ընդունելու դեպքում մենք ստիպված կլինենք ընդունել, որ Անանիա Շիրակացու պես մեծ մտա-

ծողը չի կարողացել հասկանալ, որ այս էզոթերիկ, ամբողջական աշխատությունը իրականում հարմարեցված է հայկական այբուբենին, բայց հայտնագործված և հղկված է հունական այբուբենի հիման վրա: Հույն Տյուքիկոսի պահվածքը հակառակն է ապացուցում:

Դժվար է պատկերացնել, որ հույն գիտնականը, որը արդեն գիտե, կոնկրետ այդ գիտությունների համակարգը կորած է Հայաստանում, կփորձեր թեկուզ որոշակի թերություններով հարմարեցնել հունական այբուբենին, եթե դա լիներ հնարավոր: Իսկ որ այդ աշխատությունը եղել է էզոթերիկ, պարզ երևում է Անանիա Շիրակացու հղումից, որ աշխատությունում հավաքված են ոչ միայն բոլոր բաց (էկզոթերիկ) այնպես էլ փակ (էզոթերիկ) գիտելիքները:

Բազմաթիվ գիտնականների միասնական աշխատանք է անհրաժեշտ, գտնելու համար այն կապերն ու ընդհանրությունները, որ գոյություն ունեն տառերի, թվերի և ձայնի (նոտաների) միջև:

Ըստ որոշ ուսումնասիրողների Կոմիտասը յոթ նոտաները կապում էր յոթ թվերի հետ, գտնելով, որ առաջին երեք նոտաները արտահայտում են երկրային սուրբ երրորդությունը, իսկ վերջին երեքը՝ երկնային սուրբ երրորդությունը: Ֆա նոտան այս համակարգում դառնում էր մեր քննարկած Աստծո, կենաց ծառի, երկիրն ու երկինքը իրար միացնող էությունը:

Եթե ճիշտ է այս ենթադրությունը, կարելի է կարծել, որ մեր նախնիները, եթե չէին էլ հայտնաբերել, ապա գոնե գիտեին, որ գոյություն ունի նաև ութերորդ նոտան, որը պետք է համապատասխաներ տիեզերական կանոնավոր դաշտից եկող ինֆորմացիային՝ Արամազդին: Այս գաղափարը գուցե օգնի հասկանալ ձայնի, երաժտության ազդեցությունը ոչ միայն օրգանիզմի ու առողջության վրա, այլև

ինչպես կարելի է ազդել ձային, խոսքի միջոցով մեր շրջակա բնության վրա:

Հավանաբար պատահականության արդյունք է, որ երբ երրորդ անգամ «Յոթնագրյանքը»՝ նրա վերծանման բանալին կորավ, կարճ ժամանակից հետո Իսպանիայում մովսեսական ուսումնասիրողները սկսեցին կազմել իրենց էզոթերիկ Կաբբալա կոչվող աշխատությունները: Չնայած երկու ժողովուրդների ուսումնասիրողների միջև կապը ժխտել հնարավոր չէ:

Մոնղոլների արշավանքի և տիրապետության շրջանում նորից Հայաստան թափանցեցին մովսեսականները, որոնք հիմնականում լինելով հարկահավաքներ, բնական է կրթված էին և լավ էին հասկանում էզոթերիկ գիտությունների նշանակությունը:

Կաբբալա բառը եբրայերեն լեզվով փորձ է արվում բացատրել որպես. «Ստացում», կամ ստանալ: Այն կարող է նաև ունենալ հայերեն բացատրություն և նշանակել «Կապ Արայի հետ»:

Եթե այս անվան ծագման հարցը բավականին վիճելի է, ապա Կաբբալայի գաղափարական կապը հայկական աշխարհաճանաչման հետ ակնհայտ է և դրան հակառակ, որքան էլ փորձում են մովսեսականները այն կապել իրենց կրոնի հետ, զգացվում է դրա կեղծ լինելը:

Առաջին հերթին խիստ տարբերվում են իրարից պատկերացումներն աստծո մասին: Եթե Թորայում Յահվահը հանդես է գալիս որպես մարդ – աստված իր լավ և վատ գծերով, ապա Կաբբալայում աստված արդեն 10 շերտերից կազմված բարդ էություն է՝ օժտված մտավոր, զգացումային և նյութական խմբավորումներով: Նաև Աստված, որը իր մեջ ամփոփելով ողջ տիեզերքը հանդես է գալիս ինչպես արա-

կան, այնպես էլ իզական դրսևորումներով՝ կրելով իր մեջ արական և իզական նախասկիզբները:

Այստեղ Թորան այնքան արհեստական է մեկնաբանվում, որ ընդհանրապես կորցնում է իր նախասկզբնական իմաստները: Կաբբալան, օրինակ՝ պնդում է, որ ոչ թե աստված է դրախտից վտարել Ադամին ու Եվային, այլ Ադամն ու Եվան են իրենց հոգուց վտարել աստծուն և դրախտ վերադարձը կլինի այն ժամանակ, երբ մարդը կատարելագործվելով իր մեջ կգտնի աստծուն:

Կաբբալան հենվելով այն գաղափարի վրա, որ աշխարհը արարվել է տառերի ու թվերի հիման վրա, փորձել է 22 առանց ձայնավորների կազմված այբուբենով ներկայացնել աշխարհի արարումը:

Ավելի հեռու գնալով՝ կատարվել են փորձեր ներկայացնել Թորան՝ որպես ամբողջությամբ էզոթերիկ գրականություն, որի ամեն մի բառն ու տառը պարունակում են թաքնված իմաստ: Իրականում այդ բոլորը զուրկ են որևէ տրամաբանությունից և կարող են իրենց ձգել միայն առանց տրամաբանության, կույր հավատ ունեցող անգրագետ մարդկանց:

Նաև նշեմ, որ Կաբբալան չի կարող լինել «Յոթնագրյանքի» համար բացահայտման հիմնական բանալի, քանի որ մովսեսականները Կաբբալան իրենց շահերին հարմարեցնելու պատճառով այս գործերը աշխարհաճանաչողական շատ կարևոր տարբերություններ ունեն:

Մենք ասացինք, որ «Յոթնագրյանքը» ամբողջությամբ սպասում է իր վերծանողին, որը շատ դժվար գործ է, ոչ միայն այն պատճառով, որ մեծ դժվարությունների հետ է կապված վերծանման բանալու գտնելը, այլև այն պատճառով, որ մեզ հասած բոլոր օրինակները գրվել են այն ժամանակ, երբ արդեն վերծանման բանալին կորել էր և աղավաղումները օրինակներում չափից դուրս շատ են:

Վերջին լուրջ փորձը վերձանման արել է Ամիրդովլաթ Ամասիացին, սակայն նրան հետաքրքրել է միայն բժշկությանը վերաբերող հարցերը: Նա նույնպես նշում է, որ աշխատության ուսումնասիրումը կարող է մեծ հնարավորություններ ստեղծել բժշկության զարգացման համար, սակայն նա նույնպես մեզ չի փոխանցել վերձանման բանալին:

Հայկական տառերի տեսքի գաղափարական բացահայտման խնդիրը նույնպես հետաքրքրել է մի շարք ուսումնասիրողների և արվել են մի քանի կարևորագույն հայտնագործություններ:

Առաջին կարևոր եզրակացությունը այն է, որ մեր տառերը կան ոչ միայն հայկական ժայռապատկերներում, այլև Հայաստանից շատ դուրս, օրինակ՝ ինչպես վերջերս ներկայացվեց լայն հասարակությանը հայկական տառերի նմուշներ հայտնաբերվել են հեռավոր Բոլիվիայում:

Այս խնդիրը նույնպես կարիք ունի մեծ ուշադրության, բայց վստահորեն կարելի է պնդել, որ մեր տառերի տեսքը ունի կարևոր նշանակություն և այժմ էլ բացահայտ կարելի է տեսնել հայկական որոշակի տառերի ազդեցությունը ինչպես համամարդկային խորհրդանիշների տեսքով, ինչպիսին է մեր ջ տառը, որը համապատասխանում է աղբյուր խորհրդանիշին, կամ է տառը, որպես էություն և կենաց ծառի խորհուրդ: Մ, Ն և Տ տառերը ընկած են հույներից շատ առաջ Միկենիան մշակույթում և օգտագործվել է որպես խճանկարների շրջանակ:

Շատ ավելի վատ է ուսումնասիրված հայկական տառերի գաղափարական իմաստը, երբ մի տառի փոփոխումը բերում է նոր գաղափարի, կամ տալիս՝ հակառակ իմաստը:

Հայերեն և ընդհանրապես բոլոր լեզուներում գոյություն ունեցող այր, ար արմատը նախալեզվում ընդհանրապես նշանակել է մարդու աստվածային մաս, ոգեղենություն և երբ

հարերեն այր արմատից առաջ դրվում է ոգեղենություն, արականություն արտահայտող Հ տառը, մենք ստանում ենք հայերեն հայր բառը, որը ցույց է տալիս տվյալ անհատի մնայուն, հոգևոր կապը տիեզերական ոգեղենության հետ:

Մ-տառի դեպքում, որն արտահայտում է նյութականացում, թանձրացում ստացվում է մայր հայերեն բառը, որը ցույց է տալիս տվյալ մարդու կապը նյութական աշխարհի, իր միջավայրի հետ:

Այժմյան հասկացողությամբ մարդու գենոֆոնդը, ըստ մեր այբուբենի տրամաբանության գալիս է հորից, իսկ մարդու տեսքը ֆենոտիպը՝ գալիս է մորից: Գուցե դրա համար են հայերն ասում, որ երեխան քանի չի մեծացել և նրա մեջ չի ամրապնդվել իր հայրական արյունը, նա նման է լինում իր մոր եղբորը:

Այժմ մենք կփորձենք հայկական այբուբենի վրա հենվելով բացահայտել հին հավատի համաձայն աշխարհի արարումը: Սա առաջին փորձն է և չեմ ցանկանում պնդել, որ այս փորձը ամբողջությամբ ճիշտ է, բայց կուզեի շեշտել, որ անհրաժեշտ է հայոց այբուբենի, նրա տառերի դասավորության և տեսքի վրա հենվելով շարունակել փորձերը էզոթերիկայի ուղղությամբ:

Հայերեն լեզվում պահպանվել են բազմաթիվ արմատներ, որոնց մի մասը կա այժմ գործող բոլոր լեզուներում և կան արմատներ, որոնք հատուկ են հիմնականում արիական լեզուներում: Բայց հայերեն լեզուն տարբերվում է մյուս լեզուներից նրանով, որ այդ արմատները գաղափարական տրամաբանական հիմք ունեն միայն հայոց լեզվում:

Առաջին հերթին դրանք հայերեն ցուցադրական այս, այդ, այն արմատներն են: «Յոթնագրյանքում» Ա տառը համարվում է ամեն ինչի սկիզբը, արքան և արիական տառ: Հայերեն Յ տառի մասին մենք գրել ենք նաև նախկինում,

նշելով, որ այն համապատասխանում է նյութականություն, իգականություն արտահայտող գաղափարին, որի համար էլ նմանեցված է ցուլի կոտոշներին: Այս մասին կա նշում նաև «Յոթնագրյանքի» մեջ:

Այս նշած ցուցադրական բառերում Ա և Յ տառերի կապը որպես արական և իգական սկիզբների, պարզ երևում է, որի արդյունքում ըստ էզոթերիկ պատկերացման ձևավորվում են երրորդ տառերը:

Դրանից հետո ստեղծված արմատը կարող է հանդես գալ Յ տառի գոյությամբ ինչպես ցուցական դերանուններ, այնպես էլ առանց Յ-ի որպես աս, ատ և ան արմատների: Եթե մեր նշված ձևով սրանք ցույց են տալիս մեր շրջապատը, որի ձևը բնության մեջ համարվում է կատարյալ, ապա սրանց հակառակ ընթերցումը որպես սա, դա, նա տալիս է ոչ կանոնավոր մեր տարածության պատկերումը, որից ծագել է բազմաթիվ ժողովուրդների պատկերացումներում և կրոններում չարության և քառսի բևեռ սատանան:

Ըստ էզոթերիկ պատկերացումների տարածությունը, նյութը գոյություն ունի միայն այն դեպքում, երբ կա սուբյեկտը, որն ազդում է, ուսումնասիրում է և ազդվում է այդ նյութից: Պատահական չէ, որ Զրադաշտն ասում էր. «Երբ երկար նայում ես անդունդին, ապա անդունդն էլ սկսում է նայել քեզ»:

Այս պարագայում այդ արարողը, ուսումնասիրողը ազդողն ու ազդվողը ներկայացվում է այր կամ ար արմատով: Այսինքն, նախասկզբնական ձևավորված տիեզերքում (ցուցադրական դերանունները), պետք է լիներ ար-ը՝ Արարիչը, որով սկսվեր տիեզերքի արարումը:

Հունական առասպելներից մեր այս նշածը համապատասխանում է անծայրաճիր տարածքը ներկայացնող Ուրանիոսին: Այս դեպքում մենք ունենք նաև նույն սկզբունքով կազմված Քրոնոսին՝ հանձինս հայերեն այմ արմատի:

Այժմ ամ թարգմանվում է որպես տարի, բայց հին հայերենում նշանակում էր ոչ միայն ժամաանկ, այլև փակող ամբողջացնող երևույթ: Այս չափանիշները համապատասխանում է նշված Քրոնոսին, որը լինելով ժամանակը, նաև հանդես է գալիս որպես անծայրածիր տարածության սահմանափակող:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՎՐԱ

Մեր կատարած եզրկացություններից հետո ցանկացած լուրջ ուսումնասիրող մեզ կհակաճառի, որ չի կարող քրիստոնեությունը պատճառ լինել հայությանը պատահած դժբախտությունների համար:

Դրա լավագույն ապացույց կարող է լինել Եվրոպական ժողովուրդների պատմությունը, որոնք լինելով քրիստոնյաներ, ոչ միայն պահպանել են իրենց ինքնուրույնությունը, այլև հաստատել աշխարհում իրենց գերիշխանությունը:

Այս բոլորը հասկանալու համար անհրաժեշտ է մանրամասն քննել այն հիմնական սկզբունքները պատմական զարգացումները, որոնց պայմաններում ձևավորվել է քրիստոնեական տարբեր ուղղությունները:

1. Կաթոլիկություն

Կաթոլիկ եկեղեցին առանձնացավ և առանձին ուղղություն դարձավ 11-րդ դարում: Այդ ժամանակ սկսվել էին խաչակրած արշավանքները և եկեղեցին իր հիմքում դրեց պայքարի գաղափարը, ըստ որի առաջին հերթին ամեն մի քրիստոնյա իրեն պետք է համարի Քրիստոսի առաջապահ զինվոր և նրա սրբազան պարտքն է թեկուզ զենքը ձեռքին

քրիստոնեությունը տարածել մյուս անհավատների և քրիստոնեական մյուս ուղղությունների շրջանում:

Սա բերեց ոչ միայն միսիոներական գործունեությանը, երբ քրիստոնյա կաթոլիկները, որպես զենք ունենալով ավետարանն ու խաչը, գնում էին քաղաքակրթությունից կտրված ժողովուրդների մեջ, այլև զենքը ձեռքերին, հրով ու սրով տարածում էին քրիստոնեություն:

Կաթոլիկները քրիստոնեությունից, որպես հիմնական սկզբունք վերցրեցին. «Միշտ ձիդ ու սուրդ պատրաստ պահիր, ձին ու սուրը պատերազմի համար են» կոչը: Պատահական չէ, որ հարյուրամյակներ գործեցին խաչակիրների ստեղծած օրդենները, որոնք ահ ու սարսափի մեջ էին պահում ոչ միայն Մերձավոր Արևելքի ժողովուրդներին, այլև հետագայում դարձան Եվրոպայում պատերազմներ հրահրող գլխավոր ուժը:

Պատահական չէ, որ գերմանացիները և Եվրոպայի ողջ բնակչությունը լավագույն կռվողներ են համարում պրուսիացիներին, որոնք իրենց արմատներով գալիս են Տևտոնական ասպետներից: Այս բոլորը Եվրոպացիների շրջանում ամրապնդեցին մարտունակության ոգի:

Քիչ նշանակություն չունեցավ նաև Եվրոպացիների ծագումը: Նրանց ծագման գլխավոր հիմքը գերմանական ցեղերն են: Նրանք չէին ստեղծել ամուր, միասնական պետություն, հաճախ նաև կռիվներ էին մղում հարևանների և իրար դեմ: Չնայած այդ բոլորին հարյուրամյակներ շարունակ ոչ միայն հաջողությամբ պայքարում էին հռոմեական կատարյալ ռազմական մեքենայի դեմ, այլև ի վերջո կարողացան գրավել և ոչնչացնել այն:

Պատահական չէ, որ գերմանացիների հիմնած առաջին թագադրված թագավոր Քլոդվիկն ու նրա բոլոր հաջորդները

մինչև մեր օրերը բոլոր խնդիրները, այդ թվում նաև կրոնական, լուծում են գենքի միջոցով:

Վերջին երեք հարյուր տարին, եվրոպական ժողովուրդների մոտ, դրսի ազդեցության տակ, թուլացել է կաթոլիկ եկեղեցու կողմից արմատավորած մարտնչող ոգին:

Պատմությունը այնպես է ներկայացվում, որ վերջին երեք հարյուր տարվա ընթացքում է եղել Եվրոպայի իրական բարձրացումը, սակայն ավելի խոր ուսումնասիրումը ցույց է տալիս, որ իրականում եվրոպական ժողովուրդները այդ ամբողջ ժամանակ օգտագործվել են որպես հումք և երեք հարյուր տարի տված գոհողություններից հետո նրանք վերջին 70-80 տարին ստացել են նյութական, հոգևորից կտրված իրենց անհոգա առօրյան:

Աստիճանաբար նրանց մեջ մեռնում է այն դրականը, որ բերել էր կաթոլիկ եկեղեցին և եվրոպացիները ավելի ու ավելի էին դառնում անտարբեր հոգևոր արժեքների, հայրենիքի ճակատագրի և ազգային արժեքների նկատմամբ: Եվս 20-30 անհոգ տարիներ և Եվրոպան կմնա առանց եվրոպացիների:

2. Ուղղափառ եկեղեցի.

Ուղղափառ եկեղեցու հիմնական սկզբունքները ձևավորվեցին հզոր պետության՝ Բյուզանդիայի գոյության ժամանակահատվածում: Կրոնի հիմնադիրներին բավականացնում էր գոյություն ունեցող քաղաքական և հասարակական վիճակը:

Այս պատճառով այս ուղղությունը իր առջև չէր դնում հարձակողական գաղափարախոսություն այլ իր նպատակն էր դարձրել միանման հարաբերությունների հաստատումը տարածաշրջանում:

Սա էր պատճառը, որ Բյուզանդիայում ազգային պատ-

կանելիությունը ուներ երկրորդական նշանակություն և կայսր կամ այլ բարձր պաշտոնյա կարող էր դառնալ ցանկացած ազգի ներկայացուցիչ:

Դրան հակառակ միաձուլված պետությունն ու եկեղեցին ամեն ինչ անում էին իրենց ենթակա տարածաշրջանում ձևավորելու համար միանման կրոնական դոգմաներ:

Կոնստանտինի կողմից ընդունված որոշումները կայսրերին դարձրել էին նաև եկեղեցու առաջնորդներ, որի շնորհիվ էլ եկեղեցին գտնվում էր պետության անմիջական հսկողության տակ և օժանդակում էր պետության հզորացմանը:

Երբ Բյուզանդիան ոչնչացավ, նրա տարածքում բնակվող ազգերը, պարզվեց, որ չունեն այն մարտունակ ոգին, որը ձևավորել էր կաթոլիկ եկեղեցին իր հավատացյալների շրջանում: Սա էր պատճառներից մեկը, որ ուղղափառ հավատ ունեցող ժողովուրդները, առանց լուրջ դիմադրության, ենթարկվեցին օտար նվաճողներին:

Առանձին քննարկման նյութ է քրիստոնեությունը Ռուսաստանում: Վլադիմիրից առաջ նրա որդի Սվյատոսլավը տարածաշրջանի ամենառազմականացված իշխանություններից մեկի ղեկավարն էր: Նա երազում էր իր իշխանության տակ միավորել բոլոր սլավոնական ժողովուրդներին և հաջողությամբ կոչում էր ինչպես թուրքական ցեղերի, այնպես էլ հզոր Բյուզանդիայի դեմ:

Վլադիմիրը դառնալով քրիստոնյա, անմիջապես փոխեց Ռուսաստանի վարած քաղաքականությունը և սկսեց վարել պաշտպանողական քաղաքականություն: Քրիստոնեության տարածումը արագացրեց երկրի մասնատումը և ազգամիջյան պատերազմները:

Քրիստոնեության տարածման մեջ մեծ տեղ ունեին հայերը: Հայերի՝ հատկապես պավլիկյանների ազդեցության շնորհիվ ռուսների շրջանում սկսեց ամրապնդվել սերը մշա-

կոյթի, գիտության և հատկապես պատմագրության ոլորտներում, իսկ մյուս կողմից էլ եկեղեցին շատ ավելի մեծ ազդեցություն ձեռք բերեց երկրի կառավարման գործում, քան կար Բյուզանդիայում: Կրկնվեց ավելի փոքր մաշտաբով նույնը ինչ եղել էր դարեր առաջ Հայաստանում:

Հունական հոգևորականները ավելի մտահոգված էին իրենց անձնական շահերով և Բյուզանդիայի դիրքերի ամրապնդումով, քան համապետական խնդիրների լուծումով: Վիճակը չփոխվեց նաև Բյուզանդիայի կործանումից հետո: Իվան Ահեղը, որը աչքի էր ընկնում իր կոշտ, բռնկվող բնավորությամբ մինչև վերջ չկարողացավ ազատվել եկեղեցու ազդեցությունից ու ճնշումից:

17-րդ դարի երկրորդ կեսին պատրիարխ Նիկոնը, որը մեծ ազդեցություն ուներ ցարի վրա, փորձեց եկեղեցական բարեփոխումների միջոցով ավելի ամրապնդել իր դիրքերը և երկրում հաստատել կիսակրոնական պետություն:

Տար Ալեքսեյը, լավ հասկացավ Նիկոնի՝ հեռու գնացող ծրագրերը, նա թողեց, որ Նիկոնը դաժան հաշվեհարդար տեսնի ազգային հոգևորականների դեմ, որից հետո եկեղեցու իշխանությունը ավելի սահմանափակելու համար աքսորեց նաև Նիկոնին:

Այս գործընթացը ավարտեց Պետրոս առաջինը: Նա շարունակեց դաժան հաշվեհարդարը ազգային հոգևորականության՝ հնաժիսականության դեմ, իսկ հետո վերացրեց պատրիարխությունը՝ ստեղծելով Սրբազան սինոդը, որը ամբողջությամբ ենթարկվում էր ցարին և դարձել էր պետական ապարատի մի մասը: Սրանից հետո եկեղեցին այլևս որպես ուժ Ռուսաստանում գոյություն չունեց և ռուս ցարերը, առանց ներքին խոչընդոտների հանդիպելու, վարում էին իրենց ներքին և արտաքին քաղաքականությունը:

3. Բողոքականություն.

Այս քրիստոնեական ուղղությունը առաջացավ 17-րդ դարում: Սրա հետևորդները ստիպված էին դաժան պայքար մղել պաշտոնական՝ կաթոլիկ եկեղեցու դեմ: Այս պայքարը, ընդունում էր ինչպես բաց՝ զինված, այնպես էլ թաքնված բնույթ:

Սրա հետևանքով բողոքականների մոտ ամրապնդվում է անհանդուրժողականությունը այլ գաղափարների նկատմամբ, դաժանությունը, որոնք շատ լավ դրսևորվեցին այն երկրներում, որտեղ ընդունվեց կելվինիզմը: Շվեյցարիայում ավելի պայծառ էին մարդկանց այրող խարոյկները, քան այն, որ վառում էին կաթոլիկ երկրներում ինկվիզիցիայի ծառայողները:

Նոր աշխարհում ամրապնդվելով և զգալով իր ուժը՝ բողոքականությունը սկսեց գործել ազատ; Շատ բան կարող էր սովորել ինկվիզիցիան ամերիկյան իր գործընկերներից: Վիուկների որսը այստեղ շարունակվեց մինչև 19-րդ դար:

Բողոքականությունը նաև արմատավորում է իր հավատացյալների շրջանում կեղծավորություն, շրջապատից իր հավատն ու տեսակետները թաքցնելու ընդունակություն և ամեն գնով ուրիշի ենթակայությունից, ազդեցությունից ազատվելու և իր ազդեցությունը նրանց վրա տարածելու ձգտումը: Այս բոլորը ձևավորեցին բողոքականների շրջանում ձեռներեցություն, դիվանագիտական տաղանդ և ուրիշների վրա իշխելու ձգտում:

4. Հայ Առաքելական եկեղեցի.

Ինչպես տեսանք Հայաստանում եկեղեցին հիմնականում քարոզում էր օտարամոլություն, ենթարկվել օտարին, լինել պասիվ քաղաքացի, և դաժանորեն, ինչպես աղանդավորների դեպքում, ոչնչացնում էր այլախոհությունը:

Ամեն պետության ղեկավար, երկրի վերնախավի ներկայացուցիչ պետք է տարին տարու վրա արմատախիլ անի ժողովրդի միջից այն բոլորը, ինչ խորթ է տվյալ ժողովրդին, ինչը թուլացնում է տվյալ էթնոսի պայքարի ոգին:

Մեր եկեղեցին գործել և քարոզել է ենթարկվել օտարին, որի համար էլ առաջին պլան մղվել է ոչ թե հաղթող զինվորի, որը կռվում է հայրենիքի համար, այլ եկեղեցու համար նահատակվողի, մարտիրոսավորի կերպարը:

Այս բոլորը չէր կարող զուր անցներ, աստիճանաբար հայության մեջ սկսեց արմատավորվել զգուշավորությունը, ընտանիքում փակվելու ցանկությունը և ի վերջո հայերի ճնշող մասը, լինելով խելացի անհատներ, դադարեցին իրենց զգալ հասարակության անդամ, ազգի ներկայացուցիչ, որը պարտք ունի ազգի առջև:

Այս բոլորից հետո զարմանում ենք, թե ինչու հայը օտար երկրներում, մեծ մասամբ իր կրոնը փոխելուց հետո, աչքի է ընկնում որպես հմուտ դիվանագետ, տաղանդավոր զորավար և մոռանում իր ազգային պատկանելիությունը:

Կրոնական ուղղությունների ազդեցությունը կարելի է նաև տեսնել՝ համեմատելով Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին կաթոլիկ հայերի հետ:

Որպես օրենք այն հայկական գյուղերը, որոնց բնակիչները եղել են կաթոլիկները, ավելի համախմբված են, համայնքի մասին մտածող և ավելի արդյունավետ են դիմադրել թշնամուն: Ցավոք սրտի նրանց մեծ մասը մեր եկեղեցու վարած քաղաքականության հետևանքով կամ հեռացել է հայությունից կամ բավականին թշնամական դիրք է գրավել հայկական Առաքելական եկեղեցու նկատմամբ:

Այդ մասին կարելի է նաև օրինակներ տեսնել պատմությունից: Ֆրանսիական գեներալ Շարդենը՝ որպես պատվիրակության ղեկավար, գնում էր Կ. Պոլիս, անցել է նաև Հայաս-

տանով: Նա նշում է, որ հայերը մշտապես ենթարկվում էին քուրդ ավազակների հարձակումներին, և միակ վայրում, որտեղ նա տեսավ, որ հայերը դիմադրում էին ավազակներին հայկական կաթոլիկ գյուղն էր:

Սարսափելի է այն նշումները, որ քրդերը լա՛վ գիտեին, թե երբ են հայ ուխտավորները գնալու կրոնական կենտրոններ և նվիրատվություններ անելու եկեղեցուն: Տարին տարու վրա անմիջապես եկեղեցական տոներից հետո քրդերը հարձակվում էին այդ եկեղեցիների վրա և թալանում ժողովուրդի բերած նվիրատվությունները:

Ոչ ժողովուրդը և ոչ էլ հոգևորականությունը այդպես էլ չմտածեցին, որ անհրաժեշտ է պաշտպանել իրենց ունեցվածքն ու պատիվը: Եվ դա բնական էր, որովհետև հարյուրամյակներով հայոց եկեղեցին քարոզել էր, որ եթե հարվածում են մի այտիդ շուռ տուր մյուսը, եթե քեզանից ուզում են քո վերնագգեստը, շապիկդ էլ տուր:

Ինձ կարող են հակաճառել, որ մենք ունեցել ենք փառապանծ օրինակներ, երբ 120 հայդուկներ Սասունում, ունենալով հազար գյուղացու աջակցությունը, կռվում էին 12.000-անոց թուրքական զորքերի դեմ: Հարց է ծագում՝ ինչու՞ 120 հայդուկ: Եվ ինչու՞ ամբողջ Սասունից ընդամենը 1000 բնակիչ էր պատրաստ պաշտպանելու իր կյանքը և իր կանանց պատիվը:

Բոլշևիզմը շատ բան ավերեց ազգերի հոգեկերտվածքում, մտքրեց գողանալու, քծնելու, ամեն գնով ցանկությանը հասնելու գծեր: Բայց բոլշևիզմը նաև թուլացրեց այն գծերը, որ եկեղեցին ներարկել էր հայերի մեջ:

Այժմ դժվար է պատկերացնել, որ անհնարին էր ամուսնական կապերի հաստատումը առաքելական ու կաթոլիկ հավատացյալների մեջ: Աստիճանաբար, հայերի մոտ ձևավորվում է, որ կրոնի տարատեսակներից և ընդհանրապես

կրոններից շատ ավելի բարձր է ազգային պատկանելությունը:

Մեզ կարող են հակաճառել նաև, որ մենք լինելով քրիստոնյա ժողովուրդ և քանակով երեք անգամ ավելի քիչ լինելով ազերիներից, կարողացանք հաղթանակ տանել: Մենք ստիպված ենք նրանց հիշեցնել, որ հաղթանակը ձեռք բերվեց ոչ թե հանուն կրոնի, այլ հանուն ազգային նպատակների:

Կովող գինվորների կողքին եղել են նաև փայլուն հայրենասեր հոգևորականներ և դա մեզ շատ է ուրախացնում: Կնշանակի, ազգային քրիստոնեական ուղղությունը դեռ կա և գործում է հայ եկեղեցու ներսում:

Նույն ժամանակ ցավալի է, որ մեր նշած հայ ազգային հոգևորականը, որը կռվել է, որը իր գործով և իր խոսքով ոգևորել է հայ մարտիկին կարող է ասել, որ ինքը քրիստոնեությունից դուրս հայություն չի ճանաչում, այն դեպքում, որ նորագույն շրջանի սուրբ Խրիմյան Հայրիկը իր հայտարարության համաձայն, քրիստոնեությունը չէր ընդունում առանց հայության:

Մենք բոլորս կարիք ունենք վերափոխման, արժեքների վերագնահատման և վերագտման, որից հետո կարելի է բարեփոխել ու եկեղեցին դարձնել Հայ Ազգային Առաքելական Սուրբ եկեղեցի:

ԻՍԼԱՄ ԿԱՍ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսլամը երեք համաշխարհային կրոններից մեկն է, որը տարածված է հիմնականում Ասիայում, Աֆրիկայի հյուսիսում, չնայած արտագաղթի հետևանքով նրանց թիվը արագ աճում է արևմտյան երկրներում և երկու Ամերիկաներում:

Այս կրոնը բաժանվում է հիմնականում սունի և շիա

ուղղությունների: Այս երկու ուղղությունների միջև գլխավոր տարբերությունը մուսուլմանների հոգևոր առաջնորդ՝ խալիֆի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է:

Սունիները, որոնք կազմում են մուսուլմանների մեծ մասը, գտնում են, որ խալիֆ, այսինքն Մուհամեդի տեղապահ, կարող է լինել ցանկացած մուսուլման: Շիաները գտնում են, որ Մուհամեդի տեղապահ կարող է լինել միայն Մուհամեդի անմիջական ժառանգորդը:

Այս բաժանումը առաջացել է քաղաքական նկատառումներից: Պարսիկները, որպեսզի պահպանեն իրենց անհատականությունը, նաև ցանկանալով վերականգնել իրենց անկախությունը, ընդունեցին այս տեսակետը, որպեսզի խալիֆայությունից առանձնանալու համար գաղափարական հիմք ստեղծեն:

Մուհամեդի ազգական Ալին իր մահից հետո անմիջական ժառանգ չէր թողել: Ձևականորեն շիաների մեջ են մտնում նաև ալավիներին, որոնց կրոնը և աշխարհաճանաչումը խիստ տարբերվում է իսլամից:

Մինչև մուսուլմանություն ընդունելը արաբները հեթանոսներ էին և երրորդ դարից նրանց կրոնական կենտրոնը դարձել էր Մեքքան, որտեղ գտնվում է Կաաբա կոչվող երկնաքարը և նրա շրջակայքում կանգնեցված 360 աստվածների արձանները:

Գլխավոր աստվածը Խուբայլն էր, որը համարվում էր պատերազմի աստված: 440 թ-ից Մեքքայում իշխանությունը անցավ Կուրեշիդների տոհմին: Այս տոհմի ներկայուցիչն էր Մուհամեդը, որը այս կրոնի հիմնադիրն է:

Նա քառասուն տարեկանում, ըստ ավանդության, երազ տեսավ, որի ժամանակ հրեշտակը նրան թելադրեց սրբազան գրքի՝ Ղուրանի, առաջին սուրահները: Դրանից հետո

նա երեք տարի Մեքքայում քարոզում է իր գաղափարները՝ ձեռք բերելով ընդամենը քառասուն կողմնակից:

Մեքքայի բնակիչները և հատկապես Կուրեշիդները դեմ գնացին այս կրոնին, որովհետև վախենում էին կորցնել իրենց քաղաքի արտոնյալ վիճակը: Մուհամեդը ստիպված փախավ Մեքքայից Յասրիբ, որտեղի բնակչությունը, մրցակցելով Մեքքայի հետ, ընդունեց նոր կրոնը:

Կարճ ժամանակահատվածում հիմնականում զենքի ուժով այս կրոնը տարածվեց արաբական ցեղերի մեջ: Չնայած դրան, Մուհամեդի մահից հետո այս ցեղերը սկսեցին հեռանալ կրոնից և ստեղծված դաշինքից: Մուհամեդին փոխարինած խալիֆ Աբու Բաքրը առաջ քաշեց իսլամի կարևորագույն սկզբունքը. «Մուհամեդը բարձր է, բայց Ալլահը և նրա հավատը ավելի բարձր են»:

Հետագայում ձևավորվեց իսլամի գլխավոր հավատի հենարանը, ըստ որի. «Ալլահը միակ աստվածն է և Մուհամեդը նրա միակ մարգարեն»:

Առաջին պատմական աղբյուրը, որը գրել է Մուհամեդի և իսլամի ծագման մասին հայ պատմիչ Սեբիոսն է, որը ապրել է 7-րդ դարում: Նա նշում է, որ Մուհամեդը Հայաստան եկած ժամանակ շփվել է մի աղանդավորի հետ, որը նրան աղավաղված ներկայացրել է քրիստոնեությունը:

Այս նշումը կարևոր է նրանով, որ սկզբնական շրջանում նույնիսկ քրիստոնեաները չէին տեսնում գլխավոր, հիմնարար տարբերություններ քրիստոնեության և իսլամի միջև և վերջինին համարում էին քրիստոնեական աղանդ: Մուհամեդը ինքն էլ բացասական վերաբերմունք չունեի մյուս կրոնների նկատմամբ: Դա նաև երևում է իսլամի հիմնարար սկզբունքներից; Կրոնը ձևավորել է իր՝

ա/ հավատի հենասյուններն.

1. հավատ Ալլահի նկատմամբ

2. հավատ հրեշտակների նկատմամբ, որոնց Ալլահն ստեղծել է լույսից
3. հավատ սուրբ գրքերի՝ Ղուրանի, Թորայի, Ավետարանի և բոլոր այն սուրբ գրքերի նկատմամբ, որոնք կազմվել են Ղուրանից առաջ, բայց ամենաստույգը և ամբողջականը Ղուրանն է
4. հավատ կրոնների հիմնադիրների նկատմամբ, որոնք ուղարկվել են Ալլահի կողմից իրենց ժողովուրդների համար և միայն Մուհամեդն է եկել բոլոր ժողովուրդների համար
5. հավատ մեծ դատաստանի օրվա նկատմամբ
6. հավատ, որ ամեն ինչ ի սկզբանե որոշված է Ալլահի կողմից

բ/ իսլամի հենասյունն են՝

1. Շախադա՝ վկայում են, որ չկա աստված Ալլահից բացի և վկայում են, որ Մուհամեդը ուղարկվել է Ալլահի կողմից: Սրանից մուսուլման հոգևորականությունը եզրակացնում է, որ պետք է լինի մեկ ժողովուրդ, մեկ պետություն, քանի որ կա մեկ աստված:
2. Նամազ՝ ամեն մուսուլման օրվա ընթացքում հինգ անգամ պետք է աղոթի: Աղոթքի ձևը, աղոթողի դիրքը խստով սահմանված է օրենքով:
3. Չակյապ՝ տարեկան պարտադիր նվիրատվություն, զոհաբերություններ աղքատների համար: Ըստ հարստության քանակի նվիրատվությունների քանակը որոշված է, իսկ աղքատները ազատված են նվիրատվություն կատարելուց:
4. Սաում՝ պարտադիր պասի պահում ռամադան ամսին, երբ արգելվում է ուտել, խմել, ունենալ սեռական կյանք օրվա լույս ժամանակ: Նաև հավատացյալը պետք է

ավելի ակտիվորեն ծառայի Ալլահին, անի բարեգործություններ, չգործի որևէ մեղք:

5. Խաղճ՝ պարտադիր ուխտագնացություն Մեքքա: Նույնիսկ հիվանդները և չքավորները մեկ անգամ կյանքում պարտավոր են գնալ ուխտագնացության:

Իսլամը ստեղծել է նաև սրբազան գրքերի հիման վրա օրենքների իր ժողովածուն, որը կոչվում է Շարիաթ: Այստեղ տրվում է կոնկրետ հրահանգներ կյանքի բոլոր ոլորտների համար, նաև հաստատվում են օրինազանցների համար պատիժներ:

Իսլամը մեծ ուշադրություն է դարձնում ընտանիքին, այն համարելով հասարակության հիմքը: Ամեն մեծահասակի սրբազան պարտքն է մատաղ սերնդի դաստիարակության գործը: Նրան կրոնական և իսլամի սկզբունքներով հոգևոր դաստիարակություն տալը:

Իսլամը ճիշտ է համարում միակնությունը, բայց նաև թույլ է տալիս ունենալ ամենաշատը շարքային մուսուլմանին չորսը կին: Բազմակնության դեպքում կրոնը պարտավորեցնում է ամուսնուն ունենալ միանման վերաբերմունք իր բոլոր կանանց նկատմամբ, տանել նույն չափի հոգատարություն բոլորի նկատմամբ: Տղամարդը պարտավոր է իր վրա վերցնել ընտանիքի նյութական միջոցների ձեռք բերումը:

Կանայք, ըստ Շարիաթի ունեն բավականին մեծ իրավունքներ: Կինը իրավունք ունի ունենալու իր անձանական սեփականությունը, վարելու տնտեսական կամ առևտրական գործունեություն, ցանկացած ատյանում տղամարդու հետ հավասար պաշտպանելու իր իրավունքները:

Շարիաթը կողմ է ամուր, միասնական ընտանիքին, սակայն հատուկ նշված դեպքերում թույլ է տրվում ամուսնալուծությունը, ընտանիքից դուրս սեռական կապը խստիվ արգելվում է և համարվում է ծանրագույն մեղք:

ԻՍԼԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մուհամեդը ձևավորելով իսլամական կրոնը և զենքի ուժով իսլամը տարածելով արաբների շրջանում, առաջին հերթին, նպատակ ուներ միավորել արաբական ցեղերին: Այս նպատակը շատ լավ երևում է ինչպես նրա ձևավորած կրոնում, այնպես էլ նրա հաջորդների միջոցով մեզ փոխանցված նրա բանավոր զրույցներում:

Ղուրանից մենք տեսանք, որ իսլամը ձևավորվելիս թշնամաբար չէր տրամադրված մյուս կրոնների և հատկապես մովսեսականության ու քրիստոնեության նկատմամբ:

Կրոնն ընդունում էր, որ Մովսեսն ու Քրիստոսը եկել են իրենց ժողովուրդների համար և նրանց ուսմունքը չնայած ամբողջական չէ, սակայն ճիշտ է նրանց հետևորդների համար: Բանավոր զրույցներում Մուհամեդը ասում էր. «Ալլահը ստեղծել է աղվեսին, ուղտին, արծվին ու վագրին, բայց ապրելու համար ամեն մեկին տվել է իր օրենքը: Մովսեսը բերեց օազիսի օրենքը, Քրիստոսը՝ քաղաքների ու լեռների, ես բերում եմ անապատի օրենքը»:

Նրա մահից հետո, ինչպես նշեցինք, նրա հաջորդների առջև ծառայալ արաբական ցեղերին միավորելու խնդիրը: Անհրաժեշտ էր մի նպատակ, որը միավորեր բոլոր արաբական ցեղերին: Այդպիսի նպատակ էր առաջին հերթին, խալիֆների նվաճողական քաղաքականությունը:

Հայտարարվեց սրբազան պատերազմ՝ ջիհադ: Զիհադի գաղափարը դեռևս առաջ էր քաշել Մուհամեդը, գտնելով, որ սրբազան պատերազմը պետք է մղվեր միայն անհավատ հեթանոսների դեմ: Անհավատ հեթանոսներ ասելով նա հասկանում էր իսլամ չընդունած արաբներին:

Քրիստոնյա Բյուզանդիան և Զրադաշտական Պարսկաստանը, որոնց սուրբ գրքերը գրվել էին Ղուրանից առաջ, ըստ

Մուհամեդի տեսության՝ չէին կարող համարվել անհավատներ: Սրանով խախտվում էր Մուհամեդի առաջ քաշած առաջին կարևորագույն դոգման:

Ըստ իսլամի՝ ջիհադում զոհված մուսուլմանը, անկախ նրա գործած մեղքերի տեսակի ու քանակի, ընկնում էր դրախտ: Այս գաղափարի շնորհիվ վատ զինված, հաճախ մերկ արաբները ջախջախիչ պարտության մատնեցին լավ զինված բյուզանդական ու պարսկական զորքերին:

Շատ բնութագրիչ է այն, որ արաբական զորքերը, երբ գրավում են Տիգրոնը, և խալիֆը տեսնում է պալատի ճոխությունը, հրամայում է ողջ կուտակված հարստությունը բաժանել բանակին, իսկ ոսկով ու թանկարժեք քարերով զարդարված գորգը կտրատում ու բաժանում է ցեղի առաջնորդների միջև:

Այս դեպքը ցույց է տալիս, թե ինչքան նահապետական համեստ ապրելակերպ ունեին ոչ միայն արաբ շարքային անդամները, այլև՝ առաջնորդները:

Իսլամ ընդունած բոլոր մուսուլմանները համարվում են ընդհանուր, միասնական տան անդամներ և ազատվում էին հարկերից: Ընդհանուր եկամուտները պետք է ձևավորվեին հարուստների տրված նվիրատվություններից, որոնք պետք է օգտագործվեին կարիքավորենին օգնելու համար:

Այս պատճառով իսլամը արագ տարածվում էր արաբների գրաված տարածքներում: Բնակչությունը հասկանում էր, որ իսլամ ընդունելը ամենակարճ ճանապարհն է հարկերից խուսափելու համար:

Նվաճողական պատերազմները նաև ընդարձակվող պետությունը կարիք ուներ մեծ ծախսերի: Բնակչության համատարած մուսուլմանության ընդունումը նշանակում էր, որ միակ եկամտի արդյունքը մնում էր ռազմական ավարը, որը չէր կարող բավարարել անընդհատ աճող պահանջներին:

Այս պատճառով ընդունվեց օրենք, ըստ որի մուսուլմաններին արգելվեց ունենալ հողային սեփականություն: Ողջ հողը համարվում էր Խալիֆի սեփականությունը: Այս ճանապարհով Խալիֆները ցանկանում էին գյուղացիներից գանձվող հողահարկի միջոցով լցնել գանձարանը:

Այս հրամանը ծանր հետևանք ունեցավ արաբների գրաված տարածքներում և հատկապես Պարսկաստանում: Նշված տարածքներում հողը պատկանում էր ազնվականությանը, որի վրա աշխատում էին ճորտացված կամ կիսաճորտացված գյուղացիները:

Գյուղացիների համար միևնույնն էր, թե ում է հանձնելու հողահարկը և մուսուլմանություն ընդունելով ազատվում էին մյուս տեսակի հարկերից: Խոշոր հողատերերը իրենց հողը պահպանելու համար ոչ միայն շահագրգռված չէին, այլև ընդդիմանում էին իսլամացման քաղաքականությանը: Սրա հետևանքով այս երկրների վերնախավի ներկայացուցիչները կամ ոչնչացան, կամ մտան պետական ծառայության՝ ընդունելով իսլամը:

Պարսիկ հողատերերը, չկարողանալով այլևս դիմադրել ճնշմանը, հեռացան Հնդկաստան՝ այնտեղ ձևավորելով իրենց կրոնական համայնքը: Այս պարսիկների ժառանգները մինչև այժմ էլ ապրում են Հնդկաստանում և մազդեականության կրոնի ամենաշատ հետևորդները բնակվում են Բոմբեում:

Այս տարածաշրջանում ապրող ժողովուրդները, ընդունելով իսլամ, կորցրեցին իրենց ազգային մշակույթը, ազգային ավանդույթներն ու ապրելակերպը: Կորցնելով ազգային դիմագիծը պահող վերնախավին շատ կարճ ժամանակահատվածում այդ ժողովուրդները ընդհանրապես վերացան պատմության թատերաբեմից:

Վերևում նշեցինք, որ հետո Պարսկաստանում սկսվեց

ձևավորվել ազգային մտավորականություն, որը մի կողմից սկսեց փորձեր կատարել ազգային մշակույթի ուղղությամբ, իսկ մյուս կողմից էլ ձևավորվեց իսլամի շիա կրոնական հոսանքը, որով պարսիկները փորձում էին իրենց առանձնացնել արաբներից և նրանց աշխարհիկ ու հոգևոր առաջնորդ խալիֆներից:

Այս տեսակետից մենք շատ սխալված չենք լինի, եթե ասենք, որ շիա հոսանքին պատկանող մուսուլմանները հիմնականում ժառանգներն են Առաջավոր Ասիայի նախկին ազգերի:

Այլ հասարակական հարաբերություններ ձևավորվեցին Հայաստանում: Հայաստանը միակ երկիրն է Առաջավոր Ասիայում, որ չընդունեց մասսայաբար իսլամը և դրանով նաև նպաստեց, որ վրացիների մի մասն էլ հայերի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ պահպանեն քրիստոնեությունը:

Հայոց եկեղեցին այս պատմական փաստը բացատրում է, որ հայերը այնքան մոլեռանդ քրիստոնեաներ էին և քրիստոնեությունը այնքան ճիշտ կրոն է, որ հայությունը կարողացավ դիմադրել իսլամի դաժան ճնշմանն ու մնալով քրիստոնեա, դարձավ արևմտյան քրիստոնեության միակ պատվարն ու պաշտպանը:

Այս տեսակետի վրա հենվելով մեր եկեղեցին դարեր շարունակ հավատացրել էր իրեն, որ քրիստոնյա Եվրոպան պարտական է իրեն և Եվրոպայի սրբազան պարտքն է անհավատների լծից ազատագրել Հայաստանը:

Հայաստանի քրիստոնյա մնալը իրականում չունի ոչ մի կրոնական պատճառ: Հայկական քաղաքները այդ նույն շրջանում շատ արագ տեմպով իսլամացան և դա բացատրել միայն արաբ վերաբնակիչների քանակի աճով չի համապատասխանում իրականությանը:

Հայ գյուղացին չէր գտնվում այն կարգավիճակում, որ ներկայացնում էին խորհրդային պատմաբանները: Կան բազմաթիվ պատմական փաստեր, որ կար Հայաստանում մասնավոր հողեր՝ հանձինս ագարակների ու դաստակերտների: Դաստակերտները լինելով թագավորի և ավագ նախարարների սեփականություն, ունեին տնտեսական ու ռազմական համապետական նշանակություն: Չնայած դրան հողի գլխավոր սեփականատերը շարունակում էր մնալ համայնքը:

Գյուղական համայնքները դարերի ընթացքում թուլացան և քայքայվեցին, սակայն գոնե Հայաստանի մի շարք շրջաններում պահպանվել էր հայկական պետականության կառավարման հին մոդելը և հայկական գյուղական համայնքները, որոնք հասան մինչև 19-րդ դար:

Լարաբաղի մելիք Աբով 2-ը, տեսնելով, որ կեղծ փաստաթղթերի հիման վրա զավթում են հայ գյուղացիների և համայնքների հողերը, զայրացած նամակ գրեց Նիկոլ 1-ին ցարին, նշելով, որ Հայաստանում միշտ հողի սեփականատերը եղել է գյուղացին, իսկ մելիքներն ու նախարարները եղել են միայն տարածքների տերերն ու կառավարիչները:

Հողի սեփականության իրավունքի տարբերությունն էր, որ թույլ չէր տալիս հայ գյուղացուն կրոնափոխ լինել: Ընդունել մուսուլմանություն նշանակում էր, որ այդ գյուղացուն տրված հողը կառանձնացվեր, կպոկվեր համայնքի սեփականությունից և կդառնար Խալիֆի սեփականություն:

Այդպիսի բան ոչ մի համայնք չէր կարող թույլ տալ և ողջ համայնքը հետևում էր, որ ոչ մի գյուղացիական ընտանիք կրոնափոխ չլինի:

Հետագայում, երբ հայկական համայնքները թուլացան, կամ վերացան, տեսնում ենք, որ սկսված թուրք-սելջուկների և թուրքերի գրավումների հետ ոչ միայն հասարակ բնակչությունը, այլև բազմաթիվ նախարարական տներ կրոնափոխ են լինում՝ դառնալով քրդեր, կամ թուրքեր:

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային տարիներին զրուցում էի իմ ռուս ընկերներից մեկի հետ, որը լինելով փիլիսոփայական գիտությունների դոկտոր, հավատացյալ էր: Նա պատմեց իր կյանքից մի դրվագ, որը ըստ, ինձ շատ կարևոր է, և կարող է ավելի լավ բացահայտել անհատ-եկեղեցի կապն ու հարաբերությունները:

Նա՝ որպես նվիրյալ ուղղափառ հավատացյալ, մշտապես եկեղեցում իր հոգևոր հոր մոտ գնացել էր մեղքերի թողության և մի օր պարզվում է, որ այդ հոգևորականը ազգային անվտանգության աշխատակից է: Իմ ընկերը խիստ անհանգստացած գնում է խորհուրդ հարցնելու ռուս մենակյաց հավատացյալի մոտ և ներկայացնում է նրան իր խնդիրը: Իմ ընկերոջը հուզում էր, թե արդյո՞ք ինքը ազատվել է իր մեղքերից, երբ իր մեղքերը խոստովանել է եկեղեցական ուխտը խախտած հոգևորականին: Մենակյացը, լսելով իմ ընկերոջը, հանճարեղ պատասխան է տալիս նրան: Մենակյացը բացատրում է, որ հոգևորականի միակ գործը կապող օղակ դառնալն է անհատի և աստծո միջև:

Նա մեջ է բերում Քրիստոսի մասին հետևյալ պատումը: Քրիստոսին հարցնում են, թե որտեղ աղոթեն աստծուն, տաճարում, թե Սինա լեռան վրա, որ իրենց խոսքը հասնի բարձրյալին ու Քրիստոսը պատասխանում է. «Ձեր հոգու մեջ»:

Դրանից հետո նա բացատրում է, որ հոգևորականը իր ներկայությամբ հնարավորություն է տալիս հավատացյալին կապվել Աստծո հետ: Այս պարագայում հոգևորականի գործը նրանում է, որ օգնի հավատացյալին հավաքելու իր մտքերը և կենտրոնանա: Այստեղ նա նույն է, ինչը փայփիլուն իրը

հիպնոսի ժամանակ: Դրանով այդ հոգևորականը կատարել է իր գործը:

Ուրիշ հարց է, որ հոգևորականին անթույլատրելի քայլ է կատարել: Երբ պետք է աղոթքով օգներ հավատացյալին զբաղվել է երկրային, Աստծուն հակառակ գործով, որով ինքն է գտնվում մեղքի մեջ և կարիք ունի մեղքերի քավության և հավատացյալների ու աստծո ողորմածության:

Շատ հայեր, ընդունելով քիրստոնեությունն ու եկեղեցին, հիասթափված հոգևորականների ոչ վայել պահվածքից՝ հոգևորականին նույնացնում են կրոնի հետ, որը շատ սխալ է:

Ռուս մենակյացի նման կուզեինք ասել, որ միևնույնն է ամենավատ վարք ունեցող հոգևորականն էլ կատարում է իր գործը, որպես կապող օղակ: Իսկ այն խնդիրը, որ հայ հոգևորականների պահվածքն ու ձգտումները չեն համապատասխանում իրենց կոչմանը, արդեն այլ խնդիր է:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքի ավարտից հետո, կա անհրաժեշտություն կարճ ներկայացնել մեր արած եզրակացությունները և ցույց տալ, թե կրոնի բերած լավ կամ վատ ազդեցությունը ինչպես կարելի է մաքրագրել և ստեղծել բնական պայմաններ հայությանը միավորելու, հոգեպես և ֆիզիկապես հզորացնելու համար:

Մենք տեսանք, որ ինչպես հազարամյակներ առաջ, այնպես էլ հիմա ազգը ամբողջությամբ չի կարող հենվել միայն հավատի վրա: Հավատի հիմքը կազմող էզոթերիկ գիտելիքները ոչ միայն հասու չեն բոլորին, այլև չկա դրա կարիքը: Դրան հակառակ՝ որպես էթնոսին միավորող կարևոր գործոն պահպանվում է կրոնի դերը:

Արդիական է հնչում Արիստոտելի այն հայտարարությունը, որ չկան ազգեր, որոնք ապրեն առանց կրոնի: Նույնիսկ մատերիալիստական ուսմունքների հիմնադիր Մարքսն է նշել, որ կրոնը հաշիշ է ժողովուրդների համար, բայց կրոնը միակ բանն է, որ մարդուն մարդ է պահում:

Կրոնի անհրաժեշտությունը կա և դեռ երկար ժամանակ կպահպանվի: Հարցը նրանումն է, թե կոնկրետ այդ կրոնը ինչպես է ազդում տվյալ էթնոսի վրա և թե որքանով է աջակցում էթնոսի առջև դրված խնդիրները լուծելուն:

Սինկիսերը, լինելով մեկ միլիարդ բնակչություն ունեցող Հնդկաստանում ընդամենը 20 մլն., իրենց կրոնի քարոզած գաղափարախոսության շնորհիվ դարձել են ամենաակտիվ գործող ուժը Հնդկաստանում, իրենց ձեռքում կենտրոնացնելով ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական մեծ ներուժ:

Խոսելով կոնկրետ որևէ կրոնի մասին՝ պետք է նշել, որ հաճախ ավելի կարևոր է դառնում ոչ թե այն գաղափարները, որ բերում է այդ կրոնը, այլ այն, թե ինչպես է մեկնաբանվում, տրվում տվյալ կրոնի բերված գաղափարները և թե տվյալ կրոն քարոզողները ինչպիսի խնդիրներ են դնում իրենց առջև:

Տեսանք, որ քրիստոնեությունը, լինելով միասնական կրոն և որպես հիմք ունենալով միևնույն գիրքը կապված եկեղեցիների ունեցած նպատակներից և քարոզման հիմնական դրույթներից, ունեցել է և ունի տարբեր արդյունքներ: Մենք, որքան էլ ցավալի է, այստեղ նորից պետք է անդրադառնանք Հայ Առաքելական եկեղեցու ունեցած ազդեցությանը:

Մենք չենք պնդում, որ հայության գլխին եկած բոլոր աղետների և այժմ հայության ծանր վիճակի համար միայն մեղավոր է մեր եկեղեցին: Պատճառները շատ են և

հետագա ուսումնասիրություններում մենք կփորձենք գտնել դրանք: Սակայն չի կարելի չնշել քրիստոնեական կրոնների ազդեցությունը պատմության ընթացքում և այժմ:

Սիրիայի Քեսաբ տարածքում վերջերս ռազմական գործողություններին մասնակցած հայ տղաներից մեկը, որը իրեն համարում է Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալ անդամ դառնությամբ պատմում էր, որ այն տարածքում, որտեղ ինքը ներկա է եղել թուրքական բանակին դիմադրել են տասը հայեր, որոնք բոլորն էլ կաթոլիկ հայեր էին, որոնք փոքրամասնություն էին կազմում տեղի հայության մեջ: Հայադավան բոլոր երիտասարդները, լքելով իրենց տունը, փախել էին, առանց որևէ դիմադրության:

Շատ են խոսում խորհրդային քարոզչության լավ կամ վատ հետևանքների մասին: Բացասական հետևանքները շատ են, սակայն որ այս նույն քարոզչությունը թուլացրեց կույր հավատը հայության շրջանում, դա փաստ է: Խոսքը չի վերաբերվում հավատացյալ լինելուն կամ չլինելուն:

Խնդիրը նրանում է, որ լինելով քրիստոնյա, չընդունես այն գաղափարը, որ քրիստոնիայի ամենամեծ երջանկությունը հավատի համար նահատակվելն է, հույս ունենալով անմեղ զոհ դառնալով արժանանալ դրախտին:

Մարդը կարող է ունենալ ցանկացած կրոն, կարող է իր ցանկացած ձևով անվանել իր աստծուն կամ աստվածներին, բայց պետք է հասկանա, որ կրոնը կարող է լինել որևէ էթնոսի՝ մեր դեպքում հայ ազգի բնութագրիչներից մեկը, այն էլ ոչ առաջնայինը:

Պատմության բերումով հայությունը ցրված է ողջ աշխարհով մեկ, նաև ի երջանկություն իրենց և մեզ հայության մի խոշոր զանգված շարունակում է ապրել մեր հայրենիքի արևմտյան հատվածում: Մենք հանցագործություն կատա-

րած կլինենք, եթե կրոնական հարցեր բարձրացնելով խոչընդոտենք հայության միավորմանը:

Մենք վերևում գրեցինք Լեհաստանում բնակվող հայերի մասին, որոնք հայոց եկեղեցու հանցագործ գործունեության հետևանքով ձուլվեցին լեհերին: Եթե նույնը շարունակվի այժմ, մենք կարող ենք դառնալ հայոց պատմության վերջակետ դնողը:

Ցանկացած ազգից հեռացածը անհատը, կամ մարդկային խումբը և դա հատկապես զգացվում է հայերի մոտ, դառնում է այդ ազգի առաջին թշնամին, փորձելով ցույց տալ իրեն նոր էթնոսի լիրավ անդամ:

Մեր սխալ պահվածքի հետևանքով մենք կարող ենք ոչ միայն մեզնից վանել մեր եղբայրներին, այլև մեզ համար ստեղծել ոխերիմ թշնամիներ, որոնք ի ծնե ունեն հայի միտքը, բայց նաև ձերբազատվել են այն կաշկանդող բարդույթներից, որ բերել է քրիստոնեությունը:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գլուխ I. ՀԱՎԱՏԻ ԵՎ ԿՐՈՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Նախնական գիտելիքների ձեռք բերումը	10
Հավատի ձևավորվելը	26
Կրոնների ձևավորվելը	29
Հավատի վրա ձևավորված և ազգային կրոններ	32
Ազգային կրոններ	45
Մովսեսականություն կամ հուդայականություն	53
Դասակարգային և պետական կրոններ	80
Կրոնների ձևավորման փուլերը Հնդկաստանում	85
1. Հավատից ձևավորված կրոններ	87
2. Ազգային կրոններ	91
3. Ջատիզմ	92
4. Հինդուիզմ	94
5. Սիկիս	96
6. Դասակարգային կրոն. Բրահմայականություն	103
7. Համաշխարհային կրոն. Բուդդիզմ	105
Էզոթերիկական և էկզոթերիկական անտիկ աշխարհում	109
Մովսեսականություն, սիոնիզմ և մովսեսական ժողովուրդ	118

Գլուխ II. ՀԻՆ ՀՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ձևավորման միջավայրն ու պայմանները	127
Հռոմեական կայսրությունը և համաշխարհային կրոնի ձևավորումը	135
Պաղեստինը առաջին դարում	139
Քրիստոնեության ծագումը և ակունքները	141
Քրիստոնեության նախնական ուղղությունները	146
Փիլոն Ալեքսանդրիացին և քրիստոնեությունը	156
Իրականությունը Եդեսիայի Աբգար թագավորի մասին	161
Մեղքի հասկացողությունը քրիստոնեության մեջ	169

Հիսուս Քրիստոսը պատմական անձ	172
Քրիստոնեությունը հին Հռոմում	184
Կոստանդին Մեծի գործունեությունը	190
Քրիստոնեության ազդեցությունը Հին Հռոմում	191

Գլուխ III. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քրիստոնեության մուտքը	196
1. Եկեղեցական տարբերակ	196
2. Քրիստոնեության ընդունումը պատմական փաստերի տեսակետից	204
Հայկական եկեղեցու կապը հռոմեական եկեղեցու հետ	214
Քրիստոնեությունը Հայաստանում.....	218
Գրիգոր Եպիսկոպոսի հետնորդների գործունեությունը ...	220
Ներսես Մեծի գործունեությունը	226
Մամիկոնյանների ազդեցությունը.....	232
Ազգային քրիստոնեություն	233
Հայկական այբուբեն	249
Եկեղեցու պայքարը աղանդների դեմ	249
Կրոնափոխ մովսեսականներ և կրոնափոխ հայեր	257
Ազգային քրիստոնեությունը պատմության մեջ	263
Էզրթերիկան Հայաստանում	267
Քրիստոնեական ուղղությունների ազդեցությունը	
մարդու վրա	278
1. Կաթոլիկություն	278
2. Ուղղափառ եկեղեցի	280
3. Բողոքականություն	283
4. Հայ Առաքելական եկեղեցի	283
ԻՍԼԱՄ ԿԱՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՈՒԹՅՈՒՆ	286
Իսլամը Հայաստանում	291
ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ..	296
Վերջաբան	297

ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՈՒՄ

ԳԻՐՔ 3

խմբագիր՝	Ջուլետա Կարակաշյան
սրբագրիչ՝	Ջուլիետա Բադալյան
նկարների հեղինակ՝	Աշոտ Բադալյան
համակարգչային ձևավորումը՝	Գոհար Մ. Մարտիրոսյանի, Գոհար Պ. Մարտիրոսյանի

ԻՄ ԽՈՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ ՀԱՅՏՆՈՒՄ.

ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Իրենց ցույց տված հոգևոր և մասնագիտական
աջակցության համար:



**Այս գիրքը նվիրում եմ քրոջս՝
Ելենա Կարապետյանին**